

Լեզվի եվ ուժի
ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս.

Գ. Ր. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ

Շուրջ վեց տասնամյակ վաղ առավոտից մինչև ուշ երեկո, միայն ամենաանհրաժեշտ ընդմիջումներով, նա աշխատեց հանուն հայագիտության, հանուն լեզվաբանության, հանուն հայոց լեզվի ուսումնասիրության՝ կատարելով այնքան գործ, որքան հագիվ թե ի վիճակի լինի կատարելու որևէ այլ անձնավորություն։ Եվ այս բոլորը մասնագիտական ամենաբարձր որակավորումով, ամենաբժախնդիր ճշգրտությամբ, վիրտուոզության հասնող նրբությամբ։ Ամենաբազմակողմանի գիտելիքներ, բազմաթիվ լեզուների իմացություն, զարմանալի խորաթափանցություն, մանրուքներն իմաստավորելու կարողություն, գիտության նորույթների նկատմամբ ամենօրյա կենդանի հետաքրքրություն, իր գործին անսահման նվիրվածություն, աննահանջ և անղիջում նպատակասլացություն, բարձր սկզբունքայնություն, անսպառ եռանդ, անհանգիստ ու սրբատոհմ միտք, ամենաբարդ երևույթները պարզ ու հստակ ներկայացնելու բնատուր ձիրք, աշխատասիրություն, անհավատարի աշխատասիրություն, ամեն ինչ հաղթահարող աշխատասիրություն,— այսպիսին էր Աճառյան գիտնականը։ Անսպառ բարություն և մարդասիրություն, զգայուն սիրտ և բարյացակամություն, լայնախոհ՝ հայրենասիրություն, բնական պարզություն և համեստություն, հումորի երբեք չթուլացող զգացում և կենսուրախություն, բոլոր իրավիճակներում իր մարդկային արժանիքները պահպանելու կարողություն, մերձավորների նկատմամբ ծայրահեղ հոգատարու-

* 2. Աճառյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանգիսավոր նիստում կարգացված զեկուցման տեքստը։ Տպվում է որոշ փոփոխություններով։

թյուն, աշակերտներին իր բոլոր գիտելիքները մինչև վերջ նվիրաբերելու և բոլորին օգնելու պատրաստակամություն,— այսպիսին էր Աճառյան մարդը:

Հրաշյա Հակոբի Աճառյանը ծնվել է 1876 թ. մարտի 7-ին (նոր տոմարով՝ 20-ին), Կոստանդնուպոլսում, արհեստավորի ընտանիքում, Դեռ մանուկ հասակից նա ցուցաբերում է լեզունների նկատմամբ արտակարգ հակում, որի զարգացմանը նպաստում էր Պոլսի բազմալեզվյան միջավայրը: 1885—1889 թթ. Աճառյանը սովորում է Սամաթիայի թաղական դպրոցում, ապա Պոլսի կենտրոնական վարժարանում, որը ավարտում է 1893 թ.: Երկու տարի պաշտոնավարելուց հետո՝ 1895 թ. նա մեկնում է Փարիզ բարձրագույն կրթություն ստանալու: Այստեղ սովորում է Սորբոնի համալսարանում՝ աշակերտելով նշանավոր լեզվաբան-հայագետ Անտուան Մեյեին: 1898 թ. Ստրասբուրգում լսում է նաև խոշոր հայագետ Հայնրիխ Հյուբշմանի դասախոսությունները: Բարձրագույն ուսումն ավարտելուց հետո լեզվաբանական անհրաժեշտ գիտելիքներով զինված Աճառյանը մեկնում է Հայաստան՝ հայրենի երկրին ծառայելու: Էջմիածնում նա սկսում է իր բազմամյա ուսուցչական գործունեությունը՝ հետագայում աշխատելով Շուշիում, Նոր Բայազետում, Նոր Նախիջևանում, Թեհրանում, Թավրիզում: 1923 թ. հրավիրվում է Երևանի պետական համալսարան՝ աշխատելով այնտեղ մինչև կյանքի վերջը, դասավանդելով ընդհանուր լեզվաբանական, հայագիտական և արևելագիտական առարկաներ: Արևելյան լեզուների և գրականության բաժնի հիմնադրումից հետո, 1940 թվականից սկսած նա եղել է արևելյան բանասիրության ամբիոնի վարիչ:

Հ. Աճառյանը 1897 թ. դարձել է Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, 1937 թ.՝ Չեխոսլովակիայի արևելագիտական ինստիտուտի գիտական բաժնի թղթակից-անդամ, 1943 թ.՝ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ:

Հ. Աճառյանի գիտական վաստակն ամփոփված է ավելի քան երկու հարյուր դիտական աշխատություններում, որոնք լույս են տեսել հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն լեզուներով: Չկա հայերենի ուսումնասիրության գրեթե ոչ մի բնագավառ, որտեղ Հ. Աճառյանն իր խոսքն ասած չլինի: Նա հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադիրն է: Անգնահատելի է նրա վաստակը հայ բառարանագրության, հայերենի

ստուգաբանության, հայ անձնանունների ուսումնասիրության, հայերենի համեմատական և պատմական քերականության, հայերենի տիպարանական-գուգադրական հետազոտության և բազմաթիվ այլ բնագավառներում: Աճառյանը իր ավանդն է մուծել հայ ժողովրդին նրա մշակույթի, նրա գրականության, հայ գաղթավայրերի պատմության, հայ բանասիրության հարցերի ուսումնասիրության մեջ: Աճառյանը ընդհանուր և համեմատական լեզվաբանության խոշոր մասնագետ է, նշանավոր արևելագետ, լազերեն լեզվի առաջին ուսումնասիրողներից մեկը:

Փոքր-ինչ ավելի հանգամանորեն կանգ առնենք նրա լեզվաբանական-հայերենագիտական գործունեության ամենից ավելի կարեւոր բնագավառների վրա:

2. Աճառյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները ձևավորվել են այսպես կոչված սոցիոլոգիական ուղղության ազդեցության տակ: Այդ հայացքների ձևավորման մեջ հատուկ դեր է խաղացել Անտուան Մեյեն, որի լեզվաբանական դավանանքը, լեզվաբանների միահամուռ կարծիքով, գոյություն ունեցող ուղղությունների մեջ ամենից ավելի է մոտ մարքսիստական լեզվաբանությանը: Լեզվի հասարակական բնույթի ըմբռնումը, լեզվական տարբերակների հասարակական պայմանավորվածության դրույթը, լեզվի նկատմամբ պատմական հայեցակետը, տարերային մատերիալիզմը հիմք էին տալիս, առանց երկրնտրանքի դժվարության, հարելու լեզվի այն ըմբռնմանը, որ զարգացվում է սովետական իրականության մեջ: Սկսելով համեմատաբար մոտ ելակետից և սեփական ուսումնասիրության արդյունքների հիման վրա համոզվելով լեզվի հետևողական հասարակական-պատմական ըմբռնման ճշմարտության մեջ՝ Աճառյանն անվերապահորեն հարեց հայ գիտնականների առաջավոր մասին, առանց խախտելու իր համոզմունքների անադատությունը, առանց տուրք տալու լեզվի հասարակական ըմբռնման գոհկացման փորձերին:

Կասկած չի կարող լինել, որ Աճառյանի աշխատությունների թագն ու պսակը նրա հոյակապ «Հայերեն արմատական բառարանն» է՝ ամփոփված յոթ ստվար հատորներում: Այդ բառարանի վրա նա աշխատել է շուրջ քառասուն տարի: Այստեղ ի մի են բերված այն բոլոր տեղեկությունները, որոնք նրա ժամանակ հայտնի էին հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ հանդիպող շուրջ տասնմեկ հազար արմատների վերաբերյալ: Աճառյանը տալիս է ոչ միայն դրանց բացատրությունը, քերականական ձևերի հնա-

գույն վկայութիւնները, ձեռագրական տարբերակները, ածանց-
յալ ձեւերը և ամենից ավելի հավանական ստուգաբանութիւնները,
ինչպես ընդունված է ուրիշ լեզուների ստուգաբանական բառա-
րաններում, այլև ստուգաբանութիւնների սպառիչ պատմութիւնը,
գլխաբառերի՝ հայերենի երեսուն բարբառներում ընդունված ձեւերը
և այն լեզուների իրողութիւնները, որոնք հայերենից փոխառու-
թիւններ են կատարել: Այսպիսի ընդարձակ ծրագրով կազմված
ստուգաբանական բառարան ուրիշ լեզուները չունեն: Եթե սրան
ավելացնենք, որ հազար վեց հարյուրից ավելի ստուգաբանու-
թիւնների հեղինակը ինքը Աճառյանն է, ապա պարզ կլինի այն
հսկայական աշխատանքը, որ նա ներդրել է այդ բառարանի կազմ-
ման մեջ: Պատահական չէ, որ դեռևս ձեռագիր վիճակում ծա-
նոթանալով բառարանին՝ Ն. Յա. Մառը 1907 թ. գրում էր. «Պ.
Աճառյանի աշխատութիւնը, իմ կարծիքով, երբ այն տպագրվի,
խոշոր երևույթ կլինի հայոց լեզվի վերաբերյալ լեզվաբանական
գրականութեան մեջ որպես արժեքավոր տեղեկատու, որի նմանը
չկա ոչ միայն հայկական, այլև եվրոպական գիտական գրականու-
թեան մեջ»: 1926—1935 թթ. Հ. Աճառյանը կարողացավ իրակա-
նացնել աշխատութեան ապակետիպ հրատարակութիւնը: Եվ առա-
ջիններից մեկը արձագանքեց Ա. Մեյնի՝ իր գրախոսականում դրե-
լով հետևյալը. «Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան
կատարյալ ստուգաբանական բառարան: Հպարտ եմ, որ ունեցել
եմ պ. Աճառյանին երկար տարիներ իմ աշակերտների թվում.
նա մեկն է նրանցից, որոնք պատիվ են բերում այն դպրոցին, որից
անցել են»: Յանկանք, որ Երևանի պետական համալսարանը
ավարտին հասցնի բառարանի տպարանային հրատարակութիւնը:
Ինչպես հայտնի է, լեզվի քառապաշարի պատմութեան ուսում-
նասիրութիւնը չի սպառվում միայն հասարակ անունների ստու-
գաբանական քննութեամբ: Ժողովրդի, նրա մշակույթի ու քաղա-
քակրթութեան պատմութեան հարցերի լուծման համար էական
նշանակութիւն ունի հատուկ անունների (այսպէս կոչված, օնո-
մաստիկայի) ուսումնասիրութիւնը: Աճառյանի անհանգիստ միտքը,
հայոց լեզվի քառապաշարի ուսումնասիրութիւնն ամբողջացնելու
ձգտումը չէին կարող չհանդեսնել նրան օնոմաստիկական ծավա-
լուն հետազոտութիւնների: Օնոմաստիկայի երկու հիմնական շեր-
տերից անձնանունները (անթրոպոնիմիկան) և տեղանունները (տո-
պոնիմիկան) վաղուց ի վեր գտնվել են նրա ուշադրութեան կենտ-
րոնում: Սակայն նա կարողացավ ամբողջացնել միայն անձնա-

նունների հավաքման, նրանց պատմա-բանասիրական քննության և ստուգաբանության աշխատանքը: Տեղանունների հավաքման աշխատանքը կիսատ մնաց. շուրջ հազար հինգ հարյուր քարտ ընդգրկող տեղանունների հավաքածուն այդպես էլ չամբողջացավ:

«Հայոց անձնանունների բառարանի» կազմման աշխատանքը Աճառյանը ձեռնարկել է 1910 թ., Նոր Նախիջևանում: 1923 թ. նա վերսկսում է աշխատանքը, իսկ 1942 թվականից գրեթե լիովին նվիրվում բառարանի լրացմանն ու ամբողջականացմանը: 1944—1947 թթ. լինելով Աճառյանի ասպիրանտը՝ ես ակնատես եմ այն տաժանների աշխատանքին, որ նա տանում էր բառարանի վրա: Աճառյանի բժախնդրությունը՝ ոչ մի բան բաց չթողնելու նրա ձգտումը, ծայրահեղության էր հասնում. 1944 թ. վերջերին ունենալով սրտի նոպա՝ Աճառյանն ստիպված էր ժամանակավորապես դադարեցնել աշխատանքը. նա հանձնարարեց է. Աղայանին քաղել մատենագիրներից մեկի անձնանունները. սակայն Աճառյանն այն անձնավորությունը չէր, որ կարողանար որևէ մեկին այս տեսակետից լիովին վստահել: Ապաքինվելուց անմիջապես հետո նա վերանայեց Աղայանի կատարածը և հայտարարեց, որ վերջինս երկու անձնանուն բաց է թողել...

«Հայոց անձնանունների բառարանն» ընդգրկում է հինգ սովորական հատորներ, որոնք լույս են տեսել 1942—1962 թթ.: Այստեղ ընդգրկված են հայերի մեջ հին ժամանակներից մինչև 1500 թ. գործածական անձնանունները՝ քաղված բոլոր մատչելի աղբյուրներից. 1500 թվականից հետո գործածված անձնանունները նույն մանրամասնությամբ չեն մշակված: Բառարանը պարունակում է անձնանունները կրողների վերաբերյալ պատմական տեղեկություններ, բանասիրական նշումներ և ստուգաբանական տեղեկություններ: Իր տեսակի մեջ այս բառարանը ևս եզակի երևույթ է՝ կարևոր ոչ միայն լեզվաբանական, այլև պատմական ու բանասիրական առումներով:

«Հայերեն արմատական բառարանի» բառագիտական նյութի պատմական յուրատեսակ մշակումն է Հ. Աճառյանի երկհատոր «Հայոց լեզվի պատմությունը» (1940—1951 թթ.): Այս աշխատության ընդլայնվող հասկանալու համար պետք է նկատի առնել այն յուրահատուկ մոտեցումը, որ նա ուներ լեզվի պատմության գիտակարգի խնդիրներին ու նպատակներին: Այդ գիտակարգից նա հանում էր այն բոլորը, ինչ կազմում է պատմական քերականության և պատմական հնչյունաբանության ուսումնասիրության ա-

առկան, և լոկ համառոտակի անդրադառնում այն հարցերին, որոնք վերաբերում են պատմական բարբառագիտությանը: Այսպիսով, լեզվի պատմության, որպես լեզվաբանական գիտակարգի, խնդիրը նա համարում էր լեզվի, այսպես կոչված, «արտաքին» փաստերի և բառապաշարի ուսումնասիրությունը: Սա արվում էր, մանավանդ, այն պատճառով, որ այդ «արտաքին» փաստերը անմիջական արտացոլում են գտնում բառապաշարի մեջ: Ժողովրդի տնտեսական, քաղաքական և մշակութային պատմությունը, նրա կյանքը, տարածական տարբերակվածությունը, գիտելիքների շրջանակն ու սրա փոփոխությունները, — այս բոլորը կարելի է բացահայտել բառապաշարի համակողմանի ուսումնասիրության միջոցով: Եվ Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ ուշադրությունը կենտրոնացնում է բառապաշարի կազմավորման պատմական ուղիների վրա:

Աշխատության առաջին հատորում, հենվելով հատկապես Մեյեի տվյալների վրա, Աճառյանը պարզում է հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում, դաստասում հայերենի ժառանգած հնդեվրոպական բառապաշարը և դրա հիման վրա տալիս նախահայերի քաղաքակրթության ուրվագիծը: Սրանից հետո նա հանգամանորեն քննում է հայերի՝ ուրիշ ժողովուրդների հետ ունեցած շփումները և բնութագրում այն բոլոր ազդեցությունները, որ հայերենը կրել է այդ լեզուներից նախագրային շրջանում:

«Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորը նվիրված է հայոց լեզվի հատկապես զրավոր շրջանի պատմությանը: Վիսլասանական հատվածների քննության հիման վրա հայերենի նախագրաբարյան վիճակի վերաբերյալ որոշ եզրակացություններ անելուց հետո Աճառյանն անցնում է զրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի կազմավորման հետ կապված հարցերի քննությանը, խոսում 5-րդ դարի բարբառների մասին, տալիս 5-րդ դարից սկսած հայերենի կրած ազդեցությունների պատկերը:

Հայոց լեզվի բառապաշարի պատմության հարցերի հանգամանալից քննությունն ու վերլուծությունը բացահայտում են այնպիսի կողմեր, որոնք մինչ այդ չէին արժանացել հայագետների ուշադրությանը: Իզուր չէ, որ Աճառյանը «Հայոց լեզվի պատմությունը» համարում էր իր ամենից ավելի մշակված աշխատությունը:

«Հայոց լեզվի պատմության» խնդիրների ու նպատակների մասին ասածից պարզ է դառնում լիակատար քերականություն

հայոց լեզվի» բազմահատոր աշխատության նպատակադրումը: Եթե առաջինը ներկայացնում էր հայոց լեզվի «արտաքին» փաստերի և բառապաշարի պատմությունը, ապա երկրորդը, ըստ Աճառյանի մտահղացման, պետք է տար հայոց լեզվի հնչյունական ու քերականական կառուցվածքների զարգացման պատկերը և հայ բարբառների հնչյունական ու քերականական առանձնահատկությունների ընդհանուր ուրվագիծը՝ զուգադրական և համեմատական վերլուծության հիման վրա: Հայերենի փաստերի զուգադրությունը հինգ հարյուր վաթսուներկու լեզուների համապատասխան փաստերի հետ ինքնանպատակ չէ. այն հնարավորություն է տալիս բացահայտելու հայերենի առանձնահատկությունները, գծելու հայերենի տիպաբանական բնութագիրը: Հայերենի համեմատությունը ցեղակից լեզուների հետ պարզում է նրա կազմավորման ընթացքը և զարգացման յուրահատկությունները: Սրանից հետո Աճառյանն անցնում է իր բուն խնդրի իրականացմանը՝ տալով հայերենի հնչյունական և քերականական կառուցվածքների պատմությունը՝ ըստ նրա տարբեր վիճակների (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար և հայ բարբառներ):

Վերականգնողական հայոց լեզվի» աշխատությունը նախատեսված է եղել տասը հատորով, բայց Աճառյանը չի կարողացել դրել վերջին երեք հատորները («Շարահյուսություն», «Բառաքնություն» և «Իմաստաբանություն»)՝ թողնելով միայն անմշակ նյութեր: Առաջին յոթ հատորներից մեկը լույս է տեսել հեղինակի կենդանության օրոք՝ 1952 թ., մյուս հատորները լույս են տեսել հումահու, և ողջ հրատարակությունն ավարտվել է 1971 թ.: Այն հանգամանքը, որ Աճառյանը հնարավորություն չի ունեցել վերջնականապես ստուգելու իր բերած փաստերը և ամբողջացնելու աշխատությունը, ցավոք սրտի, խանգարել է վերջինիս բարձրանալու «Հայերեն արմատական բառարանի» աստիճանին, բայց այս վիճակով էլ աշխատությունը մնում է եզակի երևույթ և դեռ շատ երկար տարիներ պետք է կարևոր հենակետ լինի հայոց լեզվի ուսումնասիրության համար:

Կա մի բնագավառ, որտեղ կատարվող աշխատանքը Աճառյանին ուղեկցել է աշակերտական հասակից մինչև մահը: Այդ բնագավառը հայ բարբառագիտությունն է: Ինչի՞ վրա էլ որ աշխատելիս լինեք, որտե՞ղ էլ որ գտնվեք, ո՞ւմ հետ էլ որ հանդիպեք, հայ բարբառների վերաբերյալ նյութեր հավաքելու միտքը երբեք չէր թողնում նրան: Եվ արդյունքը լինում են 1909 թ. ֆրանսերեն հրա-

տարակված «Հայ բարբառների դասակարգումը», որի հայերեն վերամշակված տարբերակը լույս է տեսնում 1911 թ., «Հայերեն գավառական բառարանը», որ հրատարակվում է 1913 թ.՝ պարունակելով շուրջ երեսուն հազար բարբառային բառ, առանձին բարբառների նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները, «Հայերեն արմատական բառարանում» և «Լիակատար քերականության» մեջ զետեղված բարբառագիտական նյութերը:

«Հայ բարբառների դասակարգումը» ներկայացվել է Սորբոնի համալսարանին որպես դիսերտացիա: Այստեղ Հ. Աճառյանը առաջին անգամ փորձում է տալ հայ բարբառների՝ միայն լեզվաբանական չափանիշների վրա հիմնվող դասակարգումը՝ ըստ ձևաբանական մի աջնպիսի կարևոր հատկանիշի, ինչպիսին ներկայի կազմությունն է՝ տարբերելով երեք ճյուղ և առանձնացնելով երեսունմեկ բարբառ: Այս դասակարգումը հիմք է տալիս հետագա խորացված ուսումնասիրություններին:

«Հայերեն գավառական բառարանը» լրացնում է «Հայերեն արմատական բառարանի» տվյալները հայերենի բառապաշարի վերաբերյալ: Սա հնարավորություն է տալիս հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության մեջ ներքաշելու բարբառների ընձեռատ հսկայական նյութը և նոր եզրակացությունների հանգելու հայերենի՝ հնդեվրոպական լեզվախմբի մեջ գրաված տեղի վերաբերյալ:

Սկսելով Ասլանբեկի, Սուլավայի, Ղարաբաղի և Վանի բարբառներին նվիրված ոչ ծավալուն աշխատություններից՝ Աճառյանը հետադառնում մշակում է բարբառների մենագրական ուսումնասիրության իր յուրահատուկ եղանակը և մեկը մյուսի հետևից լույս ընծայում Մարաղայի, Ադուլիսի, Նոր Զուղայի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի, Համշենի, Աուտիալի, Պոլսի, Վանի բարբառների ծավալուն նկարագրությունները: Ձեռագիր վիճակում նա թողել է նաև Կիլիկիայի և Սվեգիայի բարբառներին նվիրված մենագրություններ:

Եթե վերևում հիշատակված աշխատություններին միացնենք «Թուրքերենի փոխառյալ բառեր հայերենի մեջ» (1902), «Ս. Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը» (1907), «Եվրոպական փոխառյալ բառեր հայերենի մեջ» (1951) աշխատությունները, «Հայերեն նոր բառեր» և «Հայկական» շարքերը, չազերենին նվիրված աշխատությունը, «Հայոց գրերը» (1928, 1968), մի շարք վայրերի ձեռագրացուցակները, Հ. Մանանդյանի հետ կազմած «Հայոց նոր վկաները» «Պատմու-

թյուն հայոց նոր դրականության» աշխատության երեք պրակները, «Արևմտահայ դրական դեմքերը», «Ճաճկահայոց հարցի պատմությունը», հայ ժողովրդի, հայ մշակույթի, հայ դրականության, հայոց լեզվի զանազան հարցերին նվիրված բաղմաթիվ հոդվածները, մեծաքանակ բանասիրական նշումները, դրախոսականները, տարբեր լեզուներից կատարած թարգմանությունները, դեռևս անտիպ աշխատությունների պատկառելի քանակը, ապա պարզ կլինի այն զարմանքը, որ ղգում է Աճառյանի ժառանգությանը ծանոթացող ամեն մի անձնավորություն։ Մասամբ էլ սրանով է բացատրվում գիտնականի համար որոշ չափով անսովոր այն ժողովրդականությունը, որ վայելում էր Աճառյանը իր կենդանության օրոք։ Կային ժողովրդականության նաև ուրիշ պատճառներ՝ հանրագիտական բաղմակողմանի գիտելիքները, բաղմամյա ուսուցչական և դասախոսական աշխատանքը, մարդամոտ վարվելակերպը, պարզությունն ու կենսուրախությունը, ամենաբարդ հասկացությունները պարզ վերարտադրելու կարողությունը։

2. Աճառյանի մեծությունը հատկապես այն բանի մեջ է, որ նա, ի մի բերելով մինչև ինքը կատարված հայերենագիտական աշխատանքի արդյունքները, մեծապես նպաստեց հայոց լեզվի հետագա ավելի խորացված ուսումնասիրությանը։ Ամենից ավելի լավ ուսումնասիրված բնագավառներից մեկում՝ համեմատական քերականության մեջ, Աճառյանի աշխատություններից հետո և նրանց հրատարակությանը ղուգընթաց լայն ասպարեղ բացվեց հայերենի արեալային կապերի, նոր հայտնագործված հնդեվրոպական լեզուների հետ հայերենի ունեցած առնչությունների, հայերենի բառապաշարի իմաստաբանական-տիպաբանական վերլուծության, երևույթների բացարձակ և հարաբերական ժամանակագրությունը պարզելու ուղղությամբ, տարբերակվեցին հայերենի հնդեվրոպական բառապաշարի հիմնական և կողմնակի շերտեր և այլն, և այլն։ Բարբառագիտության մեջ խորացվեց ձևաբանական դասակարգումը, տրվեցին ձևաբանական-տիպաբանական և հնչյունաբանական դասակարգումներ, առաջ քաշվեց բաղմահատկանիշ դասակարգման սկզբունքը, հայտնագործվեցին և ուսումնասիրվեցին նոր բարբառներ, ավելի ճշտվեց բարբառների փոխհարաբերության պատկերը, ձևաբանական հայ բարբառագիտական ատլասի կաղմման աշխատանքը և այլն, և այլն։ Որպես օրինակ ընտրված այս երկու բնագավառները ցույց են տալիս, թե որքան նոր խնդիրներ է առաջ քաշել և որքան անելիքներ ունի հայերենագիտու-

թյունը: Եվ ով որ ձեռնարկում է այդ բնագավառում որևէ աշխատանք, չի կարող անցնել այնպիսի մի հսկայի կողքով, ինչպիսին Աճառյանն է:

2. Աճառյանը եղավ մեր առաջին իսկական մասնագետ-լեզվաբանը, որ նշանավորեց հայագիտության զարգացման մի ամբողջ շրջան, ի մի բերեց վարկերագույն աշխատանքների արդյունքները, բաց արեց ուսումնասիրության նոր ասպարեզներ, մեծ շափով նպաստեց հայագիտության հետագա առաջընթացին: Եվ նայելով Աճառյանի մահից հետո անցած մոտ քառորդ դարի արդյունքներին՝ մենք տեսնում ենք, որ այդ մեծ մարդու փառքը չի խամրել. իրենց առաջընթացի ճանապարհին հայ լեզվաբաններն զգում են նրա ներկայությունը, լսում նրա քաջալերական խոսքը: Ամենայն իրավամբ մենք կարող ենք ասել՝ քանի ապրում է մարդկությունը, կապրի չեզուն ուսումնասիրող գիտությունը, քանի ապրում է լեզվաբանությունը, կապրի հայերենագիտությունը, քանի ապրում է հայերենագիտությունը, կապրի Աճառյանը:

2. ԱՃԱՌՅԱՆԸ՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐ

Հրաշյա Աճառյանի բազմակողմանի և անգնահատելի դիտական գործունեությունը կարիք չունի ոչ գունազարդման և ոչ էլ գերագնահատման: Նա մեր դարաշրջանի խոշորագույն հայագետ լեզվաբանն է և հայկաբանության մի շարք ճյուղերի հիմնադիրն ու չգերազանցված դեմքը. հիշենք, օրինակ, հայոց լեզվի պատմությունը, հայ բարբառագիտությունը, հայ բառարանագրությունը և այլն: Նրա հայ բարբառագիտության ֆրանսերեն և հայերեն հատորները, Արմատական բառարանի 7 հատորները, Անձնանունների բառարանի 5 հատորները, Հայոց լեզվի պատմության երկու հատորները, Գավառական բառարանը այն անմահ կոթողներն են, որ ապահովեցին նրա, որպես խոշորագույն գիտնականի և դրա հետ մեկտեղ՝ խորհրդային հայագիտության համաշխարհային ճանաչումը: Աճառյանի բազմահատոր աշխատություններից երկուսը բացարձակապես հզակի երևույթ են համաշխարհային լեզվաբանության մեջ. ես նկատի ունեմ հայոց լեզվի լիակատար քերականությունը աշխարհի 562 լեզուների զուգադրական համեմատությամբ, որի 7 հատորը արդեն լույս է ընծայված, և յոթ հատորանոց արմատական բառարանը, որոնց համարժեք գործ չի կարող անվանել աշխարհի ամենազարգացած և ոչ մի ժողովուրդ: Այնքան մեծ է Աճառյանի աշխատություններից յուրաքանչյուրի և նրանց ամբողջության գիտական արժեքը, որ այդքանն էլ բավարար հիմք կարելի է համարել Աճառյանի անձնական գործունեությունը մի ամբողջ ինստիտուտի գործունեություն համարելու: Եվ երևի հենց այդ է պատճառը, որ Աճառյանի գիտական կենսագրությունները և նրա գործունեության գիտական վերլուծումները սովորաբար սահմանափակվում են վերը թվարկված հատորների վերլուծմամբ և

գնահատմամբ: Այս բոլորը, սակայն, շատ հեռու են Աճառյան-գիտնականի ստեղծագործական դեմքը ամբողջությամբ ներկայացնելուց: Աճառյանի գիտական գործունեության շատ կողմեր ավանդաբար մոռացության են մատնված և ոչ միայն չեն վերլուծվում ու գնահատվում, այլև չեն հիշատակվում: Նշենք Աճառյանի բազմաբեղուն գիտական գործունեության մոռացված մի քանի բնագավառ.

1. Գրականագիտության բնագավառ. հրապարակի վրա են հայ գրականության պատմության լույս տեսած երեք պրակները և ձեռագիր մյուս պրակներն ու առանձին հոդվածները.

2. Բանասիրական-տեքստաբանական բնագավառ, որի մեջ մտնում են ձեռագիր հուշարձանների տեքստաբանական-խմբագրական աշխատանքները և բանասիրական ճշտումները.

3. Կովկասագիտության և հայ-վրացական բանասիրության բնագավառ, որի մեջ մտնում են լազերենի առաջին գիտական քերականությունը, ֆրանսերեն լեզվով, «Ձայնաբանություն վրացերեն հայերենից փոխառյալ բառերի» գողտրիկ մենագրությունը և Արմատական բառարանում ներկայացված բազմահարյուր վրացերեն բառերի ստուգաբանությունները և այլն: Էլ չեմ խոսում այն մասին, որ զանազան պարբերականներում հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն լեզուներով լույս տեսած նրա հարյուրավոր հոդվածներն էլ սպասում են իրենց ուսումնասիրողներին և կարոտ են վերահրատարակության:

Իմ ուսումնասիրության նպատակն է վեր հանել և գնահատել

2. Աճառյանի գերն ու գործունեությունը հայ-վրացական բանասիրության բնագավառում, բայց հենց սկզբից անհրաժեշտ եմ համարում մի կարևոր պարզաբանում անել այն հատուկ գծավառությունների մասին, որոնք ուղեկցել են Աճառյանի գործունեությանը այս բնագավառում: Աճառյանը, ինչպես հայտնի է տիրապետում էր Արևելքի և Արևմուտքի բազմաթիվ լեզուների, այդ թվում մայրենի լեզվի հետ և նրան համարյա հավասար չափով՝ թուրքերենին, պարսկերենին, արաբերենին, անգլերենին, ֆրանսերենին, որպես լեզվաբան գիտեր հունարեն, լատիներեն, հին հնդկերեն լեզուները և կարողանում էր կարգալի իր իմացած լեզուներին ցեղակից մի շարք այլ լեզուներով ևս, ինչպես իտալերեն, իսպաներեն, քրդերեն և այլն: Մեր բազմալեզվագետ լեզվաբանը, սակայն, որպես արևմտահայ, համեմատաբար ավելի թույլ կապեր ուներ սլավոնական լեզուների, այդ թվում և ռուսերենի հետ և մանավանդ ոչ մի նախապատրաստություն չունեի իրեն արդեն ծանոթ լեզուներից քերականա-

կան կառուցվածքով միանգամայն տարբերվող կովկասյան, իրև-
րա-կովկասյան լեզուների, այդ թվում նաև վրացերենի բնագավա-
ռում համարձակորեն գիտահետազոտական աշխատանքներ ծա-
վալելու Սրան ավելանում էր և այն, որ նա, դարձյալ արևմտա-
հայ լինելու հետևանքով, արևմտահայի իր ականջով հաճախ դժ-
վարանում է լսողության տարբերել նույնիսկ հայ բարբառների
խուլ և ձայնեղ պայթականները (պ-բ, կ-գ, ա-դ և այլն) և բար-
բառագրական աշխատանքների ընթացքում հարցնում էր սա բն-
աբանի՞ր-ն է, բն՞ պարանի պ-ն: Այստեղից հեշտ է եղրակացնել,
թե որքան դժվար էր Աճառյանի համար տարբերել անծանոթ լե-
զուների, օրինակ լազերենի և վրացերենի, անծանոթ բառերի հընչ-
յունական համակարգին տիրապետելը: Եվ եթե Աճառյանը, շնա-
յած այս դժվարությանը՝ այնուամենայնիվ կարողացավ տակավին
ուսանողական տարիներում ուսումնասիրել մինչ այդ իրեն միան-
գամայն անծանոթ լազերենը և կազմել այդ լեզվի առաջին քերա-
կանությունը, որ լույս տեսավ 1898 թ., ֆրանսերեն լեզվով, ապա
այդ պետք է բացատրել նրա լեզվաբանական բնածին տաղանդով,
նրա անցած լեզվաբանական կատարյալ դպրոցով (Մեյե, Հյուր-
շման), ինչպես և նրանով, որ իր ուսումնառության տարիներին
Աճառյանը, առաջինը լինելով հայ լեզվաբանների մեջ, զբաղվել էր
փորձառական հնչյունաբանությամբ ուսումնասիրություններ կա-
տարելով այսօրվա ձայնագիր մեքենաների նախատիպը հանդի-
սացող Ռուսլոյի անիվով:

Այս ֆոնի վրա չի կարող դարմանալի շթվալ, որ Աճառյանը
հայ-վրացական բանասիրության գծով իր ուսումնասիրություն-
ները սկսել է հենց հնչյունաբանության թեմայով՝ «Չայնաբանու-
թյուն վրացերեն հայերենից փոխառյալ բառերի» խորագրով իր
ծավալուն և այն ժամանակի համար սպառիչ աշխատությամբ, որ
դրեց Ստրասբուրգում և լույս ընծայեց 1898 թվին էջմիածնի «Արա-
րատ» ամսագրում:

2. Աճառյանի այդ աշխատությամբ հայագիտության մեջ բաց-
վեց մի նոր ասպարեղ՝ հայ-վրացական բանասիրության բնագա-
վառը, որի հիմքը Ռուսաստանում դրել էին Կայսերական ակա-
դեմիայի ակադեմիկոս ֆրանսիացի Մարի Բրոսսեն, պրոֆ. Քերովբե
Պատկանյանը, պրոֆ. Յաղարեյին, և որը, որպես բանասիրական
ինքնուրույն դպրոց, ձևավորեց ակադեմիկոս Նիկ. Մառը: Հետա-
գայում հայ-վրացական բանասիրության վրացական ճյուղը արդ-
յունավետ կերպով զարգացրին ու առաջ տարան Մառի աշակերտ-

ների փայլուն պլեադայի ներկայացուցիչներ Զավախիշվիլին, Ղիփ-շիձեն, Յուստինե Աբուլաձեն, Շանիձեն, Մելիքսեթ-բեկը և սրանց աշակերտները: 1918 թ. Թբիլիսիի համալսարանի հիմնադրման օրից հայագիտությունը այդ ուսումնական բարձրագույն դպրոցում գրավեց իր պատշաճ տեղը և Թբիլիսիի համալսարանը դարձավ հայագիտության պատկառելի գիտական օջախ, որտեղ աճեցին և ստեղծագործեցին հայ-վրացական, ավելի ճիշտ կլինի ասել՝ վրացա-հայկական բանասիրության նորանոր սերունդներ, որոնց մեջ հատկապես արժե նշել այդ բնագավառի մեծ երախտավոր պրոֆ. Իլիա Աբուլաձեի անունը: Հայ-վրացական բանասիրության հայկական ճյուղը, դժբախտաբար, նույն չափով չզարգացավ, և մեր կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի այն հասցնել արդի գիտության պահանջների մակարդակին: Այս ֆոնի վրա առավել արժեք են ստանում Աճառյանի աշխատանքները հայ-վրացական բանասիրության բնագավառում՝ հնչյունաբանության, ստուգաբանությունների և բառարանագիտության հարցերի ուղղությամբ: Այս տեսակետից հատկապես հետաքրքրական է Աճառյանի վերը արդեն հիշատակված «Ձայնաբանություն վրացերեն հայերենից փոխառյալ բառերի» աշխատությունը, որ այսուհետև համառոտ կանվանենք «Ձայնաբանություն»:

Այստեղ անմիջապես հարկ կա նշելու, որ Աճառյանի «Ձայնաբանությունը» դրված է եվրոպական, ռուսական և արտասահմանյան հայագիտության ումանտիզմի դարաշրջանում, երբ հայերենում և վրացերենում առկա իրանական, հունական և այլ ծագում ունեցող ընդհանուր բառերը դիտվում էին կամ որպես ուղղակի հայերեն, կամ լավագույն դեպքում, որպես հայերենի միջոցով վրացերենին անցած բառեր (Մ. Բրոսսե, Յագարելի, Ն. Մաու և այլք):

2. Աճառյանի այդ աշխատության ոգու վրա առանձնապես մեծ է եղել վրացի խոշոր գիտնական բառարանագիր Դավիթ Չուբինովի (Չուբինաշվիլու) ազդեցությունը, որը իրեն նախորդած Սուխան-Սաբա Օրբելիանիի և իր հորեղբայր Նիկո Չուբինովի (Չուբինաշվիլու) օրինակով աշխատում էր որքան կարելի է շատ վրացերեն բառեր կապել հայերենի հետ, համարել փոխառություն հայերենից: Դավիթ Չուբինաշվիլին իր բառարանում այդպիսին է համարում 800—900 բառ, որոնց հիման վրա էլ Աճառյանը կատարել է իր ձայնաբանական ուսումնասիրությունը, թեև նրանց մի պատկառելի մասը կամ հայերեն չէ, կամ հայերենից չի անցել վրացերենին հենց ըստ Աճառյանի հավաստման:

Հետագայում «Հայոց լեզվի պատմության» մեջ հայ-վրացական լեզվական հարաբերություններին նվիրված գլուխներում (մասն առաջին, էջ 202—217, մասն երկրորդ, էջ 218—225) Աճառյանը գիտնականին հատուկ օբյեկտիվությամբ և մասնագետին հատուկ ջերմեռանդությամբ աշխատում է ստուգաբանական ճշգրտումներ կատարել՝ աստիճանաբար նվազեցնելով հայերենից վրացերենին անցած բառերի քանակը և, մյուս կողմից, ջանքեր է թափում գտնելու և ստուգաբանորեն հավաստելու այն բոլոր բառերը, որ վրացերենից են անցել հայերենին: Այդ աշխատության մեջ նա հայ-վրացական հարաբերությունների, այդ թվում և հայոց ու վրաց լեզուների մասին խոսում է եղբայրության, բարեկամության և հավասարության ջատագովումով: Այստեղ ի միջի այլոց կարդում ենք. «Ձափաղանց մեծ են ամեն տեսակի այն կապերը, որ այս երեք ազգերն ու երկրները՝ կապում էին իրար...: Հայաստանի հյուսիսային գավառների բնակիչները իրենց իշխաններով միասին դիմում էին դեպի Վրաստան: Ընդհանրապես վրաց թագավորները և հատկապես Դավիթ Բ՝ մեծ սիրով ընդունեց գաղթողներին, հայ իշխաններին ու ղորավարներին պաշտոններ տվից և իր բանակը հայ զինվորներով ստվարացրեց...: Օսմանցոց ժամանակ Վրաստանը Հայաստանի պես տաճկական և պարսկական հակամարտության ղոհ դարձավ, մինչև ռուսական տիրապետությունը... Հայ վրացական հարաբերությունների այս համառոտ ամփոփումից երևում է, որ հայերը վրաց հետ սերտ հարաբերության մեջ են եղել 2100 տարի»²:

Այս հատորի մեջ Աճառյանը իր գրքի 1-ին մասում հիմնավորած 59 հնագույն փոխառություններին, որ ինքը ներկայացնում է որպես կովկասյան լեզուներից և վրացերենից հայերենին անցած բառեր, ավելացնում է ևս 54 նոր բառեր, որ, ինչպես ինքն է գրում, հայերենը պետք է վտխառած լինի վրացերենից ավելի ուշ շրջաններում³:

Ով ծանոթ է Աճառյանի «Արմատական բառարանին», նկատած կլինի, որ Աճառյանը տասնյակ դեպքերում բառավիճում է վրացերեն բառերի իր հիմնական և համարյա միակ աղբյուր հանդիսացող վրացերեն-ֆրանսերեն-ռուսերեն բառարանի հեղինակ

1 Այսինքն՝ Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը (Գ. Սևակ):

2 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 218—221:

3 Նույն տեղը, էջ 222:

Դավիթ Չուբինաշվիլու և նրա խմբագիր ակադ. Բրոսսեի հետ և նրանց կողմից հայերենից վրացերենին անցած համարվող շատ բառեր համարում է, ընդհակառակն, վրացերենից հայերենին անցած:

Այժմ մենք ընդհուպ հասանք հայ-վրացական բանասիրության մեջ Աճառյանի երախայրիքը հանդիսացող «Ձայնաբանություն վրացերեն հայերենից անցած փոխառյալ բառերի» աշխատության վերլուծման անհրաժեշտությունը:

Բայց դրանից առաջ անհրաժեշտ է ծանոթանալ Չուբինաշվիլու վերը նշված բառարանին, քանի որ, ինչպես հայտնի է, Աճառյանը վրացերեն չգիտեր և նրա վերլուծած մոտ 900 հայերեն-վրացերեն բառերը իրենց համադրություններով քաղված են հիմնականում այդ բառարանից:

Դավիթ Չուբինաշվիլին (Չուբինով) 19-րդ դարակեսի պետերությունների ակադեմիական միջավայրի ականավոր դեմքերից մեկն էր և բարձր էր գնահատվում իր կազմած վրացերեն-ֆրանսերեն-ռուսերեն (1840 թ.), ինչպես նաև ավելի ուշ հրատարակած վրացերեն-ռուսերեն բառարաններով: Շարունակելով վրացական բառարանագրության՝ Սուլխան-Սաբա Օրբելիանու և իր հորեղբայր Նիկո Չուբինաշվիլու հարուստ ավանդույթները և առաջնորդվելով ռուսական ակադեմիական բառարանագրության պահանջներով՝ նա հրապարակ հանեց իր վրացերեն-ֆրանսերեն-ռուսերեն ծավալուն բառարանը, որը ընդգրկում է 35,000 վրացերեն բառ՝ ֆրանսերեն և ռուսերեն թարգմանություններով և առատ բառակապակցություններով (754 մեծագիր էջ):

Չուբինաշվիլու բառարանը, սակայն, ոչ միայն երեքլեզվյան թարգմանական բառարան է, այլև բազմալեզվյան ստուգաբանական բառարան: Բառարանի բառերի կեսից ավելին՝ 18,000 բառ օժտված է արաբական, թուրքական, պարսկական, հայկական, ինչպես նաև հունական ու լատինական ստուգաբանություններով: յուրաքանչյուր բառի կողքին թարգմանությունից առաջ համապատասխան ժողովուրդների գրերով մեջ է բերված այն բառը, որը փոխ է առնվել վրացերենում, ըստ որում հայկական ստուգաբանությունները ներկայացրել է բառարանի խմբագիր ակադ. Մարի Բրոսսեն, ինչպես ինքն է խոստովանում առաջաբանի մեջ:

Այստեղ հարկ է նշել, որ ակադ. Բրոսսեն համեմատական լեզվաբանության մանկության այդ շրջանում հակված էր Բուպպի առաջ քաշած այն սխալ տեսակետին, թե վրացերենը ցեղակից է

հնդեվրոպական լեզուներին, ուստի և վրացերենի այն բառերը, որոնք ընդհանուր են նաև պարսկերենին ու հայերենին, այդ ցեղակցությունից բխող ընդհանրության արդյունք են: Քրիստոսի առաջաբանում Բրոսսեն դրում է. «Ինչ վերաբերում է արաբերեն և թուրքերեն լեզուների ստուգաբանությանը, ապա գա չի ապացուցում ոչ մի ցեղակցություն վրաց լեզվի հետ, մինչդեռ հնդկական արմատի լեզուների հետ նրա ցեղակցությունը դիտում եմ որպես միանգամայն ապացուցված»: Պարզ է, որ քրիստոսի լույս ընծայվելուց 58 տարի հետո, Մեյերին և Հյուբշմանին աշակերտած Աճառյանը չէր կարող իբրև ճշմարտություն ընդունել Բրոսսեի այդ տեսակետը, ուստի և այն բոլոր բառերը, որ կան վրացերենում և ընդհանուր են նաև պարսկերենին ու հայերենին, իրավամբ համարում էր փոխառություն վերջիններից: Ըստ որում, ի տարբերություն Զուրինովի և Բրոսսեի, Աճառյանը չի ընդունում ոչ մի ցեղակցություն վրացերենի և «հնդկական արմատի» լեզուների, այսինքն հնդեվրոպական լեզուների միջև, ուստի և այն բառերը, որ ընդհանուր են վրացերենին և պարսկերենին ու հայերենին, համարում է սոսկ փոխառությունների: Այն հարցին, թե այդ փոխառությունները պարսկերենի⁴, թե՞ հայերենից են անցել վրացերենին, Աճառյանը պատասխանում է հետևյալ կերպ. «Վրաստանը շրջապատված լինելով Սև և Կասպից ծովերով և Կովկասյան լեռնաշղթայով, հին ժամանակներում նրա հարաբերությունները պարսիկների, ասորիների, ավելի ուշ արաբների, թերևս նաև հույների հետ կատարվում էին Հայաստանի միջոցով. ուստի բնական է ենթադրել, թե այն օտար բառերը, որ վրացիները փոխ են առել պարսկերենից, ասորերենից, արաբերենից և հունարենից, գոնե մեծ մասով փոխառյալ են ուղղակի հայերենից»⁴: Այդ կարծիքը հավանական է համարում նաև Ա. Մեյերը: Նույնիսկ հայերենի դերը թերագնահատող Միշել Ռյաբինինը, ինչպես հավաստում է Աճառյանը, խոստովանում է, որ Հայաստանը կատարել է ռազմական գործունյա միջնորդի դեր հարավից եկած բոլոր նորությունների համար»⁵: Հարավից վրացերենին անցած փոխառությունների մեջ հայոց լեզվի⁶ միջնորդի դեր կատարելու դրույթը, մանավանդ հնագույն շրջանների վերաբերյալ, նա հաստատում էր, ի միջի այլոց, նաև նրանով, որ ճշատ բառեր, որ հայը վերցրել է օտարներից և

4 Հ. Աճառյան, Զայնաբանություն:

5 Նույն տեղը:

իր ձայնական օրենքների համեմատ փոփոխությունների ենթարկել, ճիշտ նույն փոփոխություններով գտնվում են վրացերենի մեջ. օրինակ՝ զմբուխտ, գանձ, աղամանդ, ակառն, անդերձ, բաղեն, բազմակ և այլն. վրացերեն զումբուխտի, գանձի, աղամանդի, ակառա, անդերձի, բաղենի, բազմակի և այլն: Սրանք արդեն համոզիչ փաստեր են» — եզրակացնում է Աճառյանը: Ի պատիվ Աճառյանի, սակայն պետք է ընդգծենք, որ նա զգուշացավ իր դրույթը բացարձակ համարելուց և հենց այդ առաջին ուսումնասիրության մեջ որոշ վերապահումների տեղ թողեց: Այսպես, նույն հոդվածում նա գրել է. «Դժվար է մի հզոր փաստ առաջ բերել՝ իբրև ապացույց բոլոր այսպիսի փոխառություններին», կամ՝ «Կան նաև մի քանի բառեր, որոնց համար դժվար է ասել թե վրացերենը հայերենից է վերցրել, նույն իրավունքով կարելի է հակառակը պնդել» և այլն: Այսպիսով, Աճառյանը նշում է հայ-վրացական փոխառությունների հարցը մանրակրկիտ և օբյեկտիվ ուսումնասիրության ենթարկելու անհրաժեշտությունը: Զուբինովի և Կլապրոթի բառարաններից քաղելով հայերենի և վրացերենի մեջ ընդհանուր բառերը, թվով ինն հարյուր, և արձանագրելով, որ «մինչև այժմ ոչ մի գիտական աշխատություն չի պատրաստված այս փոխառյալ բառերի մասին ոչ մեր ազգային, ոչ վրացի և ոչ էլ օտար լեզվաբանների կողմից»՝ հենց այդ ուսումնասիրության մեջ էլ հիմք է դնում այդ ընդհանուր բառերի կամ փոխառությունների անկողմնակալ վերլուծությանը՝ գլխավորապես հնչյունաբանական-համեմատական մեթոդով: Աճառյանը նկարագրում է այդ ընդհանուր բառերի հայերեն և վրացերեն ձևերի բոլոր ձայնավորների և բաղաձայնների հնչյունական համապատասխանությունները, բացահայտում նրանց օրինաչափությունները և հանգում համապատասխան հնչյունական օրենքների: Հիշենք այդ օրենքներից մի քանիսը.

1. Հայերեն համը ը-ի տառադարձության օրենքը, ըստ որի բաղաձայնների կուտակում սիրող. վրաց լեզուն, որի համար սովորական է մեկ վանկի մեջ նույնիսկ 3-ից չորս և ավել բաղաձայնների կուտակում, հայերենից փոխառյալ բառերի մեջ աշխատում է խուսափել նույնիսկ երկու բաղաձայնի կուտակումից և շունենալով ը հնչյունը՝ այդ համը ը-ի փոխարեն բառամիջում ավելացնում է որևէ ձայնավոր, մեծ մասամբ ի կամ ու, օրինակ՝ հայերեն զբռով, նրժաբ, նրէա, մըշակ, վրց. գիրաօ, նիժաբի, նուբա, մուշակի և այլն:

2. Բառի մեջ կրկնվող նույն ձայնավորներից մեկի տարնմա-

նեցման օրենքը, ըստ որի հայերեն մագաղաթ, կաղանդ դարձել են վրց. մագալիթի, կալենդի և այլն:

3. Ձայնավոր վերջավորության օրենքը, որ Աճառյանը անվանում է «վրացի վերջատառ», ըստ որի փոխառությունների մեջ վրացերենում անպայման ավելանում է մի ձայնավոր վերջավորություն, մեծ մասամբ ի, օրինակ՝ հայ. ավար, դրոշ, կոն, վեգ, տապակ, վրց. ավար-ի, դրոշ-ա (նաև՝ դրոշ-ի՝ այլ իմաստավորմամբ), կօնի-ի, վէդ-ի և այլն. հմմտ. նաև բեվր-ի (հայ. բեր > բիր), բլարջ-ի (հայ. բաղարջ), բիլծ-ի (հայ. պիղծ), բիլիկ-ի (հայ. բիլիկ), բորոտ-ի (հայ. բորոտ), փոլոցի (հայ. փողոց), ծալկոտ-ի (հայ. ծաղկոտ), դրոշ-ա, դրոշ-ի (հայ. դրոշ), բօր-ի կամ բօվր-ի (հայ. բոռ) և այլն: Այս օրենքը կարևոր նշանակություն ունի այն իմաստով, որ համարյա առանց բացառության ճիշտ կերպով կարող է կողմնորոշել, թե հայ-վրացական ընդհանուր բառերից ո՞րն է որի՞ց փոխառյալ, օրինակ խաշի/խաշ, վեգի/վեգ, կոճի/կոճ, բայց՝ կօճի/կոճի, կուդի/կուդի և այլն:

4. Ձևափոխությունների օրենքը, ըստ որի բառի վերջավորության փոփոխությամբ վրացերենում առաջ է դալիս համապատասխան բառի նոր իմաստավորում, օրինակ՝ հայ. կոն, վրց. կօնի նույն իմաստով, բայց կօնա նշանակում է «պղպեղ» (հայ. կսն համեմունքը). այդպես են նաև վերը նշված դրոշա (հայ. դրոշ) և դրոշի, որ իմաստավորվել է որպես «կուռք»: Այդպես է նաև վրց. տաբակի = հայ. տապակ և վրց. տաբակա, որ նշանակում է տապակած միս և գործածվում է հայերեն բարբառներում ու մտել է ռուսերենի մեջ որպես խոհարարական տերմին, օրինակ՝ ПЫЛЯТА ТАБАКА: Աճառյանի զգուշավորությունը և անաչառությունը հայ-վրացական փոխառությունների հայկական կամ վրացական աղբյուրը բացահայտելու և համապատասխան ստուգաբանությունները գիտականորեն հաստատված համարելու հարցում առավել ամրապնդվում և հետևողական են դառնում Արմատական բառարանում: Այստեղ կրկին անգամ անդրադառնալով հայերեն բառարմատների ստուգաբանությանը՝ նա մեկիկ-մեկիկ վերստուգում է հայ-վրացական ընդհանուր բառերի, գլխավորապես հայերենից վրացերենին անցած այն 900 բառերի ճշտությունը, որոնց մասին նա արդեն խոսել էր իր «Ձայնաբանության» մեջ: Իր գործունեության այս արդեն հասուն շրջանում Աճառյանը մասամբ վերանայում է իր տված նախորդ ստուգաբանությունները և բանավիճում Բրոսսեի և Չուբինովի հետ՝ մերժելով վրացերեն մի շարք բառերի

նրանց տված հայկական ստուգարանությունները, վրացերեն մի
 շարք բառերի հայկական ստուգարանությունները մերժելու այդ
 աշխատանքը ավելի ուշ նա շարունակում է նաև իր «Հայոց լեզվի
 պատմության» մեջ, որի առաջին մասում հատուկ դուրս է հատ-
 կացնում «Հայաստանի այլ բնիկների և կովկասյանների ազդեցու-
 թյունը հայերենի վրա» և երկրորդ մասում՝ «վրացերենի ազդեցու-
 թյունը հայերենի վրա» խորագրերով: Այստեղ նա անհրաժեշտ է
 համարում ստուգել հայ-վրացերեն ընդհանուր բառերի փոխատու
 աղբյուրը: Նա գրում է. «Այն բառերը, որ հասարակաց են հայե-
 րենի և վրացերենի կամ ուրիշ կովկասյան որևէ լեզվի, թվով 900
 հատ են: Այս բառերի մի մասը, և անշուշտ մեծ մասը, վրացերենը
 և մյուս կովկասյան լեզուները փոխ են առել հայերենից... բայց
 անուրանալի է, որ հնագույն շրջանում հայերն էլ ունեցել են փո-
 խառություններ, թե վրացերենից և թե կովկասյան մյուս լեզու-
 ներից: Լեզվաբանների գործը պիտի լինի մաղել այդ 900 բառերը
 և որոշել ու հաստատել, թե դրանցից որոնք փոխառություն են
 հայերենից և որոնք ընդհակառակը կովկասյաններից անցել են
 հայերենի»⁶: Այստեղ Աճառյանը ընդհանրացման կարգով նշում է
 յոթ կանոն, որոնց միջոցով կարելի կլինի որոշակի պնդել այս
 կամ այն բառի հայերենից վրացերենին անցնելու կամ վրացերե-
 նից հայերենին անցնելու պարագան: Այս հատորի մեջ, առաջնորդ-
 վելով իր ներկայացրած կանոններով և մեթոդով՝ Աճառյանը տա-
 լիս է 59 բառի ցուցակ, որոնք նրա կարծիքով հայերենի հնագույն
 փոխառություններն են կովկասյան լեզուներից և վրացերենից:
 Նույն աշխատության 2-րդ մասում, վրկին անգամ անդրադառնա-
 լով վրացերենի ազդեցությանը հայերենի վրա՝ Աճառյանը լրացու-
 ցիչ կերպով ներկայացնում է նոր և նորագույն շրջանում վրացերե-
 նից հայերենին անցած 54 բառի նոր ցանկ ևս: Այս ցանկերի մեջ
 կարևորը ոչ այնքան առաջարկված ստուգարանությունների ճշտու-
 թյունն է, որքան գիտական անաչառության և օբյեկտիվության այն
 մեթոդը, որով առաջնորդվելով Աճառյանը աշխատում է որքան կա-
 րելի է շատ փոխառություններ գտնել հայերենի մեջ վրացերենից,
 եթե կարելի է այսպես ասել՝ ի վնաս հայերենի «հեղինակության»:
 Ավելին, Աճառյանը նույնիսկ ուրախանում է, երբ նրան հաջող-
 վում է վրացերենի ազդեցության մի նոր, թեկուզ ամենափոքր

6 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1941, էջ 208,
 7 նույն տեղը, էջ 206—210:

հետք գտնել հայերենում: Այսպես, վրացերենից հայերենի թարգմանված մի գրքի մեջ (Պատմություն վրաց) մեկ անգամ գործածված է սեմփոքի բառը ճիշդանդություն համաստվ: Այդ բառը իր Արմատական բառարանի մեջ Աճառյանը բացատրել էր որպես հունարեն բառ (συνφορῆς), որ համապատասխանում է և՛ ձևով, և՛ իմաստով: Վրացի հայագետ Իլիա Աբուլաձեն հետազայում ցույց տվեց, որ սեմփոքի ձևը սխալ է, որ առաջացել է վրացերեն բնագրի սեմի մուցլիսա (=փորի ցավ) անճիշտ թարգմանությունից: պետք է լիներ ցավ փորի, բայց թարգմանիչը չհասկանալով կամ սխալ կարդալով վրացերեն բնագրի այդ մասը՝ թարգմանել է հունարենի սեմփոքի ձևով, որը, սակայն պետք է լիներ սեմփոքի: Այստեղից հետևում է, որ հայերենի մեջ սեմփոքի պետք է ուղղել սեմ փորի ձևով, վերականգնել վրացերենի սեմ բառը ցավ իմաստով և համարել փոխառություն վրացերենից՝ շնայած այն բանին, որ հայերեն թարգմանության մեջ սեմ բառը չի եղել և չկա: Այնուամենայնիվ նշանակալից է այն, թե ինչպիսի ուրախությամբ է Աճառյանը ընդունում վաղամեծիկ հայագետ Աբուլաձեի այդ ճշտումը: Աճառյանը գրում է. «Սեն բառը (ցավ իմաստով) մի անգամ գործածված է Պատմություն վրաց գրքում, էջ 108 սեմփոքի ձևով: Իմ Արմատական բառարանում մեկնել եմ իբր հունարեն συνφορῆς աղանաղան հիվանդությունների հավաքում»: Վրացի երիտասարդ գիտնական սիրելի Ի. Աբուլաձեն գտավ, որ ախալ է այս համեմատությունը, վրացերեն բնագիրը ունի սեմի մուցլիսա «փորի ցավ», որից հետևում է, որ հայ բառն էլ պետք է ուղղել սեմ փորի, որով սեն դառնում է վրացերենից փոխառյալ բառ⁸: Իրականությունն այն է, որ վրացերենից թարգմանողը չի հասկացել սեմ վրց. բառի իմաստը («ցավ») և թողել է առանց թարգմանության՝ միացնելով հաջորդ փորի բառին (սեմփորի), այս «բառն» էլ նման լինելով հունարեն սեմփորի բառին՝ հայերեն թարգմանության մեջ այդպես էլ դրվել է՝ սեմփորի: Այսպիսով, հայերենում ոչ թարգմանիչը և ոչ էլ գրիչը սեն բառ չեն գործածել, հետևաբար հայերենը սեն բառ չունի, ուրեմն և նա փոխառություն լինել չի կարող: Ստացվում է Եզնիկ Կողբացու մի սրախոսության նման թան. «Ձէրն չէին վասն չէին յաշտ առնէր»: Այս դեպքը մի ավելորդ անգամ ապացուցում է, թե որքան էր Աճառյանը ճգնում օբյեկտիվորեն շեղոք ու անաչառ մնալ հայ-վրացական ստուգա-

բանութիւնների հարցում, որքան հեռու էր նա ազգային սնափա-
ռութիւնից ու միակողմանիութիւնից:

Վերջում, թքնարական շեղման» կարգով, ցանկանում եմ նշել
իմ ամենասիրելի ուսուցիչ Հրաչյա Աճառյանի՝ որպէս մարդու և
գիտնականի ամենամեծ առաքինութիւններից մեկը՝ համեստու-
թիւնը: Մինչև իր կյանքի վերջին օրը գլուխը կախ նա համառորեն
աշխատում էր, ոչ ոքի չէր նախանձում, ոչ մի շափով չէր հպար-
տանում իր գիտական կոչումներով ու աստիճաններով և համա-
ժողովրդական ու համաշխարհային ճանաչմամբ: Մինչև իր մեծ
ուսուցիչ Մեյի մահը ամեն մի նոր ստուգաբանութիւն, ամեն մի
նոր դրույթ հրապարակելուց առաջ Աճառյանը դրանք ուղարկում
էր նրան՝ գիմում նրա խորհրդատվութեանը:

Եվ եթէ Աճառյանը մեկ-մեկ հպարտութիւն էր դրսևորում,
ապա այդ արտահայտվում էր նրանով, որ իրար վրա շարելով իր
տպագիր ու ձեռագիր աշխատութիւնները՝ կանգնում էր այդ աշ-
տարակի կողքին և մանկորեն անկեղծ հայտարարում. «Տեսե՛ք, իմ
գրած գրքերի աշտարակը հասնում է իմ հասակին»: Աճառյանի
հատորների այդ աշտարակը մնաց և մնում է որպէս հավերժ կեն-
դանի հուշարձան այն մեծ մարդու և մեծ գիտնականի, որ ճա-
նաչված է Հրաչյա Աճառյան համեստ անունով:

2. ԱՃԱՌՅԱՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

2. Աճառյանի գիտական գործունեության կարևոր բնագավառներից մեկը բարբառագիտությունն էր: Հայերենագիտության այս ճյուղով նա սկսում է զբաղվել գեռևս իր գիտական գործունեության արշալույսին՝ ուսանողական տարիներին՝ Սորբոնի համալսարանում ուսանելու ժամանակ իր հայաստանցի ուսանող ընկերների օգնությամբ ու աջակցությամբ տալով մի քանի հայ բարբառների (Ասլանբեկ, Սուչավա, Ղարաբաղ) ընդհանուր նկարագիրը: Այս նույն ժամանակներում է, որ նա հայ բարբառների բաղաձայնների բնույթի ուսումնասիրության նպատակով ձայնաբանական փորձեր է գնում Ռուսլոյի հնչյունաբանական լաբորատորիայում:

Իր ամբողջ գիտամանկավարժական գործունեության ընթացքում Աճառյանը չթողացող եռանդով շարունակում էր հայ բարբառների ուսումնասիրության գործը՝ բաց չթողնելով ատեղծված ոչ մի հնարավորություն ու պատեհ առիթ: Իր աշխատանքային գործունեության առաջին իսկ տասնամյակի ընթացքում նա արդեն հավաքել էր այնպիսի մի հսկայածավալ նյութ, որը նրան հնարավորություն էր տալիս տեսականորեն ու գործնականորեն դնելու ու լուծելու հայ բարբառագիտության առջև կանգնած մի շարք խնդիրներ:

Բարբառագիտական իր հետազոտությունների ու դիտարկումների ընդհանուր արդյունքները և դրանցից բխող տեսական ու գործնական եզրակացությունները Աճառյանը ամփոփեց ֆրանսերեն գրած իր «Հայերենի բարբառների դասակարգումը» («Classification des dialectes arméniens») աշխատության մեջ, որը նա որպես դիսերտացիա ներկայացրել էր Սորբոնի համալսարանին՝ ավարտական վկայական ստանալու համար (աշխատությունը լույս տեսավ 1909 թ.): Այդ նույն աշխատանքի ավելի ընդարձակ ու մշակված հայերեն տարբերակը լույս տեսավ էմինյան ազգագրա-

կան ժողովածուի 8-րդ հատորում՝ 1911 թ. «Հայ բարբառագիտութիւն. ուրվագիծ և դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)» վերտառութեամբ:

Այդ աշխատութիւնը փաստորեն հայ բարբառագիտութեան՝ որպէս առանձին գիտակարգի հաստատումն էր, հայ բարբառների ուսումնասիրութեան անհրաժեշտութեան գիտական հիմնավորումը և նրա հետագա զարգացման ընթացքի կանխորոշումը:

2. Աճառյանը հետագայում էլ, նույնիսկ իր «Հայ բարբառագիտութիւն» ընդհանրացնող աշխատանքը գրելուց հետո էլ, շարունակում էր հայերենի բարբառների մենագրական ուսումնասիրութիւնը, այդ թվում նաև այն բարբառների, որոնց ընդհանուր նկարագրին նա անդրադարձել էր իր աշխատութեան մեջ: Այս տեսակետից Աճառյանի գրիչը բեղուն է դառնում հատկապէս մեր գիտութեան զարգացման սովետական շրջանում, երբ նա հրավիրվում է Սովետական Հայաստան և արդյունավետ գիտամանկավարժական գործունեութիւն ծավալում Երևանի պետական համալսարանում, իսկ այնուհետև նաև Հայաստանի գիտութիւնների ակադեմիայում: Նրա գիտական գործունեութեամբ է պայմանավորվում հայ բարբառագիտութեան զարգացումը սովետական շրջանում: Այս ժամանակ է, որ մեկը մյուսի հետեից լույս աշխարհ են գալիս Ագուլիսի, Նոր Զուղայի, Համշենի, Առտիալի, Պուլսի, Վանի և այլ բարբառների վերաբերյալ նրա գրած մենագրական ուսումնասիրութիւնները:

Մեծ է Աճառյանի վաստակը հայ բարբառագիտութեան անդաստանում: Այն, ինչ նա կատարեց ու ստեղծեց այս բնագավառում՝ վեր է ամեն մի գովասանքից:

2. Աճառյանն էր, որ առաջին անգամ հայերենի բարբառների քննութիւնը կատարեց բավական լայն ընդգրկումով ու պատշաճ խորութեամբ: Մինչ այդ հրապարակի վրա եղած մի քանի բարբառների ուսումնասիրութիւնները չէին կարող ամբողջական պատկերացում տալ հայերենի բարբառային լանդշաֆտի իրական պատկերի մասին: Ուսումնասիրութեան ոլորտի մեջ շուրջ երեսուն բարբառների լեզվական նյութի ընդգրկումը հնարավորութիւն տվեց ոչ միայն ամբողջական պատկերացում ստեղծելու հայերենի բարբառային բաժանվածութեան աստիճանի մասին ընդհանրապէս, այլև շատ որոշակի դարձրեց այն իրական կապերի ու փոխհարաբերութիւնների պատկերը, որ գոյութիւն ունեն տարբեր բարբառների միջև՝ մի կողմից, և բարբառների ու գրական լեզուների միջև՝

մյուս կողմից: Նյութի լայն ընդգրկումը հնարավորություն տվեց ի նորոգ դնելու ու լուծելու բարբառների դասակարգման, նրանց նկարագրման ու ուսումնասիրության հետ կապված մի շարք տեսական ու գործնական հարցեր:

Հայտնի է, որ մինչև Աճառյանը հայերենի բարբառների դասակարգման մեջ հիմնականում կիրառվում էր աշխարհագրական դասակարգման սկզբունքը, որին երբեմն ղուգակցվում էին նաև ձևաբանական որոշ հատկանիշներ: Բարբառների խմբակցությունների այնպիսի հորջորջումներ, ինչպիսիք էին՝ պարսկահայ, տաճկահայ, ռուսահայ կամ՝ արևմտահայ, արևելահայ, շատ ընդհանուր լինելով՝ լեզվական բնութագրման տեսակետից ոչինչ չէին ասում: Դասակարգումը գիտական կարող էր լինել, եթե նրա հիմքում դրվեր լեզվական հատկանիշ (կամ հատկանիշներ): Ըստ որում այդ հատկանիշը պիտի լիներ այնպիսին, որ հատուկ լինելով դասակարգվող բոլոր միավորներին, միաժամանակ կարողանար ճշգրիտ շահանիշ հանդիսանալ դասակարգման ժամանակ: Գրականության մեջ այդպիսի շահանիշներից հայտնի էին ինչպես հնչյունական, այնպես և ձևաբանական որոշ հատկանիշներ: Հնչյունականներից հիշենք հ-խ հակադրությունը, բառասկզբի ձայնեղ ու խուլ պայթականների տարբեր համապատասխանությունները. ձևաբանական հատկանիշներից՝ բայի ներկա ժամանակի դրսևորման մեջ ում-ով կադմությունների դիմաց կու-ով կադմությունները, բացառականի լն-ով վերջավորությունների դիմաց ից-ով վերջավորությունները և այլն: Սրանցից Աճառյանը ընտրեց բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կադմության ձևաբանական հատկանիշը, որը ընդհանրական լինելով բոլոր բարբառների համար, և նույնատիպ կառուցվածքներով դրսևորվելով նաև անցյալ կատարյալի ձևերում, — որպես դասակարգման շահանիշ հարմար էր նաև այն տեսակետից, որ նրա հետ համընկնում էին նաև ձևաբանական այլ հատկանիշներ (օրինակ՝ ներգոյականի և բացառականի կադմությունները): Այս սկզբունքով դասակարգելով հայերենի բարբառները, Աճառյանը դրանք դասգասեց երեք խմբերում՝ ում, ել, կը, որոնք անվանեց ճյուղեր:

Այս դասակարգումը նախորդ դասակարգումների համեմատությամբ մի առաջընթաց քայլ էր հայ բարբառների ճանաչման ճանապարհին, և դրանով պետք է բացատրել նրա կենսունակությունը հետագա տասնամյակների ընթացքում:

2. Աճառյանը մշակեց բարբառների ուսումնասիրության որո-

շակի եղանակներ և դրանք գործնականորեն, հաջողությամբ կիրառեց բարձրագույնի միջին մասերի մեծագույն ուսումնասիրություններում։ Ուսումնասիրության այդ եղանակների մշակման ժամանակ նրա ելակետը այն էր, որ բարձրագույն որպես տվյալ լեզվի տերիտորիալ տարբերակ, պետք է նկարագրվի ընդհանուր լեզվի հետ ունեցած առնչակցությունների ֆոնի վրա։ Այլ կերպ ասած, բարձրագույն ուսումնասիրության ժամանակ անպայմանորեն պահանջվում էր համեմատության մի այնպիսի եզր, որի հարաբերակցությամբ հնարավոր լիներ պարզել ավել բարձրագույն առանձնահատկությունները։ Հայտնի է, որ նման եզր ումանք վերցնում էին հնդեվրոպական նախալեզուն, երբ հայերենի բարձրագույնի լեզվական երևույթները քննվում էին պատմահամեմատական մեթոդի սկզբունքներով՝ բարձրագույնի ձևերն անմիջապես բխեցնելով նախալեզվյան ձևերից։ Աճառյանը հրաժարվեց նման մոտեցումից, քանի որ դրանով հայերենի բարձրագույնը, անկախ ուսումնասիրողի կամքից, դիտվում էին որպես առանձին (անկախ) լեզուներ՝ անմիջական կապի մեջ դրվելով հնդեվրոպական նախալեզվի հետ։ Հայ բարձրագույնի քննության նման եղանակը մեթոդապես իրեն չէր արդարացնում, քանի որ մի բարձրագույն քննության ընթացքում՝ նրա ու նախալեզվի ձևերի համեմատությունների արդյունքները նույնությամբ կրկնվում էին մի այլ բարձրագույն նմանատիպ քննության ընթացքում։

Սկզբնական շրջանում Աճառյանը բարձրագույնի ուսումնասիրության համար որպես համեմատության եզր վերցնում է արևմտյան գրական հայերենը, բայց շուտով հրաժարվում է նաև դրանից, քանի որ այս դեպքում էլ համեմատության եզրը ճիշտ չէր արտահայտում համեմատելիի էությունը։ Այս մոտեցմամբ էլ ենթադրվում էր, որ բարձրագույնը սերված են նոր գրական հայերենից, մինչդեռ իրականում հակառակն էր։ Նոր գրական հայերենը ինքը բարձրացել էր բարձրագույն հիմքի վրա և չէր կարող այդ նույն բարձրագույնի ուսումնասիրության համար համեմատության եզր լինել։ Մյուս կողմից՝ եթե արևմտահայ բարձրագույնը դեռևս ինչ-որ չափով կարող էին համեմատության մեջ դրվել արևմտահայ գրական լեզվի հետ, ապա այդ նույնը չէր կարելի անել արևելահայ բարձրագույնի նկատմամբ, որոնց մեջ շատ երևույթներ չէին կարող բացատրվել արևմտահայ գրական լեզվի սահմաններում։

Ելնելով այս բոլորից՝ Աճառյանը իր բարձրագույնի ուսումնասիրությունների հիմքում, որպես համեմատության եզր,

դնում է հին հայերենի լեզվական վիճակը, Այդ կողմնորոշմանը մեծապես նպաստում է նաև այն, որ շուրջ 30 բարբառներից հավաքած լեզվական նյութը խիստ սիստեմավորվում էր միայն հին հայերենի հետ կատարած համեմատությունների ընթացքում: Համեմատության եզրի ընտրության ճշտությունը հաստատվում էր նաև առանձին բարբառների լեզվական նյութի գիտական մշակման ժամանակ:

Այստեղ հարկ է նշել նաև, որ համեմատության այդ եզրը թեև Աճառյանը շատ հաճախ անվանում էր գրաբար, բայց չպետք է կարծել, թե նա արդի հայերենի ժամանակակից բարբառները բխեցնում էր հին գրավոր հայերենից՝ գրաբարից, կամ այլ կերպ ասած՝ գրաբարն էր համարում այսօրվա բարբառների հիմքը: Աճառյանը գրաբարը պարզապես վերցնում էր որպես հայոց լեզվի մեղ հայտնի ամենահին վիճակը, որ բնականաբար ավելի մոտ պիտի լիներ համեմատելի նախահիմքին, քան այսօրվա գրական լեզուները:

Այս հիմքի վրա է ձևավորվում բարբառների ուսումնասիրության աճառյանական մեթոդը, որը կարելի է անվանել պատմա-նկարագրական: Նրա բնորոշ առանձնահատկությունն այն է, որ բարբառի հնչյունական համակարգի քննությունը կատարվում է պատմականորեն, մինչդեռ քերականական համակարգի ուսումնասիրությունն առավելապես ներկայացվում է նկարագրական եղանակով: Ըստ որում՝ նկարագրական է նաև հնչյունաբանության այն մասը, որ նվիրված է բարբառի հնչյունական կազմի համաժամանակյա քննությանը (հնչյունախոսություն, կամ իր տերմինով՝ ձայնախոսություն): Այստեղ թվարկվում են բարբառի ձայնավոր ու բաղաձայն հնչյունները, հատկապես շեշտվում ու նկարագրվում այն հնչյունները, որոնք բացակայում են գրական լեզվում և հենց այդ տեսակետից էլ բնութագրում են բարբառի հնչյունական համակարգը: Հնչյունաբանական ուսումնասիրությունների հիմնական առանցքը կազմում են պատմական ու փոխազդեցական հրնչյունափոխության երևույթները, որոնք քննվում են համեմատությունների միջոցով: Բարբառի ընդհանուր հայերենյան բառերը համեմատվում են հին հայերենից ավանդված բառերի հետ և այդ համեմատությունների միջոցով բացահայտվում առանձին հնչյունների կրած փոփոխություններն իրենց օրինաչափություններով ու բացառություններով: Ըստ որում, բոլոր դեպքերում հաշվի են առնվում հնչյունի դիրքային ու արտասանական առանձնահատկությունները: Օրինակ՝ ձայնավորների քննության ժամանակ հաշ-

վի են առնվում բառի մեջ նրանց գրաված գիրքը (բառասկիզբ, բառամեջ, բառավերջ), շեշտի նկատմամբ ունեցած գիրքը (շեշտի տակ, շեշտից դուրս), վանկաքանակը (միավանկ, երկվանկ, բազմավանկ) և այլն:

Քերականական համակարգի քննության մեջ հիմնական շեշտը դրվում է ձևաբանական երևույթների ուսումնասիրության վրա: Քանի որ հայերենի ժամանակակից բարբառներն իրենց շարահյուսական կառուցվածքով աշխարհաբարյան լինելով՝ շատ չնչին տարբերություններ են տալիս, ուստի և լեզվական այդ մակարդակի երևույթների քննության վրա ուշադրություն չի դարձվում: Ձևաբանությունն էլ իր հերթին քննվում է՝ քերականական իմաստից դեպի նրանց ձևական արտահայտության միջոցները՝ սկզբունքով, որի հետևանքով էլ այս բաժնի ուսումնասիրությունը կրում է նկարագրական բնույթ: Ձևաբանության մեջ նման մոտեցման ընտրությունը կարող է արդարացվել նրանով, որ ժամանակակից բարբառների ձևաբանական շատ երևույթներ համեմատելի եզրեր չունեն հին հայերենում, ուստի և նրանց վեր հանումը անհրաժեշտաբար կատարվում է քերականական այն իմաստների շրջանակներում, որոնք հատուկ են աշխարհաբարին: Սակայն, բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն քերականական ձևը բացատրվում է պատմականորեն՝ հանդիսանալով որևէ հին ձևի հընչյունական կամ իմաստային զարգացումը, Աճառյանը տալիս է դրանց հիմնավոր բացատրությունը:

2. Աճառյանը բարբառագիտական ուսումնասիրությունների համար չափազանց կարևոր էր համարում տառադարձության սկզբունքների մշակումն ու ճշգրտումը: Միասնական ու հետևողական տառադարձության կիրառումը Աճառյանը բարբառագիտական ուսումնասիրությունների հիմնաքարն էր համարում: Նա մեծ ափսոսանք էր արտահայտում այն բանի համար, որ պարբերական մամուլում հրապարակված բազմաթիվ բարբառագիտական ու բանահյուսական նյութեր չեն կարող վստահորեն օգտագործվել բարբառագիտական ուսումնասիրությունների մեջ հենց միայն այն բանի համար, որ գրված են ոչ պատշաճ ճշգրտությամբ, իսկ շատ դեպքերում էլ պարզապես գրված են գրական ուղղագրությամբ:

Հայ բարբառագիտության մեջ այսօր կիրառվող տառադարձության սկզբունքների համար դարձյալ պարտական ենք Աճառյանին, որովհետև նա էր, որ ստեղծեց տառադարձության ժամանակակից համակարգը՝ հիմնված հայերենի այբուբենի տառերի

վրա, կիրառելով նաև տառազուգորգումներ ու պայմանական նշաններ: Այդ տառադարձությունը, որ հարատևեց մինչև մեր օրերը, իր մեջ կրելով միայն որոշ փոփոխություններ, այժմ մեղ կարող է թվալ շատ բնական ու սովորական, բայց հիշենք, որ այն կարող էր ունենալ նաև այլ ընթացք:

2. Աճառյանը հայերենի բարբառների ուսումնասիրությունը կատարեց համաժամանակյա ու տարաժամանակյա կտրվածքներով, քննության ոլորտի մեջ առնելով հատկապես նրանց հնչյունական ու քերականական համակարգերը: Բարբառների բառային կաղմը առանձին քննության չէր ենթարկվում: Այստեղ էլ Աճառյանը ուներ յուրահատուկ մոտեցում: Բարբառային բառերը ու դարձվածքները նա հավաքում ու մշակում էր առանձին՝ միանգամայն նպատակային դարձնելով դրանց օգտագործումը: Բարբառների բառապաշարի այն մասը, որ ղուտ գավառական էր՝ հատուկ միայն բարբառներին, Աճառյանը ամփոփեց իր «Գավառական բառարան»-ում. գրական լեզուների հետ ընդհանուր մասը ղետեղեց Արմատական բառարանում:

Բարբառների ուսումնասիրությունը Աճառյանի համար ինքնանպատակ չէր: Նա խորապես գիտակցում էր, որ հայոց լեզվի պատմությունը շատ պակասավոր կարող է լինել, եթե նրա մեջ չօգտագործվեն բարբառների ընձեռած լեզվական փաստերը: Եվ քանի որ ինքը հայոց լեզվի հմուտ պատմաբան էր, բարբառների քննությունն էլ վարում էր մասնագիտական խորությամբ, ամեն կերպ աշխատելով իմաստավորել նրանցում կատարված փոփոխությունները և ծառայեցնել դրանք լեզվի պատմության հարցերի լուսաբանմանը:

2. Աճառյանը մշակեց նաև հայերենի պատմական բարբառագիտության հիմնական հարցերը:

Հայերենի պատմության բոլոր շրջանների համար էլ Աճառյանը ընդունում էր բարբառների գոյությունը: Այս տեսակետից ճիշտ չեն նրանք, ովքեր պնդում են, թե Աճառյանը իբր թե ժխտում էր 5-րդ դարում հայերենի բարբառների գոյությունը: «Մեսրոպյան հայերենը,— գրում էր Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ,— մեր լեզվի կյանքի մեջ առաջին երևույթի այն առաջին պատկերն է, որ ավանդել է մեղ պատմությունը. նրանից առաջ եղած պատկերները, թեև գիտենք որ կան, բայց մեղ անժանոթ են: Բայց միևնույն ժամանակ, նույն այդ մեսրոպյան շրջանին, պետք է ընդունենք, թե կար նաև երկրորդ երևույթը, այն է զանազան բարբառներ հայերենի մեջ, որոնցից մեկը միայն բարձրացավ գրա-

կանության, այն է մեսրոպյան գրական հայերենը⁹։ Գրականության աստիճանի բարձրացած այդ հայերենը, Աճառյանի կարծիքով, այն ժամանակվա Արարատյան բարբառն էր։

5-րդ դարում հայերենի բարբառների գոյությունը հաստատելու համար Աճառյանը բերում էր նաև լեզվական փաստեր։ Հիմնվելով լեզվական այդ փաստերի, ինչպես նաև բարբառների ու բարբառալիսն երևութների մասին մատենագիրների ու քերական մեկնիչների հաղորդած տեղեկությունների վրա, մասնավորապես նաև ժամանակակից բարբառների բառաձևերի համեմատությամբ կատարված վերականգնումների վրա, Աճառյանը գտնում էր, որ 5-րդ դարի հայերեն բարբառները այնպիսի տարբերություններ չունեին, որոնց հիման վրա կարելի լիներ նրանց անվանել բարբառներ, այլ սյդ տարբերություններն ավելի շուտ ներկայացնում էին ենթաբարբառային վիճակ։ Սրանով Աճառյանը հատկապես ցանկանում էր շեշտել, որ 5-րդ դարի բարբառների բարբառային բաժանվածությունն աստիճանը չի կարելի նույնացնել արգի հայերենի բարբառների բարբառային բաժանվածության աստիճանին։

Ժամանակակից հայ բարբառների հիմնական գծերը Աճառյանը տեսնում էր սկսած 11—12-րդ դարերից, այսինքն՝ մեր լեզվի պատմության միջին հայերենյան շրջանի սկզբից։ Այս շրջանի համար նա ընդունում էր բազմաթիվ միջին հայերենների (այսինքն՝ բարբառների) գոյությունը, որոնցից միայն մեկն է մեղ լավ հայտնի՝ կիլիկյան հայերենը, այն էլ այն բանի շնորհիվ, որ նրան բախտ էր վիճակվել բարձրանալու գրականության աստիճանի։ Այստեղ էլ Աճառյանը գրական լեզվի հիմքում դնում էր բարբառային տարբերակը։

Միջին հայերենյան տարբերակների առաջացումը Աճառյանը պատկերացնում էր որպես կենդանի, խոսակցական (ոչ գրավոր) տերիտորիալ հայերենների էվոլյուցիոն զարգացման արդյունք։ Միջին հայերենյան այդ տարբերակներն էլ իրենց հերթին ընկած են արդի հայերենի ժամանակակից բարբառների հիմքում։ Նոր գրական հայերենների հիմքում ևս ընկած են բարբառային տարբերակներ՝ ըստ Աճառյանի, արևմտահայ գրական լեզվի հիմքում՝ պոլսահայ բարբառը, արևելահայ գրական լեզվի հիմքում՝ Արարատյան (Երևանի) բարբառը։ Համառոտիվ այսպիսին էր հայ բար-

9 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 114—115։

բառների առաջացման ու դրական լեզուների հետ նրանց առնչակցության Աճառյանի ըմբռնումը:

Հ. Աճառյանը իր բարբառագիտական աշխատանքների պսակը համարում էր ա-ի քմայնացմանը վերաբերող հնչյունական օրենքը, որ նա հայտնաբերել էր Վանի բարբառում: «Այս կանոնը այնպիսի հեռանկարներ է բաց անում մեր առաջ,— դրում էր նա,— և այնպիսի գաղտնիքների բանալին է հանդիսանում, որ ես համարում եմ իմ բոլոր բարբառագիտական աշխատանքների պսակը և հրճվանքով լցված անվանում եմ «Աճառյանի օրենք»¹⁰:

Զէ՞ր չափազանցնում արդյոք Աճառյանը, երբ իր իսկ մտքի ուժով ստեղծած հայ բարբառագիտության հիմնարար աշխատությունների, շուրջ տասը բարբառների մենագրական ուսումնասիրությունների, «Գավառական բառարան»-ի առկայության պայմաններում հնչյունական այգ օրենքը համարում էր իր բարբառագիտական աշխատանքների պսակը: Ո՛չ, չէր չափազանցնում: Իրեն իսկ հատուկ խորաթափանցությամբ Աճառյանը ներքին գիտակցությամբ կռահում էր այդ օրենքի կարևորությունը և օգտագործման հեռանկարները: Այդ բանը ցույց տալու նպատակով մենք մեղ թույլ կտանք ավելի հանգամանորեն խոսելու այդ օրենքի մասին:

Օրենքը ձևակերպված է Վանի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ. «Գրաբարյան ք, գ, դ, ձ, ջ բաղաձայնները Վանի բարբառում բառասկզբում դառնում են պ, կ՛, տ, ծ, և, և նրանց կողքին գտնվող ա ձայնավորը դառնում է փ, իսկ պ, կ, տ, ծ, և մնում են անփոփոխ, և նրանց կողքին գտնվող ա ձայնավորն էլ մնում է անփոփոխ»¹¹: Այդ նույն կանոնը ունի ավելի համառոտ ձևակերպում. «Վանի բարբառում ա ձայնավորը, գտնվելով գրաբարյան թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է փ, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա»¹²:

Ինչպես կարելի է նկատել՝ այդ երկու ձևակերպումներում էլ ա-ի քմայնացումը պատճառաբանվում է որպես հին ձայնեղ պայթականների խլացմամբ պայմանավորված երևույթ. այդ ձայնեղներից առաջացած խուլերից հետո է, որ ա-ն քմայնացել է, մինչդեռ այդ նույն ա-ն հին խուլերից հետո մնացել է անփոփոխ:

Օրենքը, անշուշտ, ձևակերպված է Վանի բարբառում արձանագրված հնչյունական երևույթին միանգամայն համապատասխան:

10 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 20:

11 Նշվ. աշխ., էջ 19:

12 Նշվ. աշխ., էջ 20:

«Բայց վանեցին որտեղի՞ց իմացավ, որ իր խուլ ձայներից այսինչը առաջանում է թրթռունից, մյուսը խուլից,— հարցնում էր Աճառյանը և անում մի կարևոր կռահում:— Ուրեմն ա-ի և ա-ի ձայնափոխությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թրթռուն բաղաձայնները գոյություն ունեին գեռ և խուլի վերածված չէին»¹³։ Այդ նույն միտքը նա ցուցադրում էր ժամանակագրական հետևյալ սխեմայով։

Առաջին (գրաբարյան) շրջան

բա, գա, գա, ձա, ջա
պա, կա, տա, ծա, ճա

Երկրորդ (անցման) շրջան

բա, գա. դա, ձա, ջա
պա, կա, տա, ծա, ճա

Երրորդ (վանի բարբառի) շրջան

պա, կա, տա, ծա, ճա
պա, կա, տա, ծա, ճա¹⁴

Առաջին (գրաբարյան) և երրորդ (վանի բարբառի) շրջանների միջև Աճառյանը, ինչպես տեսնում ենք, դնում էր երկրորդ (անցման) շրջանը, որտեղ ձայնեղ պայթականների մոտ ա-ն քմայնացած էր, բայց ձայնեղները պահպանում են իրենց ձայնեղությունը։ Այս նշանակում է, որ Աճառյանը ա-ի քմայնացումը կապում էր ոչ թի ձայնեղների խլացման հետ, այլ դիտում էր դրանից անկախ կատարված երևույթ, որը պայմանավորված էր հենց իրենցով՝ ձայնեղներով։

Նշենք նաև, որ այդ նույն վանի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ Աճառյանը նկատել էր, որ ձայնեղ պայթականներից հետո քմայնացման երևույթը հատուկ էր նաև ու ձայնավորին, թեև այդ քմայնացումը այստեղ կատարվում էր ոչ նույն հետևողականությամբ։ Նկատելի էր, որ ձայնեղ պայթականներից հետո ու-ն ունեի քմայնացած երկբարբառի արտասանություն (նծ), մինչդեռ խուլերից հետո քմայնացումը երկբարբառում բացակայում էր։

¹³ Նշվ. աշխ., էջ 20։

¹⁴ Նույն տեղը։

Վանի բարբառում հայտնաբերած այս օրենքը Աճառյանը տա-
րածում էր Մարաղայի, Խոյի, Սալմաստի, Ղարաբաղի, Շամախիի
բարբառների վրա, որոնցում, բոլորի մեջ էլ, ա-ի քմայնացումը
ուղեկցվում էր ձայնեղների խլացմամբ: Միաժամանակ, Ղարաբա-
ղի բարբառից բերած օրինակներից երևում է նաև, որ Աճառյանը
իր օրենքով էր բացատրում ու> ու հնչյունափոխությունը (դու>
տու)՝ ձայնեղներից առաջացած խուլներից հետո, որին հակա-
դրվում էր հին խուլներից հետո գտնվող ու-ի օ հնչյունափոխու-
թյունը (տուն>տոն):

2. Աճառյանը, երբ ձևակերպում էր հնչյունական այս օրենքը,
ներան հայտնի չէին հայերենի այնպիսի բարբառներ, որոնք ներ-
կայացնելիս լինեին այդ օրենքի գործառնության երկրորդ (անց-
ման) շրջանը և հնարավորություն տալին ավելի ընդհանրացնող
բնույթ տալու այդ օրենքին:

Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Աճառ-
յանի օրենքը գործում է բավականին մի մեծ տարածքում՝ Վաս-
պուրականից Սյունիք՝ մինչև Արցախ, և որ այդ տարածքում կան
այնպիսի բարբառներ, որոնք ներկայացնում են այդ օրենքի՝ գրա-
բարից Վանի բարբառին անցնելու երկրորդ (անցման) շրջանը և
օրինաչափությունը ներկայացնում են ավելի ընդհանրական ձևով¹⁵:

Այդ բարբառներից ավելի տիպական կարելի է համարել Կրո-
ղենի բարբառը, որտեղ ձայնեղ պայթականներից ու պայթաշփա-
կաններից հետո քմայնանում է ոչ միայն ա ձայնավորը, այլև
ո-ն և ու-ն, այսինքն՝ ետին շարքի բոլոր ձայնավորները: Միաժա-
մանակ այստեղ այդ ձայնավորների քմայնացումը չի ուղեկցվում
ձայնեղների խլացմամբ, այլ այդ քմայինները կան հենց ձայնեղ-
ների առկայությամբ:

Անցման միջին շրջանը ներկայացնում են նաև Մեղրու և Կար-
ձևանի բարբառները, որոնց մեջ նույնպես ձայնեղ պայթական-
ները մնում են անփոփոխ, բայց նրանցից հետո գտնվող ա-ի դի-
մաց այստեղ ոչ թե ա է, այլ է (բան>բէն), որ, անշուշտ, դար-
գացել է ա-ից, քանի որ հին խուլներից հետո այստեղ ա-ն մնում
է անփոփոխ (պատ>պատ): Այս բարբառներում ևս ձայնեղ պայ-
թականներից հետո ու-ն քմայնանում է, իսկ խուլներից հետո փո-
խարկվում է օ-ի (դուրս>դոս, տուր>տօր): Նույն դիրքում ո-ի

¹⁵ Այդ մասին տե՛ս նաև 2. Մուրադյան, Ինչպե՞ս հասկանալ «Աճառյանի
օրենքը», «Բանրեր Երևանի համալսարանի», 1973, № 2, էջ 161—170:

քմայնացումը հետևողական չէ. որոշ բառերում այն քմայնանում է, որոշ բառերում փոխվում ու-ի:

Ընդհանուր առմամբ նշված տարածքի բարբառներում «Աճառ-յանի օրենքը» հետևողականորեն գործում է ա ձայնավորի համար. որոշ բարբառներում անհետևողականություն նկատվում է միայն ու-ի կամ ո-ի քմայնացման ժամանակ, այն էլ ոչ նույն բարբառում:

Չնայած այս բոլորին՝ «Աճառյանի օրենքը» ունի ընդհանրական բնույթ. գործում է մի մեծ տարածքում, և նրա գործառնությունամբ պետք է բացատրել ոչ միայն ա-ի քմայնացումը, այլ առհասարակ ետին շարքի ձայնավորների՝ առաջնային շարքի ձայնավորների վերածվելու օրինաչափությունը՝ պայմանավորված պայթական ու պայթաշփական բաղաձայնների ձայնեղության բնույթով, մի օրինաչափություն, որին հակադրվում է նույն ձայնավորների անփոփոխ մնալը (կամ այլ օրինաչափությունների ենթարկվելը) խուլ պայթականներից հետո:

2. Աճառյանը ճիշտ էր կռահել, երբ ասում էր, թե այս հնչյունական օրենքը կարող է մի շարք գաղտնիքների բանալի հանդիսանալ և իր էությունամբ հեռանկարային է: Այսօր արդեն այս օրենքով են բացատրվում վասպուրական—Արցախ տարածքի բարբառների մի շարք հնչյունափոխական երևույթներ, և կարծում ենք, որ ապագայում էլ շատ այլ երևույթներ պիտի մեկնաբանվեն այս օրենքով:

Այս տեսակետից ուշագրավ է երիտասարդ գիտաշխատող Ալբ. Պաշատրյանի հետևյալ դիտարկումը: Նշված տարածքի, հատկապես Սյունիքի և Արցախի բարբառներում հայտնի հնչյունափոխական օրինաչափություն է ի ձայնավորի փոփոխությունը: Այստեղ առաջնային շարքի վերին բարձրացման այդ ի ձայնավորը շեշտի տակ (որոշ տեղերում նաև շեշտից հետո) հնչյունափոխվում է ավելի լայն բացվածքի ձայնավորի, փաստորեն վերին բարձրացումից իջնելով և աստիճանաբար փոխելով իր արտաբերության շարքը: Այսպես. Պարաբաղում, Սյունիքի խոսվածքների մի մեծ մասում, Մեղրիում հին ի ձայնավորի դիմաց ունենք է կամ ը (միս>մէս, քիթ>քէթ, սիրտ>սէրտ, տիկ>տէկ, տէգլ). Կարճևանի բարբառը այդ նույն ի-ի դիմաց ունի օ կամ ա (միս>մաս, քիթ>ք'աթ, սիրտ>սարտ, տիկ>տաք'). Ագուլիսի բարբառը այն դարձնում է երկ-հնչյուն այ (միս>մայս, քիթ>քայնթ, տիկ>տայդ): Բայց այս օրինաչափությունը բոլոր դիրքերում չէ, որ կատարվում է: Նկա-

տելի է, որ ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ի-ն մնում է անհնչյունափոխ (բիր > բիր, պիր, գին > գին, կին, գինգ > գինգ, գինձ > գինձ, կինձ, գիր > գիր, կիր, գինի > գինի, կինի, ձի > ձի, ծի)։ Հասկանալի է, որ այստեղ էլ գործում է «Աճառյանի օրենքը»՝ արգելակելով ի-ի հնչյունափոխությունը։ Իսկ այդ արգելակումը բացատրվում է նրանով, որ ձայնեղ պայթականները իրենցից հետո պահանջելով թեթև ձայնավորներ, կանխում են ի ձայնավորի հնչյունափոխությունը։

«Աճառյանի օրենքի» հետ առնչվում և նրանից ինքնին բխում է մի կարևոր հարց, կապված նշված տարածքի բարբառների ձայնեղ պայթականների որակի հետ։

Իսկապես. եթե «Աճառյանի օրենքի» էությունն այն է, որ բառակազմի ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո հաջորդող ձայնավորները փոխարկվում են առաջնային ձայնավորների, ապա դրանից չի հետևում արդյոք, որ այդ բաղաձայնները ունեն փափուկ արտասանություն և նրանց փափուկությունն է, որ փոխանցվում է ձայնավորներին։

Թվում է, լի սրանից լավ բացատրություն չի կարող լինել։ Բայց ինչքան էլ հրապուրիչ լինի այս մեկնաբանությունը, այն չի հաստատվում այդ տարածքի բարբառների այսօրվա տվյալներով։ Այնտեղ, որտեղ ձայնեղ պայթականներից կամ նրանցից առաջացած խուլերից հետո հաջորդող ձայնավորները փոխվել են առաջնային ձայնավորների, այդ բաղաձայնները (այժմ) չունեն փափուկ արտասանություն։ Բացառություն են կաղմում միայն գ, կ, ֆ հտնալեզվայինները, որոնց քմայնացումը, այսինքն՝ գ', կ', ք' միջնալեզվային արտասանությունը՝ առաջնային ձայնավորներից առաջ ինքնին հասկանալի մի բան է։ «Աճառյանի օրենքին» ենթարկված այնպիսի բարբառներում, ինչպիսիք են Վանը, Շատախը, Խոյը, Մարաղան, Մեղրին, Կարճևանը, Կոդենը և այլն, գ', կ', ք' միջնալեզվայիններից բացի այլ փափուկ պայթականներ չեն արձանագրվում։ Մաղաչափ անգամ չի կարելի կասկածել, որ այդ բարբառներն ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած լինի հնչյունախոսական մի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է պայթականների փափուկ արտասանությունը։

Սակայն հայերենի բարբառներում փափուկ պայթականների¹⁶ գոյություն վրա ումանք համառորեն պնդում են, հատկապես շեշտը

16 Այստեղ և հետագայում «փափուկ պայթականներ» հասկացության մեջ բացառվում են գ', կ', ք' միջնալեզվայինները։

դնելով Ղարաբաղի բարբառի և նրա որոշ խոսվածքների վրա: Բայց այստեղ էլ տարօրինակն այն է, որ նույն օբյեկտի ուսումնասիրությունից արվող եզրակացությունները նույնական չեն տարբեր ուսումնասիրողների մոտ: Օրինակ՝ Հաղրութի բարբառը, որն իր հնչյունական նկարագրով ամբողջովին հարում է Ղարաբաղի բարբառին և իրականում չունի հնչյունական մի այլ համակարգ, քան Ղարաբաղի բարբառինն է, Արմ. Պողոսյանի նկարագրությամբ ունի պայթական ու պայթաշփական բաղաձայնների փափուկ շարքեր (դ', տ', ք', ձ', ծ', ց' և այլն), այն ժամանակ, երբ ըստ Կ. Դավթյանի նկարագրության, ինչպես Ղարաբաղում, այնպես և նրա մեջ մտնող Հաղրութի բարբառում նման պայթականներ չեն արձանագրվում: Կ. Դավթյանը մի հնչյունի համար միայն տուրք է տալիս Արմ. Պողոսյանի կարծիքին, սովորական դ-ի կողքին դնելով նաև փափուկ դ', դրա համար բերելով փայտ օրինակը:

Հայերենի ժամանակակից բարբառներում փափուկ պայթականների գոյության հարցը չափազան կարևոր է ոչ միայն «Աճառյանի օրենքի» կապակցությամբ, այլև ընդհանուր տեսության առումով, քանի որ այդ բաղաձայնների առկայության փաստի ընդունումը կարող է հիմք տալ նոր մոտեցումների ու եզրակացությունների:

Հենց այդպիսի մոտեցման մի փորձ է անում հանգուցյալ դոցենտ Մ. Պողոսյանը, երբ հենվելով վերը նշված կարծիքի վրա, աշխատում է ոչ միայն փափուկ պայթականներ տեսնել իր ուսումնասիրած Շուկավերի խոսվածքում, այլև դրանց գոյությունը հիմնավորել հնչույթաբանորեն¹⁷:

Մ. Պողոսյանն իր այդ հետազոտության մեջ շրջանցում է «Աճառյանի օրենքը» և բոլոր այն դեպքերում, երբ ձայնեղների խլացման հետևանքով բառային զույգերի տարբերակումը իրականում կատարվում է առաջնային և ետին շարքի ձայնավորների հակադրությամբ (պփա < բազ և պատ, պփն < բահ և պան, տփռ < գեռ և տառ, տփր < դուր և տուր), երբ իմաստատարբերական ֆունկցիան իրենց վրա են վերցնում «քմայնացած» ձայնավորները (փ, օ, ու), նա հնչույթաբանական տարբերակիչ հատկանիշ է վերագրում ձայնեղներից առաջացած խուլ բաղաձայններին՝ ընդունելով փափուկ և կոշտ պայթականների հակադրություններ (պփա < բադ և պատ, տփր < դուր և տուր), դրանով իսկ հըն-

17 Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 2:

շուլթախին արժեքից զրկելով ա, օ, ու ձայնավորներին և ընդհակառակն՝ հնշուլթաբանական տարբերակիչ հատկանիշ վերագրելով պալթականների մի նոր շարքի։ Ըի՞շտ է, արդյոք, այս մոտեցումը։ Հատուկ են արդյոք հայերենի այս տարածքի բարբառներին փափուկ պալթական բաղաձայններ։

Քանի որ Շուլավերի խոսվածքն իր հնչյունական նկարագրով հարում է Ղարաբաղի բարբառին, ուստի և փափուկ բաղաձայնների գոյություն կամ բացակայության փաստի քննությունը կվերաբերի ոչ միայն Շուլավերի խոսվածքին, այլ նաև Ղարաբաղի տարածքի բոլոր տարբերակներին, որոնց մեջ գործել է «Աճառյանի օրենքը»։

Նախ նշենք, որ որոշակի պարզություն չկա ո՛չ «փափուկ», «քմային» տերմինների գործածության և ո՛չ էլ բաղաձայնների փափկության վերաբերյալ ըմբռնումների մեջ։

Նախ տերմինների օգտագործման մասին։ Եթե «քմային», «քմայնացում» տերմինները բաղաձայնների փափկությունը նշելու համար դեռևս օգտագործելի կարելի է համարել զ', կ', ք' միջնալիզվայինների համար, ապա դրանք հարմար ու դիտական չեն Բ, Վ, դ, տ և այլ շրթնայինների, ատամնայինների, առաջնալիզվայինների համար։ Սրանց մեջ ոչ մի քմայնացում չի կատարվում։

Մյուս կողմից՝ միանգամայն պարզ չէ նաև «բաղաձայնների կամ պալթականների փափկություն» արտահայտության բովանդակությունը։ Եթե պալթականների փափուկ արտասանությունն ասելով պետք է հասկանալ լիզվաբանության մեջ հայտնի այն երևույթը, որ կա սլավոնական մի շարք լիզուներում, երբ իրար հակադրվում են փափուկ ու կոշտ բաղաձայնները, ապա նման երևույթ հայերենի հիշյալ բարբառներում ու խոսվածքներում չկա։ Այդ բանը շատ ակնառու կերպով կարելի է ցույց տալ հատկապես ատամնային դ-ի և տ-ի միջոցով, որոնց կոշտ ու փափուկ արտասանությունների հակադրությունը առավել հեշտ ընկալելի է։ Յույց տանք այդ բանը նախ ռուսերենի օրինակներով, որտեղ որոշակիորեն հակադրվում են փափուկ ու կոշտ բաղաձայնները։ Այդ հակադրությունը կարելի է տեսնել հետևյալ բառային զույգերում даю-և дядя, там-և тѣтя, երբ ռուսերենի д-ի և т-ի փափկությունը որոշակիորեն ընկալվում է հայերենի ձ-ի և ծ-ի արտասանությանը մոտեցող արժեքով (և այդ հիմքի վրա է, որ մեղանում քաղաքաբնակ հայերը այդ բառերը արտասանում են որպես джаджя, джн-ծжя)։ Այստեղ մենք իրոք ունենք փափուկ д' և т', որոնք հակադրվում են կոշտ д-ին և т-ին։

Բաղաձայնների նման փափուկ արտասանություն հատուկ է արդյոք այն բարբառներին ու խոսվածքներին, որոնց համար նշում են ընկերները: Իհարկե, ոչ: Այդ բարբառներում չկան այնպիսի դ, տ հնչյուններ, որոնք իրենց փափուկ արտասանությամբ մոտենային ձ-ի և ծ-ի արտասանությանը: Եվ այդ բարբառներում բառային այնպիսի դուլդեր, ինչպիսիք են, օրինակ՝ ա՜ռ<դեռ և տառ, ա՜փ<դափ և տափ, առ<դուր և տուր հակադրվում են իրար ոչ թե փափուկ ու կոշտ ա-երով, այլ քմայնացած ու ոչ քմայնացած ձայնավորներով, հակառակ դեպքում, եթե այդ բաղաձայնները փափուկ լինեին, պիտի արտասանվեին տ՛ալ (ծափ), տ՛ալ (ծուր), մի բան, որ իրականում բացակայում է: Նույնը վերաբերում է նաև դ պայթականին. եթե այն ունենար փափուկ արտասանություն, պետք է ընկալվեր ձ-ին մոտ մի հնչյուն: Այս տեսակետից Ղարաբաղի բարբառի համար բերվող փա՛ղ տառադարձությունը ճիշտ չէ, որովհետև ոչ ոք այդ բառը չի արտաբերում որպես փա՛ռ:

Հարկ է հիշել նաև, որ ինչպես Վանի բարբառի, այնպես և խոյի և Շատախի բարբառներին նվիրված ուսումնասիրությունների մեջ, որտեղ ևս գործում է «Աճառյանի օրենքը», փափուկ պայթականներ չեն արձանագրվում, բայց այստեղ էլ կան հակադրվող նման դուլգեր՝ տա՜ս<դաս և տաս, տա՛շտ<դաշտ և տաշտ և այլն, որոնց մեջ իմաստի տարբերակում կատարվում է քմային և ոչ քմային (առաջնային ու ետին շարքի) ձայնավորների հակադրությամբ: Փակագծում ասենք, որ անշուշտ, բաղաձայնը (ինչպիսին էլ նա լինի) առաջնային շարքի ձայնավորներից առաջ ստանում է փափկության ինչ-որ թույլ երանգ, բայց գա երբեք էլ այն փափկությունը չէ, որ ունենար հնչույթաբանական արժեք:

Այնուհետև. որ տվյալ բարբառներին ու խոսվածքներին առհասարակ խորթ է փափուկ պայթականների արտասանությունը, ձերևում է նաև մի այլ իրողությունից: Վերը նշված ռուսերեն բառերը (дядя, тетя) այս բարբառներում որպես փոխառություններ վերարտադրվում են ոչ փափուկ արտասանությամբ՝ դադայ, տոտա (օր. Ղարաբաղում): Եթե այս բարբառները ունենային փափուկ դ, ա՛ ապա դա հնարավորություն կտար ճշտորեն վերարտադրելու այդ բառերի ռուսական արտասանությունը:

Առհասարակ նկատելի է, որ հայերենի բաղաձայնների մեջ փափուկ արտասանություն ունեցել և այժմ էլ ունեն գ, կ, ք ետնալեզվայինները, լ, ր ձայնորդները: Եվ պատահական չէ, որ

այս բաղաձայնները տարբեր վայրերում ի հայտ են բերում այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են բացատրվել միայն նրանց փափուկ արտասանությամբ, ինչպես՝ գ, կ, Բ-ի դիմաց ջ, ճ, շ (գալլ > գէլ > ջէլ, կեռակուր > ճէռակուր, քոյր > քիւր > շիւր), այն էլ առաջնային շարքի ձայնավորներից առաջ. Բ-ի դիմաց փափուկ Բ՝ և ապա՝ յ—ծ անցում և այլն: Իսկ ք, պ, փ, դ, տ, ր պայթականների փոփոխությունները կատարվում են միայն իրենց լծորդական շարքի սահմաններում, և չկա, օրինակ, մի այնպիսի բարբառ, որը հայերենի դ-ի դիմաց ունենար ձ, տ-ի դիմաց՝ ծ և այլն:

Իսկ թե ինչպիսի հնչ-արտաբերական առանձնահատկությամբ են օժտված եղել ք, գ, դ, ձ, ջ բաղաձայնները, որ նրանցից հետո եկող Լ տին շարքի ձայնավորները ստացել են առաջնային շարքի ձայնավորների արտասանություն, այժմ որոշակիորեն դժվար է վճռական բան ասել: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ նրանք ինչ-որ ժամանակ ունեցել են փափուկ արտասանություն և հետագայում է, որ կորցրել են այն՝ իրենց այդ հատկությունը ձայնավորներին փոխանցելուց հետո: Բայց այս ենթադրությունը դեռ պետք է ապացուցել:

Այնուհետև, ելնելով այն փաստից, որ «Աճառյանի օրենքը» չի գործում այն տարածքի բարբառներում, որոնց մեջ առկա են շնչեղ ձայնեղներ կամ դրանցից առաջացած շնչեղ խուլեր, կամ ընդհակառակն՝ գործում է այն տարածքի բարբառներում, որոնց մեջ բացակայում են շնչեղ ձայնեղներ, կարելի է ենթադրել նաև, որ քննարկվող տարածքի բարբառների ք, գ, դ, ձ, ջ բաղաձայնները «Աճառյանի օրենքը» կյանքի կոչելու հատկությունը ձեռք են բերել հնագույն շրջանում՝ ձայնեղների շնչեղության կորստի հետևանքով, մի ենթադրություն, որ նույնպես կարող է քննության ու հիմնավորման:

Ինչպես տեսնում ենք, «Աճառյանի օրենքը» իրենից ներկայացնում է ոչ միայն հնչյունափոխական մի կանոնի սոսկական ձևակերպումը, այլև առաջադրում է մի շարք խնդիրներ ու հարցադրումներ, որոնց լուծումը էական նշանակություն ունի լեզվի պատմության համար: Իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ այս օրենքը օգնում է հասկանալու և մեկնաբանելու հնչյունաբանական այլ օրենքներ, պարզելու որոշ օրինաչափությունների հետ կապված ժամանակագրական հարցեր, կատարելու վերականգնումներ ու բառային ճշգրտումներ, ապա միանգամայն հասկա-

նալի կարելի է համարել այն կարևորությունը, որ Աճառյանը տա-
լիս էր այս օրենքին:

Ամփոփելով մեր համառոտ խոսքը Աճառյանի գիտական գոր-
ծունեության մի քնազավառի մասին, նշենք նաև, որ մի հոգվածի
շրջանակներում հնարավոր չէ վեր հանել խոշոր գիտնականի բար-
բառագիտական ժառանգության բոլոր կողմերն ու դրանց մանրա-
մասները, մի գիտնական, որը փաստորեն հիմնադրեց հայ բար-
բառագիտությունը, ստեղծեց իր ուրույն դպրոցը, ունեցավ հետի-
վորդներ, որոնք իրենց ուսումնասիրությունները կատարեցին նրա
մշակած մեթոդով ու եղանակներով և հայ բարբառագիտությունը
բարձրացրին մի նոր մակարդակի:

2. ԱՃԱՌՅԱՆԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

Հայագիտության, կարելի է ասել, բոլոր բնագավառներում՝ հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, համեմատական քերականություն, բառարանագրություն, հայ գրականության պատմություն, գաղթավայրերի պատմություն, դասագրքերի կազմում և այլն, և այլն, Աճառյանը շարժել է իր բեղնավոր գրիչը և հանդես բերել գիտական խոշորություն, հմտություն, վարպետություն։ Սակայն նրա ամենասիրած գիտական ոլորտը եղել է բառագիտական-բառարանագրական գործը, որի նկատմամբ ունեցած նախասիրությունը երևում է նրա բոլոր ստեղծագործությունների մեջ։

2. Աճառյանի բառարանագրական առաջին աշխատությունը «Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ» բառարանն է, որը հրատարակվել է 1902 թ. էմինյան ազգագրական ժողովածուի մեջ՝ կազմելով նրա Գ հատորը։

Աշխատությանը կցված է ընդարձակ ներածություն, ուր իրավացի կերպով ասվում է. «Ծշմարիտ է, թե Պոլսո, Վենետիկի կամ Վիեննայի մեջ այլ և այլ ժամանակներ հրատարակված են ռամկորեն հայերեն մեծ և փոքր բառագրքեր, որոնց մեջ հավաքված են ժողովրդական լեզվի մեջ գործածական խումբ մը թրքական բառեր և անոնց դիմացը նշանակված հայերեն թարգմանությունը, բայց այս աշխատությունները ոչ մի գիտական արժեք չունին»¹⁸։ Եվ իրավամբ, 1870 թ. հրատարակված «Ընտանեկան բառարան տղայոց վարժության» աշխատությունը 6 առանձին մասերի բաժանված և բառահոգվածների առանձին այբբենական կարգով դասավորված բառարան է՝ հիմնականում ժողովրդական լեզվի

18 2. Անույան, Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ, Կ. Պոլիս, 1902, էջ 5։

մեջ գործածված թուրքերեն բառերի հավաքածու: Հեղինակի նպատակն է փոքր հասակից երեխաներին վարժեցնել, ուսուցանել, թիւ, պետք է, որ ամեն մարդ յուր խոսակցութեան ժամանակը զգուշանա օտարազգի բառեր գործածելէն և ջանք ընեն ունակութիւնը ընելու բուն հայկական բառերով խոսիլը»:

Բարձրագոյն փոխառու բառեր հայերենի մեջ՝ բառարանի ընդարձակ ներածականում Աճառյանը տալիս է թուրքական տիրապետութեան պատմութիւնը, մանրակրկիտ կերպով ցույց տալիս հայ բարբառների դասավորութիւնն ու կրած ազդեցութիւնները. նշելով, որ թուրքերենից ամենից ուժեղ ազդված է Կ. Պոլսի բարբառը: Այս իսկ պատճառով հեղինակն աշխատութեան հիմք է ընդունել Կ. Պոլսի բարբառը՝ այն համեմատելով վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառների հետ:

Հ. Աճառյանը իր բառարանի սկզբնական օրինակում տվել է: թուրքերեն գլխաբառը, հայերեն թարգմանութիւնը (ավելի ճիշտ՝ հայերենում ստացած նշանակութիւնը) և բառի ծագումը, իսկ հետագայում, բառարանը տպարան ուղարկելուց հետո, ավելացրել է գլխաբառի, ինչպես և գլխաբառով կազմված դարձվածքների ֆրանսերեն համարժեքները:

Թուրքերենից կատարված փոխառու բառերի մասին նա Գրիգոր Խալաթյանին իրազեկ է պահել էջմիածնից գրած 1902 թ. հունվարի 25-ի նամակով:

Գր. Խալաթյանի գրած մի այլ նամակից (1901 թ. փետրվարի 9) երևում է, որ եվրոպական լեզվով թարգմանութիւն տալը կատարվել է Խալաթյանի խորհրդով: Աճառյանը այդ կապակցութեամբ գրում է. «Ձեր առաջարկածը՝ ավելացնել որևէ եվրոպական լեզվով նշանակութիւնները յուրաքանչյուր բառի քով, արդեն ընդունած եմ և հայտնած տպարանին, որ այս մասին որևիցե առարկութիւն մը չհանցի: Ես եվրոպական լեզուներին կընտրեմ ֆրանսերենը, որուն ամենին ավելի ծանոթ եմ, քան ուրիշ որևիցե եվրոպական լեզվի: Ես ալ հարմար կը համարեի ընտրել գերմաներէնը, բայց դժբախտաբար բազմաթիւ աշխատութիւններս չեն թույլ տար այդ՝ որ անշուշտ ինձ համար ավելի ժամանակ պիտի պահանջեր, քան ֆրանսերենը»¹⁹:

Հ. Աճառյանի Բարձրագոյն փոխառու բառերը հայերենի մեջ աշխատութիւնը գիտական լուրջ գործ է: Այդ մասին հատուի

19 ԳԱԲ, Գր. Խալաթյանի ֆոնդ № 5, № 138:

խմբագիր Գր. Խալաթյանը գրում էր. «Աճառյանի բառարանը այս ուղղությամբ առաջին գիտական հետազոտությունն է՝ հեղինակը հաշվի է առել ոչ միայն թուրքերենը, այլ այսպես կոչված օսմանյան լեզուն, որի բաղկացուցիչ տարրերի մեջ են մտնում նաև պարսկերենը, արաբերենը, ինչպես և եվրոպական լեզուներից կատարված փոխառությունները»:

2. Աճառյանը իր հրատարակած անդրանիկ բառարանային աշխատության մեջ հատուկ նշումներով ցույց է տվել թուրքերեն գլխաբառերի փոխառության հնությունն ու սահմանները, գործածության ոլորտը:

Աշխատության մի շարք բառահոգվածներ շատ ընդարձակ բնույթ են կրում:

Թուրքերենից փոխառյալ բառերի բառարանի սկզբունքով է կազմված նաև «Եվրոպական փոխառյալ բառեր հայերենի մեջ» աշխատությունը, որը տպագրվեց «Հանդէս ամսօրեայ»-ում 1947 թ. ապա առանձին՝ 1951 թ.: Բառարանը պարունակում է հատկապես Պոլսի ժողովրդական լեզվի մեջ գործածված 860 օտար բառերը:

Աշխատության վերնագիրը պայմանական է, ինքը՝ հեղինակը առաջաբանում խոստովանում է, թե «Ներկա աշխատությանն ապատակն է ամփոփել և ուսումնասիրել այն բոլոր բառերը, որ Պոլսի ժողովրդական հայերենը փոխառած է իտալերենից, ֆրանսերենից և ուրիշ եվրոպական լեզուներից: Ուր որ գտած եմ նույն կարգի բառեր ուրիշ հայ բարբառներու մեջ (Ջմյուռլինո, Արաբկիրի, Ակնա, Վանի, Խրիմի, Նոր Նախիջևանի և Ղարաբաղի) համեմատության առած եմ»: Այսպիսով հեղինակը նկատի է ունեցել բարբառները և ոչ գրական հայերենը, հետևապես ավելի ճիշտ կլիներ աշխատությունն անվանել «Եվրոպական փոխառյալ բառերը հայ ժողովրդական խոսվածքներում»:

2. Աճառյանի բառարանագրական հաջորդ աշխատանքը հայերեն գավառական բառարանն է:

Գավառական բառարան կազմելու միտքը շատ վաղ է ծագել Աճառյանի մոտ: 1901 թ. հունվարին Գր. Խալաթյանին հղած նամակում կարդում ենք. «Զեր առաջարկած ձև՝ կազմել բառարան գրաբարում չպահպանված գավառական հայերեն բառերի, որոշելով նոցա նշանակությունը որևէ եվրոպական լեզվով: Զեր կարելի արդյոք, որ այս բառերի մոտ ավելացվեր նաև հետևյալը կից հայերենին և նշանակելով, թե որ և որ գավառների մեջ գործածական են այդ բառերը»:

Ես ինքս պատրաստ էի մեծ ուրախությամբ կազմելու Ձեր առաջարկած աշխատությունը, քանի որ արդեն հարկավոր նյութերը հավաքած և աշխատությունը մեծ մասամբ լրացուցած եմ, բայց կա դեռ մի քանի ամսվան աշխատանք, աշխատության վերջին տեսք մ'ալ տալու, եվրոպական բացատրություններն ավելացնելու և մաքուրի առնելու համար»²⁰,

Հրաչյա Աճառյանը հետագայում անընդհատ նորանոր նյութերով հարստացրել է իր բառարանը, և 1906 թ. աշխատությունը պարունակում էր 26000 բառահոդված:

«Էջմիածնում եղած ժամանակս,— գրում է Աճառյանը Գրիգորի հալաթյանի,— պատահեցա պրօ. Հայկունուն, որին առաջարկիչ եք կազմել էջմիածնում հրատարակված հատորների հայ գավառական բառերի բառարան: Պր. Հայկունին հայտնելով իր ծերությանը և ժամանակի պակասությունը (փակագծի մեջ պիտի ասել, թե նա իր նյութական պարենը հայթայթելու համար տպարանի սրբագրիչ է և դրա համար էլ վատնում է ահագին ժամանակ), առաջարկեց ինձ վերցնել այդ աշխատանքը:

Ինչպես ուրիշ անգամ հայտնել եմ Ձեզ, ես արդեն կազմում եմ ընդարձակ գավառական բառարան, որի բառերի թիվը այսօր հասնում է 26000-ին:

Մեր նշած, ինչպես և այլ նամակներից երևում է, որ Աճառյանը, ընդհանրապես, իր աշխատանքների մասին միշտ իրազևկ է պահել հալաթյանին և հետևել նրա խորհուրդներին:

Կազարյան ճեմարանի մասնագիտական դասարանների խորհուրդը 1910 թ. նոյեմբերի 5-ին Աճառյանի գավառական բառարանը համարեց արժանի Դ. Քանանյանի մրցանակին: Նույն խորհրդի 1912 թ. նոյեմբերի 7-ի որոշմամբ աշխատությունը հանձնվում է տպագրության, կազմելով «Էմինյան ազգագրական ժողովածուի» Թ հատորը:

«Խմբագրության կողմից» բաժնում Կ. Կոստանյանը գրում է. «Իբր և իր տեսակի մեջ առաջին օրինակ՝ Հ. Աճառյանի գավառական բառարանն այժմ մատչելի է դառնում գրական և դիտական ընդարձակ շրջանների ուսումնասիրությանը: Հայ բառարանների կարգի մեջ ներկա գավառական բառարանը մի կողմից լրացնում է նոցա թերին և մյուս կողմից կարծես նոցա շարահարությունն է դառնում: Սակայն այդ բառարանի նշանակությունն առավել մեծ է հայ ազգագրության նկատմամբ, նորա մեջ ամփոփված են թան-

20 ԳԱԹ, Գր. հալաթյանի ֆոնդ № 5, № 35:

կազին տեղեկություններ ու ցուցումներ հայ ժողովրդի բարքի, սովորութիւնների, խաղերի, հավատալիքների, ընտանեկան և հասարակական կենցաղի և այլ այսպիսի հանգամանքների մասին և որ գլխավորն է, նա տալիս է հարուստ պաշար հայկական բարբառագիտության, որը մեծ նշանակութիւն ունի հայոց լեզվի ամբողջ նկարագիրն ըմբռնելու համար»²¹,

Աշխատութեանը կցված է հեղինակի ընդարձակ առաջաբանը, որտեղ մանրամասն շարադրված են հայերեն բարբառների հնչունափոխական առանձնահատկութիւնները:

2. Աճառյանը նշում է, թե աշխատանքի ընթացքում, բացի գրաչոր աղբյուրներից, ովքեր են իրեն օժանդակել, նույնիսկ ովքանի գլխաբառ է տրամադրել իրեն: Նա հիշատակում է, որ հայ դավառաբարբառներով իրենից առաջ դբաղվել են Ռիվոլան, Շրոգերը, Մխիթար Արքան, Պողոս Թորոսյանը, Ջրպետը, Նոր հայկազյան բառարանը (սա ունի 735 գավառական բառերի հավելված), Գ. Ախվերգյանը և ուրիշներ:

Աշխատութեան բնույթի մասին հեղինակը գրում է. «Ասիկա պիտի պարունակե բոլոր հայ գավառական բառերը, ինչպես նաև այն ձևերը, որոնք կազմված են հայ և օտար բառի մը բարդութեամբ կամ ածանցմամբ:

Գրքիս մեջ առնված են զուտ գավառական բառերը, այսինքն՝ անոնք միայն, որ հին մատենագրութեամբ ավանդված չեն, կամ ավելի պարզ խոսելով՝ Վենետիկի առձեռն բառարանին մեջ չկանս:

Գավառական բառարանում կան ոճեր, դարձվածքներ, որոնցով հարուստ են ժողովրդական բարբառները, օրինակներ և նույնիսկ նկարներ գլխաբառի գոյութիւնը և այս կամ այն իմաստի կիրառութիւնը հաստատելու համար: Հեղինակն այդ կատարել է գիտակցորեն, հետեւելով ֆրանսիական նշանավոր առաժին՝ Un dictionnaire sans exemples est un squelette (Բառարանն առանց օրինակների կմախք է):

«Հայերեն գավառական բառարանը» Աճառյանի բառարանագրական աշխատանքների համեմատաբար թույլ օղակն է: Որոշ գլխաբառեր, հատկապես արեւելահայ բարբառներից, ճիշտ բացատրութիւն չեն ստացել: Այսպես, 2. Թումանյանը Աճառյանի այդ բառարանի մասին 1917 թ. գրած իր հոդվածում, որ անավարտ է մնացել, ճշտ, անտու և մի քանի այլ բառահոգւածների կապակցութեամբ գրում է. «Առաջին՝ անտուը բ-ով է, ոչ թե ո-ով:

21 ԳԱԲ, Գր. Խալաթյանի ֆոնդ № 5, № 143:

Երկրորդ՝ ձաժարը բույս չի, որ աճարն էլ նրա նման բույս լինի։ Աճարը հաճարն է, որ աղում են կամ ծեծում ու ձաժար շինում։ Եվ երրորդ՝ Տփխիս աճարին հատիկ չեն ասում։

Աճառյանն ընդունեց քննադատությունը և Արմատական բառարանում Երևանի բարբառի անաբը դրված է Ե-ով ու բացատրված «հաճար» (Արմ. բառ., հ. 4, էջ 43)։

Ընդհանրապես Աճառյանը հաշվի է առել գործին օգնող քննադատությունները, ուղղել ինչպես քննադատների, այնպես էլ իր նկատած անճշտությունները։

Թումանյանը «Հայերեն գավառական բառարանը» քննադատելով հանդերձ գտնում էր, որ այդ և նման աշխատանքները շատ կարևոր գործեր են։ 1922 թ. անդրադառնալով լեզվի խնդիրներին՝ Թումանյանը գրում է. «Նոր է հավաքվում ու վերաշինվում ամեն բան։ Վերաշինվում է և լեզուն, և ահա պ. Աճառյանի հայ գավառական բառարանը առաջին լուրջ գործերից մեկն է մեր լեզվի ուսումնասիրության, մեր լեզվական գանձերի—բառերի ու ոճերի համբարումին»։

Չնայած իր պարունակած բառահոդվածների պատկառելի թվին (30.000)՝ գավառական բառարանը պակասավոր էր։

«2. Աճառյանի գավառական բառարանը,— գրել է աշխատության խմբագիր Կ. Կոստանյանը,— իբրև բառերի և դարձվածքների հավաքածու, լիակատար չէ։ Այդ երևում է ներկա տարվա հունվար ամսին Մայր Աթոռի տպարանում լույս տեսած այն աշխատությունից, որ կազմել է Սահակ վարդապետ Ամատունին «Հայոց բառ ու բան» վերնագրով։ Երկու աշխատությունների պարունակած նյութերի համեմատությունը բերում է այն եզրակացության, որ «...նոքա իրարու ուղղելով և իրարու լրացնելով, կարող են նոր հայտնությունների առիթ լինել և միևնույն ժամանակ նպաստել հայերեն լեզվի ավելի ընդարձակ ծանոթության»։

Գավառական բառարանի թերությունը պիտի համարել և այն, որ գլխաբառի իմաստը փաստարկող օրինակների մեծ մասը հնդիակալին չեն, չեն առնված հայ գյուղագիրներից, որով հատկապես հարուստ է հայ գրականության արևելահայ հատվածը։ 1945 թ. ինքը Աճառյանը գրում էր. «Գավառական բառարանս շատ թերի է, ճիշտ է, խոշոր հատոր է, բայց ընդամենը պարունակում է 30000 բառ, իսկ իմ մոտավոր հաշիվներով մեր գավառական բառերի թիվը 100000-ից ավելի է։ Մի քանի տարի առաջ ձեռնարկեցի ավելի լիակատար գավառական բառարան կազմելու աշխատանք»։

քին, սակայն հետո կիսատ թողեցի՝ ավարտելու համար այժմ տպագրվող գործերս»²²,

Այդ նույն տարիներին Աճառյանին հետաքրքրել են նաև այլ հեղինակների բառարանային աշխատանքները:

1900 թ. հալաթյանին գրած մի նամակում, խոսելով իր գավառական բառարանի մասին, նա ավելացնում է. «Փակագծերի մեջ հայտնում եմ ցավ ի սիրտ թե այն վանեցին, որի համար լսել էի, թե ահագին թվով գավառական բառեր է հավաքել, մի վարդապետ է, որ բանտարկվելով բանտի մեջ, իր ընկերներից հավաքել է 2500 բառ, նրա կազմած տետրակը ոստիկանությունը այրել է, վարդապետի վախճանվելուց հետո բանտի մեջ»²³:

Ի դեպ, Աճառյանի նշած վանեցին Արսեն Թոխմախյանն է, որն իր մի նամակում գրում է, որ ինքը բանտի մեջ հավաքել է վանեցոց 3000 բառ և աշխատությունը կոչել «Բառակույտ հայկական լեզվի»: Այս աշխատության մի ավելի փոքրաքանակ բառահոգվածներով տետրակը հորեն խրիմյանը հանձնել է Սահակ Ամատունուն, որը և օգտագործել է իր «Հայոց բառ ու բանի» մեջ:

Մի այլ առիթով Աճառյանը հալաթյանին խնդրում է, «եթե հնարավոր է տպագրեն Ավետիք Բահաթրյանի Ղարաբաղի բառերի բառարանը, որն ինքը կանոնավորել և այբբենական կարգի է վերածել»:

Հ. Աճառյանը գրել է նաև գրախոսականներ Տ. Նավասարդյանի «Բառգիրք Արարատյան բարբառի», Հ. Արթինյանի «Տունկերը և անոնց հայերեն անունները», Ամատունու «Հայոց բառ ու բան», Հ. Հյունքյարպեյենտյանի «Ստուգաբանական բառարան հայ լեզվի» աշխատությունների մասին: Այս գրախոսությունների մեջ ամենից նշանակալիցը «Հյունքյարպեյենտյանի լեզվաբանական դրությունը» խորագրով աշխատանքն է, ուր ջախջախիչ փաստերով հեղինակը ցույց է տալիս այդ բառարանի անգործնական ու ոչ գիտական լինելը:

Հ. Աճառյանի՝ բառարանագրության հետ առնչվող գործերի մեջ պետք է նշել նաև 1919 թ. դրած Գարեգին Կիրակոսյանի «Պարսկեն—հայերեն բառարանի» առաջաբանը, որն իրավամբ կարելի է հայ բառարանագրության պատմության փորձ համարել: Այդտեղ Աճառյանը նշում է մի շարք բառարաններ ու դրանք գնահատում:

²² «Սովետական Հայաստան» ամսագիր, 1945 թ. հոկտեմբեր, Գ. Ստեփանյանի «Ակադեմիկոս Աճառյանի մոտ» հոդվածից:

²³ ԳԱԹ, հալաթյանի ֆոնդ № 5, № 135:

Հրաշյա Աճառյանի բառարանագրական գործունեության գլուխ-գործոցը և ընդհանրապես հայ բառարանագրության հիմնական սյուներից մեկը անկասկած Արմատական բառարանն է:

Մինչ Աճառյանը, շատ հին ժամանակներից սկսած, հայերեն լեզվի բառարմատների ստուգաբանության շատ փորձեր են եղել: Որպես համահավաք ստուգաբանական աշխատանք կարելի է ամենից առաջ նշել Պոլ կազարդի «Armenische Studien» (Cöttingen, 1877) բառագիտական ուսումնասիրությունը, որը հենց Աճառյանի բնորոշմամբ «հայերենի առաջին ստուգաբանական բառարանն է»:

Պ. կազարդը օգտագործելով Մ. Զախչախյանի հայ-իտալերեն և նոր հայկազյան բառարանները, ինչպես նաև Շրոգերի, Շահան Զրպետի, Պատկանյանի ուսումնասիրությունները, այբբենական կարգով տվել է 2413 բառի ստուգաբանություն, մեկ առ մեկ նշել ստուգաբանությունների պատմությունը: Աշխատության 166—189 էջերում կազմել է իր կողմից ստուգաբանված բառերի ցուցակը՝ բաժանված առանձին սյունակների, որտեղից պարզ երևում է, թե հայերենի այս կամ այն բառը ո՞ր լեզվի համապատասխան բառին է զուգակից:

Հ. Աճառյանն Արմատական բառարանի կազմումը շատ վաղ տարիներից է ձեռնարկել, 1891 թվից, երբ դեռ Պոլսի կենտրոնական վարժարանի շորրորդ դասարանի աշակերտ էր: Հետագայում նա անընդհատ աշխատել, հարստացրել, ճշտել և օրը օրին ավելի գիտական տեսք է տվել իր աշխատանքին:

1895 թ. սկսած Աճառյանը տասնյակ մարդկանց ու կազմակերպությունների է դիմել Արմատական բառարանի հրատարակությունն իրականացնելու համար, համաձայնվելով երբեմն իրեն ոչ նպաստավոր պայմանների հետ, բայց ապարդյուն, ոչ մի դրական արդյունք:

Երվանդ Տեր-Մինասյանին՝ էջմիածնի մայր աթոռի տպարանի այն ժամանակի տնօրենին, 1909 թ. գրած նամակներից պարզվում է, որ Աճառյանը հանձն է առնում Տիգրանյան մրցանակի 2000 ռուբլու կեսը հատկացնել տպագրական ծախսերի և ամբողջ աշխատանքի սրբագրությունը կատարելուն: Ճնա պատրաստակամորեն անձնական զոհողություն էր հանձն առնում,— գրում է Ե. Տեր-Մինասյանը,— տպարանին վճարելու ենթադրյալ 2000 ռուբլի մրցանակի (աշխատությունը տպագրված վիճակում պետք է ներկայացվեր—Գ. Գ.) կեսը և ամբողջ 100—120 մամուլի տաժանելի

սրբագրությունը կատարելու ձրիաբար և բոլոր տպագրված օրինակներն էլ տպարանի սեփականությունը համարելու»²⁴։

Պարսկաստանից հրավիրվելով Երևանի պետական համալսարանի գասախոս, Աճառյանը հնարավորություն է ստանում մտածելու Արմատական բառարանի հրատարակության մասին։

Համալսարանի ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանի ջանքերով 1926 թ. սկսվում է այդ աշխատության ապակետիպ հրատարակությունը 400 օրինակ տպաքանակով և լրիվ ավարտվում 1935 թ.։ Հրատարակության համար Աճառյանն իր ձեռագրով ամեն օր ապակետիպի համար պատրաստում էր չորս էջ, հինգերորդ մշակումով արտագրելով իր աշխատանքը։ Նա ինքն էլ տպարանից վերցնում էր պատրաստի պրակները, դասդասում, անձամբ տանում հանձնում բաժանորդներին։

Հ. Աճառյանը պատմում էր, որ Արմատական բառարանը լրացումներով, նորագույն նյութերը հաշվի առնելով հինգ անդամ արտագրել է և 50 էջից բաղկացած հասարակ մի տետրակից դարձրել յոթհատորյա ծավալուն աշխատություն։

Արմատական բառարանը կազմված է հինգ բաժիններից։

Առաջին բաժինը բառագիտությունն է, ուր տրված են հայերեն լեզվում օգտագործված իրական բառարմատները. իսկ, լեզվի իրական արմատները այն բառերն են միայն,— գրում է Աճառյանը,— որոնց անկախ գոյության գիտակից են նույն լեզուն միայն խոսող անհատները և ընդհակառակը արմատ չեն միայն այն բառերը, որոնց վերլուծումը ըմբռնելի է նույն լեզվի կազմության և՛ ընդհանուր, և՛ սովորական օրենքներով։ Արմատները քարացած ձևեր են լեզվի մի որոշ վայրկյանին և ածանցներն են միայն նույն վայրկյանի կենդանի և շարժուն ձևերը»²⁵։ Արմատ գլխաբառից հետո տրված են բառի հոլովման, խոնարհման ձևերը, իհարկե, քննադատական անհրաժեշտ մոտեցումով։

Բառի թեքման ձևերը տալուց հետո Աճառյանը բացատրում է բառի նշանակությունը և բերում վկայություններ՝ հիմնականում հենվելով նոր հայկազյան բառարանի նյութերի վրա։

Եթե ընդունած գլխաբառը վերջին դարերում նոր իմաստ է ստացել, այդ ևս նշվում է։ Այսուհանդերձ, Աճառյանը իրավացի

24 Ե. Տեր-Միևսյան, Հ. Աճառյանի նամակները Արմատական բառարանի տպագրության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 129։

25 Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 7, 1935, էջ 3։

կերպով նպատակ չի դնում գլխաբառի բոլոր իմաստներն ու նրբ-
րանգները տալու:

Վկայութիւնների բաժնում Աճառյանը ամեն կերպ աշխատել
է վկայակոչել ամենահին և հավաստի նյութերը: Մեծ տեղ են
գրավում նաև իր ընթերցումները:

Վկայութիւնից հետո բերվում են տվյալ բառարմատից
ածանցված կարևոր բառերը իրենց վկայութիւններով: «Սրա նպա-
տակն է,— գրում է Աճառյանը,— նախ՝ ցույց տալ, թե նույն ար-
մատը ինչ կենսունակութիւն ունի հայ լեզվի մեջ. կղզիացած և
քիչ գործածական մի ձև է, թե աճած ու զարգացած բառ: Այս
բանը կարևոր է մանավանդ այն պարագայում, երբ արմատը
առանձին անգործածական է և ածանցների մեջ միայն պահ-
ված է»²⁶,

Այս հատկապես կարևոր է փոխառյալ բառերի դեպքում՝
դրանց կենսունակութեան չափը որոշելու համար: Ածանցված բա-
ռերը ցույց են տալիս նաև ժամանակի ընթացքում արմատ բառի
կրած փոփոխութիւնները:

Բառարանում մեջբերված են տարբեր գրչութիւններ, ընդ
որում որպես հիմնաբառ ընդունված է ավելի տարածված ձևը,
թեև կուղ դա սխալ լինի, այսպես՝ շագանակ, երիգ, և ո՛չ շաղանակ,
երէգ:

Արմատական բառարանի հիմնական և նշանակալից մասն է
կազմում ստուգաբանական բաժինը, ուր մանրամասն տրվում է
արմատի ծագումը: Այս բաժնում հեղինակը հիմնական աղբյուր է
ընդունել Հ. Հյուբշմանի «Armenische Grammatik» աշխատու-
թիւնը (Լայպցիգ, 1895—1897), որն Աճառյանի բնորոշմամբ «հայ
լեզվաբանութեան պատվանդանն է»:

Հ. Հյուբշմանի աշխատութեան մեջ ստուգաբանված է 2183
բառ, որից 217-ը՝ հատուկ անուն:

Հ. Աճառյանը յուրաքանչյուր բառի համար նշում է նրա բուն
հայկական, հնդեվրոպական արմատից ծագած թե փոխառյալ
լինելը:

Փոխառյալ բառերի դեպքում Աճառյանը ամենայն բարեխղ-
ճութեամբ պարզում է այն ճանապարհը, որով նրանք հասել են
մեզ, իսկ բուն հայերենների դեպքում՝ նախալեզվի արմատի ձևա-
փոխութիւնները ազգակից լեզուների մեջ: Հեղինակը գլխաբառի

²⁶ Նույն տեղը, էջ 7:

սկզբից պայմանական նշաններով տալիս է բառի բնիկ հայերեն, փոխառյալ, բնաձայն, հայակերտ, սուտ ու շինծու կամ անստույգ լինելը:

Արմատական բառարանում արմատ բառերի թիվը 10996 է, որից 4231-ը գործածական է ժամանակակից գրական հայերենում:

2. Աճառյանն անձամբ ստուգաբանել է 1688 բառ, որից 158-ը՝ բնիկ հայերեն:

Բառարանի հաջորդ բաժինը ստուգաբանության պատմությունն է: Այս բաժնում ամենայն մանրամասնությամբ տրվում են տվյալ գլխաբառի ստուգաբանության փորձերը, անկախ նրանց ճիշտ կամ սխալ լինելուց, Աճառյանը գրում է. «Աշխատությանս սույն հրորդ բաժինը, ընդհանրապես ճշմարիտ գիտական արժեքից զուրկ լեզվաբանների համար անպետք և ավելորդ է: Սակայն նա պատմական նշանակություն ունի. նա կարևոր և շատ կարևոր է նրանց համար, որոնք հայ լեզվի ստուգաբանությանց պատմությամբ են զբաղվում և իբրև մի շտեմարան՝ իր մեջ է պարունակում հայ բառերի վրա տրված բոլոր ստուգաբանությունները»:

Բառարանի չորրորդ բաժինը բարբառային ձևերն են: Այս բաժնում 2878 դժխաբառերի համար տրվում են դրանց բարբառային ձևափոխությունները:

Արմատական բառարանի վերջին՝ հինգերորդ բաժնում ցույց են տրված հայերենից այլ լեզուների կատարած փոխառությունները:

Հարկ ենք համարում նշել, որ հայերենից կատարված փոխառությունների խնդիրը ընդհանրապես քիչ է ուսումնասիրված: Հայ բառարանագրության պատմությանը հայտնի են տասնյակից ավելի մեծ ու փոքր բառարաններ, որոնք տալիս են հարևան և ոչ հարևան լեզուներից հայերենի կատարած փոխառությունները, իսկ հակառակ աշխատանքը՝ հայերենից այլ լեզուների կատարած փոխառությունների բացահայտման ուղղությամբ գրեթե ոչինչ չի արված: Լեզվաբանական և պատմագիտական աշխատություններում այդ մասին կան միայն մասնակի հաղորդումներ: Արշակ Ալպոյաճյանը՝ իր «Պատմություն հայ Կեսարիո» (Կահիրե, 1937) աշխատության մեջ անդադադառնալով Կեսարիա—էվերիկի բարբառին և նրա տարածման ոլորտին՝ գրում է. «Հետաքրքրաշարժն այն է, որ հայ բառերը... նաև օտարներ՝ թուրքերը և հույները կգործածեին հաճախ անգիտությամբ, և երբեմն գիտությամբ»:

Ա. Ակպոյաճյանը նպատակ չի դնում, ինչպես ինքն է խոստովանում, արձանագրելու «հայ լեզվի բոլոր նշխարները, որոնք պահված էին Կապադովկիո հունաց և Թուրքիո րարբառներուն մեջ»:

Այնուամենայնիվ հեղինակը տալիս է հայերենից փոխառնված 120 բառ, որ օգտագործվել է թուրքերեն և մասամբ հունարեն ժողովրդական խոսվածքներում: Ինչպես՝ անաճ (թ. հ.)—չաճող թխսամայր, արըսթագ (թ.)—առաստաղ, անարատ (թ.)—անարատ (յաղ), բոշ (թ.)—պոշ, ձավար (թ.)—ձավար, ձունունդ (թ.)—ծնունդ, խավեղ (թ.)—խավիժ, շելեկ (թ.)—շալակ, խանջար (թ.)—բանջար, խամուր (թ.)—խմոր և այլն:

Այդ վկայում են նաև օտար աղբյուրները: Ըստ Թուրքիայի «Լուռաթ խալք սոզլարի» բառարանի, հատկապես վանի վիլայեթի թուրքական խոսվածքում զգալի թիվ են կազմում հայերին բառերը:

Հ. Աճառյանը, ըստ հնարավորին, ի մի է հավաքել այդ փոխառությունները և դարձրել Արմատական բառարանի մի առանձին բաժինը:

Արմատական բառարանը սոսկ բառ-արմատների ստուգաբանական բառարան չէ, այլ բազմապիսի բառարանների մի ամբողջ ժողովածու. հիմնականում ստուգաբանական լինելով նրա ամեն մի բաժինը մի ինքնուրույն բառարան է:

Հ. Աճառյանն իր այդ աշխատանքի համար օգտագործել է ինչպես հայ, այնպես էլ այս կամ այն չափով հայերենին առնչվող օտարազգի լեզվաբանական դրականությունը, մի աշխատանք, որ կարող էր կատարել միայն Աճառյանի նման շատ լեզուներ իմացող, աշխատասեր, բազմահմուտ և մանրակրկիտ հեղինակը: Հենց միայն օգտագործած աղբյուրները մի հսկա ցուցակ են կազմում:

Ն. Ակինյանը Արմատական բառարանի մասին գրում է. «Դարակազմիկ աշխատություն մըն է. զոր կը դնեն հրապարակի վրա ուսուցչապետն Հրաչյա Աճառյան, այն շատ համեստ խորագրի տակ» («Շանդէս ամսօրեայ», 1930, էջ 482) և հետո՝ «Արմատական բառարանը պիտի մնա սեղանիս վրա ինձ ընկեր և խորհրդատու: Եվ ո՞վ է, որ չկարոտի այսպիսի ընկերի և բարեկամի: Անոր խորհուրդները պիտի ըլլան ուղղիչ և առաջնորդ ամեն անոնց, որոնք պիտի ընթանան լեզվագիտական ասպարեզի վրա հառաջ պիտի մխեն բանասիրության լաբյուրինթոսը» (էջ 498):

Այդ արժեքավոր աշխատության սակավաթիվ օրինակները չէին կարող բավարարել մեր նոր սերնդի պահանջները և այժմ բառարանի առաջին հրատարակիչը՝ նույն Երևանի պետական համալսարանը վերահրատարակում է այն 25.000 տպաքանակով:

Արմատական բառարանի ավարտին հաջորդեց նույն հեղինակի հինգհատորյա հայոց անձնանունների բառարանը:

Այս լեզվաբանական-բանասիրական աշխատության մեջ հեղինակը վերցրել է մինչև 1500 թ. եղած բոլոր հայերեն անձնանունները, իսկ հետագա շրջանի համար՝ ընտրությամբ: Աճառյանը անձնանուններն ըստ հնարավորին ստուգաբանել է և մեկ առ մեկ նշել դրանք կրող բոլոր անձնավորություններին, ավելացնելով նաև այն աղբյուրները, որոնցից օգտվել է: «Այս աշխատության նպատակն է,— գրում է Աճառյանը,— հավաքել, դասավորել և ուսումնասիրել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ անհատ կրել է երբևիցե անկախ իր ունեցած դիրքից և աստիճանից, ընդունած կրոնից և դավանանքից ու ապրած շրջանից կամ երկրից: Այս հավաքածուիս մեջ՝ տեղ են գտել ուրեմն մի կողմից Հայկը, որ հայազգի նախահայրն է համարվում ըստ ավանդության, և Տիգրանը, որ հայ պետության քաղաքական ազդեցությունը Կովկասյան լեռներից մինչև միջերկրականի ափը հասցրեց, և Մեսրոպը կամ Մաշտոցը, որ հայ մատենագրության հիմքը դրավ և մյուս կողմից Դավիթ Մաբեցի ջաղացպանը, դերձակ խնդուբեզ, բաղնիսպան Հովհաննես և այլն»²⁷:

Հեղինակը յուրաքանչյուր անձնանուն ստուգաբանում է, տալիս նրա կրած ձևափոխությունները և ապա ժամանակագրական կարգով նշում այդ անունը կրող անձերին և այն ամենը, ինչ հնարավոր է եղել նրանց վերաբերյալ գտնել:

2. Աճառյանը իր արժեքավոր ներդրումն ունի նաև մասնագիտական բառարաններ կազմելու գործում: Աճառյանի մասնակցությամբ և ղեկավարությամբ է կազմվել «Ռուս-հայերեն շինարարական տերմինների բառարանը» (Երևան, 1928), որն ունի զգալի քանակությամբ նոր բառեր՝ առաջին անգամ օգտագործված այդտեղ և հետագայում դարձած հայ մասնագիտական և գրական լեզվի սեփականությունը:

2. Աճառյանը բառարանագրական առանձին աշխատանքներից չորս հեղինակել է մի շարք դրաբար-բարբառային և անկախ բարբառային բառարաններ, որոնք կցված են հայ բարբառներին նվիր-

27 2. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, 1942, էջ 47:

ված նրա աշխատություններին, ինչպես նաև «Հայերեն նոր բառեր զանազան հին գրողների մոտ» աշխատություն:

2. Աճառյանը դեռ դպրոցական տարիներից հատուկ սեր է ունեցել բառի, բառ ու բանի, բառագիտության ու բառարանագրության նկատմամբ:

Բառագիտական հետաքրքրասիրությունը կարմիր թելի նման անցնում է նրա գրեթե բոլոր աշխատություններով: Սխալված չենք լինի եթե ասենք, որ Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկհատորյակը հիմնականում բառագիտական աշխատանքի հանրագումար է, բառերի առաջացման ու փոխառությունների պատմություն: Հեղինակն ինքն էլ հայոց լեզվի պատմության մի շարք ենթավերնագրեր անվանել է «Հունական փոխառությունները հայերենում», «Երբայական փոխառությունները հայերենում», «Արաբական փոխառությունները հայերենում», «Թուրքական փոխառությունները հայերենում», «Եվրոպական փոխառությունները հայերենում» կամ «Խալդերենի ազդեցությունը հայերենի վրա», «Միտաներենի ազդեցությունը հայերենի վրա», «Ասուրերենի ազդեցությունը հայերենի վրա» և այլն: «Իրանական ազդեցությունը հայերենի վրա» հատվածում, որն զբաղեցնում է առաջին հատորի 218—323 էջերը, 4 էջի սահմաններում տալիս է երկու ժողովուրդների լեզվական ազգակցության խնդիրը և ապա անցնում բառագիտական հարցերի քննության, տալիս իրանական լեզուներից կատարված 1405 փոխառությունները, մեկ առ մեկ նշելով դրանց պարսկերեն, պահլավերեն, ղենդերեն, հին պարսկերեն ձևերը (52 էջ): Այդ բառերը նա դասոցասում է ըստ իմաստային խմբերի՝ բնության և նրա զորության մասին, կրոնական բառեր, մարդու և անասունի մարմնի մասեր, հիվանդության և բժշկական բառեր և այլն: Հատվածն ընդգրկում է նաև անձնանունների ու տեղանունների ցուցակներ, պարսկերենի նմանությամբ բառապատճենումներ, ինչպես՝ զորագլուխ—sarlaškar, ձրիակեր—muft-xōr, պնակալեզ—kasa-ils, օձաձուկ—mar-mahl, գլխավոր—sar-var, երկերեսանի—dū-rūy, ուղտափուշ—uštār-xār և այլն:

Ա. 2. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ. ԱՃԱՌՅԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Շուրջ 80 տարի է մեղ բաժանում այն ժամանակաշրջանից, որը կարելի է անվանել Աճառյանի գիտական գործունեության փառիղյան շրջան: Այո, գիտական գործունեություն, քանի որ լինելով Սորբոնի համալսարանի ուսանող, նա միաժամանակ ստեղծագործում էր, հրատարակում հոդվածներ, կարգում ղեկուցումներ, մասնակցում լեզվաբանական ընկերության նիստերին:

Առաջին բնագավառներից մեկը, որին անդրադարձավ լեզվաբանության մեջ Աճառյանը, հնչյունաբանությունն էր, այն էլ ոչ թե ընդհանրապես հնչյունաբանությունը, այլ այդ բնագավառում դեռևս իր առաջին քայլերը սկսող գիտակարգը՝ փորձառական հնչյունաբանությունը: Եվ դա պատահական չէր:

Հնչյունաբանության հարցերի նկատմամբ Աճառյանի ունեցած հատուկ հետաքրքրությունը թերևս պայմանավորված էր լեզվաբանության այն ուղղությամբ, որի փայլուն ներկայացուցիչն էր Ա. Մեյեն՝ Աճառյանի ուսուցիչն ու ղեկավարը:

Այդ ուղղության ամենաբնորոշ հատկանիշը հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուների հնչյունական օրինաչափ համապատասխանությունների հայտնագործումն է, հնչյունական օրենքների և համաբանության սահմանումը, իսկ ավելի լայն մոտեցմամբ՝ լեզվական փոփոխությունների հիմքում ֆիզիոլոգիական և ֆիզիկական գործոնների ազդեցության հայտնաբերումը: Այդ ուղղության ներկայացուցիչները փորձում էին լեզվի ներքին զարգացումը բացատրել ֆիզիոլոգիական պատճառներով՝ կապելով այն հատկապես խոսքի արտասանության առանձնահատկությունների հետ: Թերևս հնչյունաբանական հարցերի խոր և բազմակողմանի քննության անհրաժեշտությունն է խթան ծառայել տարբեր երկրներում փորձառական հնչյունաբանության

զարգացման համար: Այսպես՝ գրեթե միաժամանակ Փարիզում Ռուսլոն, իսկ Ռուսաստանում՝ Բոգորոդիցկին, հիմնադրում են փորձառական հնչյունաբանություն լաբորատորիաներ խոսքի ֆիզիկական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար: Փոքր-ինչ ավելի ուշ ստեղծվում են նույնպիսի լաբորատորիաներ Գերմանիայում և Անգլիայում: Ահա այդ ժամանակ էլ Փարիզում ուսանողական տարիներին Աճառյանը սկսում է հաճախել Սորբոնի համալսարանի նորաստեղծ հնչյունաբանական լաբորատորիան, որի հիմնադիրն էր Ռուսլոն: Շատ կարճ ժամանակում տիրապետելով այն ժամանակ գոյություն ունեցող տեխնիկային, Աճառյանը կատարում է ինքնուրույն փորձեր, որոնք նպատակ ունեին պարզաբանելու հայերենագիտության ամենախրթին հարցերից մեկը՝ ժամանակակից բարբառներում հայերենի բաղաձայնների կրած փոփոխությունները:

Ռուսլոյի վկայությամբ, Աճառյանը առաջինն էր ոչ միայն հայագիտության, այլև լեզվաբանության մեջ առհասարակ, որ փորձառական հնչյունաբանության մեթոդը կիրառեց բարբառագիտության բնագավառում: Սակայն Աճառյանի նպատակն էր ոչ միայն ուսումնասիրել հայ բարբառների պայթականների ու կիսաշփականների առանձնահատկությունները, այլև որոշել արևմտահայ գրական լեզվի և բարբառների հնչյունափոխության պատճառներն ու ուղիները: Աշխատանքը հրատարակվել է «Հին հայերենի պայթականները՝ ուսումնասիրված ժամանակակից բարբառներում» խորագրով²⁸: Հոդվածը մինչև այժմ էլ չի թարգմանվել հայերեն և քիչ մատչելի է, քանի որ տպագրված է ֆրանսիական ամսագրում (1899 թ. վերատպվել է «La parole» ամսագրում): Թերևս սա է պատճառը, որ շատ արժեքավոր այդ հետազոտությունը դուրս է մնացել գիտական շրջանառությունից և մինչև այժմ ըստ արժանվույն չի գնահատվել:

Այս աշխատության մեջ հեղինակն ընդգրկել է հայերենի վեց բարբառ, որոնցից չորսը արևմտյան են՝ Պոլսի, Ասլանբեկի, Մուշի և Սեբաստիայի (Սվադի) բարբառները, երկուսը՝ արևելյան՝ Շուշին և Նուխին: Հեղինակի նպատակն էր ուսումնասիրել հնչյունների երկու հատկանիշ՝ ձայնեղությունը և ուժգնությունը: Ձայնեղությունը ըստ հեղինակի և ըստ կիրառվող կիմոդրաֆիայի մե-

²⁸ H. Adjarlan, Les explosives des l'ancien Armenien, étudiées dans les dialectes modernes, „Revue internationale de Rhinologie, Otologie, Laryngologie et Phonétique Experimentale“, 1897.

թողի պայմանավորված է արտասանության երկու գործողությունների զուգակցումով՝ մի կողմից՝ հնչյունի արտաբերման սկզբով՝ տվյալ դեպքում պայթյունով, իսկ մյուս կողմից՝ ձայնալարերի ներգրավման ժամանակով: Այս երկու գործողությունների զուգակցումից հեղինակը առանձնացնում է երեք դեպք. 1) ձայնալարերի տատանումը սկսվում է պայթյունից մոտ 1—2 հարյուրերորդական վայրկյան առաջ, 2) համընկնում է պայթյունի մոմենտին և 3) զգալիորեն հո է մնում (այսինքն՝ ձայնալարերը սկսում են տատանվել բաղաձայնի ավարտից հետո): Առաջին դեպքում ստացվում են բուն ձայնեղ հնչյուններ՝ ֆ, գ, ք, ձ, ջ իրենց ուժեղ (emphatique) արտասանությամբ, որոնք նման են ֆրանսերենի ձայնեղներին, երկրորդ դեպքում՝ քիչ խլացած կամ խուլ հնչյուններ, որոնք բնորոշ են արևմտահայ գրական լեզվին, երրորդ դեպքում՝ շնչեղ խուլեր:

Այս հոդվածից և հատկապես նրանում զետեղված աղյուսակից պարզ երևում է, թե ինչպես է կատարվում ձայնեղների անցումը խուլերին՝ ըստ բարբառների: Այդ առումով հատկապես հետաքրքրական են այն բարբառները, որոնցում արձանագրվում է անցողիկ վիճակ: Արտասանական տվյալներով այստեղ ֆ, գ, դ հնչյունները դեռ շատ չեն հեռացել ձայնեղներից, բայց լսողության մեջ ընկալվում են որպես խուլեր, հատկապես օտարալեզուների կողմից: Այդպիսի հնչյուններ են Մուշի (երկրորդ տեսակի) և Սիբաստիայի ձայնեղները (fortes):

Տալով այս ուսումնասիրության հնչյունաբանական ու լեզվաբանական մեկնաբանումը, նույն հոդվածի երկրորդ բաժնում Ռուալոն գտնում է, որ հայերենում ձայնեղ հնչյունները զարգանում են ձայնի թուլացման ուղղությամբ, այլ կերպ ասած ձայնեղները հետզհետե դառնում են խուլեր և այնուհետև խուլ շնչեղներ: Եթե ձայնեղները նույնիսկ անթերի են և ընկալվում են որպես այդպիսիներ, ապա Մուշում ձայնեղությունը թուլանում է, ձայնալարերը սկսում են տատանվել պայթյունի հետ միաժամանակ, կամ նույնիսկ մի քիչ ավելի ուշ: Երբեմն այդ հնչյունները ընկալվում են որպես ֆ, ժ, գ, իսկ երբեմն որպես ք, լ, ք: Այդ այն վիճակն է, երբ դրանք հնչում են ինչպես էլզասյան խուլ հնչյունները: Բայց զարգացումը շարունակվում է. խլացումը դառնում է լիակատար, և այդ հնչյունները արդեն նմանվում են ք', լ', ք'-ին:

Ալեզուների կյանքում լինում են այնպիսի սովորաբար շատ կարճ տևող պահեր, երբ զարգացումը բնութագրվում է ձևերի ան-

կայունությամբ: Դրանց թվին է պատկանում Կոստանդնուպոլսի արտասանությունը, որտեղ կարելի է գտնել ձայնեղների այդ երեք տիպի արտասանությունն էլ:

Խուլերի դեպքում նկատվում է հակառակ զարգացումը. ձայնալարերի տատանումները հետզհետե սկսում են աճել, մինչև որ հասնում են ձայնեղների վիճակին: Այսպես՝ Նուխիում դրանք օրինական ձևով սկսվում են պայթյունից 2—3 հարյուրերորդական վրկ. ուշ, այնուհետև Մուշում ու Սեբաստիայում ձայնալարերի աշխատանքի սկիզբը համընկնում է պայթյունի հետ, իսկ Ասլանբեկում դրանք սկսում են տատանվել պայթյունից շուտ: Բայց խուլերի զարգացումը այստեղ վերջանում է և այն չի հասնում այն աստիճանին, ինչ ձայնեղներին:

Շնչեղները անցնում են զարգացման համատիպ ուղի, սակայն սահմանափակ չափով: Եթե Նուխիում ու Շուշիում դրանք օրինական շնչեղներ են, ապա Ասլանբեկում ու Սեբաստիայում թրթռումներ սկսվում են պայթյունի ժամանակ: Փաստորեն դրանք իսկապես խուլեր են, առանց շնչեղացման:

Այնուհետև Ռուսլոն կանգ է առնում այս փաստերի մի այլ հնարավոր մեկնաբանման վրա, որը առաջարկել էր գերմանացի հնչյունաբան Զիվերսը: Ըստ Զիվերսի անմիջական դիտարկումների, որը նա կատարել է Աշտարակում եղած ժամանակ, տեղի խոսվածքում գոյություն ունեն շնչեղ ձայնեղ հնչյուններ, որոնք նման են սանսկրիտի համապատասխան հնչյուններին: Թե ինչպե՞ս է ուսումնասիրել այդ հնչյունները Զիվերսը, այս հարցը մնում է բաց: Սակայն Ռուսլոն Աճառյանի վերոհիշյալ ուսումնասիրության հիման վրա, ինչպես նաև Զիվերսի նկարագրությունից եզրակացնում է, որ այդ հնչյունները բնորոշվում են օդի հոսանքի ուժգնությամբ, որը հատուկ է խուլերին, և ձայնի թուլացմամբ, որը համապատասխանում է շնչեղ խուլերին: Այս հնչյուններին բնորոշ է ձայնեղացման ուղացումը, մինչդեռ ֆրանսիացին ընկալում է դրանք որպես խուլեր (=fortes): Այսպիսով, հիմնվելով Աճառյանի սույն հոդվածի տվյալների վրա, Ռուսլոն եզրակացնում է, որ ոչ Մուշում, ոչ էլ Սեբաստիայում չկան ձայնեղ հնչյուններ, որոնք համարժեք լինեին շնչեղ խուլերին, տարբերվելով նրանցից միայն ձայնեղությամբ: Անկասկած հեղինակը ինքը կուզեր անձամբ ուսումնասիրել աշտարակցու արտասանությունը վստահ եզրակացություններ անելու համար, սակայն ֆարիզում աշտարակցիներ չկային, և Ռուսլոն հույս ուներ, որ Աճառյանը էջմիածնում կշարունակի այդ փորձերը:

Այս աշխատությունը հայագիտության համար արժեքավոր է նախ նրանով, որ լուսաբանում է արևելահայ և արևմտահայ բարբառների բաղաձայնական համակարգերի միջև գոյություն ունեցող տարբերությունների էությունը, տալիս է այդ փոփոխությունների տարածքային բաշխումը և արտաբերական ու ձայնաբանական նկարագրությունը, վերջապես, լույս է սփռում շնչեղ ձայնեղների բնույթի վրա:

Հոդվածը ուշագրավ է նաև ձայնեղության հատկանիշը փորձառական եղանակով ուսումնասիրելու առումով, որը մինչև հիմա էլ չի կորցրել իր արդիականությունը: Իհարկե, Աճառյանին քաջ ծանոթ գործիքներն ու սարքերը այժմ կատարելագործվել են կամ փոխարինվել նոր, ավելի ճշգրիտ սարքերով, սակայն լեզվաբանական այն խնդիրներն ու հարցադրումները, որոնց մասին Աճառյանը խոսել է մոտ 80 տարի առաջ, այժմ էլ շարունակում են հուզել շատ լեզվաբանների: Այսպես՝ 1970-ական թվերին ամերիկացի հնչյունաբաններ Լիսկերը և Աբրամսոնը փորձեր են դրել բացահայտելու բաղաձայն հնչյունների ձայնեղության աստիճանը²⁹, որոնք, ըստ էության, կրկնում են այն փորձերը, որը Աճառյանը կատարել է Ռուսլոյի լաբորատորիայում:

Ինչպես Աճառյանը, այս հեղինակները նույնպես համեմատել են ձայնավորների թրթռումների սկիզբը օդի պոռթկումի ժամանակի հետ: Սակայն փորձերը արդեն կատարել են ոչ թե կիմոգրաֆի, այլ ժամանակակից էլեկտրոնային սարքերի վրա: Հառկ ենք համարում նշել, որ հայերենի որոշ բարբառների պայթական հնչյունների վերաբերյալ մեր ստացած փորձառական տվյալները կողմնակիորեն ապացուցում են Աճառյանի այն դրույթը, որ, այսպես կոչված, շնչեղ ձայնեղ հնչյունները ունեն ուժեղ սկիզբ, բայց ուշացած ձայնեղություն, որով և տարբերվում են մյուս ոչ այդքան ուժեղ սկիզբ ունեցող հնչյուններից³⁰:

Փորձառական հնչյունաբանության հարցերին Աճառյանը անդրադառնում է նաև իր «Լիակատար քերականության» վերջերս լույս տեսած 6-րդ հատորում, որը հեղինակի մտահղացումով պետք է կազմեր այդ բազմահատորյակի երկրորդ դիրքը: Այս հա-

²⁹ L. Lisker and A. S. Abramson. A cross-language study of voicing in initial stops: acoustical measurements, „Word“, 1964, 20, 334—422.

³⁰ А. А. Хачатрян, Природа звонких придыхательных согласных в некоторых армянских диалектах, в кн. «Совещание по общим вопросам диалектологии и истории языка», М., 1973.

տորը լիովին նվիրված է ընդհանուր և մասնավորապես հայերենի հնչյունաբանության հարցերին՝ լուսաբանված թե համաժամանակյա կտրվածքով և թե պատմական առումով:

Իր կառուցվածքով այս գիրքը նման է Լիակատար քերականության մյուս հատորներին, որտեղ նկարագրության կմախքը կազմում է հայերենը իր ժամանակակից, պատմական և նախապատմական վիճակներով, որի հետ համեմատվում ու ղուգադրվում մյուս լեզուների փաստերը: Այսպիսով, համեմատության մի եզրը հայերենն է, իսկ մյուս եզրերը կազմում են այլ լեզուները՝ թվով 562: Անփորձ ընթերցողը կարող է ենթադրել, որ թերևս նման մի աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է այդ բոլոր լեզուների խոր իմացություն, և որ լեզվական բոլոր փաստերը անպայմանորեն պետք է համեմատվեն մյուս բոլոր լեզուների համապատասխան փաստերի հետ: Այդպիսի գործ, եթե նույնիսկ այն իրագործելի լիներ, անշուշտ, կներկայացներ մի բավականին ձանձրալի աշխատություն, որտեղ արձանագրված կլինեին բազմաթիվ միօրինակ կամ նման փաստեր: Սակայն հեղինակը ընտրել է յուրօրինակ՝ աճառյանական մոտեցում, որի դեպքում փաստերը ներկայացված են որոշակի ընտրությամբ, և շարադրանքի ոճը աշխույժ է ու հետաքրքրական:

Առավել հիմնովին են ընդգրկված եվրոպական հին ու նոր լեզուները, ինչպես նաև հայերենին ոչ ցեղակից, բայց առնչություն ունեցած հարևան լեզուները: Մյուս՝ քիչ ուսումնասիրված լեզուների փաստերը հեղինակը համեմատության մեջ է դնում այն ժամանակ, երբ գրանցում համապատասխան լեզվաբանական հասկացությունները ունեն միանգամայն տարբեր, ուրույն դրսևորում:

Լեզվական փաստերի և երևույթների ընդգրկումով և ուսումնասիրվող հարցերի լուսաբանմամբ այս աշխատանքը շունի իրեն հավասարը: Զափազանցություն չի լինի ասել, որ այս հատորը հնչյունաբանական գիտելիքների հանրագիտարան է, որն արտացոլում է 19—20-րդ դարի հնչյունաբանության նվաճումները ընդհուպ մինչև մեր դարի 40-ական թվականները:

Հնչյունաբանական ֆունդամենտալ հարցերի նկարագրության համար Աճառյանը հիմնվում է այնպիսի հեղինակավոր հնչյունաբանների կարծիքների վրա, ինչպիսիք են եվրոպական լեզվաբաններից Ծապերսենը, Սուիտը, Բելը, Պասսին, Ռուալոն, Գրամոնը, ռուս լեզվաբաններից Բոգորոդիցկին, Շչերբան և ուրիշներ: Սա-

կայն հեղինակը չի ներկայացնում այդ լեզվաբանների կարծիքներն ու տեսությունները: Նա ստեղծագործորեն յուրացնում ու դարգացնում է նրանց հիմնական դրույթները՝ հմտորեն կիրառելով հայերենի ուսումնասիրության մեջ: Փաստերի մեկնաբանումն ու բացատրությունը աչքի են ընկնում նյութի խոր ներթափանցումով, նուրբ դիտողականությամբ և սրամտությամբ:

Զեռնարկելով լիակատար քերականություն աշխատանքը, Աճառյանը փաստորեն կանգնած էր իր ժամանակակից գիտության առաջավոր դիրքերի վրա և այն համոզմանն էր, որ որևէ երևույթ լավ հասկանալու համար անհրաժեշտ է համեմատել այն մյուս նման երևույթների հետ: Իր էությամբ այս հատորը հնչյունաբանական իրողությունների ու երևույթների դասական մեկնաբանություն է, որտեղ բազմակողմանի քննարկված են ընդհանուր հնչյունաբանական հարցեր, և տրված է հայերենի հնչյունական կազմի նկարագրությունը: Այստեղ էլ Աճառյանը սահմանում է փորձառական հնչյունաբանության, որպես ինքնուրույն գիտակարգի շրջանակները, նրա ուսումնասիրության նպատակները և մեթոդները:

Նա առանձնակի ուշադրություն է դարձնում փորձառական հնչյունաբանության հիմնական հարցերի բազմակողմանի նկարագրությանը: Այսպես՝ առանձին գլուխներում պարզում է, թե ի՞նչ են խոսքի հնչյունները, ինչո՞ւ են դրանք տարբերվում բնության մեջ գոյություն ունեցող այլ ձայներից, բնութագրում է դրանց արտարբերական եղանակները և ֆիզիկական հատկանիշները:

Այնուհետև տալիս է տարբեր լեզուների հնչյունների լեզվաբանական դասակարգումը և ի վերջո խոսում է նաև հնչյունների երկրորդական ֆիզիկական հատկանիշների մասին՝ ձայնի բարձրություն, ուժգնություն, տեղություն՝ կապելով դրանք լեզվի առողջանության հետ:

Հեղինակը չի սահմանափակվում միայն մեթոդների ու կիրառվող սարքերի թվարկումով, այլ տալիս է այդ բոլոր գործիքների ու սարքերի պարզ գիտական նկարագրությունը: Այսպես՝ բացատրվում են կոմոգրաֆի, ձայնագրի (ֆոնոգրաֆի) աշխատանքի հիմնական սկզբունքները, խոսվում է օսցիլոգրաֆի և մագնիտոֆոնի գյուտերի մասին, որոնք դեռ լայն տարածում չէին ստացել և հնչյունաբանության մեջ չէին կիրառվում: Հեղինակը խոսելով մասնավորապես մագնիտոֆոնի (հեռագրաձայնի) գյուտի մասին՝ դրան մեծ ապագա էր խոստանում: Հնչյունաբանական

ընագավառում կատարվող նորագույն ուսումնասիրությունների լույսի տակ այս ֆունդամենտալ հարցերի լուսաբանումը մինչև հիմա էլ շատ արժեքավոր է, քանի որ հնչյունաբանության հետագա զարգացումն ընթացավ ոչ թե դրանք վերանայելու, այլ գործիքները կատարելագործելու և մանրամասների մեջ թափանցելու ուղղությամբ: Այս հարցերի խոր իմացությունը լոկ գրքերից ձեռք բերած գիտելիքներ չէին, այլ հեղինակի փորձառական հնչյունաբանության ընագավառում կատարած առաջին դժվարին, բայց շնորհակալ գործի արդյունքը:

Շատ հարցերում Աճառյանը արել է այնպիսի դիտողություններ, որոնք փաստորեն կանխագուշակել են հետագա ուսումնասիրությունների արդյունքները:

Ուշագրավ են շեշտի և շեշտադրության մասին Աճառյանի մտքերը, որոնք ունեն և՛ տեսական, և՛ գործնական մեծ նշանակություն: Աճառյանը տեսականորեն ենթադրել է, որ հայերենում շեշտված վանկը երկար է անշեշտի համեմատությամբ, և հայերենում շեշտը ուժգնության բնույթի է, սակայն ցայտուն արտահայտություն չունի: Նա միանգամայն ճիշտ է բացատրում այս երևույթը, գտնելով, որ առավել ուժգին շեշտ ունեն այն լեզուները, որոնցում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա, «որովհետև արտասանության սկզբում շունչը դեռ առատ լինելով, առոգանությունն էլ ուժեղ կլինի: Իսկ երբ շեշտը վերջին վանկի վրա է, շունչը արդեն նախորդ վանկերի վրա վատնված լինելով, վերջին վանկի վրա շեշտը թույլ կլինի» (էջ 328): Այս դրույթը հաստատվել է փորձառական տվյալներով, մասնավորապես Ռ. Թոխմախյանի կատարած ուսումնասիրությամբ: Փաստորեն այստեղ ևս Աճառյանը կանխագուշակել է այն միտքը, որ չկան մաքուր, միկ բնույթի շեշտ ունեցող լեզուներ, որ շեշտի ընկալման համար անհրաժեշտ է առնվազն երկու կամ երեք գործոնների համակցություն: Այս միտքը իր փորձառական հիմնավորումը գտավ վիրջին երկու տասնամյակում ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում:

Խոսելով հայերենի շեշտի կայունության մասին, Աճառյանը գտնում է, որ տրամաբանական շեշտի դեպքում այն կարող է փոխել իր տեղը և ընկնել բառի ցանկացած վանկի վրա:

Այսպիսով, հենվելով լսողական տպավորության վրա և համեմատելով հայերենի շեշտը այլ լեզուների շեշտի հետ, Աճառյանը տրամաբանորեն եկել է միանգամայն ճիշտ եզրակացության,

կանխագուշակելով իրենից մոտ 30—40 տարի հետո փորձառական տվյալներով ստացված արդյունքները: Նշենք, որ հիշյալ փորձերը կատարված էին նախքան Աճառյանի Լիակատար քերականության այս հատորի լույս տեսնելը:

Մեծ խորաթափանցությամբ ու բազմակողմանի է քննել Աճառյանը նաև հայերենի հնչերանգը (ինտոնացիան): Չնայած այս դեպքում էլ հեղինակը չի դիմել փորձառական եղանակին, այլ հիմնվել է սեփական լսողության վրա, սակայն նրա արած գրեթե բոլոր դիտողությունները այժմ ապացուցվում են փորձառական տվյալներով:

Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարցական ու բացականչական տիպի նախադասությունների հնչյունական առանձնահատկությունների բացահայտումը: Հեղինակը տալիս է հարցական նախադասությունների դասակարգումը, ստորաբաժանելով դրանք ենթատեսակների և ապա բնութագրում է դրանց մեղեգու և շեշտի փոփոխությունը:

2. Աճառյանի ուշադրությունից չի վրիպում և ոչ մի հարց, որը իրեւէ եղել է հնչյունաբանների ուսումնասիրության առարկան: Այսպես՝ նա մանրամասնորեն քննում է գրության և արտասանության հակասությունների խնդիրը, որոշում է հայերենի գրության և արտասանության համապատասխանության աստիճանը, հայերենի բարեհնչյունության հարցը և այլն:

Հետաքրքիր է հեղինակի կարծիքը տառադարձության մասին, որ նա հայտնել է դեռևս մեր դարի սկզբներին, երբ գերիշխում էր գրադարձության սկզբունքը: Աճառյանը պաշտպանում է առաջադիմական այն սկզբունքը, որը լայն տարածում ստացավ միայն վերջերս: Ըստ այդ սկզբունքի, տառադարձությունը պետք է հիմնված լինի հնչման վրա. գրել և հնչել ինչպես հնչվում է: Աճառյանը պնդում է, որ օտար անունները պետք է տառադարձվին և ոչ թե թարգմանվեն: Միևնույն անունը լեզվից լեզու կամ ազգից ազգ տարբեր հնչյուններ ունի, օրինակ՝ ֆրանսերեն *George* (Ժորժ), ռուսերեն՝ *Георгий*, անգլերեն՝ *George* (Ջորջ). դրանց փոխարինումը անտեղի է, քանի որ անունը կկորցնի իր ինքնությունը: Օրինակ՝ ծիծաղելի կլիներ, եթե ասեինք Հովհաննես Հակոբոս Ռուսո, փոխանակ՝ Ժան Ժակ Ռուսո, կամ Լևոն (Ղևոնդ) Տոլստոյ, փոխանակ՝ Լև Տոլստոյ:

Հայտնի է, որ տառադարձության վերաբերյալ իր ունեցած կարծիքը հեղինակը ոչ միայն տեսականորեն է զարգացրել, այլև

կիրառել է իր բարբառագիտական աշխատանքներում՝ ստեղծելով տառադարձման իր սեփական համակարգը, որը հիմնված լինելով հայերենի այբուբենի վրա, ավելի ճշգրտորեն է արտացոլում հայ բարբառների իրողությունները և ավելի մատչելի է հայ լեզվաբաններին ու ընթերցողներին: Հեղինակը իրավացիորեն նշում է, որ «ամեն այբուբենի մեջ էլ տառը պայմանական մի նշան է և տրամաբանորեն կապված չէ իր ներկայացրած հնչյունի հետ», ուստի և ճշի կարող ներկայացնել այն բազմերանգ նրբություններն ու հոգավորումները, որ ստանում է միևնույն ձայնը բերանում: Այս առումով նա քննում է ամերիկացի հնչյունաբան Բելի առաջարկած այբուբենը Visible Speech անվանումով³¹, որտեղ նշաններով ներկայացվում է արտասանական օրգանների դիրքը հնչյունի արտաբերման ժամանակ: Քննադատվում է նաև Նսպերսենի նմանօրինակ այբուբենը, որտեղ յուրաքանչյուր տառ ներկայացված է մի ամբողջ բանաձևով: Աճառյանը իրավացիորեն գրտնում է, որ դրանք գործնական նշանակություն ու կիրառություն չունեն:

Գրության և արտասանության միջև միշտ կան հակասություններ, քանի որ արտասանությունը ժամանակի ընթացքում փոխվում է, իսկ գրությունը՝ ոչ: Այդ մասին Աճառյանը անում է հետևյալ պատկերավոր համեմատությունը. «Երբ գրվածքի և հնչման միջև եղած տարբերությունը շատ խոշոր չէ, տանելի է, իսկ երբ նրանք շատ մեծ չափերի են հասնում, պատճառ են դառնում մեծամեծ դժվարությունների... Պահպանողական ժողովուրդները տանում են այս բոլոր դժվարությունները, ճիշտ այնպես, ինչպես ֆեոդալական երկրներում ճորտը տանում է ազնվականների բռնականությունը: Բայց երբ մարդիկ դառնում են ավելի ազատախոհ, սկսում են մտածել, թե հանուն ինչի՞ է այդ դժվարությունը, պահանջում են գրել այնպես, ինչպես հնչում են. ուղղագրական բարեփոխությունը օրվա հարց է դառնում»³²:

Խոսելով լեզվի, որպես սոցիալական երևույթի բնորոշ հատկանիշների մասին՝ Աճառյանը դրանք թվում քննում է նաև լեզվի ներդաշնակության հարցը: Հայերենի բարեհնչունությունը որոշելու համար նա հաշվում է գրաբար և աշխարհաբար տեքստերի ձայ-

³¹ Նկատի ունենք ոչ համառուն գործիքը, որը փաստորեն ձայնի սպեկտրագրաֆիկ անալիզատոր է, այլ այբուբենը:

³² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Կ. Ս. Նրևան, 1971, էջ 86:

նավորների և բաղաձայնների տեսակարար կշիռը ըստ վանկերի և հանդում այն եզրակացության, որ մեղ ծանոթ լեզուներից ամենաբարեհնչուններն են ճապոներենը և իտալերենը, ամենաքիչ բարեհնչունները՝ անգլերենն ու գերմաներենը, իսկ հայերենը և ռուսերենը գրավում են միջին դիրք։

Ժամանակակից լեզվաբանության նվաճումների լույսի տակ գնահատելով Հրաչյա Աճառյանի հնչյունաբանական տեսակետներն ու ըմբռնումները, դժվար չէ նկատել, որ դրանք բռնել են ժամանակի քննությունը և մինչև այժմ էլ զբաղեցնում են լեզվաբաններին։

Վ. Ն. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԴԵՄ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՁԵՐԱՆԳԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ

Խոսքի հնչերանգային առանձնահատկությունների ուսումնասիրությունը սովետական լեզվաբանության մեջ մինչև վերջերս կատարվում էր գերազանցապես քերականության շրջանակներում: Այս փաստը պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզվական ու խոսքային միավորները խիստ չեն սահմանազատված, և լեզվական գրեթե բոլոր երևույթները (այդ թվում նաև վերհատույթային միավորները) ուսումնասիրվում և գասակարգվում են քերականության ոլորտում, որն էլ լայն առումով գեղես ճանաչվում է որպես լեզվի ամբողջական ուսմունք: Քերականական (շարահյուսական) կայուն միավորներից է նախադասությունը, որին քնորոշ է իմաստային և քերականական ավարտվածությունը: Հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից այն նույնպես գիտվում է որպես կայուն վերհատույթային կառուցվածք:

Հնչերանգը սովորաբար համարվում է խոսքային մի այնպիսի երևույթ, որտեղ արտահայտվում է խոսողի վերաբերմունքը իրողության նկատմամբ (13, 65): Ժամանակակից ռուսաց լեզվի ակադեմիական քերականության մեջ, օրինակ, հայտնվում է այն միտքը, որ հնչերանգը սուբյեկտիվ-եղանակավորող ամենատարբեր նշանակությունների արտահայտման համընդհանուր միջոցներից մեկն է (14, 611): Ցավոք, ինչպես այստեղ, այնպես էլ քերակա-նական մյուս ձեռնարկներում հնչերանգը ըստ էության հատուկ չի ուսումնասիրվում և դիտվում է լոկ որպես նախադասության ձևավորման միջոց: Նման աշխատություններում հիմնական հաղորդակցական գործառությունը վերագրվում է նախադասության շարահյուսական կառույցներին, որոնց միջոցով հայտնվում է որոշակի հաղորդում իրողության մասին, իսկ հնչերանգը համար-

վում է մտքի արտահայտմանը ուղեկցող երկրորդական երևույթ, որն, ինչպես ասացինք, ընկալվում է որպես սուբյեկտիվ եղանակավորող և ոչ թե օբյեկտիվ երևույթ: Մինչդեռ խոսքում այն սովորաբար արտահայտում է հուղաարտահայտչական իրողությունների մի ամբողջ կոմպլեքս, որոնց ստույգ դասակարգումը գրեթե անհնար է: Սակայն, եթե սահմանադատվեն օբյեկտիվ և սուբյեկտիվ արտահայտչամիջոցները, ապա այս դեպքում հնարավոր կլինի հնչերանդային հաղորդակցական տիպերը անջատել հուղաարտահայտչական այլ միջոցներից: Պատահական չէ, որ դեռևս հնում սահմանել են հնչերանգի երեք-չորս տեսակներ, սակայն մինչև այժմ էլ նրանց հաղորդակցական գործառությունը չի ճշտված: Այն որպես լեզվական առանձին երևույթ չի գիտվում, որի հետևանքով էլ հնչերանգի տեսակները մերթ ուղղակիորեն թվարկվում ու մասնավորապես նկարագրվում են առանց դասակարգման սկզբունքների բացահայտման (13, 354, 363), մերթ կապվում են ստորոգման հետ (13, 76), ընդ որում նշվում է, որ այդ կարգի կամ հասկացությունների փոխհարաբերությունն ու փոխադարձ կապը մինչև այժմ էլ որոշակիորեն չի բացահայտված (13, 77), Հետևաբար, եթե հնչերանգը ճանաչվում է միայն որպես սուբյեկտիվ արտահայտչական կամ եղանակավորող միջոց, ապա այս դեպքում չեն բացահայտվում դրա հաղորդակցական գործառության բոլոր կողմերը: Միաժամանակ անհրաժեշտ է ոչ միայն վերականգնել հնչերանգային առանձին տիպերի հաղորդակցական արժեքը, այլև հստակորեն սահմանադատել այդ խմբերը կամ տիպերը հուղաարտահայտչական, հուղակամային և այլ սուբյեկտիվ եղանակավորող մյուս արտահայտչամիջոցներից, ճշտումներ մտցնելով որոշ հասկացությունների ըմբռնման և դասակարգման հարցում: Այս հարցը վերջին երկու տասնամյակում գտնվում է սովետական փորձարար-հնչյունաբանների ուշադրության կենտրոնում: Այսպես, Վ. Ա. Արտյոմովը առաջինն է դիտել հնչերանգային կառույցներում նվաղագույն իմաստատարբերակիչ միավորները՝ հնչերանդույթները՝ ինտոնեմները (10, 9): Միաժամանակ նա հնչերանգի հաղորդակցական գործառությանը հակադրում է նախադասության տրամաբանական, շարահյուսական ու եղանակավորող գործառությունները և այն համարում մի կարևորագույն միջոց, որի շնորհիվ նախադասությունը փոխակերպվում է ֆրազի (8, 7):

Առանձին ուսումնասիրողներ, ուշադրություն դարձնելով հըն-

չերանգային հաղորդակցական տիպերի դասակարգմանը, գտնում են, որ խոսքում կարելի է առանձնացնել հաղորդակցական երեք տիպ, այն է՝ պատմողական, հարցական և գրղչական, ընդ որում հրամայական և բացականչական նախադասությունները դիտվում են որպես դրզչական տիպին պատկանող կայուն ենթախմբեր: Նման դասակարգումը թերևս ավելի հստակ է, որովհետև այն պայմանավորված է հնչերանգային ստույգ կառուցվածքով (հնչման ձայնաբանական կորագծերով), որը հատկանշական է հաղորդակցական այս կամ այն տիպին:

Այսպիսով, մենք ընդունում ենք, որ հնչերանգը հաղորդակցական օբյեկտիվ արտահայտչամիջոց է, մինչդեռ նրանում գործառվող եղանակավորող կողմը սուբյեկտիվ արտահայտչամիջոց է, որը թեև արտահայտում է խոսողի հուղական վիճակը, կամքը կամ վերաբերմունքը իրողության նկատմամբ, սակայն չի մասնակցում հաղորդակցական տիպերի կազմությանը:

Ուսումնասիրելով արդի հայերենի անդեմ և անվանական նախադասությունների հնչերանգային կառույցները, մենք փորձել ենք սահմանել այդ կառույցների՝ որոշակի հնչերանգային տիպերին պատկանելը: Այսպես, պարզվում է, որ անդեմ նախադասություններին (որոնք առավելապես արտահայտված են լինում քերականական անորոշ դերբաքի ձևերով) բնորոշ են գրղչական և հարցական հնչերանգային տիպեր, իսկ անվանական նախադասություններին՝ պատմողական և գրղչական հաղորդակցական տիպեր: Մեղ հետաքրքրող հարցին նվիրված աշխատանքներում (8, 289, 353, 11, 17, 18 և այլն) բացահայտված և վարգավորված են հնչերանգային հաղորդակցական տիպերը և սահմանված է կառույցների պատկանելիությունն ըստ հաղորդակցական տիպերի: Նման մոտեցումը, կարծում ենք, նպատակահարմար է նաև քերականական այլ կառուցվածքներ ունեցող նախադասությունների ուսումնասիրման դեպքում: Հայ լեզվաբանության մեջ այս ուղղությամբ դեռևս առաջին քայլերն են կատարվում:

Հայագիտության մեջ ընդունված տեսակետն այն է, որ անդեմ նախադասությունների մեջ դեմքի քերականական կարգը համարվում է հնչերանգով: Այդ մասին Ս. Գ. Աբրահամյանը գրում է. «Պատահում է նաև, որ ստորագումը քերականական-ձևային դրսևորում չի ունենում, բայց ըստ էության նա գոյություն ունի: Այդպիսին է անդեմ նախադասությունների ստորագումը... Անդեմ նախադասությունների ձևավորման գործում գլխավոր դերը պատ-

կանում է ինտոնացիային» (2, 22—24), Անշուշտ, անդեմ և նման տիպի միակազմ նախադասությունների կազմավորման գործում հնչերանգը խոշոր գեր է կատարում, սակայն այդ երևույթը բնորոշ է նաև նախադասության մյուս տիպերին, անկախ նրանց քերականական կառուցվածքից: Բացի այդ, հնչերանգի վերլուծությունը թեև կապված է նախադասության՝ որպես քերականական (շարահյուսական) միավորի հետ, այնուամենայնիվ նրա ուսումնասիրությունը հիմնականում կատարվում է մի այլ ոլորտում՝ բանավոր խոսքի ուսումնասիրության բնագավառում, որը հայտնի է «փորձառական հնչյունաբանություն» անվանումով: Ս. Աբրահամյանը գրում է, որ «նախադասությունը շարահյուսական հիմնական առարկան է... Խոսքը ևս պետք է ուսումնասիրվի շարահյուսության բաժնում: Դա նույնպես չի խանգարում նախադասությունը լեզվի շարահյուսական կառուցվածքի մեջ առանցքային, կենտրոնական միավոր համարելուն, քանի որ խոսքի կառուցվածքի ուսումնասիրումը հանդիսանում է նախադասությունների փոխհարաբերությունների, նախադասությունների կապակցությունների ուսումնասիրում» (2, 8): Այստեղ կարևորն այն է, որ հեղինակը խոսքի ուսումնասիրությանը մեծ գեր է հատկացնում, ընդ որում հատկապես նշում է հնչերանգի ուսումնասիրման անհրաժեշտությունը: Այսպես, նա գրում է. «Հայերենի նախադասության ինտոնացիան, ցավոք սրտի, չի ուսումնասիրված մինչև օրս... Մեծ է ինտոնացիայի դերը նախադասության էության դրսևորման գործում, ինտոնացիան այնքան կարևոր նշանակություն ունի նախադասության համար, որքան բառային շեշտը՝ բառի համար... Ինտոնացիա ասելով պետք է հասկանալ ամբողջ նախադասության արտաբերման ընթացքում արտասանական երևելների (այդ թվում նաև տրամաբանական շեշտի) ամբողջությունը, որն իրոք մի ներդաշնակ ամբողջություն է կազմում»:

Այսպիսով, հատուկ ինտոնացիան նախադասության հիմնական հատկանիշներից է, որ կարևոր է նախադասության ամբողջությունը և մտքի ավարտվածությունը ձևավորելու համար» (2, 25),

Ս. Աբրահամյանը հայերենի նախադասություններն ըստ բնույթի դասակարգելիս ուշադրություն է դարձնում ինչպես խոսողի կողմից հաղորդման նպատակադրմանը այնպես էլ հնչերանգի կարևորությունը:

Հնչերանգի ուսումնասիրության ժամանակ հայ լեզվաբաննե-

ըը անդրադարձել են նաև նրա բաղադրիչ մասերին՝ շեշտին, տակտին, տեղումնային (ամանակին), որոնք հայտնի են ավերհատուկության միավորներն անվանմամբ:

Այսպես, օրինակ, Մ. Արեղյանը օգտագործում է ուրիշ, տակտ, առոգանություն կամ պրոսոդիա տերմինները: Նա իր «Տաղաչափություն» գրքում գրում է. «Լեզվի երաժշտական ուժը կախված է բառերի բնական ամանակից ու շեշտից, որով առաջանում է ոտանավորի ոտքը կամ տակտը, ամենից առաջ, ուրեմն, պետք է տեսնել, թե ինչպիսին է մեր լեզվի առոգանությունը, պրոսոդիան, առոգանական (պրոսոդական) հատկությունը, այսինքն՝ բառերի կանոնավոր արտասանությունը շեշտի ու ամանակի համեմատ, կամ բառերի շեշտը և վանկերի ամանակը՝ երկարությունն ու կարճությունը» (1933, էջ 16): Սակայն Մ. Արեղյանի «Տաղաչափության» մեջ, դժբախտաբար, այս հարցերը քննվում են միայն բանաստեղծությունների կառուցվածքի ուսումնասիրման տեսանկյունով: Արեղյանի նպատակը լեզվի երաժշտական (կանոնավոր) ուժի և ոտանավորի ոտքի օրինաչափությունների ուսումնասիրումն է: Ահա ինչու նա օգտագործում է ուրիշ և տակտ կամ առոգանություն և պրոսոդիա բառերը որպես նույնանիշ հասկացություններ: Մինչդեռ փորձառական հնչյունաբանության տեսանկյունից առոգանությունը խոսքի արտաբերման հատկանիշներից մեկն է, իսկ պրոսոդիա հասկացությունը իր բովանդակությամբ անհամեմատ լայն է և այժմ ըմբռնվում է որպես խոսքի վերահատուկության միավորների կոմպլեքսի ուսմունք: Ինչ վերաբերում է տակտ հասկացությանը, ապա այն այժմ ըմբռնվում է նաև որպես խոսքային մակարդակի միավոր և հակադրվում է շարույթին, լեզվական մակարդակի միավորին: Վերահատուկության միավորների առանձին կողմերը բացահայտվում են վերջին ժամանակներս հայերենի փորձառական հնչյունաբանությանը նվիրված մի շարք աշխատանքներում*:

Այժմ անցնենք խոսքի հաղորդակցական տիպերի ուսումնասիրությանը և տեսնենք, թե անդեմ և անվանական նախադասու-

* Հմմտ. А. А. Хачатрян, В. Н. Айрапетян, Экспериментальное исследование согласных фонем литературного армянского языка, Ереван, 1971: Ա. Արամյան, Արդի հայերենի պարզ նախադասության ինտոնացիայի միջանի հարցեր, Ռ. Քոխմախյան, Ժամանակակից հայերենի բառային շեշտի բնույթը («Լեզվի և ոճի հարցեր», հ. 3, Երևան, 1975): Ա. Խաչատրյան, Ռ. Քոխմախյան, Հ. Զախարյան, Խոսքի տեմպը, ԼՂԳ, 1976, № 6:

թյունները ինչպիսի առանձնահատկություններ են դրսևորում հաղորդակցական այս կամ այն կարգում և ընդհանրապես որքան հաղորդակցական տիպեր կարելի է առանձնացնել հայերենում:

ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադասություններն ըստ բնույթի կամ երանգի հայ քերականագիտության մեջ սովորաբար բաժանվում են չորս տեսակի՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական: Այս հիմունքը հանգես է գալիս տարբեր անվանումներով: Մի դեպքում խոսում են նախադասության բնույթի, մի այլ դեպքում՝ արտահայտման նպատակի (եղանակի), երրորդ դեպքում՝ երանգի մասին: Բոլոր դեպքերում էլ, սակայն, հիմնականում առանձնացվում է նախադասության չորս տեսակ:

Նախադասության տեսակների դասակարգման մեջ որոշ տարբերություն նկատվում է Ս. Աբրահամյանի աշխատություններում, որտեղ հեղինակը նախադասություններն ըստ երանգի բաժանելիս ընդունում է նաև հինգերորդ տեսակը, այն է՝ խառը երանգի նախադասությունը (2, 63—98, 3, 354—378):

Նախադասությունների դասակարգմանը բոլորովին նոր մոտեցում է ցուցաբերում Գ. Զահուկյանը, որը տարբերում է նախադասության եղանակաառոգանական տեսակները: Նա հստակորեն տարբերակում է արտահայտության և բովանդակության պլանները և ըստ արտահայտության պլանի տարբերակում է նախադասությունների բացականչական, շեշտական, հարցական և շեղոք տիպերը (7, 355—359), իսկ բովանդակության պլանում որոշում դրանց հիմնական հատկանիշները՝ սուբյեկտիվ ակտիվությունը և իմացականությունը (7, 358)*:

Ներկա աշխատանքում մենք առաջնորդվել ենք վերը նշված դասակարգմամբ և քննել ենք անդեմ և անվանական նախադասություններ երեք հաղորդակցական տիպերում՝ պատմողական, հարցական, գրղչական (վերջինիս կազմում դիտելով երկու ենթախմբեր՝ հրամայական և բացականչական):

Հայերենի շարահյուսության մեջ լեզվաբանները տարբերակում են նախադասությունների կառուցվածքային երկու տեսակ՝

* Ներկա ուսումնասիրությունը հիմնականում ավարտվել է նախքան Գ. Զահուկյանի այս աշխատության հրատարակումը, ուստի և հաջվի չեն առնվել նրա հիմնական եզրակացությունները:

միակազմ և երկկազմ նախադասություններ: Եթե նախադասությունն ունի (կամ մտքով կարող է հասկացվել) ենթակա՝ և ստորոգյալ՝ երկկազմ է, իսկ եթե դրանցից որևէ մեկը բացակայում է, այն միակազմ է: Իրենց հերթին միակազմ նախադասությունները բաժանվում են երեք տեսակի՝ անենթակա, անդեմ (որոնց կազմում են բայական անդեմ ու անվանական-անդեմ նախադասությունները) և բառ-նախադասություններ (5, 29): Մենք ուսումնասիրել ենք միակազմ նախադասությունների միայն մեկ տեսակը՝ անդեմ նախադասությունը (ընդ որում, բուն անդեմ և անվանական նախադասությունների հնչերանգային կառույցները դիտել ենք որպես առանձին տեսակներ):

Անդեմ նախադասության հետ կապված հարցերը քննարկվել են մեր լեզվաբանների աշխատություններում: Ս. Աբրահամյանը հատկապես ընդգծում է խոսքում այդ նախադասությունների ձևավորման համար անհրաժեշտ հատուկ հնչերանգային ավարտվածությունը (2, 114): Վ. Առաքելյանը անդեմ նախադասությունները քննելիս դրանք չի բաժանում ըստ հնչերանգային տիպերի, այլ դիտում է սոսկ միայն ըստ կազմավորման եղանակների և հաղորդակցական տիպերը պարզապես տարրալուծում է բերականական (շարահյուսական) միավորների խմբերում (4, 19—52): Ս. Գյուլբուրդյանը միակազմ նախադասությունների ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ, թեև անդրադառնում է անդեմ նախադասությունների քերականական բոլոր հնարավոր կառույցներին, սակայն ուսումնասիրման այս նյութը (ինչպես նաև միակազմ նախադասությունների այլ տեսակները) ըստ երանգավորման առանձնահատկությունների հատուկ չի հետազոտում: Առանձին ենթաբաժիններում նա միայն հիշատակում է պատմողական, հրամայական, հարցական և բացականչական տեսակները առանց հատուկ անվանման (5, 122—142): Արգի հայերենի անդեմ նախադասությունների հատուկ ուսումնասիրությանն է նվիրված Հ. Հարությունյանի աշխատությունը (6): Այստեղ հեղինակը, դիտելով վերլուծվող նախադասությունները հնչերանգային-խմաստային առանձնահատկությունների տեսակետից սահմանում է նախադասության վեց հնչերանգային տեսակներ, այն է՝ պատմողական, հարցական, բացականչական, հրամայական, կոչական և խառն հնչերանգով նախադասություններ:

Դասակարգման մեկ այլ սկզբունք է կիրառված Ֆ. Խլղաթյանի «նախադասության տեսակներն ըստ բնույթի» հոդվածում

(ՀՊՀՄԻ «Տեղեկագիր», № 1, 1962), որտեղ հեղինակը ըզձական բնույթի նախադասության առանձին տեսակ է ընդունում:

Ինչպես տեսնում ենք, լեզվաբանական աշխատություններում, թեև խոսվում է հնչերանգի մասին, սակայն նրանցում չեն բացահայտվում հնչերանգի հաղորդակցական գործառությունը, որովհետև տվյալ երևույթի վերլուծությունը կատարում են լեզվական մոտեցմամբ և քիչ են ուշադրություն դարձնում լեզվի և խոսքի փոխհարաբերությանը:

Հայ լեզվաբանների նշված բոլոր աշխատանքներում (3, 4, 5, 6) մեջբերված գրեթե բոլոր օրինակները (բացառությամբ խառը երանգի նախադասությունների) մեր կողմից որոշ ընտրությամբ ծառայել են փորձառական ուսումնասիրությունների համար: Մեր ուսումնասիրության նպատակն է եղել այդ օրինակներում գտնել հնչերանգային այն բնորոշ հատկանիշները, որով առանձնանում են խոսքում կառուցվածքային նույն ընդգրկում ունեցող միավորները կամ նախադասությունները: Քանի որ հայ լեզվաբանների մոտ գրեթե չկան պատմողական բնույթի անդեմ նախադասությունների օրինակներ, թեև տեսականորեն այդ տիպի նախադասությունների օրինակներ կարելի է գտնել, ուստի և մենք սահմանափակվել ենք մեր ուսումնասիրությունում միայն գրգչական և հարցական անդեմ նախադասությունների քննությամբ:

ԴՐՈՋԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես վերը նշել ենք, մենք անդեմ նախադասություններ համարում ենք միայն բայական կազմություն ունեցող նախադասությունները, իսկ անվանական նախադասությունները չենք մտցնում անդեմների շարքը, քանի որ դրանց կազմության մեջ բացակայում է բայ խոսքի մասը:

Ուսումնասիրությունը սկսում ենք գրգչական անդեմ նախադասություններից, որովհետև նախնական ծանոթությունն իսկ բացահայտեց, որ նման կազմությունները առավել չափով հատուկ են հաղորդակցական այն տիպին, որը մենք անվանում ենք դրրդական: Հստ հաղորդակցական մյուս տիպերի համեմատաբար հաճախական են հարցական բնույթի նախադասությունները և խիստ հազվադեպ՝ պատմողական բնույթի նախադասությունները: Այդ պատճառով էլ մեր ուսումնասիրության մեջ մենք անդրադարձել ենք անդեմ նախադասությունների հաղորդակցական երկու տիպերին՝ գրգչական և հարցական նախադասություններին: Ինչ վերա-

բերում է անվանական նախադասութիւններին, ապա նման կադմութիւնները ավելի հաճախ հանդիպում են պատմողական և դրդական հաղորդակցական տիպերով և խիստ հազվադեպ՝ հարցական երանդ ունեցող նախադասութիւններով:

Ահա դրդական անդեմ նախադասութիւնների մի քանի օրինակ.

«Մի րոպե հետո եղավ երկրորդ հրամանը.— Յրվե՛լ, պառկե՛լ...» (ՀՔ):

«Պանե՛լ այս ռազմաճակատը, շշվոքվել իր՝ վարդանի շարժումներից» (ԱՆԹ):

«Բաթը կռացավ դրկեց Պապին և հրամայեց ներսը գտնվող իր դինվորներին.— Կոտորե՛լ քոլորին... ողջ շթողնել ոչ մեկի՛ն: Պահակեն՛ր դնել, դուռը փակե՛լ և փախչել ցանկացողին սատակե՛լ անմիջապէս» (ԱՆԹ):

«Հեծյալները, որ վարդանի կողմից էին՝ հրաման բերին նրանց:— Կովով փաշվե՛լ աջակողմյան լեռնակիրճը» (ԴԴ):

«Կազմակերպե՛լ լեզվի ճարցերին նվիրված ճաղորդումներ՝ հեռուստատեսութեամբ ու ռադիոյով» (մամուլ):

Բոլոր ուսումնասիրողներն էլ անդեմ նախադասութիւնների դրսևորման ժամանակ ընդգծում են հնչերանգի դերը:

Այսպես, օրինակ՝ Ս. Աբրահամյանը գրում է. «Անդեմ նախադասութեան դեմք չունենալու առանձնահատկութիւնը բնականաբար որոշ դժվարութիւն ստեղծում է նրա, որպէս մտքի միավորի ըմբռնման և գործածութեան հարցում: Այդ պատճառով նրա էութեան դրսևորման և ճանաչման հարցում առանձնապէս էական դեր են կատարում հնչերանգային ավարտվածութիւնը և խոսքը» (3, 343):

Վ. Առաքելյանը գտնում է, որ «Անորոշ դերբայով անդեմ նախադասութիւնը արտահայտում է ապառնի ժամանակ, իսկ նշանակութեան տարբերութիւնները պայմանավորվում են հնչերանգութեամբ» (4, 38):

Հետաքրքրական են Ս. Գյուլբուղաղյանի դիտողութիւնները. «Բայական անդեմ նախադասութիւններն էլ, անշուշտ, ունեն եղանակավորում, նրանց միջոցով էլ կարելի է իմանալ խոսողի վերաբերմունքը: Բանն այն է, որ եղանակավորումն արտահայտվում է ոչ միայն բայի եղանակային ձևի միջոցով, այլ նաև հնչերանգով: Ահա այդ հնչերանգով ենք անդեմ նախադասութիւններում, ընդհանրապէս որոշում, իմանում խոսողի վերաբերմունքը, դա է

եղանակավորում հիշյալ նախադասութիւնները, Հնչերանգով ենք իմանում, որ խոսողը հրամայում է, խնդրում է, երազում է, ցանկանում է որևէ բան» (5, 127)։

Ս. Գլուրուդադյանը ուշադրութիւն է դարձնում այն բանին, որ անորոշ դերբայով կազմութիւնները առավել շատ են արտահայտված անդեմ նախադասութիւնների շարքում։ Նա գրում է. «Բայական անդեմ կոչվում են այն նախադասութիւնները, որոնց գերադաս անգամն արտահայտված է լինում անդեմ բայով, գերազանցապես անորոշ դերբայով», և էջատակում լրացնում է՝ «մյուս դերբայներով կարող են կազմվել անվանական նախադասութիւններ» (5, 123)։

Անդեմ նախադասութիւնների կազմում հնչերանգի առանձնահատուկ դերը նշել է նաև Հ. Հարութիւնյանը։ Նա գրում է. «...Հնչեմանգի գերը առանձնապես մեծ է անդեմ նախադասութիւններում (որոնք շունեն քերականական-ձևաբանական ստորոգում), որը ձևավորում է ստորոգումը, նախադասութիւն ավարտունութիւնը, արտահայտում է խոսողի վերաբերմունքը (եղանակայնութիւն)։ Ավելին, տարբեր հնչերանգներով արտաբերելիս նույն բառը կամ բառակապակցութիւնը արտահայտում է տարբեր բովանդակութիւն, մի բան, որ այնքան ազատորեն հնարավոր չէ ցույց տալ դիմավոր նախադասութիւններում» (6, 10)։

Դրդշական անդեմ նախադասութիւնների միջուկը կազմում են, այսպես կոչված, հրամայական նախադասութիւնները (հմմտ. վերը բերված առաջին նախադասութիւնները), որոնք հնչերանգային կորագծով աչքի են ընկնում հատկապես առավելագույն ուժգնութեամբ, կտրականութեամբ (սրա շնորհիվ էլ տեղողութեան գործոնն այստեղ դրսևորված է սովորաբար ճիշտ հակառակ ցուցանիշներով), իսկ մեղեդայնութիւնը տվյալ դեպքում երկրորդական դեր է խաղում։ Եթե մեղեդայնութեան ցուցանիշներն այնուամենայնիվ բարձր են, ապա այս վկայում է միայն հուզական-արտահայտչական միջոցների առկայութեան մասին, որը հաղորդակցական տիպի սահմանման վրա ազդեցութիւն չի գործում։

Հրամանը, հրահանգը կամ ընդհանրապես դրդշական գործոնը նման նախադասութիւններում, ինչպես նշել ենք, արտահայտված են լինում սովորաբար անորոշ դերբայով, կամ, ինչպես ընդունված է ասել, նախադասութեան գերադաս անդամով։

Այստեղ պետք է նշել նաև այն, որ թեպետև անորոշ դերբայով արտահայտված հրահանգը պարունակում է նախադասութեան

ինֆորմացիայի մի մասը, սակայն այդ բառը նախադասության կազմում հանդես է գալիս հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից որպես հատուկ ընդգծված մի հատված, ուստի և հնչերանգի մեր ուսումնասիրությունը կենտրոնացված է եղել հենց այդ առանձին բառերի հնչերանգային կառուցվածքի վրա (հմտ. «Մի ռուպե հետո եղավ երկրորդ հրամանը.— Յրվե՛լ, պառկե՛լ...»):

Անդեմ նախադասության հնչերանգի ողջ կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ նախադասության գլխավոր անդամը իր վրա է կրում հնչերանգի ողջ պատկերը, միաժամանակ կարգավորելով ձայնի ելեկշավորումը նախադասության մյուս անդամների նկատմամբ: Վերլուծվող նախադասության մյուս անդամների ձայնաբանական ցուցանիշների չափումներ չեն կատարվում, որովհետև դրանք հնչերանգի կառուցվածքի տեսակետից կատարում են երկրորդական գեր: Այս տեսակետից հետաքրքրական է նշել ես մեկ փաստ: Հաջորդ վերլուծվող նախադասության՝ «Պահե՛լ այս ռազմակարգը, չլիքիվե՛լ իր՝ Վարդանի շարժումներից» ինտոնոգրամը ցույց է տալիս, որ նախադասության գլխավոր անդամը հաղորդավարն արտասանել է հաջորդող իր բառի հետ միասին, մեկ ականթարթում, ինչպես ասում են «մեկ շնչով», որը կազմում է մի սերտ բառակապակցություն, քանի որ հաջորդող բառից բաժանվում է իմաստակիր դադարով: Այդ դարը երկու շարույթների սահմանաբաժանն է:

Մի քանի խոսք բացականչական և մյուս տիպի նախադասությունների դասակարգման վերաբերյալ: Սովորաբար դրության մեջ արտահայտված տրոհության նշանները ոչ բոլոր դեպքերում են արտացոլում հնչերանգի բուն պատկերը և ո՛չ բոլոր դեպքերում է հնարավոր ճշգրիտ կերպով սահմանել նախադասության այս կամ այն հաղորդակցական տիպը: Օրինակ, «Բարձրանա՛լ միշտ բարձրանա՛լ, անդադար բարձրանա՛լ» (Նար.) նախադասության հետ մեկտեղ որպես բացականչական նախադասություն է ճանաչվիլ (ըստ երևույթին՝ առոգանության նշանի շնորհիվ միայն) նաև «Նստե՛լ ձիե՛րը, հետե՛լ ինձ,— կանչեց խրոխտածայն» նախադասությունը (5, 142), որի մեջ, մեր ըմբռնմամբ, կարելի է տեսնել հրամայական երանգ:

Ս. Գյուլբուդադյանը նշում է, որ անդեմ նախադասություններում բայական գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը ընդհանրապես նախադասությանը տալիս է կատարվելիք գործողու-

թյան գաղափար, Այս հատկանիշը պահպանվում է հաղորդակցական բոլոր տիպի նախադասություններում, Ճիշտ է, այն ամենից ավելի հատուկ է հարցական և դրդական տիպի անդեմ նախադասություններին, սակայն լինում է նաև հաղվադեպ հանդիպող պատմողական բնույթի անդեմ նախադասություններում, ինչպես՝ «Ապրել միայն կարմիր գարնան» (ՀՀ) և այլն:

Միաժամանակ հանդիպում ենք անորոշ դերբայով կաղմված այնպիսի նախադասությունների, որոնք ցույց են տալիս կատարված գործողության գաղափար, Օրինակ, «Մեան-Նեան ճրելով վագոն բարձրանալ, տոմսակ չգնել, տոմսավաճառին կոպտել, ընթացի ժամանակ վագոնից քոչել— մի՞թե սրանք վայել են կոմերիտականին» (մամուլ) (5, 128):

Փորձառական եղանակով ուսումնասիրության ենթարկված բացականչական ենթախմբի մեջ մտնում են հետևյալ տեսակի նախադասությունները. «Բարձրանա՛լ, միշտ բարձրանա՛լ, անդադար բարձրանա՛լ» կամ «Մնվել փողոցում, ծերանալ փողոցում և մեռնել փողոցում... Ոչ մի հպարտություն չկա այս գրության մեջ» (ԳՍ) և այլն:

Ուշագրավ է այն, որ բացականչական անդեմ նախադասությունները ոչ միայն իրենց հաղորդակցակա:ին ֆունկցիայով, այլ նաև հուզական-արտահայտչական միջոցներով, այսպես կոչված արտահայտման երկրորդ պլանով արտահայտում են ցանկություն, իղձ, որևէ երևույթի գնահատական, հիացմունք, զարմանք, ողջույն, բարեմաղթություն, հեգնանք և այլն: Այստեղ է, որ կարելի է դիտել կայուն հնչերանգային կառուցվածքների որոշակի տատանումներ, պայմանավորված խոսողի կամ հաղորդավարի անհատական վերաբերմունքով՝ տվյալ երևույթի նկատմամբ: Այստեղ որպես վճռական գործոններ են հանդես գալիս նաև հաղորդավարի խառնվածքը և նրա հոգեկան վիճակը խոսելու պահին:

Փորձառական ուսումնասիրության ենթարկված նյութում «Բարձրանա՛լ, միշտ բարձրանա՛լ, անդադար բարձրանա՛լ» նախադասությունը հետաքրքիր պատկեր է տալիս: Այս նախադասության մեջ գերադաս անդամը կրկնվում է մի քանի անգամ, բոլոր դեպքերում պահպանելով բացականչական նախադասության հնչերանգային կառուցվածքը: Բանն այն է, որ դրդական (այդ թվում նաև բացականչական) նախադասություններն աչքի են ընկնում հնչման առավելագույն ուժեղացումով: Ինտոնոգրամի վերլուծությունը ցույց է տալիս, որ այնուամենայնիվ հնչման ուժեղա-

ցումը ընկնում է ոչ թե նախադասության գերադաս անդամի, այլ նրան նախորդող բառերի վրա (միշտ, անդադար), որը չի խախտում բացականչական նախադասությունների հնչերանգային կառուցվածքը:

ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցական նախադասությունները դասակարգելիս մենք առաջնորդվել ենք հայագիտության մեջ ընդունված տեսակետներով: Խոսելով հարցական նախադասությունների մասին, Ս. Աբրահամյանը իր աշխատություններից մեկում գրում է. «Հարցական կոչվում են այն նախադասությունները, որոնք արտահայտում են հարցում:

Հարցական նախադասությունների ստորոգյալը քերականական տեսակետից որևէ սպեցիֆիկ առանձնահատկություն չունի այն իմաստով, որ արտահայտվում է բայի համարյա բոլոր եղանակներով: Այս նախադասությունների առավել բնորոշ ու ընդհանուր հատկանիշը հարցական ինտոնացիան է, հարցումը» (2, 73): Այնուհետև հեղինակը բերում է հարցական նախադասությունների բաղմամբիվ օրինակներ՝ կապված քերականական տարբեր կատեգորիաների կիրառության (բայաձևերի, հարցական-հարաբերական դերանունների, թե շաղկապի և այլն) հետ: Ս. Աբրահամյանը շոշափում է նաև հնչերանգի հարցը, սակայն այն դուրս տեսական մոտեցման արդյունք է, քանի որ չի բացահայտվում հաղորդակցական այդ տիպի հնչերանգային առանձնահատկության փաստական արժեքները հաղորդակցական այլ բնույթի նախադասություններից: Մենք մեր աշխատության շրջանակներում հարցումը կամ հարցական հնչերանգը դիտել ենք որպես առանձին յուրօրինակ հաղորդակցական տիպ, որն ինչպես նաև մյուս հաղորդակցական տիպերը, ընդգրկում է և արտահայտության, և բովանդակության պլանները, որովհետև հնչերանգը թեպետև վերհատկաթային երևույթ է, սակայն յուրաքանչյուր հաղորդակցական տիպ ունի ուրույն կառուցվածք: Այսպիսով, հարցական հաղորդակցական տիպի կառուցվածքը խստիվ կերպով տարբերվում է մյուս տիպերից կամ տեսակներից և այն հոգեկան-ղեցադրական, կամայական, հուզական-արտահայտչական դրսևորումները, վերաբերմունքը, արտահայտումը, որոնք դիտվում են տվյալ կամ մյուս հաղորդակցական տիպերի հետ կապված, այնուամենայնիվ գործում են կոնկրետ մեկ տեսակի ոլորտում:

Հարցական և հաղորդակցական մյուս տիպերի կառուցվածքում (խոսքային պրոցեսի ընթացքում) տեղի են ունենում հիմնական տոնի հաճախականության, ձայնի ուժգնության և տևողության փոփոխություններ, որոնք բնորոշվում են կոնտեքստի միջոցով և արտահայտվում են միայն հնչերանգով: Կառուցվածքի բաղադրիչների հարաբերակցության նման ուսումնասիրությունը կարող է դիտվել որպես կառուցվածքային լեզվաբանության եղանակներից մեկը:

Հարցական բնույթի անդեմ նախադասություններում հարցական հնչերանգը յուրահատուկ դրսևորումներ է ունենում, երբ նախադասության մեջ որպես գերադաս անդամ հանդես է գալիս անորոշ դերբայը, լինելով հնչերանգի կենտրոնական առանցքը: Այս տիպի նախադասությունները տարբերվում են նաև անդեմ նախադասություններից, որտեղ հարցական հնչերանգի առանցքային հատվածը այլ է՝ հիմնական տոնի բարձրակետը գտնվում է հարցում արտահայտող դերանվան վրա: Այսպես, եթե դիտենք «Զատավատ՝ նրան» (ԴԴ) անդեմ նախադասությունը, որն ունի հարցական հնչերանգ, ապա ըստ վանկերի հաջորդականության կարող ենք տեսնել հետևյալ պատկերը. մեղեդայնության կորը առաջին վանկում հասնում է 235 հերց հաճախականության, թեև նրանում առկա է ձայնաբանական թույլ տարահղորություն ունեցող ը ձայնավորը: Այս բացատրվում է նրանով, որ այդ վանկով սկսվում է նախադասությունը, իսկ բառակիրը կամ նախադասության րսկիրը ունի ուժեղ ինտենսիվություն, և միաժամանակ նրանով, որ առկա է ժխտական տիպի կազմություն: Հաջորդ երկու վանկերում տոնայնության կորը աստիճանաբար նվազում է՝ ստանալով համապատասխանաբար ըստ վանկերի 190 (հա) և 170 (վա) հերց հաճախականություն և նկատելիորեն բարձրանալով շեշտակիր (տալ) վանկում ու հասնելով 220 հերց հաճախականության: Հիմնական ցուցանիշները սեղծված են ՆՐԱՆ բառի սահմաններում: Այդ բառը իր մեջ ամփոփում է հարցական հնչերանգի հիմնական առանձնահատկությունները:

Հարցական նախադասությունների մյուս ենթատեսակը, որտեղ հանդես են գալիս հարցական դերանունները կամ հարցական եղանակավորող բառերը, ինչպես՝ ի՞նչ, ո՞վ, սա՞, մի՞թե, արդյո՞ք, ինչպե՞ս և այլն, պարունակում է անհատի հոգեկան վիճակի անմիջական դրսևորումը տվյալ իրավիճակում: Սակայն այդ բոլոր սուբյեկտիվ-արտահայտչական միջոցները միավորվում են հաղորդակցական մեկ տիպի սահմաններում:

Այս տեսակետից, երբ մենք քննում ենք «Ուրի՜ն մոտենալ, ո՛րի հետ ձուլվել առմիշտ, ո՛րն է բարվոքը—չդրկվել հարուստ տնից, մնալ հավատարիմ տեսակետին և անգե՛ն, թե՛ լինել հարուստ, զորավոր, ինքնիշխան» (Շիրվ.), կամ «Ի՞նչ խելք գտնել վերջ տալու յուր անտանելի վիճակին: Բաժանվե՛լ: Ու՛ր գնալ... Ինքնասպանություն՝ գործել» (Շիրվ.) նախադասությունների ինտոնոգրամները, ապա տեսնում ենք, որ հնչերանգային առավելագույն ցուցանիշները թե՛ մեղեդիության, թե՛ ուժգնության և թև տեղողության տեսակետից համախմբված են ուրի՛ն, ուրի՛, ո՛ւրն, անգե՛ն, թե՛, ո՛ւր, ի՛նչ, ինքնասպանություն՝ բառերի շուրջը, որոնք մեծ մասամբ հարցական դերանուններ են: Այստեղ, ինչպես տեսնում ենք, տոնի բարձրակետը գտնվում է ոչ թե քերականորեն գերադաս անդամի վրա, այլ նախադասության մյուս անդամների վրա, որով էլ բնորոշվում է անդեմ հարցական նախադասությունների այս ենթատիպը, ընդ որում հարցումը որոշակի վերպով հարում է նաև գերադաս անդամին: Այսպիսով, թեև անդեմ նախադասությունների շարքում հարցական հնչերանգ ունեցող բառերը ընդգծվում են որպես որոշակիորեն շեշտակիր միավորների, սակայն հարցական հնչերանգը տարածվում է նաև նախադասության մնացած անդամների վրա, և նրանով էլ ամբողջանում է նախադասությունը որպես մտքի ավարտուն միավոր:

Հաճախ միևնույն նախադասության մեջ պատահում են ինչպես հարցական, այնպես էլ բացականչական հնչերանգ պարունակող հատվածներ: Նման տիպի նախադասությունները հայ լեզվաբանության մեջ հայտնի են որպես խառը երանգի նախադասություններ: Այստեղ ուսումնասիրողներն ընդգծում են այն հանգամանքը, որ հնչերանգային տարբեր բնույթ ունեցող հատվածները հավասարապես վարկեր են, և չի կարելի նախադասությունը անվանել նրանցից որևէ մեկի անունով: Այս տեսակետից որոշ խառը բնույթի նախադասություններ մեր դասակարգմամբ մտնում են դրդական տիպի նախադասությունների մեջ, եթե նրանցում չկա հարցական հնչերանգը (այսինքն՝ հրամայական և բացականչական նշաններ ունեցող նախադասությունները), օրինակ, «Օգնեցե՛ք հե՛յ» (Թում.) կամ «Հավատացե՛ք, ընկերնե՛ր, հավատացե՛ք» (Անթ.) և այլն: Իսկ եթե առանձին դեպքերում հանդիպում են հարցական և բացականչական կամ հրամայական նշաններ ունեցող նախադասություններ, ապա դրանք մտնում են հարցական հաղորդակցական տիպի մեջ: Այս առումով, Հ. Հարություն-

յանի կողմից խառը երանգի համարվող «Խնչ, աղատե՛լ» (ՊՍ) նախադասությունը մենք համարում ենք հարցական բնույթի նախադասություն: Ինչ վերաբերում է Պարույր Սևակի կողմից նույն բառը տրոհության երկու նշաններով արտահայտելուն, ապա սա ցույց է տալիս բանաստեղծի կողմից հնչերանգային առանձնահատկությունների հմուտ իմացությունը, երբ հեղինակը ցանկացել է ցույց տալ նաև հուղարարտահայտչական դրսևորումը: Փորձառական տվյալները նույնպես չեն տալիս խառը բնույթի համար հատուկ երանգավորում:

Նախադասություններն ըստ հաղորդակցական բնույթի դասակարգման ժամանակ որոշ լեզվաբաններ եղածին ավելացնում են նաև մեկը՝ կոչական տիպի նախադասությունները: Այս կերպ է վարվում Հ. Հարությունյանը, որը ընդունում է հինգ հաղորդակցական տիպի նախադասություններ՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական և կոչական (6, 34), թեև նա խոսում է նաև խառը հնչերանգով նախադասությունների մասին: Նման առանձին հաղորդակցական տիպի առանձնացումը, մեր կարծիքով, համոզիչ չէ: Կոչականով կաղաված նախադասությունների մասին տե՛ս նաև Ս. Գյուլբուղաղյանի հիշյալ աշխատությունը (5, 155—161): Հայտնի է, որ հայ լեզվաբանները ըստ բնույթի նախադասությունները դասակարգելիս հիմնական ուշադրությունը այնուամենայնիվ դարձրել են բայի եղանակային ձևերին: Այս առիթով Ս. Աբրահամյանը իրավացիորեն նշում է, որ «նախադասության մեջ արտահայտված այն վերաբերմունքը, որով որոշվում է նրա բնույթը, լրիվ չի համընկնում, չի նույնանում եղանակային ձևի մեջ արտահայտվող վերաբերմունքի հետ: Եվ իսկապես, եթե նրանք նույնանային, դրանց միջև տարբերություն չլիներ, ապա լեզվի մեջ պետք է լինեին այնքան բնույթի նախադասություններ, որքան որ բայի եղանակ գոյություն ունի տվյալ լեզվում» (3, 355): Մեր կարծիքով, նախադասությունները, որպես հնչյունական միավորներ պետք է դիտվեն որպես խոսքային պրոցեսի առանձին վիճակներ, որոնք օժտված են հնչերանգային ավարտվածությամբ: Եվ այս տեսակետից նախադասություններն ավելի հեշտ է դասակարգել ըստ հաղորդակցական խմբերի՝ հաշվի առնելով նրանց գործառությունը: Այսպես՝ դրդչական նախադասությունների շարքում, մեր ըմբռնումով, հրամայական, բացականչական և այլ տիպի նախադասությունների հետ մեկտեղ առկա են նաև կոչական նախադասություններ, որոնք կարող են

արտահայտված լինել կոչականով, կամ ուղղակիորեն կոչ կամ պահանջ արտահայտել: Նման տիպի նախադասությունները, դասելով դրոշական նախադասությունների շարքը, մենք, սակայն, նկատում ենք, որ այն մտնում է մերթ հրամայական, մերթ էլ բացականչական ենթատեսակների մեջ:

Մեր կողմից ընտրված փորձառական նյութի մեջ առկա բազմաթիվ օրինակներում, որոնք սովորաբար դիտվում են որպես կոչական նախադասությունների առանձին տիպեր և պարունակում են կոչ, առաջարկ, դիմում, ունեն հնչերանգային այնպիսի պատկերներ, որոնց հիման վրա դրանք կարելի է դասել հրամայական կամ բացականչական նախադասությունների շարքում: Սրանց թվից առաջին հերթին քննենք այն նախադասությունները, որոնք բերականական կառուցվածքով անդեմ են, որովհետև աշխատության այս ենթաբաժնում մենք դիտում ենք անդեմ նախադասությունների խմբին պատկանող դրոշական նախադասությունները և այսպես համարված կոչական նախադասությունները՝ «Կազմակերպել լեզվի հարցերին նվիրված հաղորդումներ՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով», «Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը» (թերթերից) կամ «Համբուրվել, այո, համբուրվել... հուռա՛, հուռա՛» (ԱՇՔ) և այլն:

Առաջին երկուսը մտնում են հրամայական ենթատեսակի մեջ, իսկ երրորդը՝ բացականչականի:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանական նախադասությունները իրենց կառուցվածքով միակազմ նախադասությունների շարքում առանձին տեղ են զբաղեցնում:

Եթե անդեմ նախադասությունները հաղորդակցական գործառության տեսակետից աչքի են ընկնում նրանով, որ այնտեղ պատմողական տիպի նախադասությունները գրեթե քացակալում են կամ այդ գործառությունը չափազանց թույլ է արտահայտված, ապա անվանական նախադասությունների շարքում պատմողական հաղորդակցական տիպը հանդես է գալիս որպես ամենատարածվածը, որի յուրահատուկ հնչերանգային առանձնահատկությունները շատ քիչ են ուսումնասիրվել:

Հաղորդակցական այս կամ այն տիպին պատկանելուց բացի անվանական նախադասությունները ունեն իմաստային առանձնահատուկ առումներ և ոճական ուրույն կիրառություններ: Պետք է

նշել նաև այն, որ հայ լեզվաբաններից ոմանք անվանական նախադասությունները նույնպես տեղադրում են անդեմ նախադասությունների շարքում, մինչդեռ մենք անդեմ ենք համարում միայն բայական կազմություն ունեցող նախադասությունները: Մենք անվանական, ինչպես և անդեմ նախադասությունները դասակարգում ենք ըստ հաղորդակցական կարգերի, երեք տիպերի՝ պատմողական, հարցական և դրչական:

Միակազմ նախադասությունների շարքում անվանական նախադասությունները անվանում են որոշակի առարկաներ կամ երեւոյթներ և հաստատում խոսելու պահին դրանց գոյությունը: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, «Անվանական միակազմ նախադասությունները գործածվում են հատկապես գեղարվեստական խոսքի մեջ՝ թե արձակում, թե շափածոյում» (2, 141): Եվ իրոք, անվանական նախադասությունները գերազանցապես գործածվում են առարկայի եղելությունը, գոյությունը տվյալ տեղում կամ պայմաններում արտահայտելու համար: Նրանք ցույց են տալիս նաև գոյականով արտահայտված գործողության, վիճակի, երեւոյթի գոյությունը, ըստ որում նման նախադասություններում գլխավոր կամ գերադաս անդամն արտահայտվում է առարկա ցույց տվող կամ առարկայական իմաստ ունեցող բառով, այսինքն՝ գոյականի շփեքված ձևով (ուղղականով, հատուկ և հասարակ անուններով, եղակի և հոգնակի թվերով):

Ինչպես հայտնի է, լեզվում անվանական (նաև անդեմ) նախադասությունները կարող են կազմվել մեկ բառով (բառ-նախադասություններ) և մեկից ավելի բառերով (երբ գերադաս բառն ունենում է համապատասխան լրացումներ): Ծշմարիտ է. Ս. Աբրահամյանը, երբ գրում է. «Անդեմ նախադասությունները կառուցվածքի տեսակետից չունեն այն բաղմաղանությունները, որ հատուկ են դիմավոր միակազմ նախադասություններին» (2, 136): Միակազմ՝ հատկապես անվանական նախադասությունները, խոսքը դարձնում են սեղմ, դիպուկ, իսկ միտքը ամբողջությամբ՝ խտացված և առավելագույն հակիրճ: Խոսելով անվանական նախադասությունների առանձնահատկությունների մասին լեզվաբանները հատուկ շեշտում են նրանց հոգեկան-կամային վերաբերմունք արտահայտող դրսևորումները, գործառությունը, որով և (ըստ նրանց) պայմանավորված է նման տիպի նախադասությունների առկայությունը: Այսպես, օրինակ, Հ. Հարությունյանը գրում է. «Անվանական նախադասություններ չպետք է համարել

գրքերի, արվեստի երկերի, հիմնարկների, կազմակերպությունների, մշակույթի օջախների անունները, պիտակները, ցուցանակները, որոնք սոսկ անվանումներ են անվանողական արժեքով, դրանցով... հոգեկան կամ կամային վերաբերմունք չի արտահայտվում, չկա խոսողի վերաբերմունք, հաճախ պայմանական անվանումներ են, զուրկ ճանաչողական արժեքից... լուսնն ստորոգում, ուտի և հաղորդակցական (ընդգծումը մերն է—Վ. Հ.) միավորներ չեն» (6, 27):

Ինչպես իրավացիորեն նշում են ուսումնասիրողները, միակազմ նախադասությունների ձևավորման ժամանակ առանձնահատուկ նշանակություն է ստանում հնչերանգը: Սակայն բոլոր դեպքերում հնչերանգը ստանում է նույն դրսևորումը, ինչ երկկազմ նախադասություններում, այսինքն՝ բոլոր դեպքերում առկա են պատմողական, հարցական և դրդչական երանգավորումներ ունեցող նախադասություններ:

Անվանական նախադասությունները հիմնականում արտահայտում են լինելություն, գոյություն կամ անվանում են առարկան, հաստատում են նրա լինելու փաստը: Հաճախ սրանք ուղեկցվում են հոգեկան-կամային վերաբերմունք արտահայտող հրնչերանգային առանձնահատկությամբ: Այն հանգամանքը, որ անվանական նախադասությունները լրիվ և ավարտված միտք են արտահայտում և ունեն մյուս նախադասությունների նման շարահյուսական գործառություն, լեզվաբանների մոտ ոչ մի կասկած չի առաջացնում: Անհրաժեշտ է միայն սահմանել նման նախադասությունների օգտագործման կամ կիրառության ոլորտը և դասակարգել դրանք ըստ հաղորդակցական տիպերի պատկանելիությանը:

Եվ այսպես, թեպետև անվանական նախադասությունների գործածության ոլորտը համեմատաբար նեղ է, այնուամենայնիվ դրանց դրսևորման, արտահայտման եղանակն ու արտահայտչամիջոցները բազմազան են: Լեզվաբանները պարզել են այդ նախադասությունների կիրառության ոլորտը (խոսակցական լեզու, գեղարվեստական գրականության լեզու, բնական խոսք, երբեմն էլ հրապարակախոսական և գիտական ոճեր) և քերականական (կառուցվածքային) տեսակետից դիտել նրանց բազմաթիվ տեսակները: Պարզվել է, որ անվանական նախադասությունների մի տեսակը արտահայտում է բնության երևույթներ (Առավոտ: Գորշ, մռայլ երկինք): Ամենտարածված տեսակը ներկայացնում է մեղ

շրջապատող առարկաները, տարբեր երևույթները և վերջապես մարդկային ներքին հոգեկան ապրումները (Մոսկվա: Տասնյոթ թվական: Կայարան: Գիշեր) (ԵԶ):

Նշվել է նաև այն, որ անվանական նախադասությունը արտահայտում է ցուցականություն, այսինքն՝ խոսողը տալով առարկայի անվանումը, միաժամանակ մատնանշում է, ցույց է տալիս այն. «Ահա քաղաքը» (ՀՀ), «Ահա սպիտակ ձյունակերտը» (Բ) և այլն: Անվանական նախադասությունների շարքում սահմանվել են այնպիսի տեսակներ, որոնք հուզական երանգ չունեն և գործածվում են որպես հայտարարություններ (հմմտ. «Ընդմիջում մեկ րոպե»): Մյուս կողմից՝ ի հայտ են բերվել օրինակներ, որոնք լիովին հագեցված են արտահայտչականությամբ: Այսպես, օրինակ բերվում են նախադասություններ, որոնք արտահայտում են բացականչություն, հրաման, հորդոր, նախազգուշացում, դժգոհություն, զարմանք, վախ, հիացմունք, երբեմն զայրույթ այս կամ այն առարկայի իրադարձության, երևույթի նկատմամբ և այլն: Ինչպես տեսնում ենք, այստեղ ընդգրկվում են հաղորդակցական բոլոր տիպերը իրենց բազմատեսակ երանգավորումներով:

Լեզվաբանները հատուկ ընդգծում են այն փաստը, որ անվանական նախադասությունները օժտված են հուզական բացառիկ արտահայտչականությամբ, ուստի և հնչերանգային ուսումնասիրության տեսակետից ավելի հետաքրքրական են: Արտահայտչականությանը նպաստում է այն կոնտեքստը, որը կոչվում է եղանակավորող կոնտեքստ (МОДАЛЬНЫЙ КОНТЕКСТ), և որի շրջապատում հանդես են գալիս անվանական նախադասությունները:

Թեև անվանական նախադասությունները խոսքում ուրույն արտահայտությամբ ու ձևավորումով են հանդես գալիս, ազդարարելով մտքի ավարտվածություն, դրանք կարող են գործածվել մեկուսացված վիճակով և հարկ եղած դեպքում փոխարինվել համարժեք երկկազմ նախադասություններով (ինչպես սովորաբար խոսքում փոխակերպման են ենթարկվում տարբեր տիպի նախադասությունները), այնուամենայնիվ զուրկ լինելով նախադասության մի այնպիսի կարևոր կառուցվածքային տարրից, ինչպիսին բայ-ստորոգյալն է: Սրանք շրջապատող նախադասությունների հենարանի խիստ կարիք են զգում: Անվանական նախադասությունները առավելապես իրենց կողքին ենթադրում են նախադասությունների մի խումբ, որոնք կազմում են այսպես կոչված պատմողական շղթա: Սրանով իսկ ապահովվում են հաղորդակցական նպատակաուղղվածությունը խոսքային պրոցեսի ընթացքում:

Ինչպես ասացինք, անվանական նախադասությունների մեջ գերիշխում է պատմողական տիպը, և այս դեպքում հուզական կամ զգայական երանգը շունի ցայտուն արտահայտություն: Մեր ընտրած փորձառական նյութից բերենք մի քանի օրինակ, որոնք պատկանում են տվյալ հաղորդակցական խմբին: Օրինակ՝ Սպիտակ կամաւոճեր և ճկաւոճեր՝ ոսկեգօծ շրջանակների մեջ: Նուշիկի մայրը լալիս է» (ԱՔ): Հետաքրքրականն այն է, որ Ս. Աբրահամյանը այս անվանական նախադասությունը բերում է սահմանակից նախադասության հետ մեկտեղ: Դա պատահական չէ: Արդեն նշել ենք, որ անվանական նախադասությունները շնորհիվ ուրույն կառուցվածքի հենարանի կարիք են զգում սահմանակից նախադասությունների միջավայրում: Այս նախադասությունները մեջբերվում են առանձին խմբերով, որոնց կազմում անխուսափելիորեն հանդիպում են նաև երկկազմ նախադասություններ, որոնք փորձառական վերլուծության չենք ենթարկել: Մի այլ առիթով մենք, օրինակ, մեջ ենք բերել մի այնպիսի ընդարձակ նախադասություն, որի ծավալը հասնում է գրեթե պարբերության սահմանների: Օրինակ՝ «Գավառական մի քաղաք, լայն և ուղիղ վտղոցներ, կանաչ խոտ մայրերի վրա, տների առաջ բուստաններ և բարձր, սովերախիտ ծառեր, որոնց շվաքի տակ իրիկվա հովին նստում են հարեվանի կանայք, զրուցում մինչև նախիրը հանդից գա, կիթ անեն, թեյ գցեն ու թեյից հետո խաղան նարդի, հետո խոր քուն, մինչև լուսաբաց, մինչև նոր կիթ» (ԱՔ):

Նման ընդարձակ մեջբերումը կատարվել է այն նկատառումով, որ ուսումնասիրվող նյութը ներկայացվի բանավոր խոսքի ամբողջական հատվածով (կոնտեքստով), որպեսզի հաղորդավարին նախապես հայտնի չլինի, թե որն է տրված նյութում կարևոր հատվածը, նա այն շնորհգծի հատուկ առոգանությամբ:

Վերահիշյալ անվանական նախադասությունները պատմողական տիպի նախադասություններ են, քանի որ հաստատում են որևէ երևույթ, իրողություն և ունեն յուրահատուկ հնչերանգ, որը բնութագրվում է սկզբում հիմնական տոնի ոչ շատ բարձր ելևէջով, իսկ վերջում՝ աստիճանական դանդաղ իջեցմամբ:

Նույն շարքին են պատկանում նաև հետևյալ նախադասությունները՝ «Ամեն ինչ գորշ, առօրյա: Ինչպես միշտ-գորշ փոշոտ փողոց: Սառը ջուր: Խաղող: Գինի: Մարդիկ: Կառներ: Մարդիկ:

Եվ ոչ ոք չդիտեր, որ հիմա Աստաֆյան փողոցի վրա հրաշք պիտի լինի» (ԵԶ):

Քանի որ անվանական այս նախադասությունները արտահայտում են առարկայի գոյությունը, հղելությունը և արտասանվում են հիմնականում հավասար տոնով, իսկ վերջում նկատելի է տոնի դանդաղ իջեցում, ապա այս առանձնահատկությունների շնորհիվ հիշյալ և նման նախադասությունները կոչվում են պատմողական: Այն հանգամանքը, որ մեկ առավելագույն արտասանական միավորի՝ ֆրազի շրջանակներում ընդգրկված են մի խումբ անվանական նախադասություններ, թեպետև զատված միմյանցից վերջակետերով, սակայն այնուամենայնիվ կապված մեկ ընդհանուր հնչերանգի կորով, այս ամենը չէր կարող չգրավել հնչյունաբանի ուշադրությանը և դա իսկ բնական է, որովհետև մեղ համար առավելագույն նշանակություն ունեն ոչ թե տրոհական և կետադրական նշանները, այլ այն ֆիզիկական պատկերը, որը ի հայտ է բերվում փորձառական տվյալներով:

Անվանական նախադասությունների տիպաբանական վերլուծությունը Ա. Բելսկուն հնարավորություն է տվել ըստ արտահայտչականության հղանակավորման այդ նախադասությունները դասակարգել հետևյալ խմբերի. ա) անվանական-գեղարվեստական, բ) անվանական-նկարագրական, գ) հաղորդում պարունակող, դ) հղանակավորող, այսինքն՝ վստահություն, կասկած, անհամաձայնություն արտահայտող, ե) արտահայտչական և հուզական*:

Գեղարվեստագետի կամ գրողի խոսքում լայնորեն գործածվող անվանական նախադասություններում իրողությունը արտացոլվում է ստեղծագործական վերիմաստավորմամբ:

Անվանական նախադասությունների հմուտ օգտագործումը ոճական լայն հնարավորություններ է ընձեռում ստեղծագործողին: Մի դեպքում այն կարող է գործածվել որպես ֆոն՝ երևույթների հետագա ավելի մանրամասն նկարագրության համար, օրինակ «Գավառական մի քաղաք, լայն և ուղիղ փողոցներ, կանաչ խոտ մայրիկի վրա... ստվարախիտ ծառեր, որոնց շվաքի տակ իրիկվա հովին նստում են հարևանի կանայք, զրուցում, մինչև նախիրը հանդից գա, կիթ անեն, թեյ գցեն ու թեյից հետո խաղան նարդի, հետո խոր քուն, մինչև լուսաբաց, մինչև նոր կիթ» (ԱԲ):

* А. В. Бельский, Опыт экспериментального исследования интонации номинатива в функции предложения, «Ученые записки I—МГПИИЯ», т. VIII, М., 1954, стр. 145—166.

Մեկ այլ դեպքում կարող է ստեղծվել տարածական տպավորություն, ծավալային խորություն. «Մի ամբողջ աշխարհ, լույս, լույս ամեն կողմ, իրարանցում, եռուզեռու կառքեր, կամիոններ, մարդիկ, ձիեր, կանայք...» (ԱԻ) կամ «Նույն միջանցքը, նույն կեղտոտ հատակով, նույն ծանոթ դեմքերը լուռ, կատակող» (Ճ, 18) և այլն: Իսկ մյուս դեպքում կարող են արտահայտել կամ նկարագրել իրար հաջորդող բնության, կենցաղի կամ բնագործության տեսարաններ. «Մաղկապատ պողոտա: Գողտրիկ պուրակ»: «Էֆսպերիմենտալ» քատրոնի փորձասրահներից մեկը: Թիքեռնակածև սեղաններ: Խխունջածև աքռուներ: Ջախ կողմը մի կոր բեմահարթակ՝ նվազախմբի համար» (ԱԱ) և այլն:

Նկարագրական-անվանական նախադասությունները նույնպես գեղարվեստական խոսքին են պատկանում, սակայն նրանցում հեղինակի վերաբերմունքը երևույթների կամ իրադարձությունների նկատմամբ արտահայտվում է ոչ թե անմիջականորեն, այլ կողմնակի ձևով: Իրականությունը այս դեպքում ոչ թե վերաիմաստավորվում է, այլ միայն նկարագրվում, որն էլ իր հերթին բնականաբար իր փնիքն է դնում արտասանության երանգի վրա: Նկարագրական անվանական նախադասությունները երբեմն հանդիպում են արձակում, իսկ ավելի հաճախ դրամատիկական ստեղծագործությունների ռեմարկներում: Օրինակ, «էլիզբարյանների մեծ հյուրասենյակը, կահավորված շատ հարուստ, բայց առանց որոշ ճաշակի: Աջ պատի մեջ երկու դռներ» (Շիրվ.) և այլն և այլն: Նման նախադասությունների դեպքում տոնի բարձրացումն անշաշն է և սովորաբար դիտվում է նախադասության վերջում: Նախադասության միապաղաղ արտասանությունը պայմանավորված է իրերի կամ այլ երևույթների անտարբեր թվարկումով, որը հուղա-արտահայտչական երանգավորում չի արտահայտում: Սակայն, կրկնում ենք, անվանական նախադասությունների այս տիպը այնուամենայնիվ կիրառվում է առավելապես գեղարվեստական գրականության ոլորտում:

Անվանական նախադասությունները երբեմն հանդես են գալիս որպես հարցի պատասխան կամ որևէ իրադարձության կամ երևույթի հաստատում: Օրինակ, «Խ՞նչ է մեր առջևում— Բացատո կամ «Խ՞նչ ենք այսօր ուտելու— Ապուր»: Այստեղ Բացատ և Ապուր անվանական նախադասությունները ինքնուրույն կերպով հանդես չեն գալիս, այլ որոշակի իրադրության արդյունք են:

Անվանական նախադասությունները կարող են հանդես գալ

նաև հարցական և դրդական հաղորդակցական տիպերով, որոնք իրենց դրսևորումն են գտնում եղանակավորող և հուզա-արտահայտչական անվանական տիպի նախադասություններում:

ԴՐԴՉԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանական նախադասությունների դրդչական տեսակը համեմատաբար մեծ տարածում ունի հարցական անվանական նախադասությունների համեմատությամբ: Սրանով էլ անվանական նախադասությունները տարբերվում են անդեմ նախադասություններից, և ոչ միայն տվյալ հաղորդակցական գործառնությամբ, այլ նաև քերականական կառուցվածքով: Անվանական նախադասությունների ոլորտում հարցման հնչերանգը խիստ կերպով չի արտահայտված, այլ որոշակի երանգավորող բնույթ է պարունակում: Օրինակ, «Ի՞նչ օգուտ սիրունությունից» (նՁ), «Ժառնի՞ր, հեռագի՞ր, սո՞ւգ գուցե...» (նՁ), «Ի՞նչ քելիս, ի՞նչ հարսանիք, այ կնիկ...» (շԹ): Այս կաղմությունները այնուամենայնիվ սակավաթիվ են և վկայում են այն մասին, որ այս տիպի նախադասությունները ուրույն կիրառություն ունեն:

Հուզա-արտահայտչական երանգավորումով անվանական նախադասությունները բազմատեսակ են: Արտասանության դինամիկան այստեղ անհամեմատ բարձր է, իսկ հիմնական տոնի ելևէջները աչքի են ընկնում փոփոխական տատանումների մեծ ամպլիտուդներով:

Նման տիպի նախադասությունների հնչերանգի դիապազոնը չափազանց լայն է, այն կարող է քաղաքավարի խնդրանքից հասնել մինչև ուժգին սպառնալիքին և հնչերանգի այդ գամմայում կարելի է դիտել հուզա-արտահայտչական երանգավորման հետևյալ տիպեր. 1. քաղաքավարի խնդրանք, 2. հաստատում, 3. խնդրանք, 4. հրավիրում, 5. համեմատում, 6. անտարբերություն, 7. զարմանք, 8. հորդորանք, 9. նախազգուշացում, 10. խրատ, 11. համոզում, 12. բացականչում, 13. հրամայում, կոչ, 14. ըսպառնալիք, 15. ուժեղ սպառնալիք և այլն: Թեպետև հուզա-արտահայտչական տիպերը բազմատեսակ են, սակայն սրանք համախմբվում են մեկ ընդհանուր՝ դրդչական հաղորդակցական տիպի շրջանակներում: Այս տիպի նախադասությունների մեջ առկա հնչերանգային առանձնահատկությունները գրավել են նաև Հ. Հարությունյանի ուշադրությունը, որը գրում է. «Խնդիրը դժվարա-

նում է նրանով, որ հրամայական հնչերանգը տալիս է մեծ շափի տատանումներ, քանի որ հրամայական են և՛ խնդրանք, և՛ հրաման արտահայտող նախադասություններ։ Բայց ինչքան էլ այդ տատանումը մեծ լինի, այնուամենայնիվ դրանք հնչերանգով իրար ավելի մոտ են, քան մյուս տեսակի նախադասություններին» (6, 39—40)։

Անվանական նախադասությունների կառուցվածքի մեջ որոշակի դեր են խաղում այսպես կոչված եղանակավորող բառերը, նրանց թվին են պատկանում այժմյանարկությունը, անա ցուցական դերանունը և այլ բառեր։ Եղանակավորող բառերի վրա դիտվում է տոնի բարձրացում, որով էլ արտահայտվում է հուզա-արտահայտչական երանգը։ Օրինակ, «Ա՛յ ձեռնի դե՛ղ, ա՛յ լավ ձեռնի դե՛ղս» (Թում.)։ Հուզա-արտահայտչական նախադասություններում հրնչերանգի երեք գործոնն էլ՝ հիմնական տոնի կամ ձայնի հաճախականության ելևէջը, տևողությունը և ուժգնությունը մեծ դեր են խաղում։

Դրդչական հաղորդակցական տիպի անվանական նախագասությունները կարող են անա երանգավորող բառի միջոցով արտահայտել ատելություն, սարսափ, ինչպես օրինակ, «Ահա՛ իսկական մարդասպանը, պապի» (Անթ.) նախադասության մեջ, որն ի դեպ հաղորդակցական տիպերի և հնչերանգի առանձնահատկության տեսակետից խիստ կերպով տարբերվում է նույն եղանակավորող բառով կազմված «Ահա մի խումբ օրինակներ լեհահայոց բարբառներից» (ԱՃ) նախադասությունից։ Վերջինս հուզա-արտահայտչական երանգավորում չի արտահայտում և արտասանվում է միապաղաղ տոնով, որի համաձայն էլ դիտարկվում է պատմողական հաղորդակցական նախադասությունների կազմում։

Դրդչական նախադասությունների շարքում առավել արտահայտչական են հրամայական ենթատեսակի անվանական նախադասությունները։ Քերականական կառուցվածքի տեսակետից, անվանական նախադասությունները հրամանը արտահայտում են քերականական յուրահատուկ ձևով, հակիրճ կոնտեքստով, ուր առանցքային բառը լինում է կա՛մ գոյական, կա՛մ կապ, կա՛մ կապվող բառ, երբեմն էլ մակբայ։ Անվանական նախադասությունները հրամայական են իրենց բնույթով, թեև հանդես են գալիս, երկկազմ նախադասությունների ուղեկցությամբ. «Լճուքն՝—սաստեց դատարանի նախագահը», «Զգա՛ստ։ Այդ բառը կրկնվեց վաշտ առ վաշտ», «Առա՛ջ— հրամայեց լեյտենանտը,— առա՛ջ դեպի ձախ...» (Անթ) և այլն։

Դրդշական հաղորդակցական տիպին պատկանող անվանական նախադասությունները կարող են արտահայտել նաև կոչ՝ «Եղբայրական ողջուն Կուրայի սոցիալիզմ կառուցող հերոսական ժողովրդին» (մամուլ), բացկանչություն՝ «Դադա՛ր, դադա՛ր, գոչում էին սեպուհները», նախադգուշացում՝ «Ոչ մի ղիջում, բուլորս կկործանվենք, եթե չմիանանք» (ԴԴ) և այլն:

Այսպիսով, անվանական նախադասությունները ոչ միայն քերականական կառուցվածքով, այլև ըստ հաղորդակցական տիպերի պատկանելության խիստ կերպով տարբերվում են անդեմ նախադասություններից: Բուն փորձառական ուսումնասիրությանը նախորդող դիտողությունները ցույց են տալիս, որ եթե անդեմ նախադասություններին բնորոշ են հարցական և դրդշական հաղորդակցական տիպեր, ապա անվանական նախադասություններին ավելի բնորոշ են պատմողական և որոշակի դրդշական հաղորդակցական տիպեր՝ բաղմաթիվ հուղա-արտահայտչական երանգավորումներով: Անդեմ և անվանական նախադասությունների բաղմաթիվ օրինակներ մեր կողմից ուսումնասիրվել են փորձառական եղանակով, որոնցից ստացված արդյունքները որոշակիորեն պարզաբանում են նշված հարցի վերաբերյալ բաղմաթիվ տեսական եղբայրանգումները: Փորձառական ողջ նյութը այստեղ ներկայացնելու անհրաժեշտություն չկա, և մենք սահմանափակվել ենք միայն մի քանի բնորոշ օրինակների ցուցադրմամբ: Ասենք, որ փորձառական ուսումնասիրությունները կատարվել են «Ինտոնոգրաֆ» սարքի օգնությամբ Մինսկի օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի հնչունաբանության լաբորատորիայում: Վերցնենք այսպիսի մի նմուշ. «Առարկե՛լ»։ Նախադասությունը բաղկացած է մեկ անդամից և իր հնչերանգային կառուցվածքը դրսևորվում է հետևյալ կերպ: Սովորաբար հարցական նախադասությունների կաղմում որպես հնչերանգային կենտրոն կամ հնչերանգի կենտրոնական առանցք հանդես է գալիս շեշտված վանկը, որն ընդգծված է հարցումով: Այս իսկ տեսակետից «Առարկե՛լ» նախադասության կաղմում որպես այդպիսին պետք է հանդես գա վերջին վանկը՝ համաձայն հայերենի ուղղախոսության կանոնների: Փորձառական տվյալները հաստատում են այդ դրույթը: Այսպես, օրինակ, բառավերջին՝ «կե՛լ վանկի սահմաններում հնչերանգային (մեղեդիական, ուժգնության և տևողության) բոլոր ցուցանիշները բարձր են մյուս վանկերի տվյալների համեմատությամբ: Այստեղ մեղեդիական կորը երկու բաժրակետ ունի, ո՞րոնցից առաջինը դիտվում է

250, իսկ երկրորդը՝ 200 հերցի դիապազոններում (4 կիսատոնի իջեցումով) այն ժամանակ երբ առաջին վանկում՝ առաջին և ձայնավորի հատվածում այն հազիվ հասնում է 180 հերց տատանումների մակարդակին, իսկ երկրորդ վանկում ավելի է պակաս՝ ընդամենը 160 հերց (2 կիսատոն)։ Ինչ վերաբերում է ուժգնության ցուցանիշներին, ապա սրանք համապատասխանաբար ներկայացված են հետևյալ կերպ. I վանկում՝ 26 (14,9) մմ, II վանկում՝ 17, իսկ III վանկում՝ 6 միլիմետր։ Տեղումային ցուցանիշները նույն հաջորդականությամբ հետևյալն են. III — 130, I — 110, իսկ II — 90 միլիվայրկյան։ Ինչպես տեսնում ենք, բոլոր ցուցանիշներով «ամենաուժեղը» շեշտված (3-րդ) վանկն է, իսկ «ամենաթույլը»՝ վերջիններ (2-րդ) վանկը։ Այստեղ հետաքրքիր է այն հանգամանքը, որ բացականչական նախադասությունների շարքում ձայնային (հնչման) դինամիկան ուժեղանում է նախադասության վերջում, և, այսպես կոչված, ֆրազային շեշտը ընկնում է նախադասության վերջին բառի վրա, ընդ որում այդ ուժեղացումը պահպանվում է մինչև խոսքի հնչման ավարտը։ Ինչ վերաբերում է հարցական նախադասություններին, ապա այստեղ բոլորովին այլ պատկեր է։ Եթե նույնիսկ հարցական նախադասությունների կազմում հարցական բառը գտնվում է նախադասության վերջում, ապա այս դեպքում էլ տեղի է ունենում հնչերանգի նվազում, ինչպես նկատելի է վերևում օրինակի փորձառական տվյալներով։ Այստեղ թեպետև ամենաբարձր ցուցանիշներով հանդես է գալիս վերջին շեշտված վանկը, սակայն այդ իսկ վանկի սահմաններում էլ դիտվում է տոնի և ուժգնության նվազում (հմտ. տոնային կամ հիմնական տոնի ելևէջավորման կորի երկրորդ բարձրակետի ցուցանիշներն առաջինի հետ և փակագծերում մեջբերված ուժգնության ցուցանիշներն առաջին ցուցանիշի հետ)։ Պետք է նշել, որ բացականչական և ընդհանրապես դրդչական հաղորդակցական տիպերին պատկանող մյուս ենթատիպերում հնչերանգային կառուցվածքի տեսակետից նման պատկեր չի դիտվում։ Բացառություններ, անշուշտ լինում են, սակայն սրանք պայմանավորված են այլ հանգամանքով և այստեղ առանց զննումների չենք ցանկանում հապճեպ եզրակացության հանգել, այլ գտնում ենք, որ անհրաժեշտ է բազմակողմանիորեն քննել տվյալ երևույթը։

Նախնական վերլուծության տվյալները բերում են այն համոզման, որ հարցումը ուրպես յուրահատուկ հաղորդակցական տիպ հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից թեպետև

բնորոշվում է բարձրացող հնչերանգով, սակայն այն իր մակար-
դակը չի պահպանում ամբողջ հնչման ընթացքում, այլ ինչ-որ մի
հատվածում անկում է ապրում, աննշան կերպով թուլանում: Մեր
կարծիքով, այս չի կարելի համարել բարձրացող-իջնող հնչե-
րանգ, որովհետև անկումը ոչ բոլոր դեպքերում է ընկալվում մար-
դու ականջով, այլ գրանցվում է միայն ձայնաբանական սարքերի
միջոցով: Մյուս կողմից՝ հարցական կամ հարցումի հնչերանգն
համարել միայն բարձրացող նույնպես ճիշտ չէ լինի, որովհետև
ինտոնոգրամների պատկերով սրանք խստիվ կերպով տարբերվում
են միմյանցից: Սովորաբար, երբ գրում են իջնող կամ բարձրացող-
իջնող տոնի մասին, ապա պետք է հասկանալ, որ այստեղ խոսքը
միմիայն տոնին է վերաբերում, որն ունի որոշակի ուղղութիւն,
այլ ոչ թե ողջ հնչերանգին, ինչպես պատկերացնում են այլ հեղի-
նակներ: Բոլոր դեպքերում էլ, անշուշտ, մենք չենք կարող խոսել
հնչերանգի կառուցվածքի մասին ընդհանրապես, որովհետև մեր
կողմից ուսումնասիրվող թեման խիստ սահմանափակ է և կազմում
է միակազմ նախադասութիւնների քննութեան մի որոշակի մասը:
Ինչպես տեսնում ենք, անդեմ հարցական նախադասութիւնը բնո-
րոշվում է բարձրացող-իջնող տոնի ուղղութեամբ, որը դիտվում է
շեշտակիր վանկի հատվածում: Միաժամանակ դիտվում է տոնի
խիստ անկում շեշտընթեր վանկում: Շեշտված վանկում բարձր
ցուցանիշներով են հանդես գալիս նաև հնչերանգի մյուս բաղա-
դրիչները՝ ուժգնութիւնը և տեղութիւնը: Այս պայմանների շնոր-
հիվ էլ շեշտակիր վանկը միջուկային բառում հանդես է գալիս որ-
պես հնչերանգային կենտրոն:

Ինչ վերաբերում է անվանական տիպի նախադասութիւնների
ձայնաբանական առանձնահատկութիւններին, ապա այս դեպ-
քում, ինչպես նշել ենք, սրանք դրսևորվում են առանձնահատուկ
ձևով, որով էլ պայմանավորված է այս կամ այն հաղորդակցական
տիպի առկայութիւնը նման քերականական կառուցներում: Հայտ-
նի է, որ անվանական նախադասութիւնների շարքում մեծ տարա-
ժում են գտել պատմողական տիպի նախադասութիւնները, և դա
պատահական չէ, որովհետև այդ նախադասութիւններին բնորոշ է
անվանման, հաղորդման գործառութիւնը, որն էլ հիմնականում իր
դրսևորումն է գտնում հավասար մակարդակ ունեցող հիմնական
տոնի կորում, և որին բնորոշ չեն հուշաարտահայտչական տար-
րերի շնորհիվ առաջացած տատանումները:

Անվանական նախադասութիւնների շարքում առավելագույն
հետաքրքրութիւն ունեն այն կարգի նախադասութիւնները, որոնք

բացահայտում են քերականական և հնչերանգային ուսումնասիրման սկզբունքների փոխհարաբերությունը: Այս տեսակետից շափազանց հետաքրքրական են փորձառական վերլուծության ենթարկած հետևյալ օրինակը.

«Ամեն ինչ գորշ, առօրյա: Ինչպես միշտ—գորշ փոշոտ փողոց: Սառը ջուր: Խաղող: Գինի: Մարդիկ: Կառքեր: Մարդիկ: Եվ ոչ ոք չգիտեր, որ հիմա Աստաֆյան փողոցի վրա հրաշք պիտի լինի» (ԵԶ),

Քերականական կանոնների տեսակետից ընդգծված բաղադրամասերը (խոսքը միայն ընդգծված անվանական նախադասություններին է վերաբերում) հազիվ թե կարելի է համախմբել մեկ ընդհանուր բարդ նախադասության շրջանակներում: Անշուշտ, նշված միավորները առանձին-առանձին անվանական նախադասություններ են և գրությամբ էլ միմյանցից անջատված վերջակետերով: Հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից գրանցում կարելի է տեսնել մեկ ընդհանուր հնչերանգային ամբողջություն: Այդ տեսակետից այն կարող է գիտվել որպես թվարկման հնչերանգով միավորված մի բարդ կառուցվածք: Փորձառական տվյալները տալիս են հետևյալ պատկերը:

Նախադասության սկզբնամասում հիմնական տոնի մակարդակը հավասար է 180 հերցի: Այնուհետև այն աննշան բարձրանում է (հմմտ. է ձայնավորի տվյալները ինչպես բառում, որը հավասար է 210 հերցի, այնուհետև ի ձայնավորի տվյալները միշտ բառում՝ 220 հերց և այլն):

Առաջին նախադասության կամ ընդհանուր ֆրազի առաջին բաղադրամասի սահմաններում մեղեդիության աստիճանը 270 հերց մակարդակից վեր չի բարձրանում, ընդ որում գերադաս փոփոց բառի հատվածում այն վրկին նվազում է մինչև 165 հերց դիապազոնը: Նույնը կարելի է ասել նաև ձայնի ուժգնության մակարդակի վերաբերյալ: Այն կորի առավելագույն կետում հասնում է 21 միլիմետրի, իսկ ստորին մակարդակով՝ (ձայնավորի հատվածում) մինչև 7 միլիմետրի: Այստեղ ինչպես պատմողական նախադասությունների դեպքում դիտվում է հնչման անհամեմատ բարձր տեղում: շեշտը թեք և մյուս վանկերի ձայնավորի տեղում: թյունը տատանվում է միջին հաշվով 80—110 միլիվայրկյանի սահմաններում, իսկ շեշտված վանկում հասնում է 160 մվրկ և ավելի բարձր ցուցանիշների: Մեղեդայնության և տեղում: թյան առանձնահատկությունների տեսակետից այստեղ և մյուս օրինակներում

դիտվել է ևս մի օրինաչափություն: Շնորհիվ այն բանի, որ պատմողական նախադասությունները արտասանվում են հանդարտ, մեծ ելեէջավորում չունեցող տոնով, այստեղ իրենց ձայնաբանական ցուցանիշներով ձայնորդները և նույնիսկ ձայնեղ բաղաձայնները նմանվում են ձայնավորներին և մեղեդայնության մեծ փոփոխություններ չեն նկատվում: Այսպես՝ զորշ բառի ձայնավորական հատվածում հիմնական տոնը ունի երկու դազաթ 170 և 210 հերց սահմաններում, այնուհետև ձայնավորին հաջորդող Ե ձայնորդի հատվածում այն հասնում է մինչև 215 հերցի, ընդ որում այդ ձայնորդի տեղումնումը նույնպես բարձր է բաղաձայնի համար և կազմում է 90 մվրկ: Եթե այն գումարենք ձայնավորի տեղումնայնը (170 մվրկ), ապա ընդհանուր տեղումնայնը հավասար կլինի 260 միլիվայրկյանի, որտեղ մենք դիտել ենք տոնի փոփոխության 3 հատվածներ: Այդ նշանակում է, որ հանդարտ առողջանության ընթացքում ձայնաբանական ցուցանիշները ավելի հստակ կերպով են պատկերվում և ինտոնոգրամների տվյալներով ավելի ընդարձակ ձևով է ներկայացվում մեղեդիության կորի ելեէջումը:

Ամփոփելով պատմողական անվանական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների նկարագրությունը՝ հարկ ենք համարում նշել, որ անվանական նախադասությունների հատուկ է պատմողական և հատկապես՝ դրդչական հաղորդակցական տիպը: Հարցական հաղորդակցական տիպը հատուկ չէ անվանական նախադասություններին, և սակավաթիվ օրինակներ կան գեղարվեստական գրականության մեջ, ինչպես. Այսֆան էլ զավզակուրյո՞ւն, — մտքում կրկնում էր Խոռխոռունին» (նՁ), կամ «Աշխատավա՞րժ: Ո՞վ է մտածում աշխատավարձի մասին» (ՀՔ) և այլն: Այս տեսակետից ճշմարիտ է Հ. Հարությունյանը, որը դրում է. «Ճամնմատաբար քիչ են պատահում հարցական անվանական նախադասություններ, եղածներն էլ ավելի շատ ճարտասանական են, քան լրացական կամ հավաստիական: Հարցնողի նպատակը չէ հարցին լրիվ ու ամբողջական պատասխան ստանալը (գա մասամբ հայտնի է նրան)...» (6, 66):

Այդ պատճառով մենք անվանական նախադասությունների հարցական հաղորդակցական տիպը փորձառական ուսումնասիրության շենք ենթարկել:

Ի տարբերություն անվանական պատմողական նախադասությունների, դրդչական անվանական նախադասություններում լայնորեն իրենց դրսևորումներն են գտնում հուզա-արտահայտչական երանգավորումները: Այսպես, օրինակ, եթե ժխտական բնույթի

անվանական որոշ նախադասություններ, որոնք ձևավորվում են ոչ մի ժխտական դերանունով, դասել ենք պատմողական նախադասությունների մեջ (հմմտ. «Ոչ մի ծառ», «Իսկ Բյուզանդիայից և Հոնքից դեռ ոչ մի լուր» և այլն) ապա նույն կազմությամբ որոշակի այլ նախադասությունները դասվել են դրդական հաղորդակցական խմբում: Մենք արդեն նշել ենք վերը, որ «Ոչ մի զիջում» օրինակում հնչերանգային կառուցվածքը աչքի է ընկնում տոնի ուժգին բարձրացումով: Ի դեպ, հիմնական տոնի խիստ ելևէջումը ձայնի ուժգնության աննշան տատանումների հետ մեկտեղ հատկանշական է բացականչական հաղորդակցական ենթատիպին՝ ի տարբերություն հրամայական հաղորդակցական ենթատիպի, որի դեպքում մեղեդայնության կորի փոփոխությունները առանձնապես կարևոր դեր չեն խաղում, մինչդեռ ուժգնության մակարդակը միշտ դրսևվորվում է բարձր ցուցանիշներով:

Բացականչականների շարքում ուշագրավ են այնպիսի նախադասություններ, որոնք առանձնապես ցայտուն բացականչումների բնույթ չեն կրում, սակայն այնուամենայնիվ ունեն այդ կարգի նախադասություններին բնորոշ առանձնահատկությունները՝ տոնի բարձրացում, ձայնի համեմատաբար հաճախակի ելևէջումներ և այլն: Այս տիպի նախադասությունների շարքից դիտենք մի օրինակ՝ «Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր» (Անթ.) նախադասությունը: Այստեղ ավելի սուր կերպով արտահայտված է աղերսանքը, թախանձանքը: Ինտոնոգրամի պատկերում մեղեդիության կորը իր առավելագույն կետում ջուր բառի սահմաններում հասնում է 315 հերց դիապազոնի և հետո նվազում է և հնչման ավարտին հասնում մինչև 60 հերցի:

Հիշյալ տիպի նախադասությանն է հարում նաև «Իմ ձագուկ, իմ վարդանի՛կս,— ուրախանում է Ռեհանը» (6, 47) նախադասությունը: Այստեղ որպես հուզաարտահայտչական կողմ դրսևորված են գորովանքի, փաղաքշանքի; մայրական փայփայանքի երանգավորման տարրեր, սակայն նախադասության կազմում, ինչպես նաև մյուս օրինակներում, պահպանվում է հիմնականում բացականչական հնչերանգային ենթատիպին բնորոշ կառուցվածքը: Այս տեսակետից հիշյալ ենթախմբի ամենացայտուն օրինակներից է «Ա՛յ ձենի դե՛ղ, ա՛յ լավ ձենի դե՛ղ» (Թում.) նախադասությունը: Այստեղ մեղեդայնության կորը, սկիզբ առնելով 295 հերցից, նախադասության հնչման ընթացքում սուր ելևէջումներ է կրում: Այն բարձրանում է մինչև 310 հերցի, հետո նվազում մինչև 130 հերց,

տատանվելով 195, 230, 295, 190, 105, 260 հերցի սահմաններում, Հատկանշական է, որ դրդչական հաղորդակցական խմբին բնորոշ է հիմնական տոնի կտրուկ բարձրացումը և դրա պահպանումը մինչև հնչման ավարտը: Այս տեսակետից նշված օրինակը տիպական է, մասնավանդ, որ մյուս ցուցանիշներով այն նույնպես բացահայտում է տվյալ հաղորդակցական տիպին բնորոշ կառուցվածք: Այսպես, օրինակ ձայնի ուժգնության ցուցանիշները հասնում են՝ մինչև 53 միլիմետր մակարդակի, այնուհետև հնչման ընթացքում նրանք նշանակալի կերպով նվազում են, սակայն հնչման ավարտին կրկին բարձրանում են մինչև 30—36 միլիմետր մակարդակի: Այսպիսին է հիմնականում բացականչական հաղորդակցական ենթատիպի հնչերանգային կառուցվածքը:

Դրդչական հաղորդակցական տիպին է պատկանում նաև հրամայական նախադասությունների ենթատիպը: Այս ենթախմբի շարքում նշենք նաև անվանական նախադասություններից մի քանիսը. «Առա՛ջ, — հրամայեց լեյտենանտը»: «Առա՛ջ դեպի ձախ, մտնել գլխավոր փողոցը», «Զգա՛ստ: Այդ բառը կրկնվեց վաշտ առ վաշտ» (Անթ.): Ինչպես տեսնում ենք, բերված օրինակները կարճ հրահանգներ են (հաշվի ենք առնում միայն գերադաս անդամը): Սովորաբար հրամանները, հրամայական կառուցվածքները միակազմ նախադասությունների շարքում հատկանշական են անդեմ նախադասություններին: Բոլոր դեպքերում նման կառուցվածքները պահպանում են դրդչական հաղորդակցական տիպին բնորոշ առանձնահատկությունները, այսինքն՝ հիմնական տոնի դիապազոնը բարձր է, և այդ մակարդակը գրեթե պահպանվում է մինչև հնչման ավարտը՝ ի տարբերություն հաղորդակցական այլ տիպերի: Այդ ցուցանիշները ուղեկցվում են մեծ փոփոխություններով ձայնի ուժգնության կտրագծում: Մեր օրինակներում դիտվել են մինչև 47—50 մմ ուժգնության ցուցանիշներ, իսկ մեղեդայնության ու տևողության տվյալները համապատասխանում են սահմանված հաղորդակցական տիպի նորմաներին:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հայ լեզվաբանները մինչև այժմ նախադասությունների հաղորդակցական տիպերը դասակարգելիս հիմնականում ղեկավարվել են քերականական հասկացություններով՝ առանձին դեպքերում նշելով նաև հնչերանգի կարևորությունը: Նրանք օգտագործում են «նախադասության բնույթ» և «ստորոգյալի բնույթ» հասկացությունները, վերջինիս տակ հասկանալով «ստորոգյալի դերում հանդես եկող բայի եղանակ» (3,

355): Այսպիսով, կամա թե ակամա հայ լեզվաբանները նախադասությունների բնույթի հարցը կապում են բայի եղանակային ձևի հետ: Ծիշտ է, Ս. Աբրահամյանը իրավացիորեն զգուշացնում է, որ այդ հասկացությունները լրիվ չեն համընկնում միմյանց հետ:

Մեր դասակարգման ժամանակ մենք առաջնային ենք համարում հնչերանգային գործոնը, թեև լիովին չենք անտեսում նաև բայի եղանակային ձևերը, որոնք որոշակի դեր են խաղում հաղորդակցական տիպերի ձևավորման մեջ: Այստեղ մենք տեսնում ենք ձևի և փմաստի հակադրամիասնության արտահայտություն: Ելնելով սրանցից՝ ըստ հնչերանգային դրսևորման և հաղորդակցական նպատակադրման հայերենում առանձնացնում ենք հնչերանգային հաղորդակցական երեք տիպեր՝ պատմողական, հարցական, դրդչական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1941:
2. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962:
3. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:
4. Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964:
5. Ս. Գյուլբաղադյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:
6. Հ. Հաբաթյանյան, Անդամ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
7. Գ. Զանուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
8. В. А. Артемов, Коммуникативная, синтаксическая, логическая и модальная функция речевой интонации (сб. «Материалы коллоквиума по экспериментальной фонетике», М., 1966):
9. В. А. Артемов, Об интонации и интонационном инварианте (сб. «Интонация и звуковой состав», М., 1965):
10. А. В. Бельский, Побудительная речь («Уч. записки I—МГПИИЯ», VI, М., 1963):
11. Е. А. Брызгунова, Практическая фонетика и интонация русского языка, М., 1963:
12. В. А. Артемов, К вопросу об интонации русского языка («Уч. записки I—МГПИИЯ», VI, М., 1963):
13. Грамматика русского языка, т. II, ч. 1, М., 1960:
14. Грамматика современного русского литературного языка, М., 1970:

15. Синтаксис и интонация («Уч. записки Башкирск. Госуниверситета», вып. 36), Уфа, 1969.
16. А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1960.
17. Н. В. Черемсина, Ритмико-интонационная структура предложения в русской художественной речи («Уч. записки Башк. Госунта», вып. 36), Уфа, 1969.
18. Н. Арват, Стилистика безличных предложений в современном русском языке, Черновцы, 1969.
19. Е. Н. Галкина-Федорук, Безличные предложения, М., 1958.
20. Л. В. Щерба, Избранные работы по языкознанию и фонетике, т. I, Л., 1958.
21. Экспериментальная фонетика (Сб. статей), Минск, 1972.

Հ Ա Մ Ա Ռ Ո Ս Ա Կ Ր Ի Ի Բ Յ Յ Ր Ն Ն Բ Ր

- ԱՐ—Ա. Բակուց, Երկեր, 1955;
 ԱԼ—Ա. Իսահակյան, Երկեր, 1958—1959;
 ԱՃ—Հ. Անառյան, ՀԺՀ, Ներածություն, 1955;
 ԱնԲ—Սովետահայ գրականության անթոլոգիա, 1950;
 ԱՇԿ—Ա. Շիրվանզադե, Քառու;
 ԳՄ—Գ. Մանգրի, Հոռիքյան ձայնը, 1962;
 ԴԴ—Դ. Դեմիրեյան, Երկերի ժողովածու, հ. 1—7, 1955—1960;
 ԵԶ—Ե. Զարենց, Հետիւր երկեր, 1954;
 ՀՀ—Հ. Հակոբյան, Երկեր, 1951;
 ՀՔ—Հ. Քոչար, Մեծ տան զավակներ, 1952;
 ՆԶ—Ն. Ջառյան, Երկեր, հ. 1—6, 1962—1964;
 Նար—Նար-Նոս, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, 1950;
 Շիրվ.—Ա. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1—6, 1950—1951;
 Թում.—Հ. Թումանյան, հ. 1—5, 1940—1950;
 ՊՍ—Պ. Սևակ, Անլուրի զանգակատուն, 1959;
 Ի'—Իսաֆի, Երկերի ժողովածու, հ. 1—7, 1955—1956;
 ՔԲ—Ք. Քափալցյան, Ոսկե հովիտ, 1955;
 ՍԱ—«Սովետական արվեստ», № 9, 1965;

6. Մյուս բազմաթիվ դերերի հետ մեկտեղ Աթենաս դիցուհին հայտնի է որպես ծննդաբերության աստվածուհի:

7. Իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Նյու-Դելիի թոշնաբանության մասնագետ՝ պրոֆ. Մանոհար Չաուդրիին թըռչունների ճանաչման գործում ցույց տված օգնության համար:

8. Անգլերենի Martin տերմինը փոխ է առնված ֆրանս. Martinet-ից, ռուս. стриженные: Սակայն անգլերենում այն չի պահպանել այդ նույն իմաստը, այլ գործածվում է դրա հիմնական տարբերակ հանդիսացող ծիծառն-ի իմաստով:

Անգլերենից թարգմանեց Ա. Հ. Խաչատրյանը

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐՑԱՏԵՍԱԿՆԵՐԸ

**1. ՀԱՐՑՄԱՆ ԸՄԲՈՒՈՒՄԸ ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Վերջին տասնամյակներում, կապված կառուցվածքային և փոխակերպական քերականությունների բուռն զարգացման, ինչպես նաև կենդանի խոսքի և հաղորդակցական պրոցեսի ուսումնասիրության ընդլայնման հետ, հետաքրքրությունը հարցման (=հարցական նախադասության) նկատմամբ աշխուժանում է։ Եվ պատահական չէ, որ լեզվաբանության արդի փուլում հարցական նախադասությունների քերականական, գործառական, հնչերանգային և հաղորդակցական առանձնահատկությունների հետազոտությունը դառնում է անհրաժեշտություն։

Այժմ, նախքան հայերենի հարցական նախադասությունների բուն ուսումնասիրությանն անցնելը, փորձենք համառոտակի ներկայացնել լեզվաբանական գրականության մեջ հարցման տարբեր դասակարգումները ու տեսակետները։

Հայ լեզվաբանները (մինչև Հ. Աճառյան և Մ. Արեղյան) հարցմանը անդրադարձել են հիմնականում առողջանությունը քննելիս՝ կապված—գրավոր խոսքում պարույկի կատարած դերի հետ¹։ Նրանցից Ստ. Պալասանյանը և Ա. Այտնյանը, ինչպես կարելի է կռահել նրանց բերած օրինակներից, առանձնացնում են հարցական բառով և ԾՅՈՒ կամ ոչ պատասխանով հարցումներ։ Ա. Այտնյանը նույնիսկ գտնում է, որ ԾՅՈՒ կամ ոչ հարցման դեպքում, հարցման մտքի հետ կապված, պարույկը կարող է դրվել յուրաքանչյուր

¹ Ա. Բաբադուրյան, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852; Սա. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզուի, Քիֆիս, 1874; Ա. Այտնյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1886:

բառի վրա: Այսպիսով, նա փաստորեն մատնանշում է հարցական նախադասութիւնների հաղորդակցական կենտրոնի փոփոխականութիւնը:

Հարցման ուսումնասիրութիւնը գիտական բնույթ է ստանում Հ. Աճառյանի, Մ. Արեղյանի և նրանցից հետո եկող լեզվաբանների աշխատութիւններում: Աճառյանը հիմնվելով հարցման իմաստային և ձևական կողմի վրա՝ վեր է հանում գրաբարի համարյա բոլոր հիմնական հարցատեսակները²:

1) Հարցական բառով հարցում, երբ հարցաշեշտը դրվում է հարցական բառի վրա (Մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ):

2) Այն կամ ոչ պատասխան պահանջող հարցում, որի դեպքում հարցաշեշտը կարող է դրվել ցանկացած անդամի վրա (Հաւատա՞յք թէ կարող եմ առնել ձեզ զայդ ասեն ցնաւ— Այո՛, տէր, ոչ իցէ ընթերցեալ ձեր):

3) Երբ կասկածի տակ կարող են առնվել երկու կամ ավելի բառեր, որոնցից մեկի կամ մյուսի ընտրութիւնը կախված է պատասխանողից, հետևաբար հարցաշեշտը դրվում է նրանցից մեկի վրա, իսկ մյուսը միանում է նրան թէ շաղկապի միջոցով (Ուստի՞ էր, յերկնի՞ց թէ մարդկանէ):

4) Երբ խոսողը գիտե, որ իր հարցման պատասխանը պետք է լինի այո, ապա հարցումը վերցվում է որպես ճարտասանական ձև և կաղմում է ոչ ապաքէն բառակապակցութեան միջոցով (Ընդէ՞ր օրենք ի թագավորաց դնիցին, ո՞չ ապաքէն վասն կարճելոյ շարեացն):

5) Երբ խոսողը սպասում է, որ հարցման պատասխանը լինելու է ոչ, ապա ավելացնում է միթէ բառը (Միթէ՞ և մեք կո՞յր իցեմք):

6) Երբ ժխտական նախադասութեան փոխարեն օգտագործվում է հարցականը՝ ճարտասանական ձևով (Ո՞վ ասաց, ո՞վ գիտեւ— Զասացի, չգիտեմ: Ո՞վ է տեսել այսպիսի բան):

Աճառյանի ուսումնասիրութիւնից երևում է, որ նա մեծ ուշադրութիւն է դարձրել նաև հարցմանը տրվող պատասխանների բնույթի և խոսողի կողմից իր հարցման պատասխանը ենթադրելու վրա. հատկութիւններ, որոնք շատ կարևոր են հարցման դասակարգման համար:

2 Հ. Աճառյան, Հիականար քերականութիւն հայոց լեզվի (ձեռագիր), հ. 7, էջ 369—374:

Նա խոսում է նաև տարբեր լեզուներում հարցատեսակների դրսևորման և միմյանցից դրանք տարբերելու մի շարք չափանիշների մասին: Մ. Աբեղյանը ժամանակակից գրական հայերենում առանձնացնում է հավաստիական, լրացական և ճարտասանական հարցատեսակներ³, Հավաստիական է այն հարցումը, երբ խոսողին հայտնի է նախադասության որևէ անդամ, բայց ոչ հաստատ, որը և նա կամենում է ճշտել (Դուք տոմսա՞կ եք ուզում): Լրացական է այն հարցումը, երբ խոսողին անհայտ է նախադասության այս կամ այն անդամը (Ո՞ր ես շտապում):

Հ. Աճառյանի և Մ. Աբեղյանի ուսումնասիրությունները լրացնում և ուրույն խոսք են ասում Վ. Առաքելյանը, Ս. Աբրահամյանը և Գ. Զահուկյանը: Վ. Առաքելյանը կատարում է հարցումների իմաստային վերլուծություն և խմբավորում է դրանք ըստ իմաստային խմբերի⁴: Ս. Աբրահամյանը հայերենի. հարցական նախադասությունները ենթարկում է իմաստակառուցվածքային վերլուծության⁵: Նա հատկապես հետազոտում է հարցական նախադասության ստորոգյալի և տրամաբանական շեշտի առանձնահատկությունները ու փոխհարաբերությունը: Հարցման մի շարք կառուցվածքային և կիրառական յուրահատկությունների հետ մեկտեղ Աբրահամյանը քննում է նաև դրանց հուզական և այլ տիպի երանգները:

Ի տարբերություն մյուսների, Գ. Զահուկյանը ուշադրություն է դարձնում նաև հարցման և հարցական բառերի բաշխման ու գործառության վրա⁶, Հարցման էությունը լրիվ բացահայտելու համար՝ այն քննում է իրադրության և հաղորդակցական պրոցեսի հետ կապված: Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նրա վերջին աշխատությունը, որը նվիրված է հայերենի ամբողջական տեսական քննությանը: Այստեղ կաղապարների միավորները սկզբում հետազոտվում են արտահայտության և բովանդակության պլաններում՝ առանձին-առանձին, ապա որոշվում սրանց միջև եղած փոխհարաբերությունը: Գ. Զահուկյանը նկատի

3 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 553—557:

4 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1953, էջ 16—21:

Վ. Առաքելյան, Հայերենի պարզ նախադասություն (ձեռագիր), 1974, էջ 12—22:

5 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 359—366:

6 Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 314—317, 355—363, 447—449, 355:

ունենալով արտահայտության և բովանդակության պլանները՝ առանձնացնում է հարցական, բացականչական, շեշտական և չեզոք նախադասություններ, որոնց փոխհարաբերությունը պարզելու համար, ըստ արտահայտության պլանի, առանձնացնում է պարտադիր երկարատևություն և պարտադիր սրաշեշտություն հատկությունները: Նա հարցումը համարում է նշանների բացակայության նշան (որովհետև խոսողը իրականության այս կամ այն կողմի մասին չունի անմիջական կամ միջնորդավորված տեղեկություն) և տարբերակում է հարցման երկու հիմնական տեսակ, որի հիմքում դնում է իրականության նկատմամբ խոսողի ունեցած անիմացությունը կամ կասկածը: Առաջին դեպքում նշանը բացակայում է ամբողջովին, և նրա փոխարեն օգտագործվում են հատուկ հարցական բառեր, իսկ երկրորդ դեպքում այն կա, բայց ոչ հավաստի և որոշակի ձևով:

* * *

Ռուս լեզվաբաններից հարցման ուսումնասիրությամբ զբաղվել է հատկապես Վ. Ա. Պեշկովսկին⁷: Նա հարցական նախադասությունները մյուսներից տարբերակելու հատկություններ է համարում՝ հարցման մեջ յուրահատուկ մասնիկների ու բառերի առկայությունը, շարադասությունը և որոշակի հնչերանգը: Պեշկովսկին հատկապես կանգ է առնում քերականական միջոցների և հնչերանգի փոխհարաբերության վրա՝ նշելով, որ այնտեղ, ուր քերականական միջոցները ցայտուն են արտահայտված՝ հնչերանգը լիովին չի դրսևորվում ու պակաս կարևորություն ունի, և հակառակը: Հարցման վերաբերյալ ուշագրավ մտքեր են արտահայտել նաև Վ. Ա. Բոգորոդիցկին⁸ և Լ. Վ. Շչերբան⁹:

Ռուսերենի հարցման ուսումնասիրությունը ավելի է խորացվել 1970 թ. հրատարակված ակադեմիական քերականության մեջ¹⁰: Հարցական նախադասությունները բնութագրելիս՝ հեղինակները հաշվի են առել հարցման ձևական, հնչերանգային և գործառական կողմերը: Առանձնացվում են հարցական նախադասությունների

⁷ В. А. Пешковский. Русский синтаксис в научном освещении, М., 1920, стр. 330—342; Интонация и грамматика, Избранные труды, М., 1959, стр. 181.

⁸ В. А. Богородицкий, Общин курс русской грамматики, М.—Л., 1935, стр. 220.

⁹ Л. В. Щерба, Фонетика французского языка, М., 1948.

¹⁰ Грамматика современного русского языка, М., 1970, стр. 571—573.

երկու հատուկ կառուցվածքային սխեմաներ՝ 1) հարցական դերանվանական բառով և 2) առանց հարցական դերանվանական բառի:

Տարբեր լեզուների հարցական նախադասությունների քննության, ինչպես նաև հարցման տեսության բնագավառում ղգալի աշխատանք են կատարել հայրենական հնչյունաբան հետադոտողները¹¹: Հատկապես հիշատակության են արժանի Վ. Ե. Շեվյակովայի և Գ. Մ. Աբդուկադիրովայի դասակարգումները: Այս հեղինակները միակողմանի չեն մոտեցել ուսումնասիրվող նյութին և փորձել են հարցումը ներկայացնել իր առանձնահատկությունների ողջ բազմազանությամբ:

* * *

Հարցական նախադասությունների ուսումնասիրության բնագավառում մեծ ավանդ ունեն մի շարք արտասահմանյան լեզվաբաններ:

Հարցմանը անդրադարձել են Պաուլը, Բրուգմանը, Դելբրյուկը, Պոուտսման, Եսպերսենը, Զոոնգը, Պալմերը, Հալլիդեյը և ուրիշներ¹²: Այս լեզվաբանները առանձնացնում են հիմնականում երեք հարցատեսակ. այսպես ասած ընդհանուր, մասնավոր, իսկ որպես հարցման երրորդ տիպ նրանց մի մասը ընդունում է ընտրանքա-

¹¹ В. Е. Шевякова, Интонация вопросительного предложения в современном английском языке. Канд. дис., М., 1954; В. С. Любопитова, Интонация вопросительного предложения в немецком языке. Канд. дисс., М., 1952; В. М. Пинаева, Интонация вопросительных предложений во французском языке. Канд. дисс., М., 1954; Е. А. Брызгунова, Практическая фонетика и интонация русского языка, М., 1963; Ю. А. Дубовский, Интонация встречного вопроса в современном английском языке. Канд. дисс., Киев, 1964; Г. М. Абдукадырова, Разделительный вопрос в немецком языке. «Научные труды Таш. ГУ им. В. И. Ленина», Таш. ГПИ иностранных языков им. Энгельса, том. I, Ташкент, 1970.

¹² H. Paul, Deutsche Grammar, Bold 3, Halle, 1959, s. 324; K. Brugmann, Die Syntax des einfachen satzes Im indogermanische, Berlin-Leipzig, 1925, s. 220—229; B. Delbrück, Vergleichende Syntax der indogermanischen Sprachen, Strassburg, 1900, s. 261—265; H. Poutsma, A Grammar of Late Modern English, Part 1, Woordhof-Groningen, 1904; D. Jones, An Outline of English Phonetics, Cambridge, 1956, p. 275; H. Palmer, A Grammar of Spoken English, Cambridge, 1939, p. 13, M.; A. K. Halliday, Intonation and Grammar of British English, The Hague, 1967.

յինը, իսկ մյուսը՝ հոնտորականը, նրանց ուսումնասիրությունը, կարելի է ասել, տարվում է նույն ուղղությամբ. տարբերությունը հիմնականում հարցատեսակների անվանման մեջ է:

Հարցման համակարգն առավել ընդգրկող է Բրուգմանի դասակարգումը, որն ուշադրություն է դարձնում հարցման մի շարք իմաստային և ձևական առանձնահատկություններին:

Հետաքրքիր է հատկապես Ծսպերսենի մոտեցումը¹³, Նա Սուլի-տի¹⁴ տարբերակած ընդհանուր և մասնավոր հարցումներին տալիս է ներքսուս-հարցում և X-հարցում անվանումները: Ծսպերսենը իր հետադոտությունը կատարում է ելնելով իմաստագործառական գրույթներից: Նա քննում է նաև կրկնվող հարցումները (կրկնահարցումը և հարցում-բացականչումը)՝ նշելով, որ այս հարցատեսակները արտասանվում են ավելի բարձր տոնով, քան մյուսները և օգտագործվում են որոշակի խոսքային պայմաններում:

Վերլուծության խորությամբ աչքի են ընկնում ֆրանսիացի Տենիերի¹⁵ և ամերիկացի Բոլինգերի¹⁶ ուսումնասիրությունները: Տենիերը վեր է հանում հարցման տվյալ տեսակի իմաստային ամենաբնորոշ, կարևոր առանձնահատկությունը: Ըստ նրա «Ալֆրեդը երգում է մի երգ» նախադասությունն արտահայտում է որոշակի թվով փաստեր՝ որպես ճշմարտություն, որոնցից յուրաքանչյուրը կարող է կասկածի տակ առնվել, իսկ ամեն մի կասկածի համապատասխանում է մի հարցում: Նա նախադասության անդամներն անվանում է միջուկներ և ներկայացնում է սխեմայի տեսքով: Տենյերը առանձնացնում է երկու հիմնական հարցատեսակ. ա) միջուկային, որը կաղավղում է դատարկ միջուկների օգնությամբ, որովհետև այդ միջուկները լցվում են դատարկ ընդհանուր բառերով, որոնց բովանդակությունը կոնկրետ չէ (սխեմա 1), և բ) կապակցային, որը ձևավորվում է լի միջուկների օգնությամբ, բայց կասկածի տակ է առնվում նրանցում առկա փաստերի միջև եղած կապակցությունը (սխեմա 2):

¹³ O. Jespersen, The Philosophy of Grammar, London, 1951, pp. 302—307; Essentials of English Grammar, London, 1946, pp. 304—307; A Modern English Grammar, Part 3, London, pp. 39—42.

¹⁴ H. Sweet, A New English Grammar, Part 1, Oxford, 1900, pp. 172—176.

¹⁵ L. Tennyer, Elements de Syntaxe Structurale, Paris, 1959, pp. 191—238.

¹⁶ D. Bollinger, Interrogative Structure of American English. „Publication of the American Dialect Society“ No 28, Nov., 1957.

(1) Երգում է
|
?

(2) Երգում է
| ?
Ալֆրեդը

Հարցման այսպիսի նուրբ ուսումնասիրություն կատարելով հանդերձ՝ Տենիերը այնուամենայնիվ ուշադրություն չի դարձնում այն իրադրությանը, ուր ձևավորվում է հարցումը:

Ի տարբերություն Տենիերի, Բոլինջերը կատարում է հարցման բաշխման մանրամասն վերլուծություն: Ուշադրություն է դարձնում ինչպես հարցման ձևավորման իրադրությանը, այնպես էլ հարցմանը և սրան նախորդող ու հաջորդող նախադասությունների կապին: Նա հարցումը համարում է բազմաբնույթ, բազմատարր և բարդ մի ամբողջություն: Ըստ նրա այս բարդ ամբողջության հիմնական և բաղկացուցիչ տարրերը չորսն են՝ 1) հարցական՝ բաշխում, 2) հարցական շարահյուսություն, 3) հարցական հնչերանդ և 4) հարցական ժեստ: Հարցման բաշխումը Բոլինջերը ուսումնասիրում է երկու կտրվածքում՝ նախնական և երկրորդական: Նախնական կտրվածքում առանձնանում է այո-ոչ, ընտրանքային, ինչպես-ինչու և լրացուցիչ հարցման տեսակներ: Համաձայն սրանց մեջ եղած նմանության, Բոլինջերը այս չորսը բաժանում է երկուական զույգերի՝ այո-ոչը միացնում է ընտրանքայինին, իսկ ինչպես-ինչու-ն՝ լրացուցիչին, որովհետև առաջինները պահանջում են բազմակի ընտրություն, իսկ վերջինները՝ բացաարություն: Երկրորդական կտրվածքում Բոլինջերը տարբերակում է կրկնվող և ոչ կրկնվող հարցատեսակներ (այս դեպքում հիմք է ընդունում նախորդող և հաջորդող կոնտեքստների հետ հարցումների ունեցած կապը):

Հարկ է նշել, որ Բոլինջերը հարցումը համարում է վերաբերմունք և դիտում է այն իբրև ոչ լեզվական երևույթ: Լինելով բլումֆիլդյան դպրոցի ներկայացուցիչ՝ նա հարցումը մեկնաբանում է լինելով այդ դպրոցի և հատկապես վարմունքային հոգեբանության դրույթներից ու հանգում ոչ ճիշտ եզրակացությունների: Հարցումը կապված լինելով մարդու վարքի հետ, այնուամենայնիվ, լեզվական երևույթ է և այս առումով չի տարբերվում լեզվական մյուս ձևերից: Այնուհանդերձ, Բոլինջերի տեսական այս գրույթը գրեթե չի խանգարել հարցական նախադասությունների նրա կատարած կուռ և ամբողջական ուսումնասիրությանը: Կատարելով վերը նշված հարցման չորս կարևոր ելակետների տեսական վերլուծություն՝ նա ամերիկյան անգլերենում առանձնացնում է հարցման

երկու հիմնական խումբ՝ բազմակի-ընտրություն (multiple-choice) հարցում և բացատրական (explanatory) հարցում՝ իրենց մի շարք ենթատեսակներով:

Զեխ լեզվաբան Ֆիրբասը փորձում է բացահայտել հարցման գործառական էությունը, ուստի ուսումնասիրություն կատարելիս հիմնվում է հարցման մեջ հայտնիի (тема) և անհայտի (рема) փոխհարաբերության վրա¹⁷, նա առանձնացնում է երկու հիմնական հարցատեսակ՝ փակ կամ բայական և բաց կամ դերանվանական:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ հարցական նախադասությունները դասակարգվում և ուսումնասիրվում են հիմնականում հետևյալ կերպ.

1) Ըստ գործառության, երբ ուշադրություն է դարձվում հարցման շարահյուսական միավորների փոխհարաբերությանը: Այս դեպքում հարցման ուսումնասիրությունը անմիջականորեն կապվում է հաղորդակցական պրոցեսի հետ: Իրենց ուսումնասիրությունները այսպես են կատարում Ծպեբրսենը, Տենիերը, Բուլինջերը, Ֆիրբասը, Աբելյանը և Զահուկյանը: Այսպիսի մոտեցման դեպքում լեզվաբանները որպես կանոն չեն սահմանափակվում հարցման միայն նշված կողմի ուսումնասիրությամբ և ուշադրություն են դարձնում նաև հարցման այլ հատկանիշների վրա (Ծպեբրսեն, Տենիեր, Բուլինջեր):

2) Ըստ իմաստի, երբ ուշադրություն է դարձվում հարցման բովանդակությանը: Այստեղ հնարավոր է երեք հիմնական մոտեցում. ա) երբ բացահայտվում են այն բոլոր իմաստները, որ կարող է հարցումն արտահայտել ընդհանրապես (օրինակ Վ. Առաքելյանի դասակարգումը), բ) երբ բացահայտվում են առանձին հարցատեսակների հիմնական իմաստային առանձնահատկությունները (Ծպեբրսեն, Տենիեր, Լյուբոպիտովա, Շեյակովա և ուրիշներ) և գ) երբ բացահայտվում են այն իմաստները, որոնք առաջանում են որոշակի իրադրություններում՝ հատկապես նախորդող կոնտեքստի հետ կապված: Այս դեպքում խոսողը ցուցաբերում է որոշակի հաղորդակցական նպատակադրում և հարցումը դիտվում է որպես որոշակի հաղորդակցային արժեք ունեցող միավոր: Այսպիսին է հիմնականում հայրենական-հնչյունաբան լեզվաբանների մոտեցումը (Շեյակովա, Դուբովսկի, Մետլյուկ, Շախբազովա և ուրիշներ):

¹⁷ Я. Фирбас, Функции вопроса в процессе коммуникации, ВЯ, 1972, № 2.

3) Հստ արտահայտման միջոցների, երբ վեր են հանվում այն բառային-ձևաբանական միջոցները (հարցական բառեր և մասնիկներ, շարահղասություն, հնչերանգ), որոնք տարբերակում են հարցական նախադասությունները այլ տիպի նախադասություններից (ծսպերսեն, Բուլինջեր, Պեշկովսկի, Աճառյան, Աբրահամյան և ուրիշներ)։

4) Հստ զգացական կողմի, երբ վեր են հանվում հարցման զանազան զգացական և հուզական երանգները (Բրուգման, Աբրահամյան, Լյուբոպիտովա, Աբդուկադիրովա և ուրիշներ)։

Հարցումները հաճախ ուսումնասիրվում են նաև նրանց տրվող պատասխանների բնույթի՝ Այսպիսի ուսումնասիրությունը որոշ առանձնահատկություններ ունենալով հանդերձ, այնուամենայնիվ իմաստային-շարահյուսական է, որովհետև հարցման իմաստային և շարահյուսական յուրահատկությունները պարզաբանվում են միջնորդավորված ձևով՝ հիմնվելով նրանց տրվող պատասխանների վրա։

Իմաստային-շարահյուսական է նաև այնպիսի մոտեցումը, որի դեպքում առանձնացվում են մասնավոր և ընդհանուր հարցատեսակներ (Սուիտ, Ջոունզ, Պալմեր և ուրիշներ), որոնց տրվում են տարբեր անվանումներ (բառ-հարցում և նախադասություն-հարցում, պարզաբանման հարցում և հաստատական հարցում, դերանվանական հարցում և այո-ոչ հարցում, X-հարցում և նեքստու-հարցում, լրացական հարցում և հավաստիական հարցում, ինչպես-ինչու հարցում և այո-ոչ հարցում, բաց հարցում և փակ հարցում, անորոշ ստորոգելիական հարցում և անորոշ կապակցական հարցում)։

Ինչպես ցույց է տալիս տարբեր լուծաբանների աշխատությունների քննությունը, նրանցից շատել է իրենց հետազոտությունները կատարում են ոչ թե մեկ ուղղությամբ, այլ բազմակողմանիորեն՝ ձգտելով հարցման էությունը ավելի ամբողջական ներկայացնել։ Այս տեսակետից առավել հատկանշական է, օրինակ, Ծսպերսենի, Բուլինջերի և Շևյակովայի ուսումնասիրությունները։

Ժամանակակից գրական հայերենի հարցական նախադասությունները դասակարգելիս՝ մենք ուշադրություն ենք դարձրել նշված բոլոր կետերին, փորձել ենք հնարավորին չափ հաշվի առնել և ի մի բերել գոյություն ունեցող հիմնական մոտեցումները։

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հարցման ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հաղորդակցման իրականացման երեք հիմնական կողմերին՝ խոսող, խոսակից և իրադրություն, որի տակ հասկացվում են այն պայմաններն ու հանգամանքները, որոնցում տեղի է ունենում խոսակցությունը:

1. Խոսողի դիրքերից մոտենալու դեպքում՝ ուսումնասիրվում է հարցական նախադասությունը ինքնին, նրա կառուցվածքը, իմաստը և գործառությունը:

2. Խոսակցի դիրքերից մոտենալու դեպքում, մեր ուշադրությունը արդեն բևեռվում է հարցման պատասխանների կառուցվածքին, իմաստին ու գործառությանը:

3. Իրադրության ուսումնասիրության դեպքում ուշադրություն է դարձվում այն բանին, թե որտե՞ղ և ի՞նչ պայմաններում է կատարվում խոսակցությունը, ովքե՞ր են խոսողները, միմյանց ծանոթ են, թե ոչ, ո՞վ է առաջինը սկսել խոսակցությունը, այն սկսվել է հարցո՞վ, թե մեկ այլ տեսակի նախադասությամբ, խոսակիցը լսել և անմիջապես արձագանքո՞ւմ է դիմացինի խոսքին, թե չլսելու կամ չկամենալու պատճառով՝ չի պատասխանում և այլն:

Մարդկային վարքի և լեզվական հաղորդակցման պայմաններում հարցումները հանդես են գալիս որպես հաղորդակցման սկիզբ կամ շարունակություն:

1. Հարցումը կաբող է առաջանալ որևէ գործողությունից, ասենք՝ փողոցով գնալիս զրուցակիցը հանկարծ կանգ է առնում կամ գլուխը շրջում է, իսկ ընկերը հարցնում է՝ «Ի՞նչ պատահեց» կամ «Ո՞ւմ ես տեսել», կամ երբ դռան դանդը տալիս են, մեկը ներսից հարցնում է՝ «Ո՞վ է», կամ «Ի՞նչ եք ուղևորում»: Այս հարցումները մեծ մասամբ հարցական բառով են, բայց երբեմն կարող են լինել նաև առանց հարցական բառի: Ասենք, ինչ-որ մեկը տուն է մտնում և տանտերը հարցնում է՝ «Եկա՞ր», իսկ եթե չի տեսել ներս մտնողին, ապա կհարցնի՝ «Ո՞վ եկավ»:

2. Հարցումը կարող է առաջանալ ոչ հարցական՝ պատմողական կամ հրամայական խոսքերից: Երբ մեկը, ինչ-որ բան պատմելիս, ասում է «Վաղը գնալու եմ թատրոն», դիմացինը հարցնում է՝ «Վաղը թատրոն՞ ես գնալու» կամ «Վաղը ո՞ւր ես գնալու» կամ «Թատրոն՞»:

Ինչպես տեսնում ենք, այս հարցումները կարող են լինել ինչպես հարցական բառով, այնպես էլ առանց հարցական բառի. կարող են կրկնել ինչպես ամբողջ նախորդ արտասանվածքը, այնպես էլ նրա մի մասը:


3. Հարցումը կարող է լինել հաղորդակցման սկիզբ և անմիջապես պատասխան հայցել:

4. Հաճախ խոսողը հարցման միջոցով դիմացինից ոչ թե պատասխան է պահանջում, այլ նրան մղում է որևէ գործողության, ինչպես՝ «Գրիչդ մեկ բոպեով շե՞ս տա», «Մի քիչ այն կողմ շե՞ս նստի» և այլն:

5. Հարցումը կարող է առաջանալ նախօրոք տրված որևէ հարցումից: Ասենք, մեկը հարցնում է՝ «Ո՞ր ես դնում» և դիմացինը նույնպես պատասխանում է հարցով՝ «Ո՞ր եմ գնում» կամ «Իսկ ո՞ր կկամենայիք»: Եթե նախօրոք տրված հարցումը հարցական բառով է, ապա դիմացինի հարցումը նույնպես կլինի այդպիսին: Եթե նախօրոք տրված հարցումը առանց հարցական բառի է, ապա դիմացինին կարող է լինել ինչպես հարցական բառով, այնպես էլ առանց դրա:

Նախօրոք տրված հարցմանը դիմացինը կարող է պատասխանել (ժողովրդա-խոսակցական լեզվում) «Ի՞նչ» կամ «Ի՞նչ ասացիք» կամ «Ո՞ր» «Ինչպե՞ս» և «Հը՞» հարցումներով:

6. Հարցմանը ոչ մի պատասխան չի տրվում, և խոսողը երկրորդ անգամ է կրկնում իր հարցումը: Այս ամենը կարելի է ներկայացնել հետևյալ գծագրերի ձևով.



Հարկ է նշել, որ սկիզբ և շարունակության հասկացությունները այստեղ պայմանական ու հարաբերական են, քանի որ արտաբերված են մարդկային գործողությունների և հաղորդակցման

անսահմանափակ շղթայից: Յուրաքանչյուր սկիզբ կազմող գործողություն կամ խոսողական ակա մեկ այլ հարաբերության մեջ հաջորդում է որևէ այլ գործողության կամ խոսողության: Իսկ յուրաքանչյուր շարունակություն իր հերթին կարող է դիտվել որպես ինչ-որ ուրիշ գործողության կամ էլ խոսողական ակտի ակզմնավորում:

Այս վեց դեպքերից մեկը ավելի շատ հետաքրքրում է երրորդը (Իբրև լեզվական տեսակետից առավել ընդդրկող), որովհետև այդ հարցատեսակի բառային, քերականական և հնչույթաբանական կողմերը քննելով, ուսումնասիրած կլինենք նաև մյուսներին: Այնպես, որ ներկա հետազոտության մեջ ելակետային հիմք է վերցվում 3-րդ կետը:

Այս ուսումնասիրության մեջ հարցումների տարբերակման հիմքը նրանց արտահայտման էական միջոցներն են՝ հարցական հնչերանգը, հարցական բառերի և որոշակի շաղկապների առկայությունը կամ բացակայությունը, հարցման պատասխանների բնույթը, նախադասության շարադասությունը, խոսողի հաղորդակցական նպատակադրումը և այլն:

ՀԱՐՑՄԱՆ ԻԱՍԱԿԱՐԴՈՒՄԸ ԸՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Ըստ հարցական բառի առկայության կամ բացակայության տարբերակվում է հարցումների երկու մեծ խումբ. Ա) հարցական բառով հարցում և Բ) առանց հարցական բառի հարցում:

Ա) Հարցական բառով հարցում

Հարցական բառով հարցումը բաժանվում է երկու ենթախմբի. ա) միջուկային, դերանվանական կամ ինչու-որ հարցման և բ) եղանականիշ կամ մի քանի հարցման:

ա) Միջուկային կամ ինչու-որ հարցում

Ինչու-որ հարցումը հաճախ օգտագործվում է առանց հարցական հնչերանգի, որովհետև հարցման մեջ առկա հարցական դերանունը հարցման ինֆորմացիա արտահայտելու պատասխանատվությունը վերցնում է իր վրա: Այս հարցումները հայերենում ձևավորվում են հարցական դերանունների միջոցով, որոնք են. ո՞վ, ի՞նչ,

ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչա՞փ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞ւր, որքա՞ն, որ-
չա՞փ, որպիսի՞, ո՞րերորդ, որե՞նդ, ե՞րբ, քա՞նի, քանի՞սը, քա-
նի՞երորդ բառերը:

Ինչու-որ հարցման ժամանակ խոսողը չգիտի որե՛ն բան և
հարցման միջոցով ձգտում է ստանալ որոշակի պատասխան: Այս
դեպքում հարցումը անմիջապես վերաբերում է նախադասության
որևէ անդամի, որի կոնկրետ բովանդակությունը անհայտ է խո-
սողին, օրինակ՝ Ի՞նչ ես անում (վՊ)¹³: Ինչո՞ւ ես խփում (ԴԴ),
Ո՞ր ժամին կարող եմ տեսնել (Մ): Ինչո՞ւ տուն չի գալիս (ԴԴ):
Ինչո՞ւ չես պսակվում (վՊ): Որտե՞ղ եք վիրավորվել (վՊ): Ո՞վ
էր երեկվա երիտասարդը: Իրենց տունը ո՞րն է (ՀԹ): Ինչպե՞ս ևս
զգում քեզ այսօր: Ո՞րտեղից ես գալիս (ՍԶ):

Ինչու-որ հարցման մեջ անհայտ է նախադասության կառուց-
վածքային տարրը, իսկ պատասխանի բնույթը շատ կոնկրետ է:
Այս հարցումներին կարելի է տալ և՛ լրիվ, և՛ կարճ պատասխան:
Այսպես՝ «Ո՞վ է երեկվա երիտասարդը» հարցմանը կարելի է պա-
տասխանել՝ «Երեկվա երիտասարդը ընկերս է» կամ էլ՝ ուղղակի
մեկ բառով՝ «Ընկերս»:

Որպես կանոն, հարցական դերանունները օգտագործվում են
նախադասության սկզբում, բայց հաճախ կարող են օգտագործվիլ
նախադասության միջին մասում: Դա հիմնականում պատահում է
տեղ, ժամանակ, ինչպես նաև զանազան իրավիճակ և հոգեվիճակ
ցույց տվող բառերից ու կապակցություններից հետո, ինչպես՝
Այսօր ի՞նչ օր է (վՊ): Գյուղից ե՞րբ ես եկել: Առավոտյան ինչո՞ւ
չեկար դպրոց: Հոգնած ուղեղով ի՞նչ կարող ես անել և այլն:

Երբեմն այս հարցումները օգտագործվում են նաև ուժեղ ընդ-
գծված հարցական հնչերանգով. դա լինում է հարցման հետ զար-
մանք, զայրույթ, չկամեցողություն և այլ ներքերանգներ արտա-
հայտելու դեպքում, օրինակ՝ Հիմա ի՞նչ ես անելու, հիմա (վՊ):

Հաճախ հայերենում ինչու-որ հարցմանը տրվում է այդ հարց-
ման բառային կազմը ունեցող պատասխան միայն ենթակայի և
օժանդակ բայի տեղերի տեղափոխմամբ, օրինակ՝ «Ո՞ւր ես գնում»
հարցմանը տրվում է «Ուր դու ես գնում» կամ «Ուր որ դու պա-
տասխանը: Նման պատասխան տալով խոսակիցը խոսողին հաս-
կացնում է, որ չնայած դիմացինը թաքցնում է իր գնալու վայրը,

¹³ Այնպատեղում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները՝ ՀԹ (Հ. Թումանյան), ԱԻ (Ա. Իսահակյան), ԴԴ (Դ. Դեմիրճյան), Մ (Մուրացյան), ՍԶ (Ս. Ջորյան), վՊ (Վ. Պետրոսյան), ՀՄ (Հ. Մաթևոսյան):

բայց ինքը հասկանում է, ուր է նա գնում, և ինքն էլ է գնում այնտեղ:

Վերոհիշյալ ինչու-որ հարցումները ըստ կառուցվածքի պարզ էին, բայց կարող են լինել նաև բարդ (բարդ համադասական և բարդ ստորադասական) և թերի՝ Օրինակ՝ բարդ համադասական— Ո՞վ է, ի՞նչ կնիկ է (ԴԴ). Ո՞վ տեսավ, ո՞վ լուրի կծիկը գլուղամեջ գցեց (ՎՊ). Այլևս ի՞նչ կարիք կա մնալու, ի՞նչ պիտի ստուգես (ՎՊ). Երբ իմացան, երբ հասցրին հավաքվել (ՎՊ), բարդ ստորադասական— Բայց ինչո՞ւ չեք ուղում, որ գեղեցկությունը լինի տանելի (ՍԶ). Եթե իրիկվա կթին կհասնես, էլ ինչո՞ւ ես հարցնում (ՀՄ). Բայց ի՞նչ եղավ այն օրը, երբ Ջարեն կանգնել էր արահետի վրա (ՀՄ), թերի— Սարսափելի է,— ասաց Լևոնը:— Ի՞նչը:— Որ դիրեկտորի անունը Աղաբեկ է (ՎՊ). Չես փոխվել,— ասաց Լևոնը:— Ինչո՞ւ: Սրամտության գծով (ՎՊ): Թերի հարցական նախադասությունները հատկապես կիրառական են ժողովրդա-խոսակցական լեզվում:

բ) Եղանակային կամ միթե հարցում

Հայերենում հարցական դերանուններին ղուգահեռ, կան սակավաթիվ բառեր, որոնց առկայությունը նախադասության կազմում նույնպես հուշում է, որ մենք գործ ունենք հարցման հետ: Դրանք հարցական եղանականիշ բառերն են. մի՞թե, արդյո՞ք, չի՞նի, չի՞նի՞ թե և չէ՞ որ¹⁹:

Այս կարգի բառերը հանդես են գալիս որպես ուրույն հարցական ցուցիչներ, որոնք հարցմանը հաղորդում են որոշակի իմաստային և զգացմունքային երանգավորում: Դրանք հարցում արտահայտելու կարողությամբ հավասար են հարցական դերանուններին, բայց իրենց գործառնությամբ բոլորովին տարբեր են. այնպես որ սխալ կլինի սրանք նույնացնել հարցական դերանունների հետ:

Մի՞թե-ով և արդյո՞ք-ով կազմված հարցումը արտահայտում է հարցնողի զարմանքը և կասկածը հարցման մեջ նշված իրողության կամ գործողության (մեծ մասամբ դիմացինի կողմից կատարած, կատարվող, կատարվելիք գործողության) նկատմամբ:

¹⁹ Իրոք, իրավ, զուցե, իսկապես և այլ եղանականիշ բառերը նույնպես կարող են հանգես գալ հարցականության գործառնությամբ, բայց մյուսների նման հարցականությունը սրանց միակ գործառնությունը չէ: Սրանք կարող են գործածվել նաև այլ տեսակի նախադասությունների կազմում:

Հարցմանը կասկածի և զարմանքի (կամ դրանցից երկուսի) երանգավորումը հաղորդելը կախված է համապատասխան իրադրությունից: Օրինակ՝ Մի՞թե աշխատել չես ուզում: Մի՞թե կարելի է այդ ամենը մոռանալ: Մի՞թե սրա համար մենք այսքան սովորեցինք: Արդյո՞ք հնարավոր է թողնել և հեռանալ: Արդյո՞ք նա կդա նորից ինձ տեսնելու:

Զլի՛նի՞ր-ով և չլի՛նի՞ր թե-ով կազմված հարցումը արտահայտում է խոսողի կարծիքը որևէ երևույթի կամ դիմացինի կատարածի նկատմամբ. այն էլ այնպիսի կարծիքը, որն հագեցված է կասկածով և տարակուսանքով: Օրինակ՝ Զլինի՞ր անձրև է գալու: Զլինի՞ր հարևանուհուդ հետ ես կյանքդ կապելու: Զլինի՞ր թողնելու ես ուսումդ: Զլինի՞ր թե դու ես նրան պատմել:

Զէ՞-որ-ով կազմված հարցումը հաստատում է ինչ-որ եղելություն, իրողություն կամ գործողություն և կամ հաղորդում է որևէ իրական փաստ: Այս հարցումը օգտագործվում է և՛ խոսողի կողմից, և՛ խոսակցի կողմից, բայց ավելի շատ խոսակիցն է օգտվում նրանից: Այսպիսի հարցմամբ խոսակիցը պատասխանում է դիմացինի հարցմանը՝ միաժամանակ հայտնելով նրան կատարվածի պատճառը, պատճառաբանելով, որ տվյալ իրողությունը կամ երևույթը կատարվել, կատարվում և կատարվելու է հետևյալ նպատակով: Օրինակ՝

Խոսակցի կողմից

Խոսողի կողմից

Ա. Ինչո՞ւ ես հարցնում Արամից:

Ա. Դիմիր Հակոբյանին...

Բ. Զէ՞ որ սիրում եմ նրան:

Ա. Զէ՞ որ նա քո բարեկամն է:

Ա. Ինչպե՞ս կարելի է այդպես ապրել:

Ա. Ընկերդ անպայման կօգնի:

Ա. Զէ՞ որ նա լավ մարդ է:

Բ. Զէ՞ որ այլ ելք չունեմ:

Եղանականիշ հարցման դեպքում խոսողն ունի իրեն նախօրոք հայտնի ինչ-որ խնդրամացիա, որի բովանդակության նկատմամբ էլ հենց արտահայտում է իր սուբյեկտիվ որոշակի վերաբերմունքը:

Այս տեսակետից հարց է առաջանում «Մի՞թե տուն ես գնում» հարցման մեջ մի՞թե-ն ավելանում է «Տուն ես գնում» հաստատակա՞ն նախադասության, թե «Տո՞ւն ես գնում» հարցական նախադասության վրա:

Ուշադիր վերլուծությունից հետո երևում է, որ այն ավելանում է «Տուն ես գնում» հաստատական նախադասության վրա:

Այս փաստը մեկ անգամ ևս ապացուցում է, որ մի՞թե-ն ինքնուրույնաբար կարող է հաստատակ նախադասությունը վերածել հարցականի, որովհետև խոսողը մինչև շունենա որոշակի ինֆորմացիա ինչ-որ երևույթի մասին, երբեք չի կարող օգտվել եղանականիշ հարցումից:

Բ) Առանց հարցական բառի հարցում

Այս հարցման մեջ հարցական բառեր չկան և հարցումը ձևավորվում է հիմնականում հարցական հնչերանգով, որոշ դեպքերում նաև ձևական այլ միջոցների մասնակցությամբ: Առանց հարցական բառի հարցումներն ունեն մի շարք ենթատեսակներ.

- ա) Կապակցային կամ այո-ոչ հարցում
- բ) Ընտրանքային կամ թե հարցում
- գ) Համեմատական կամ քան հարցում
- դ) Լրացուցիչ կամ իսկ հարցում
- ե) Կցորդային կամ չէ հարցում

ա) Կ ա պ ա կ ց ա յ ի ն կ ա մ ա յ ո - ո չ հարցում

Այո-ոչ հարցական նախադասության կառուցվածքը նման է պատմողականին, սակայն այստեղ անհայտ է նրա կառուցվածքային հարաբերությունը, այսինքն՝ ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապը:

Նշված հարցական նախադասությունների դեպքում հարցումը արտահայտվում է միայն հարցական հնչերանգի միջոցով: Օրինակ՝ Քննարկումից հետո զնանք գարեջրի (չո): Փեսայիցդ գո՞հես (չո): Գիշերվա կոնյակից շունե՞ս (վո): Բացակա ունե՞ք (վ): Գրքերը չե՞ս բերել:

Նման հարցումներին կարելի է տալ կարճ՝ այո կամ ոչ պատասխան կամ հարցման մեջ շեշտված բառով պատասխան կամ էլ լրիվ պատասխան:

Այսպես, «Տուն գնալո՞ւ ես» հարցմանը կարելի է պատասխանել. այո կամ ոչ կամ «Այո գնալու եմ» կամ «Այո, տուն եմ գնալու»:

Երբ այո-ոչ հարցման ստորոգյալը ժխտական կառուցվածքի է, ապա նրան տրվում է միայն ոչ-ով պատասխան: Այսպես՝ «Գրքերը չե՞ս բերել» հարցմանը կարելի է պատասխանել ոչ կամ չեմ բերել, կամ էլ բերել եմ, այո-ի փոխարեն:

Վերևում բերված այս-նչ հարցումները ըստ կառուցվածքի պարզ էին, բայց նրանք կարող են լինել բարդ (բարդ համադասական և բարդ ստորադասական) և թերի՝ Օրինակ՝ բարդ համադասական—նրան հարցրիր, և նա ոչինչ չպատասխանե՞ց: Վարդանը գնաց, իսկ Աշոտը հրաժարվե՞ց գնալուց: Բարդ ստորադասական—Ձէի՞ք ասի, որ ներս գա (ՎՊ): էդ երեք հարյուրից մեկը չկա՞, որ հաջողացնի ինձ համար (ՎՊ), Թերի—փոխանակ տրվելու «Երեկվա աղջկա մասին է խոսքը» հարցումը, տրվում է. «Երեկվա՞ աղջիկը» հարցումը. «Նո՞ւյն ժամին սպասեմ քեզ» հարցման փոխարեն տրվում է. «Նո՞ւյն ժամին» հարցումը: Թերի հարցումների օգտագործումը կախված է խոսակցության պայմաններից և նախորդող խոսակցությունից: Սրանք նույնպես շատ կիրառական են ժողովրդա-խոսակցական լեզվում:

Այս-նչ հարցումները, ըստ խոսողի կողմից իր տված հարցման պատասխանի գույակման կամ ենթադրման աստիճանի, լինում են 1) չեզոք, 2) ենթադրական և 3) հավաստիական:

1) Չեզոք հարցում, երբ խոսողի վերաբերմունքը տրվող պատասխանի նկատմամբ չեզոք է: Խոսողը հավասարապես կարող ստանալ և՛ այո, և՛ ոչ պատասխան, օրինակ՝ Ուրիշ բան ունե՞ս ասելու (ՎԴ): Նվիրե՞մ քսան միավոր (ՀՄ): Մոտդ փող մնա՞ց:

Չեզոքի դեպքում հարցաշեշտը²⁰ միշտ դրվում է հարցման ստորոգյալի վրա: Ուրեմն, երբ հարցաշեշտը դրվում է ստորոգյալի վրա, ապա հաստատ կարելի է ասել, որ այդ հարցումը չեզոք է:

2) Ենթադրական հարցում, երբ խոսողը ինչ-որ չափով ենթադրում է իր հարցման պատասխանը, օրինակ՝ Դու դո՞ւրս ես գալիս (ՀԴ): Տետրակնե՞րս էլ վառեցիք (ՎԴ): Կենտրո՞ն ես գնում (ՎԴ): Տո՞ւն ես գնում:

Ենթադրական հարցման դեպքում հարցաշեշտը միշտ դրվում է ստորոգյալից բացի այլ անդամների վրա: Եթե հարցաշեշտը դրվում է ստորոգյալի լրացման վրա, ապա այն, իրար կանոն, տեղափոխվում է ստորոգյալից առաջ: Պատահում են դեպքեր, երբ հարցնողը լրացումը թողնում է ստորոգյալից հետո:

Այսպես՝ ասում են «Գնացիր տո՞ւն» փոխանակ ասելու. «Տո՞ւն գնացիր»: Եթե ենթադրական հարցման ստորոգյալը վեր-

²⁰ Հարցաշեշտի տակ հասկանում ենք հարցական հնչադասության գլխավոր շեշտը:

լուծական կազմութեան, ապա օժանդակ բայր և հարցաշեշտը կրող լրացումը միշտ տեղափոխվում են ստորոգյալից առաջ, ինչպես՝ Տո՛ւն ես գնում: Դի՛րք ես գնել: Առավոտյա՛ն ես եկել: Դյու՛ղից ես վերադարձել:

Վերլուծական կազմութիւնն ունեցող ստորոգյալով ենթադրական հարցումը միշտ ունի կայուն շարադասութիւն՝ լրացում + օժանդակ բայ + բուն բայական մաս:

Շատ հաճախ այս միջուկին կարող են հաջորդել կամ նախորդել նախադասութեան այլ անդամներ կամ կապակցութիւններ, ինչպես՝ Դյուղից այսօ՛ր ես եկել: Երեկ երեկոյան թատրո՞ն հս գնացել: Մեր գյուղի վերին ծայրին գտնվող տա՛նն ես ապրել ե այլն:

3) Հավաստիական հարցում, երբ խոսողը մեծ հավանակաւնութեամբ գիտի թե ինչ պատասխան է սպասվում, օրինակ՝ Ասում ես լա՛վ անցավ (ՎՊ): Ասում ես շա՛տ բան պիտի փոխեմ (ՎՊ): Երեխաները դեռ չե՛ն քնել: Ուղում ես ինձ հե՛տ գալ:

Առաջին, երկրորդ, չորրորդ հարցումների դեպքում սպասվում է այո պատասխան, իսկ երրորդի՝ ոչ:

Հատկապէս հավաստիական են այնպիսի հարցումները, որոնք պարունակում են դեռ, արդե՛ն, ուրեմն, ասում ես, մինչև ճիմա ե նման տիպի բառեր ու կապակցութիւններ:

Շատ հաճախ դրական պատասխան պահանջող այո-ոչ հարցմանը տրվում է ոչ թե այո, այլ նրան իմաստով համարժեք ուրիշ բառերով պատասխան, ինչպես՝ իճարկե, անշուշտ, ճարկավ, անտարակոյս, անպայման, անկասկած և այլն: Իսկ երբ հարցման ստորոգյալը ժխտական կազմութեան է, տրվում է ինչպես չէ և նման այլ պատասխաններ:

Ժխտական պատասխան պահանջող հարցմանը ոչ-ի փոխարեն տրվում է նրան համարժեք իմաստ ունեցող բառերով կամ կապակցութիւններով պատասխան, ինչպես՝ բռնաբռնվի՛ն, բռնվ, ամենեկի՛ն, երբեք, ոչ մի դեպքում, մտքովդ չանցնի, այդ է՛ր պակաս և այլն: Երբեմն ոչ-ի փոխարեն խոսակիցը պատասխանում է ճարտասանական հարցական նախադասութեան միջոցով, որով ավելի խիստ է արտահայտում իր ժխտական վերաբերմունքը: Օրինակ՝

Ա. Խանութ գնալո՞ւ ես:

Բ. Ուրիշ բան ու գործ չունե՞մ:

կամ՝

Ուրիշ դարդ ու ցավ շունհամ:

կամ՝

Ամեն ինչ լրիվ էր, դա՞ էր պակասում:

Այս հարցական նախադասությունները միշտ օգտագործվում են խոսողի խոսքից հետո: Երկխոսության ժամանակ այն երբեք չի կարող հանդես գալ որպես խոսքի առաջին մաս, այն միշտ կիրառվում է խոսակցի կողմից:

Այս-ուչ հարցմանը տրվում է ինչպես որոշակի այս կամ ոչ պատասխան, այնպես էլ անորոշ պատասխան: Անորոշ պատասխան տրվում է չգիտեմ, եսիմ, ո՞վ գիտի, աստված գիտի, ի՞նչ իմանամ բառերի ու կապակցությունների միջոցով:

Միակ պատասխանը, որ կարելի է տալ և՛ այս-ուչ, և՛ ինչու-ուհարցումներին՝ անորոշ պատասխանն է:

բ) Ը ն տ ր ա ն ք ա յ ի ն կամ թ ե հարցում

Ընտրանքային հարցումն ունի յուրահատուկ շարահյուսական կառուցվածք և խոսողի որոշակի հաղորդակցական նպատակադրում: Նման կառուցվածքը հատուկ է միայն այս կարգի հարցական նախադասություններին:

Ընտրանքային հարցումները լինում են երկու տեսակ. 1) երկեզր և 2) բազմեզր:

1) Երկեզր ընտրանքային հարցումը կարող է ունենալ միայն երկու եզր, օրինակ՝ Մարտին գա՞մ, թե չգամ (ՀՄ): Ինձ հետ գալի՞ս ես, թե ոչ: Ծա տեսնեմ իշու առաջը բան կա՞, թե ոչ (ԱԻ): Զա՞ղ էր, թե չէ (ՀԹ): Արդյոք եղե՞լ է նա, թե չի եղել (ԱԻ):

Երկեզր ընտրանքային հարցման դեպքում հարցաշեշտը պարտադիր կերպով դրվում է հարցման առաջին մասի ստորոգյալի վրա: Ընտրանքային հարցման վերջին եզրը միշտ զուգամիտում է առաջին շարույթի անդամներից որևէ մեկի հետ: Հարցաշեշտը դրվում է այդ զուգամիտվող բառի վրա, որը վերցվում է որպես ընտրանքային հարցման առաջին եզր: Եվ քանի որ երկեզր ընտրանքային հարցման դեպքում վերջին եզրը զուգամիտում է առաջին շարույթի ստորոգյալի հետ, ուստի հարցաշեշտը նրա վրա էլ հենց դրվում է:

Երկեզր ընտրանքային հարցման մեջ շատ հաճախ հանդես է գալիս անորոշ դերբայը: Նման դեպքերում հարցման երկրորդ

եղրը նույն առաջին շարույթի բայն է վերցված ժխտված ձևով կամ էլ նրան հակառակ իմաստով որևէ բայ: Օրինակ՝ Լինե՞լ, թե չլինեի, Գնա՞լ, թե չգնալ, Կանգնե՞լ, թե չարժվել, Աշխատե՞լ, թե հանգստանալ, Կովե՞լ, թե հանձնվել, Համբերե՞լ, թե չհամբերել:

2) Բազմեզր ընտրանքային հարցումը կարող է ունենալ երկու և ավելի եզրեր, օրինակ՝ Հավը տապակա՞ծ ես սիրում, թե՛ խաշած (վՊ), Երևանի՞ց ես, թե Կիրովականից (ՀՄ), Ե՞ս էի լավը, թե Սահակը (ՀՄ), Կի՞նո՞ ես գնալու, թե թատրոն, Կարինե՞ն է սիրուն, Մակարովա՞ն, թե Ռիման (ՀՄ), Հանգստանանք լեռներո՞ւմ, գյուղո՞ւմ, թե ծովափում: Դու նախընտրում ես տա՞նձ, խնձո՞ր, գե՞ղձ, թե խաղող:

Բազմեզր հարցման դեպքում հարցաշեշտը անպայման դրվում է հարցման առաջին շարույթի բացի ստորոգյալից այն ցանկացած անդամի վրա, որի հետ զուգամիտում է բազմեզր հարցման վերջին եզրը:

Նշենք, որ հայերենով խոսողները, շատ հաճախ շեղվելով կանոններից, հարցաշեշտը դնում են բազմեզր ընտրանքային հարցման առաջին շարույթի ստորոգյալի վրա (Ջրի գնա՞մ, թե հացի):

Բազմեզր ընտրանքային հարցման վերջին եզրը կարող է զուգամիտել.

ա) Հարցման առաջին մասի ենթակայի հետ, ինչպես՝ Սուրե՞նը քեզ խփեց, թե Ռուբենը: Դո՞ւ ես լավ սովորում, թե ընկերո՞ւ:

բ) Հարցման առաջին մասի ուղիղ խնդրի հետ, ինչպես՝ Տա՞նձ ես կամենում, թե խնձոր: Գի՞րք ես կարդում, թե թերթ: Քեզ ժամացո՞ւյց նվիրեցին, թե մատանի:

գ) Հարցման առաջին մասի անուղղակի խնդիրներից որևէ մեկի հետ, ինչպես՝ Գիրքը Սուրենի՞ն տվեցիր, թե Վարդանին: Ուտքո՞ւլ ես գնալու թե մեքենայով:

հ) Հարցման առաջին մասի պարագաներից որևէ մեկի հետ, ինչպես՝ Քաղաքո՞ւմ ես ապրում, թե գյուղում: Ձեր երեկոն ուրա՞խ անցավ, թե տխուր: Այսօ՞ր ես քաղաք մեկնելու, թե վաղը:

զ) Ամբողջ առաջին մասի հետ, ինչպես՝ Աշոտենց տա՞նն ես քնելու, թե գնալու ես Սուրենենց տուն: Գի՞րք ես ուզում կարդալ, թե ուզում ես կինո գնալ:

Ինչպես նշվեց, բազմեզր ընտրանքային հարցումը կարող է ունենալ երկու և երկուսից ավելի ցանկացած թվով եզրեր: Որքան

հզրային անդամների թիվը ավելանում է, այնքան սպասելիք պատասխանի հավանականությունը թուլանում է: Երկուսի դեպքում սպասվող պատասխանի հավանականությունն ամենամեծն է: Խոսողն իր հարցմանը տրվող բոլոր հնարավոր պատասխաններից ընտրում է միայն երկուսը և հարցնում դիմացինին, որպեսզի նրանից իմանա, որն է իրականությունը համապատասխանում:

Նշենք, որ «Դպրոց գնալու» ես, թե ոչ» հարցմանը պատասխան է տրվում միայն ոչ-ով, իսկ այո-ով չի տրվում: Այո-ի փոխարեն տրվում է գնալու եմ պատասխանը:

Հետաքրքիր է, թե ինչու երկեզը ընտրանքային հարցմանը (ասենք՝ Դպրոց գնալու» ես, թե ոչ) հնարավոր է տալ ոչ պատասխան, իսկ այո հնարավոր չէ: Այդ բացատրվում է երկու պատճառով.

1) Երկեզը ընտրանքային հարցման մեջ այո չի օգտագործվում: Այո-ի փոխարեն վերցվում է ստորոգյալի ուղիղ ձևը, որը գրվում է առաջին շարույթում և հանդես է գալիս որպես հիմնական իմաստակիր միավոր:

2) Ընտրանքային հարցմանը որպես պատասխան տրվում է նրա եզրերից մեկը, և քանի որ երկեզը ընտրանքային հարցումը այո չի պարունակում, ուստի այո-ի փոխարեն որպես պատասխան տրվում է ստորոգյալի ուղիղ ձևը, որն իր իմաստով համապատասխանում է այո-ին:

Հարց է առաջանում, «Դպրոց գնալու» ես, թե ոչ» երկեզը ընտրանքային հարցման նմանողություն արդյո՞ք չի կարելի կազմել «Դպրոց չե՞ս գնալու, թե այո» հարցումը: Ինչպես տեսնում ենք, բերված հարցումը ծիծաղելի է և հայերեն չի հնչում: «Դպրոց գնալու» ես, թե ոչ» հարցում հնարավոր է կազմել, որովհետև «Դպրոց գնալու» ես» հարցմանը կարելի է տալ և՛ այո, և՛ ոչ պատասխան: Քանի որ որպես ընտրանքային հարցման պատասխան վերցվում է նրա եզրերից մեկը և «Դպրոց գնալու» ես» հարցման առաջին եզրը (ստորոգյալը) դրական կառուցվածքով է ու իմաստով համապատասխանում է այո-ին, ուստի որպես երկրորդ եզր վերցվում է ոչ-ը, որով և հնարավոր է լինում կազմել «Դպրոց գնալու» ես, թե ոչ» հարցումը: «Դպրոց չե՞ս գնալու, թե այո» հարցումը հնարավոր չէ կազմել որովհետև «Դպրոց չե՞ս գնալու» հարցմանը կարելի է տալ միայն ոչ-ով պատասխան:

Դպրոց չե՞ս գնալու — | Ոչ
| (այո չունի)

«Դպրոց չե՞ս գնալու» հարցումը այն պատասխան չունի, որի հետ կարողանա զուգորդվել, իսկ ոչ-ի հետ էլ չի կարող զուգորդվել, որովհետև հարցման երկու մասում էլ կստանանք ժխտում (որն անտրամաբանական է)։

Ընտրանքային հարցման մեջ կան նաև այնպիսի հարցատեսակներ, որոնք հանդես են գալիս որպես հարցական բառով և առանց հարցական բառի հարցումների մի յուրահատուկ սինթեզ, ինչպես՝ Որտե՞ղ ես ապրում՝ քաղաքո՞ւմ, թե գյուղում։ Ե՞րբ եկար՝ երե՞կ, թե այսօր։ Ի՞նչ ես ուզում, սե՞ր, թե վիշտ։ Ո՞ւմ ես տեսել, Սուրենի՞ն, թե Վարդանի՞ն։

Եթե մյուս ընտրանքային հարցումների դեպքում խոսողը որպես պատասխան սպասում է հարցման եզրերից որևէ մեկը, ապա այս դեպքում խոսողը չի բացառում, որ կարող է ստանալ մի շարք ուրիշ պատասխաններ, քան հարցման եզրերն են։

գ) Հ ա մ ե մ ա տ ա կ ա ն . կ ա մ ք ա ն հարցում

Համեմատական հարցումը կարող է ունենալ միայն երկու՝ այն էլ համեմատվող եզրեր։ Այս դեպքում խոսողը որպես ստանալիք պատասխան առաջ է քաշում ոչ միայն երկու անդամներ, այլև համեմատում է դրանք իրար հետ և իր կարծիքն է հայտնում, թե դրանցից որն է նախընտրելի։ Այսպիսի հարցման ժամանակ խոսողը մեծ մասամբ ստանում է իր ուղած պատասխանը։ Օրինակ՝ Ավելի լավ չե՞ գնալ կինո, քան թատրոն։ Գերադասելի չե՞ կարդալ, քան գրել։

Երբ համեմատական հարցման մեջ օգտագործվում է ոչ լսելապակցությունը, ապա որպես ստանալիք պատասխան վերցվում է ոչ թե առաջին անգամը, այլ վերջինը։ Օրինակ, Ավելի լավ չե՞ գնալ ոչ թե կինո, այլ թատրոն»։

Այսպիսի հարցումներն ունեն ավելի կայուն շարահյուսական կառուցվածք և պարտադիր կերպով ձևավորվում են «ավելի լավ չէ» «լավ չէ» «ավելի ձեռնտու չէ» «գերադասելի չէ» և նման կապակցությունների միջոցով։

Համեմատական հարցումն առաջին հայացքից նմանվում է ընտրանքային հարցմանը, բայց դա խաբուսիկ նմանություն է։ Սրանում համոզվելու համար վերցնենք նրանց համապատասխան պատմողական նախադասությունները «Գնալու ես կինո», թե թատրոն» ընտրանքային հարցմանը համապատասխանող

պատմողականը կլինի՝ «Գնալու եմ կինո կամ թատրոն», իսկ «Իսկ ավելի լավ չե՞ քնալ կինո, քան թատրոն» համեմատական հարցմանը համապատասխանող պատմողականը կլինի՝ «Ավելի լավ է քնալ կինո, քան թատրոն» նախադասությունը:

դ) Լրացուցիչ կամ իսկ հարցում

Լրացուցիչ հարցումից օգտվում է և՛ խոսողը, և՛ խոսակիցը: Խոսողի կողմից օգտագործվող լրացուցիչ հարցմանը միշտ նախորդում է ինչ-որ ուրիշ հարցում (հաճախ լրացուցիչ հարցմանը կարող է նախորդել նաև պատմողական տիպի նախադասություն): Այն կազմում է նախորդ հարցման շարունակությունը:

Լրացուցիչ հարցման միջոցով խոսողը կամենում է ստանալ լրացուցիչ, օժանդակ տեղեկություն: Խոսողն օգտագործում է լրացուցիչ հարցում այն ժամանակ, երբ չի ուղում կրկնել նախորդ հարցումն ամբողջությամբ, և քանի որ լրացուցիչ հարցումը տարբերվում է նախորդից միայն հարցակիր անդամով և ավելի կարճ է, ուստի խոսողը դիմում է այսպիսի հարցման: Լրացուցիչ հարցումը կարող է ունենալ ինչպես մեկ, այնպես էլ երկու և ավելի անդամ:

Լրացուցիչ հարցումը չինում է երկու տեսակ.

1) Ստորոգյալով հարցում, երբ կրկնվում է նախորդ հարցման միայն ստորոգյալը՝ դրական կամ ժխտական ձևով: Երբ լրացուցիչ հարցման մեջ վերցվում է նախորդի ստորոգյալը ժխտված ձևով, ապա նրան տրվում է միայն ոչ պատասխան, իսկ երբ վերցվում է նախորդի ստորոգյալը դրական ձևով, ապա տրվում է միայն այդ պատասխան, օրինակ.

Ա) Ամբողջ օրն աշխատելո՞ւ ես:

Բ) Այո (ոչ):

Ա) Իսկ չե՞ս հանգստանալու:

Բ) Ոչ:

Ա) Այսօր չե՞ս գալու:

Բ) Ոչ:

Ա) Իսկ զանգահարելո՞ւ ես:

Բ) Այո:

2) Ոչ-ստորոգյալով հարցում, երբ լրացուցիչ հարցման մեջ կարող են վերցվել նախորդ հարցման մյուս բոլոր անդամները, բացի ստորոգյալից: Այսպիսի լրացուցիչ հարցմանը իբրև պատասխան տրվում է հարցակիր բառ-+նույնպես կապակցությունը կամ էլ անորոշ պատասխան: Օրինակ՝

Ա. Վարդանը եկե՞լ է:

Բ. Եկել է:

Ա. Իսկ Սուրեհներ:

Բ. Սուրեհներ նույնպես:

Խոսակցի կողմից օգտագործվող լրացուցիչ հարցումը միշտ հաջորդում է խոսողի պատմողական խոսքին, ինչպես՝

Ա. Աղջիկները եկան:

Բ. Իսկ տղաները:

Ա. Տղաներն էլ շուտով կգան:

Կ ց ո ղ ա յ ի ն կ մ չ է հարցում

Կցորդային հարցումն իր հերթին ևս բաժանվում է մի շարք ենթատեսակների.

1) Չէ կցորդով հարցման միջոցով խոսողն ուղում է իմանալ խոսակցի կարծիքն այն երևույթի, գործողության կամ իրողության մասին, որը նշված է հարցման առաջին շարույթի մեջ: Սովորաբար խոսողը ցանկանում է, որպեսզի խոսակիցը հաստատի իր ասածը, համաձայնվի իր առաջադրության հետ: Որպես կանոն խոսողը գիտի, թե խոսակիցն ինչ պատասխան է տալու, ինչպիսի կարծիք է հայտնելու: Խոսակցի կարծիքը մեծ մասամբ համընկնում է նրա սպասածի հետ: Օրինակ. Ի՞նչ սիրելի աղջիկ է, չէ՞ (ԱՀ): Հետո դուրս եկավ, չէ՞ (ԴԴ): Ձմեռը քո խոտը շուտ վերջացավ, չէ՞ (ՀՄ): Ի՞նչ գիշեր է, չէ՞ (ՎՊ): Այս ես ուզում ասել, չէ՞ (ՎՊ): Այդ պիտի ասեիր, չէ՞ (ԱՀ): Լավ բան հնարեցի, չէ՞ (ՀՄ): Ամեն աշխատանք մի նպատակ ունի, չէ՞ (ՍԶ):

2) Այդպես չէ կցորդով հարցումը համարյա ունի նույն իմաստային նշանակությունը, որպիսին ունի չէ կցորդով հարցումը:

Այս դեպքում խոսողն ավելի շատ է ուզում, որ իր մտածած և հայտնած միտքը ավելի նման լինի դիմացինի այդ երևույթի մասին ունեցած մտքի հետ: Այս նախադասությամբ խոսողը հարցման հետ միաժամանակ հորդորում է դիմացինին, որպեսզի նա համաձայնվի իր հաղորդածի հետ: Դիտարկված խմբի մեջ են մտնում նաև այնպես չէ՞ և այսպես չէ՞ կցորդներով հարցումները, օրինակ՝ Այսօր մեղ մոտ ես ճաշելու, այդպես չէ՞: Դու դարձյալ կհաս ինձ մոտ, այնպես չէ՞: Մենք վանդակները երեկ ձեզ հանձնեցինք տանելու, այնպես չէ՞ (Մ):

3) Ի՞նչ է կցորդով հարցումից խոսակիցը օգտվում է այն դեպքում, երբ խոսողը ինչ-որ բան է ասել կամ կատարել, որն

իր սրտով չէ: Այսպիսի հարցումով նա արտահայտում է և՛ զարմանք, և՛ չկամեցողություն, և՛ անսպասելիություն խոսողի ասածի կամ կատարածի նկատմամբ: Զարմանքի և անսպասելիության երանգը ավելի շատ է: Այսպես, երբ հյուրը վեր է կենում և սկսում է վերարկուն հագնել, տան տերը հարցնում է «Տուն էս գնում, ի՞նչ է»: Կամ երբ հյուրը ասում է «Ուզում եմ գնալ» տան տերը պատասխանում է. «Այսքան շուտ գնում ես, ի՞նչ է»:

Շատ հաճախ խոսողը խոսակցի նպատակի մասին իմացած է լինում մեկ ուրիշից և հանդիպելով նրան դիմում է նշված հարցումով, որը հանդես է գալիս որպես խոսակցության սկիզբ, օրինակ՝ Քննությունից կտրվել ես, ի՞նչ է: Մոսկվա ես գնում, ի՞նչ է: Մեքենա ես գնում, ի՞նչ է: Գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է:

Ի՞նչ է—ն կարող է հանդես գալ նաև հարցման սկզբում, որից հարցումը ոչ մի իմաստային փոփոխություն չի կրում, ինչպես՝ Ի՞նչ է, շատ ես շարժարկել: Ի՞նչ է, մորդ չես տեսել: Ի՞նչ է, ուզում ես գնալ:

4) Ճիշտ է կցորդով հարցման միջոցով խոսողը դիմում է խոսակցին ասելով՝ տես ես քո կամ ինչ—որ երևույթի մասին գիտեմ հետևյալը և ուզում եմ, որ դու հիմա հաստատես, ճշտես իմ ասածը, օրինակ՝ Այսօր դասերդ չես պատրաստել, ճի՞շտ է: Դու առաջինը խփեցիր, ճի՞շտ է: Իմ ասածի պես եղավ, ճի՞շտ է:

5) Ճիշտ չէ՞ կցորդով հարցումը շատ քիչ բանով է տարբերվում նախորդից: Այս դեպքում խոսողը քիչ ավելի համոզված է պահանջում, որ դիմացինը հաստատի իր ասածը, օրինակ՝ Մեր ֆուտբոլիստները, հաղթեցին, ճիշտ չէ՞: Առավոտ շուտ ես դուրս եկել, ճիշտ չէ՞:

6) Հա կցորդով հարցում—Երբ դիմացինը ինչ—որ բան է ասել և խոսողը մեկ անգամ ևս ուզում է համոզվել իր լսածի մեջ. միաժամանակ ցանկանալով իմանալ՝ արդյո՞ք դիմացինը վստահ է իր հաղորդած մտքի իրավացիության մեջ, օրինակ՝ Մոռացել ես մամայիդ, հա՞ (ԴԴ): Ժաքոյի գործարանն ես գնում, հա՞: Ասում ես շատ եմ վազել, հա՞: Սարից ես գալիս, հա՞:

Այս հարցումները կարող են արտահայտել նաև հեգնանք, ինչպես՝ Քարավան կտրելու գիշեր ա, հա՞: Զես կարենում շնչել, հա՞: Գլուխդ պտտվում է, հա՞:

7) Հը կցորդով հարցում—Հը—ն կարող է ավելանալ և ինչու—որ, և այն—ոչ հարցումների վերջում: Բայց ավելի հաճախ այն ավելանում է այն—ոչ հարցման վերջում և արտահայտում է նույն

իմաստը, ինչ հա կցորդով հարցումը (շատ քիչ տարբերությամբ): Օրինակ՝ Բալը թանգ է, հը՞ (ՀԹ): Մհերը քեզ դուր չի գալիս, հը՞ (ՍՁ): Շորերը բերեցիր, հը՞: Աշոտի հետ գնացիր, հը՞: Այլևս չես հնալու, հը՞: Երբ հը՞-ն ավելանում է ինչու-որ հարցման վերջում, ապա այդ նշանակում է, որ խոսողը գիտի, որ դիմացինը ինչ-որ բան է ուզում ասել, ուստի տալիս է այդ հարցումը որպեսզի շուտ իմանա նրա կարծիքը, օրինակ՝ Ի՞նչ ես ասում, հը՞: Ո՞ւմ ես ուզում տեսնել, հը՞: Դու մեզանից ինչո՞ւ ես լավը, հը՞ (ՎՊ): Երբեմն հը-ն կարող է հանդես գալ նաև հարցման սկզբում, ինչպես՝ Հը՞, չլինի թե զարմանում ես (ՀԹ): Հը՞, բարկանում ես դու (ՊԹ): Հը՞, հո չես խռովել ինձանից (ՍՁ):

Շատ հաճախ հարցման սկզբում կամ միջին մասում (առանց նախադասության հիմնական մասից դադարով անջատման) ավելանում է հո մասնիկը, որն ավելի է ուժեղացնում նախադասության հարցականությունը: Այն հարցմանը վերջից չի ավելանում, և նրա միակ գործառությունը հարցման ուժեղացումն է՝ ուրիշ ոչինչ: Այս մասնիկը ներմուծվում է միայն այս-ու-հ հարցման մեջ, ինչպես՝ Իմ թշնամին հո չե՞ս (ՀԹ): Բոլոր էջերը հո չենք մշակելու (ՍՁ): Հո հիվանդ չե՞ս (ՍՀ): Հո չենք սառի ամբողջ գիշեր (ՎՊ):

Այսպիսով, ժամանակակից հայերենի բոլոր հարցական նախադասությունները իրենց ենթատեսակներով կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով (աղյուսակ 1):

- ՀԱՐՑՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԲՆՈՒՅԹԻ

Ժամանակակից հայերենի հարցման դասակարգումը կատարելիս մենք նախապես հիմնվեցինք հարցական բառերի վրա՝ այդպիսի դասակարգումը ընդունելով որպես սկզբնական աստիճան: Նշենք, սակայն, որ միայն հարցական բառերի առկայության կամ բացակայության վրա հիմնվելով դասակարգում կատարելը բավարար չէ, որովհետև այդ կերպ հարցման էությունը լրիվ չի բացահայտվում:

Հարցման մասին ավելի լրիվ գաղափար է կազմվում, երբ դասակարգման հիմքում դրվում է նաև նրանց տրվող պատասխանների բնույթը:

Հակառակ ինչու-որ հարցման, ինչպես այս-ու-հ հարցումը, այնպես էլ եղանականիշ և առանց հարցական բառի հարցման մնացած ենթատեսակները, բացի ընտրանքային ու լրացուցիչ

Վերևում առանձնացված երկեզը ընտրանքային հարցումները մտնում են այդ/ոչ պատասխան պահանջող հարցման, իսկ բազմեզը ընտրանքային հարցումները՝ կոնկրետ բառային պատասխան պահանջող հարցման մեջ: Այսպես՝ «Դպրոց գնալո՞ւ ես, թե ոչ» հարցմանը կարելի է պատասխանել միայն ոչ կամ գնալու եմ, իսկ «Գնալո՞ւ ես թատրո՞ն, թե կինո» հարցմանը կարելի է տալ քառուճ կամ կինո պատասխանը:

Ավելի մանրամասն ուսումնասիրենք այս հարցումները: «Դպրոց գնալո՞ւ ես» հարցմանը կարելի է պատասխանել «Ոչ, չեմ գնալու»: Նման պատասխան կարելի է տալ նաև «Դպրոց գնալո՞ւ ես, թե ոչ» հարցմանը: «Ո՞ր ես գնում» հարցմանը կարելի է պատասխանել «Գնում եմ թատրոն» և նախորդի պես պատասխան հնարավոր չէ տալ: Նման պատասխան կարելի է տալ նաև «Կինո՞» ես գնում, թե թատրոն» հարցմանը:

Ինչպես տեսնում ենք, երկեզը ընտրանքային հարցումը ըստ պատասխանի լրիվ համընկնում է այդ-ոչ հարցման, իսկ բազմեզը՝ ինչու-որ հարցման հետ: միայն երկրորդ դեպքում խոսողը դիմացինի ուր գնալու մասին ոչ մի տեղեկություն չունի, իսկ առաջին դեպքում խոսողին հայտնի է, որ դիմացինը գնալու է է կամ կինո, կամ քառուճ, ուստի դիմում է այս հարցմանը՝ իր հարցումն ավելի կոնկրետացնելու համար:

Լրացուցիչ հարցումները նույնպես բաժանվում են այդ երկու մեծ խմբերի մեջ: Ոչ-ստորոգյալով լրացուցիչ հարցումը մտնում է կոնկրետ բառային պատասխան պահանջող հարցման, իսկ ստորոգյալով լրացուցիչ հարցումը՝ այդ/ոչ պատասխան պահանջող հարցման մեջ: Համոզվելու համար յուրաքանչյուրից բերենք մեկական օրինակ.

Ա. Հասմիկը քնե՞լ է:

Ա. Ամռանը մարզվելո՞ւ ես:

Բ. Քնել է:

Բ. Այո:

(1) Ա. Իսկ Արայի՞կը:


(2) Ա. Իսկ չե՞ս հանգստանալու:

Բ. Արայիկը նույնպես:

Բ. Ոչ:

Ինչպես տեսնում ենք, ոչ ստորոգյալով լրացուցիչ հարցման (1) պատասխանը նման է կոնկրետ բառային պատասխան պահանջող հարցմանը, իսկ ստորոգյալով լրացուցիչ հարցման (2) պատասխանը՝ այդ/ոչ պատասխան պահանջող հարցմանը: Ուրեմն, իրավացի է վերևում կատարված լրացուցիչ հարցման բաժանումը:

Հիմա, եթե կազմենք հարցումների աղյուսակը, հիմք ընդունելով հարցմանը տրվող պատասխանի բնույթը, ապա այն կլինի այսպիսին (աղյուսակ 2):



Կ ր կ ն ա հ ա ր ց ու մ

Մինչև այժմ ուսումնասիրությունը տարվել էր հիմք ունենալով հիմնականում վերևում առանձնացված 3-րդ կետը, այսինքն՝

Հարցում → պատասխան

Երբ ուշադրություն ենք դարձնում 5-րդ և 6-րդ կետերին, ապա գործ ենք ունենում կրկնահարցումների հետ, որտեղ կարևոր դեր է խաղում արդեն իրադրությունը: Կրկնահարցումը լինում է երկու տեսակ.

- 1) Կրկնահարցում խոսողի կողմից:
- 2) Կրկնահարցում խոսակցի կողմից:

Առաջինն օգտագործվում է այն ժամանակ, երբ խոսակիցը չսեղծելով կամ ինչ-որ պատճառով խոսողին չի պատասխանել, և խոսողը իր հարցման կրկնման միջոցով անպայման պատասխան է պահանջում դիմացինից, օրինակ.

Ա. Դասերդ սովորե՞լ ես:

Ա. Դասերդ սովորե՞լ ես:

Բ. Սովորել եմ:

խոսակիցը կրկնահարցումից օգտվում է այն ժամանակ, երբ իրեն ուղղված հարցումը բոլորովին չի լսել կամ կամենում է ճշտել իր լսածը կամ էլ համոզվել իր լսածի մեջ: Այստեղ հնարավոր է մի քանի դեպք:

ա) նախորդ հարցումը կրկնվում է ամբողջությամբ, օրինակ՝

Ա. Գյուղում եղե՞լ ես:

Բ. Գյուղում եղե՞լ եմ:

Ա. Այո:

բ) կրկնվում է նախորդ հարցման մի մասը՝ կամ անվանական կամ կամ բայական, օրինակ՝

Ա. Ընկերոջդ սիրո՞ւմ ես:

Բ. Ընկերոջս:

Ա. Այո:

Ա. Ընկերոջդ սիրո՞ւմ ես:

Բ. Սիրո՞ւմ եմ:

Բ. Այո:

գ) Երբ կրկնահարցումի մեջ օգտագործվում է որևէ դերանուն օրինակ՝

Ա. Կինո գնո՞ւմ ես:

Բ. Ո՞ւր ես գնում:

Ա. Կինո:

Ա. Գիրք կարդո՞ւմ ես:

Բ. Ի՞նչ:

Ա. Գիրք կարդո՞ւմ ես:

Բ. Այո:

Երբ ուշադրություն ենք դարձնում վերևում առանձնացված երկրորդ կետի վրա, ապա գործ ենք ունենում կրկնահարցումի մի այլ տեսակի հետ, որի դեպքում կրկնվում է նախորդ ասված ոչ թե հարցումը, այլ որևէ մեկ ուրիշ արտասանվածք: Այս դեպքում նույնպես կարող է կրկնվել ամբողջ նախորդ արտասանվածքը կամ նրա մի մասը՝ օրինակ՝

Ա. Վաղը թատրոն ենք գնալու:

Բ. Ի՞նչ:

Ա. Վաղը թատրոն ենք գնալու:

Ա. Վաղը թատրոն ենք գնալու:

Բ. Վաղը թատրոն ենք գնալու:

Ա. Այո:

Ա. Վաղը թատրոն ենք գնալու:

Բ. Ե՞րբ ենք թատրոն գնալու:

Ա. Վաղը:

Ճարտասանական հարցման ուսումնասիրության ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել նրա հետևյալ երկու կարևոր կողմերի վրա՝ 1) ձևական և 2) իմաստային:

Ըստ ձևական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի, ճարտասանական նախադասությունը հարցում է, իսկ ըստ իմաստի՝ հաստատական նախադասություն:

Սա այն միակ հարցական նախադասությունն է, որի դեպքում խոսողը հարյուր տոկոսով ենթադրում է իր հարցման պատասխանը: Ուրեմն կարող ենք ասել, որ ճարտասանական հարցական նախադասությունների միջոցով խոսողը պատասխան չի սպասում: Նա լավ գիտի իր հարցման պատասխանը, բայց օգտվում է ճարտասանական հարցումից, որովհետև այդ ձևով ավելի դիպուկ և արտահայտում իր միտքը:

Ճարտասանական հարցումները ինքնուրույն, այսինքն՝ միայն իրենց բնորոշ ձևական ցուցիչներ չունեն: Նրանք ձևավորվում են ինչպես՝ ինչու-ո՞ր, այնպես էլ այո-ոչ հարցական նախադասությունների միջոցով: Օրինակ՝ Ո՞վ չի սիրում լավ արարքը, լավ մարգին (ՀԹ): Ո՞ւմ չեն գայթակղել այդ աղչկա գեղեցիկ աչքերը: Բա տօվժիկի վրայից սառը ջուր կխմե՞ն:

3. ՀԱՐՑՄԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վերը ուսումնասիրված հարցատեսակներից մի քանիսը ինչպես առօրյա խոսքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են ավելի հաճախ և հարցմանը բաժին ընկնող հաղորդակցման հիմնական ծանրությունը վերցնում են իրենց վրա²¹: Դրանք հետևյալներն են.

- 1) Ո՞ւր ես գնում:
- 2) Տո՞ւն ես գնում, թե թատրոն:
- 3) Տո՞ւն ես գնում:
- 4) Տուն փո՞ռ՞ում ես:

²¹ Այս առթիվ հատուկ վիճակագրական ուսումնասիրություն չի կատարվել և մենք առաջնորդվում ենք մեր դիտումներով:

Այս առումով հետաքրքիր է իմանալ, թե ինչի՞ց դրդված է լեզուն ստեղծել նշված հարցատեսակները, ո՞րն է այն իմաստա-
յին նորությունը և գործառական յուրահատկությունը, որ սրան-
ցից յուրաքանչյուրը պարունակում է իր մեջ: Այսպիսի հարցա-
դրումը բնական է, որովհետև լեզվում ամեն ինչ պատճառաբան-
ված է և պատահական ոչինչ չի ստեղծվում:

Հարցադրման պահանջը գոյանում է այն դեպքում, երբ մի
բան լավ չգիտեն կամ բոլորովին չգիտեն և կամ մի բան լավ չեն
լսել, կամ բոլորովին չեն լսել և այլն: Ընդգծված հարցատեսակ-
ների տարբերության հիմքը մի բան լավ չիմանալու և բոլորովին
չիմանալու մեջ է: Նշված հարցատեսակների տարբերակումը (ինչ-
պես ընդհանրապես հարցատեսակների տարբերակումը) բխում
է աշխարհմբռնման մեջ վերոհիշյալ կողմնորոշումներից: Ար-
տաքին աշխարհի առարկաների և նրանց հարաբերությունների
մասին ինֆորմացիան հարցման մեջ արտացոլվում է հարցական
նախադասության անհայտ և հայտնի մասերի միջոցով, որոնց
նկատմամբ խոսողը ցուցաբերում է որոշակի՝ ընդ որում սուբ-
յեկտիվ վերաբերմունք: Բերված հարցատեսակներից մեկի ընտ-
րությունը կախված է նրանից, թե խոսողը հարցման հայտնի և
անհայտ անդամների նկատմամբ ինչ սուբյեկտիվ վերաբերմունք
ունի: Այս տեսակետից մեր առանձնացրած առաջին երեք հար-
ցատեսակների միջև տեղի է ունենում ներքին աստիճանական
անցում՝ պատասխանի որոշակիության (նրանց մեջ պարունա-
կած ինֆորմացիայի) նվազագույն աստիճանից մինչև առավե-
լագույնը: Խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը դրսևորվում է
այն բանում, թե նա ինչ չափով է ենթադրում իր հարցման պա-
տասխանը: Առաջին դեպքում խոսողը ենթադրում է, որ կստա-
նա մեկը հնարավոր պատասխանների անսահմանափակ քանա-
կությունից, երկրորդ դեպքում՝ երկու պատասխաններից մեկը,
իսկ երրորդ դեպքում՝ մեկ պատասխան: Առաջին դեպքում խո-
սողի ճանաչողական մոտեցումը արտահայտվում է հարցական
դերանվան միջոցով, երկրորդ դեպքում՝ հարցական հակադրու-
թյան և մասամբ էլ հարցական հնչերանգի, իսկ երրորդ դեպքում՝
միայն հարցական հնչերանգի: Այսպիսով, առաջին դեպքում խո-
սողը հարցման մեջ առաջ քաշված իրողության, եղելության կամ
անձի մասին ոչինչ չգիտի: Տրված հարցման սահմաններում նա
բնավ չի ենթադրում, թե ինչպիսին է լինելու հարցման պատաս-
խանը: Այսպիսի հարցումը կարող է ստանալ անթիվ (ո՞ր քանա-

կությամբ) պատասխաններ, այստեղ հանդես է դալիս անհայտ-
ների մի ողջ բազմություն²², «Ո՞ւր ես գնում» հարցումը և նրան
տրվող պատասխանները ունեն հետևյալ կաղապարային տեսքը.

$$\text{Ո՞ւր ես գնում} \longrightarrow \begin{array}{|l} a_1 \text{ Օպերա եմ գնում} \\ a_2 \text{ Թատրոն եմ գնում} \\ a_3 \text{ Բալետ եմ գնում} \\ \vdots \\ \vdots \\ a_{n-1} \text{ Խանութ եմ գնում} \\ a_n \text{ Տուն եմ գնում} \end{array}$$

Ու անորոշ քանակությունը նշանակում է ոչ թե հարցման մեջ բա-
ցակա անդամները, այլ հարցման՝ խոսողի կողմից ենթադրվող
հնարավոր պատասխանների քանակը:

«Տո՞ւն ես գնում» հարցման դեպքում խոսողը ենթադրում է,
որ իր հարցմանը կարող է տրվել մեկ պատասխան: Այնուամե-
նայնիվ, նա հատուտ համոզված չի դրանում, ուստի օգտվում է
հարցումից: Այս հարցման միջոցով խոսողը կամենում է ճշտել,
արդյո՞ք իր գիտեցածը համապատասխանում է իրականությանը:
«Տո՞ւն ես գնում» հարցման ժամանակ այն պատասխանը ստա-
նալու հավանականությունը կազմում է մոտավորապես 75 տո-
կոս, իսկ ոչ-ինք՝ 25 տոկոս. այլ կերպ ասած՝ այն-ն կազմում է
ամբողջի $\frac{3}{4}$ մասը, իսկ ոչ-ը՝ $\frac{1}{4}$ մասը: Եթե այն ստանալու
հավանականությունը նշանակենք P_{-1} , իսկ ոչ-ինք՝ P_{+1} , ապա
 $P_{-1} \approx \frac{3}{4}$ իսկ $P_{+1} \approx \frac{1}{4}$: Այս հարցման կաղապարային տեսքը
կլինի այսպիսին.

$$\text{Տո՞ւն ես գնում} \longrightarrow \begin{array}{|l} a_1 \quad \frac{3}{4} \quad \text{այո} \\ a_2 \quad \frac{1}{4} \quad \text{ոչ} \end{array}$$

²² Այստեղ երևույթը ֆենվում է զուտ տեսականորեն: Ձի բացառվում, որ որոշակի նպատակներից ելնելով՝ համապատասխան իրադրությունում խոսողը կարող է օգտվել Ու անհայտով հարցումից չնայած գիտի, որ իրեն տրվելու է երկու կաս՝ երեք հնարավոր պատասխաններից մեկը: Այս տեսակետից Ու անհայտով հարցումը մյուս բոլոր հարցումների փոխարեն կարող է օգտագործվել (որոշակի նպատակների դեպքում միայն), բայց հակառակը ճիշտ չէ:

Այսպիսի հարցումը անմիջականորեն կապված է «Ո՛ր ես գնում» հարցման հետ և բխում է նրանից: Այսպես, երբ դիտում ենք «Ո՛ր ես գնում» հարցման պատասխանները, ապա նկատում ենք, որ «Տո՛ւն ես գնում» հարցումը պոտենցիալ վիճակով պարունակվում է այդ պատասխանների մեջ: Ստացվում է, որ խոսողը «Տո՛ւն ես գնում» հարցումը կազմում է հիմնվելով «Ո՛ր ես գնում» հարցման պատասխաններից մեկի վրա: Նա այսպես է վարվում, որովհետև արդեն ձեռքի տակ ունի նախօրոք իրեն հայտնի որոշ ճշգրիտ տվյալներ: Ահա այս տվյալները ունենալով՝ խոսողը որոշակի իրադրային պայմաններում, հանդիպելով իր զրուցակցին անմիջապես իր մտքի պրիզմայի միջով անց է կացնում այդ տվյալները, ավտոմատ ձևով մշակում է դրանք և «Ո՛ր ես գնում» հարցման պատասխանների միջից ընտրում է միայն մեկ նախադասություն, ասենք՝ Ձո-ը Տուն եմ գնում և կազմում է «Տո՛ւն ես գնում» հարցումը: Այս կերպ խոսողը բազմիցս կոնկրետացնում է «Ո՛ր ես գնում» հարցումը և ը անհայտով հարցումից անցնում է 1 անհայտով հարցման: «Գնում ես օպերա՞, թե թատրոն» հարցումը արդեն երկու անհայտով հարցում է: Սա նույնպես անմիջականորեն կապված է «Ո՛ր ես գնում» հարցման հետ և ստացվում է նրանից: Երբ նայում ենք «Ո՛ր ես գնում» հարցման պատասխաններին, ապա նկատում ենք, որ «Գնում ես օպերա՞, թե թատրոն» հարցումն էլ է առկա նրա պատասխանների մեջ. դրանք են 21-ը՝ Օպերա եմ գնում և 22-ը՝ Թատրոն եմ գնում: Այսպիսով, ստացվում է, որ խոսողը «Գնում ես օպերա՞, թե թատրոն» ընտրանքային հարցումը կազմում է «Ո՛ր ես գնում» հարցման պատասխաններից:

Դարձյալ հարց է առաջանում՝ ինչո՞ւ. որովհետև այս անգամ նույնպես նախօրոք հայտնի են որոշ տվյալներ. 1) ասենք, խոսողը ինչ-որ մեկից նախապես իր զրուցակցի մասին իմացել կամ պատահաբար լսել է որոշակի տվյալներ և 2) խոսողը իր զրուցակցին լավ է ճանաչում և դիտի նրա նախասիրությունները, ասենք՝ նա լավ գիտի, որ իր զրուցակիցը մեծ մասամբ հաճախում է օպերա և թատրոն կամ ավելի շատ մրգերից սիրում է տանձ ու խնձոր և նրան համապատասխան պայմաններում հանդիպելիս՝ կհարցնի «Գնում ես օպերա՞, թե թատրոն» կամ «Տա՛նձ ես ուզում, թե խնձոր»: Ահա այս տվյալներն ունենալով՝ խոսողը որոշակի իրադրային պայմաններում, հանդիպելով իր զրուցակցին, արագ իր ուղեղի համապատասխան կենտրոններում հաշ-

վում է այդ տվյալները, ավտոմատ ձևով կարգավորում է դրանք և «Ո՛ւր ես գնում» հարցման պատասխանների միջից այս անգամ արդեն ընտրում է երկու նախադասություն, ասենք՝ a_1 -ը՝ Օպերա եմ գնում և a_2 -ը՝ Քատրոն եմ գնում պատասխանները և քերականական մեկ գործողությամբ փոփոխություն կատարելուց հետո՝ կազմում է «Գնում ես օպերա», թե թատրոն» ընտրանքային հարցումը: Այս ձևով խոսողը ավելի է կոնկրետացնում «Ո՛ւր ես գնում» հարցումը. օգնում է գիմացիին, որ նա ավելի շուտ և հեշտ պատասխանի, որովհետև իր հարցման մեջ արդեն առաջ է քաշել դիմացիինից սպասվող հնարավոր պատասխանները և զրուցակցին մնում է միայն ընտրել այդ պատասխաններից մեկնումեկը, և ոչ թե մոլորվել «Ո՛ւր ես գնում» հարցման անթիվ քանակությամբ պատասխանների մեջ:

«Գնում ես օպերա» թե թատրոն» նախադասությունը երկու անհայտով հարցում է, որովհետև խոսողը ենթադրում է, որ իր հարցման պատասխանները հավասարապես կարող են լինել երկուսը a_1 -ը՝ Օպերա եմ գնում և a_2 -ը՝ Քատրոն եմ գնում դրանով իսկ Ու անհայտով հարցումից անցում է կատարում երկու անհայտով հարցման: Այս հարցումը ունի հետևյալ կաղապարային տեսքը.

Գնում ես օպերա, թե թատրոն $\longrightarrow$ a_1 օպերա եմ գնում
 a_2 թատրոն եմ գնում

Այս դեպքում $P_{a_1} = \frac{1}{2}$ ալիսինքն՝ և՛ $P_{a_1} = \frac{1}{2}$, և՛ $P_{a_2} = \frac{1}{2}$,

$i = 1, 2$:

Խոսողը կարող է «Ո՛ւր ես գնում» հարցման պատասխաններից ընտրել նաև երեքը՝ a_1 , a_2 , a_3 և կազմել, «Գնում ես օպերա», թատրոն, թե բալետ» եռեզր ընտրանքային հարցումը, այսինքն՝ Ու անհայտով հարցումից անցնել երեք անհայտով հարցման: Այս դեպքում «Ո՛ւր ես գնում» հարցումը ավելի քիչ է կոնկրետանում, քան երկեզր ընտրանքային հարցման ժամանակ:

Այս հարցման կաղապարային տեսքը կլինի այսպիսին.

Գնում ես օպերա, թատրոն, թե բալետ $\longrightarrow$ a_1 օպերա եմ գնում
 a_2 թատրոն եմ գնում
 a_3 բալետ եմ գնում

$$\text{Հիմա արդեն } Pa_1 = \frac{1}{3}, \text{ այսինքն՝ } Pa_1 = \frac{1}{3}, Pa_1 = \frac{1}{3},$$

$$Pa_i = \frac{1}{3}, i=1, 2, 3: \text{ Կարող ենք ընտրել չորսը՝ } a_1, a_2, a_3, a_4$$

պատասխաններ ե կազմել «Գնում ես կինո», թատրոն, բալետ, թե համերգ» քառեզր ընտրանքային հարցումը, այսինքն Π անհատով հարցումից անցնել չորս անհատով հարցման, Այս դեպքում, «Ո՞ւր ես գնում» հարցումն ավելի քիչ է կոնկրետանում, քան նախորդի ժամանակ, և $Pa_i = \frac{1}{4}, i=1, 2, 3, 4$: Կարող ենք

ընտրել հինգ, վեց ե այլ պատասխաններ ու համապատասխանաբար անցնել Π անհատով հարցումից հինգ անհատով, վեց անհատով, յոթ անհատով և այլ հարցումների: Վերջապես կարող ենք ընտրել $\Pi-2$ ե Π պատասխաններ: Դրանք ստանալու հավանականությունները համապատասխանաբար կլինեն այսպիսին՝

$$Pa_i = \frac{1}{5}, i=1, 2, 3, 4, 5; Pa_i = \frac{1}{6}, i=1, 2, 3, 4, 5, 6; Pa_i = \frac{1}{7},$$

$$i=1, 2, 3, 4, 5, 6, 7, \dots, Pa_i = \frac{1}{n-1}, i=1, 2, 3, \dots, n-2, n-1$$

$$\text{և վերջապես } Pa_i = \frac{1}{n}, i=1, 2, 3, \dots, n-1, n:$$

Հետաքրքիր է, որ Π անհատով ընտրանքային հարցումը արդեն հավասարվում է «Ո՞ւր ես գնում» հարցմանը, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով²³.

Գնում ես $L_1^* + L_2^* + L_3^* + \dots + L_{n-1}^*$ թե $L_n = \Pi$ ևս գնում:

Փաստորեն ստացվում է, որ լեզուն նույն երևույթն արտահայտելու համար ունի երկու հնարավորություն, բայց այդ հնարավորություններից միայն մեկն է կենսական և գործնական, իսկ մյուսը ունի լոկ պոտենցիալ հնարավորություն կատարելու «Ո՞ւր ես գնում» հարցման գործառույթը:

Ուրեմն, երբ ընտրանքային հարցման ընտրույթների թիվը 4-ից, 5-ից անցնում է, ապա լեզուն այդ միջուկը լցնելու համար օգտագործում է ոչ թե տեսականորեն հնարավոր է 6 անհատով,

²³ L -ով նշանակված են տեղ ցույց տվող բոլոր բառերը:

7 անհայտով,..., 15 անհայտով,..., $n-2$, $n-1$ և n անհայտով ընտրանքային հարցում, այլ ընտրում է այնպիսի մի դատարկ ընդհանուր բառ, որը փոխարինում է այդ բոլորին: Փոխանակ իրար հետևից հարցականորեն կրկնելու այդ եզրերը՝ օգտագործում է այդ դատարկ ընդհանուր բառերից մեկը:

Հայերենում դատարկ ընդհանուր բառերի ֆունկցիա են կատարում հարցական դերանունները:

Կեզունեքում հարցական բառերի թիվն ընդհանրապես սահմանափակ է: Հայերենում այդ թիվը, եթե հաշվի առնենք սրանց միայն ուղիղ ձևերը՝ հավասար է 23-ի, իսկ եթե ընդգրկենք նաև նրանց թեքված ձևերը, այն հասնում է 62-ի: Այսպիսով, ինչու-որ հարցման ընդհանուր տեսքը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևի միջոցով²⁴.

$$(1) \quad R_e + C_{pt} + A_i + P_x + V_{xy} + C_{qt}$$

Բանաձևի մեջ R -ով նշանակված են հարցական դերանունները, C -ով այն ցանկացած առարկա, որ կարող են հանդես գալ այդ դիրքերում, A -ով օժանդակ բայերը, P -ով՝ անձնական դերանունները, V -ով՝ ստորոգյալի բուն բայական մասերը: Իսկ e -ը, i -ն, p -ն, z -ը, x -ը, y -ը, i -ն և q -ն այն հնարավոր արժեքներն են, որոնք ընդունում են R , C , A , P և V փոփոխական մեծությունները:

Բանաձևի մեջ R -ը հարցական դերանունների միայն ուղիղ ձևերի համար ընդունում է $e=1, 2, 3, \dots, 23$ արժեքները, իսկ թեքված ձևերի հետ միասին՝ $e=1, 2, 3, \dots, 62$ արժեքները: C -ն ընդունում է $P=1, 2, 3, \dots, b$ արժեքները: A -ն ընդունում է $i=0, 1, 2, 3, \dots, 16$ արժեքները: P -ն ընդունում է միայն ուղիղ ձևերի համար $z=0, 1, 2, 3, \dots, 8$, իսկ թեքված ձևերի հետ միասին $z=0, 1, 2, 3, \dots, 47$ արժեքները: V -ն ընդունում է $x=0, 1, 2, \dots, m$ արժեքները, իսկ յուրաքանչյուր x -ի արժեքին համապատասխանում է $y=1, 2, 3, \dots, 24$ արժեք:

²⁴ Բանաձևի մեջ հաշվի չեն առնվում այն դեպքերը, երբ հարցման սկզբում գործածվում է որևէ շաղկապ, ասենք՝ «եվ ինչու՞ նա չեկավ», «Բայց ե՞րբ է գալու», «Սակայն ո՞վ կարող է փոխարինել նրան» և այլն: Այս դեպքերը հաշվի չեն առնվում 1) այն պատճառով, որ և՛ նրանցով, և՛ առանց նրանց հարցումը նույն իմաստն է արտահայտում, 2) սրանք չեղվում են ընդհանուր օրինաչափությունից: Չեն հաշվի առնվում նաև այն դեպքերը, երբ հարցման վերջում հանդես է գալիս ուր շաղկապը, ասենք՝ «Ի՞նչ ես ասում որ»:

նշենք նաև, որ p -ի q -ի յուրաքանչյուր արժեքին համապատասխանում է 1, 2, 3, ..., 10 արժեք:

Գրենք R -ի, A -ի, P -ի (աղյուսակ 3), V -ի և C -ի (աղյուսակ 4) արժեքները: R -ի և P -ի արժեքներից վեցենք միայն ուղիղ ձևերը.

Աղյուսակ 3

R		A		P
$R_1 = a^*q$	$R_{13} = \text{ինչո՞ւ}$	$A_0 = o$	$A_{12} = \text{էի՞ն}$	$P_0 = 0$
$R_2 = a^*u$	$R_{14} = \text{որչա՞նք}$	$A_1 = \text{եմ}$	$A_{13} = \text{պիտի}$	$P_1 = \text{ես}$
$R_3 = b^*p$	$R_{15} = \text{ինչքա՞ն}$	$A_2 = \text{ես}$	$A_{14} = \text{պե՞տք է}$	$P_2 = \text{դու}$
$R_4 = \text{որաե՞նք}$	$R_{16} = \text{որքա՞ն}$	$A_3 = \text{է}$	$A_{15} = \text{կ}$	$P_3 = \text{նա}$
$R_5 = \text{ինչպե՞ս}$	$R_{17} = \text{ինչա՞նք}$	$A_4 = \text{ե՞նք}$	$A_{16} = \text{մի}$	$P_4 = \text{մենք}$
$R_6 = a^*p$	$R_{18} = \text{ո՞ր}$	$A_5 = \text{եք}$		$P_5 = \text{դուք}$
$R_7 = \text{ի՞նչըն}$	$R_{19} = \text{ինչպիտի՞}$	$A_6 = \text{են}$		$P_6 = \text{նրանք}$
$R_8 = \text{քանո՞ւր}$	$R_{20} = \text{որպիտի՞}$	$A_7 = \text{էի}$		$P_7 = \text{ինքը}$
$R_9 = \text{ինչպիտի՞ն}$	$R_{21} = \text{ո՞րեքորդ}$	$A_8 = \text{էիք}$		$P_8 = \text{իրենք}$
$R_{10} = \text{որպիտի՞ն}$	$R_{22} = \text{քանի՞ն}$	$A_9 = \text{էի}$		
$R_{11} = \text{ինչո՞ւմ (ն)}$	$R_{23} = \text{քանի՞ք}$	$A_{10} = \text{էինք}$		
$R_{12} = \text{ի՞նչ}$	$R_{23} = \text{քանի՞ք}$	$A_{11} = \text{էիք}$		

Հարմարության և բանաձևի հեշտ հասկանալու համար օժանդակ բայերի խմբի մեջ ենք մտցնում նաև պիտի և կ եղանակիչները ու մի արգելականը. մանավանդ որ այս եղանակիչները և մի-ն օժանդակ բայերի պես դրվում են բայից անմիջապես առաջ, յ-ն 1-ից մինչև 12 արժեքների համար ընդունում է նաև բացասական արժեքները, այսինքն՝

$$A_{-1} = \text{չեմ}, A_{-2} = \text{չես}, \dots, A_{-12} = \text{չէին}:$$

Դժվար չէ նկատել, որ $A_{-16} = 0$, այսինքն՝ բացասական մասնիկի ժխտումից ստանում ենք դրական ձև:

Աղյուսակ 4

V		C	
$V_0 = 0$	$V_{6y} = \text{գնալ}$	$C_0 = o$	$C_{(n-1)t} = \text{խանութ}$
$V_{1y} = \text{գնալ}$	$V_{7y} = \text{ժպտալ}$	$C_{1t} = \text{օպերա}$	$C_{nt} = \text{տուն}$
$V_{2y} = \text{գրել}$		$C_{2t} = \text{թատրոն}$	
$V_{3y} = \text{կարդալ}$		$C_{3t} = \text{բալետ}$	
$V_{4y} = \text{քնել}$		$C_{4t} = \text{համերգ}$	
$V_{5y} = \text{ապրել}$	$V_{(x-1)y} = \text{խմել}$		$C_{(b-1)t} = \text{վաղը}$
	$V_{xy} = \text{հարբել}$		$C_{bt} = \text{այսօր}$
			

Բացի դրոյից, x -ի ցանկացած արժեքի դեպքում V -ն ունենում է ե խոնարհման բայերի համար $y=24$ արժեք, իսկ w խո-

նարհման բայերի համար $\gamma=25$ արժեք: C -ն, բացի զրոյից, P -ի ցանկացած անգամի համար ունենում է t -ի 10 արժեքը: $x=2$ և $p=6$ դեպքում V -ն և C -ն կստանան հետևյալ արժեքները (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

V			C
$V_{21} = \text{գրուվ}$	$V_{211} = \text{գրիր}$	$V_{221} = \text{գրեմ}$	$C_{61} = \text{գրեք}$
$V_{22} = \text{գրել}$	$V_{212} = \text{գրեցեք}$	$V_{222} = \text{գրեինք}$	$C_{62} = \text{գրեի}$
$V_{23} = \text{գրելու}$	$V_{213} = \text{գրեմ}$	$V_{223} = \text{գրեիք}$	$C_{63} = \text{գրեից}$
$V_{24} = \text{գրած}$	$V_{214} = \text{գրես}$	$V_{224} = \text{գրեին}$	$C_{64} = \text{գրեով}$
$V_{25} = \text{գրեցի}$	$V_{215} = \text{գրի}$		$C_{65} = \text{գրեուվ}$
$V_{26} = \text{գրեցիր}$	$V_{216} = \text{գրեսք}$		$C_{66} = \text{գրեեր}$
$V_{27} = \text{գրեց}$	$V_{217} = \text{գրեք}$		$C_{67} = \text{գրեերի}$
$V_{28} = \text{գրեցինք}$	$V_{218} = \text{գրեն}$		$C_{68} = \text{գրեերից}$
$V_{29} = \text{գրեցիք}$	$V_{219} = \text{գրեի}$		$C_{69} = \text{գրեերով}$
$V_{210} = \text{գրեցին}$	$V_{220} = \text{գրեիր}$		$C_{610} = \text{գրեերուվ}$

Եթե (1) բանաձևի մեջ հաշվի առնենք, որ P -ն մեծ մասամբ չի օգտագործվում (P -ն նշվում է միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է շեշտել գործողություն կատարող անձին) և ընդունենք հավասար 0 -ի, ապա բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$(2) \quad R_e + C_{pt} + A_i + V_{xy} + C_{qt} - \Pi^* \text{ը դասին ևս գնացել այսօր:}$$

Ընդ որում, այս բանաձևը օգտագործվում է միայն $e=17, 18, \dots, 23$ արժեքների դեպքում: $e=1, 2, \dots, 11$ արժեքների դեպքում (2) բանաձևը ստանում է հետևյալ տեսքը.

$$(3) \quad R_e + A_i + V_{xy} + C_{qt} - \Pi^* \text{ը ևս գնալու այսօր:}$$

$e=12, 13, \dots, 17$ արժեքների դեպքում հարցումը կարող է հանդես գալ և (2), և (3) բանաձևերի տեսքով.

$$R_e + C_{pt} + A_i + V_{xy} + C_{qt} - \Pi^* \text{նչ գիրք ևս գնել խանութից:}$$

$$R_e + A_i + V_{xy} + C_{qt} - \Pi^* \text{նչ ևս գնել խանութից:}$$

Հաճախ (3) բանաձևի մեջ $V=0$ և բանաձևը ընդունում է հետևյալ տեսքը.

$$(4) \quad R_e + A_i + C_{qt} - \Pi^* \text{ը է ընկերդ:}$$

$e=1$ և $i=3$ արժեքների դեպքում այս բանաձևը իրական է մյուս փոփոխական մեծությունների ցանկացած արժեքների դեպքում:

8

1

11

1

1

Վերջապես (1) բանաձևը կարող է հանդես գալ նաև այսպիսի տեսքով.

$$(13) \quad R_e + C_{pt} + A_l + P_z + C_{qt} + V_{xy} - \Pi^* \text{ ր սենյակում ևս գուայսօր քննելու:}$$

Եթե $C_{qt} = B + D$ ապա (2) բանաձևում B -ն և D -ն կարող են հանդես գալ այն բոլոր դիրքերում, ուր հանդիպում է C_{qt} -ն: Այսպիսով (2) բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$(14) \quad B + R_e + C_{pt} + A_l + V_{xy} + D - \text{Այսօր } \Pi^* \text{ ր խանութից ևս գնել գիրքը:}$$

Այս բանաձևի մեջ հնարավոր է B -ի կամ D -ի այնպիսի տեղափոխություն, ինչպիսին հնարավոր է C_{qt} -ի հետ: Ընդ որում բացի հետևյալ դեպքից, մնացած բոլոր դեպքերում եթե մեկը տեղափոխվում է, ապա մյուսը մնում է անշարժ.

$$(15) \quad B + R_e + C_{pt} + A_l + D + V_{xy} - \text{Այսօր } \Pi^* \text{ ր խանութից ևս գիրքը գնել:}$$

(3) բանաձևի մեջ C_{qt} -ն կարող է տեղափոխվել միայն R -ից և V -ից առաջ: Այս դեպքում բանաձևերը կընդունեն այսպիսի տեսք.

$$(16) \quad C_{qt} + R_e + A_l + V_{xy} - \text{Այսօր } \Pi^* \text{ ր ևս գնալու:}$$

$$(17) \quad R_e + A_l + C_{qt} + V_{xy} - \Pi^* \text{ ր ևս այսօր գնալու:}$$

Եթե (3) բանաձևի մեջ $C_{qt} = B + D$ ապա այսպիսի տեղափոխման կարող է ենթարկվել կա՛մ B -ն, կա՛մ D -ն.

$$(18) \quad B + R_e + A_l + V_{xy} + D - \text{Այսօր } \Pi^* \text{ ր ևս գնալու տանից:}$$

$$(19) \quad R_e + A_l + B + V_{xy} + D - \Pi^* \text{ ր ևս այսօր գնալու տանից:}$$

Եթե (2) բանաձևի մեջ X -ը և Y -ը հավասար են 0 -ի, ապա այն ընդունում է հետևյալ տեսքը. ընդ որում բանաձևը իրական է $2 = 12, 13, \dots, 23$ արժեքների դեպքում.

$$(20) \quad R_e + C_{pt} + A_l + C_{qt} - \text{Ի՞նչ մարդ է եկողը:}$$

Այն, որ հարցական դերանունները բաժանվում են երեք խմբի և գործածվում են ըստ (2) կամ (3) բանաձևերի կամ և մեկով, և մյուսով, բացատրվում է նրանց գործառութային²⁵ Առաջին խմբի մեջ ($e=1, 2, \dots, 11$) մտնում և ըստ (3) բանա-

²⁵ Հարցական դերանունների գործառությունը մանրամասն ուսումնասիրել է Գ. Զահուկյանը (Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսութային հիմունքները, Երևան, 1974, էջ 314—317, 371—379, 447—449):

ձևի հանդես են գալիս գոյականական և մակբայական (միայն տեղի, ժամանակի և ձևի) գործառություն ունեցող հարցական դերանունները: Երկրորդ խմբի մեջ ($e=12, 13, \dots, 17$) մտնում և ըստ (2) ու (3) բանաձևերի հանդես են գալիս գոյականական (ի՞նչ) և մակբայական (արդեն նպատակի և չափ ու քանակի) գործառություն ունեցողները, իսկ երրորդ խմբի մեջ ($e=18, 19, \dots, 20$) մտնում և ըստ (2) բանաձևի հանդես են գալիս միայն ածականական գործառություն ունեցողները: Նշենք, որ ի՞նչ-ը մտնում է 2-րդ խմբի մեջ, որովհետև հանդես է գալիս նաև ածականի՝ իրեն ոչ բնորոշ գործառությամբ: Առաջին խմբի մեջ մըտնող ռ՞վ դերանվան ռ՞ւմ թեքված ձևի դեպքում տեղի է ունենում գործառության ընդլայնում: Այն կարող է հանդես գալ և անկախ գործառությամբ՝ ըստ (3) բանաձևի (Ո՞ւմ ես տալու գիրքը), և կախյալ գործառությամբ՝ ըստ (2) բանաձևի (Ո՞ւմ գիրքն ես տալու): Երկրորդ խմբի մեջ մտնող ի՞նչ դերանվան ինչի՞ թեքված ձևի դեպքում տեղի է ունենում՝ գործառության նեղացում: Այն հանգես է գալիս միայն կախյալ գործառությամբ՝ ըստ (2) բանաձևի (ինչի՞ ոտքն ես կոտրել):

Այժմ հարցատեսակները ներկայացնենք ըստ աստիճանական անցման և նվազման.

1) Ունհայտով հարցում.

$$R_2 + A_2 + V_{11} \longrightarrow \begin{vmatrix} a_1 & C_{11} + A_1 + V_{11} \\ a_2 & C_{21} + A_1 + V_{11} \\ . & . \\ . & . \\ . & . \\ a_{n-1} & C_{(n-1)1} + A_1 + V_{11} \\ a_n & C_{n1} + A_1 + V_{11} \end{vmatrix}$$

Տեղագրելով համապատասխան արժեքները կստանանք.

$$\text{Ո՞ւր ես գնում} \longrightarrow \begin{vmatrix} a_1 & \text{Օպերա եմ գնում} \\ a_2 & \text{Թատրոն եմ գնում} \\ a_3 & \text{Բալետ եմ գնում} \\ . & . \\ . & . \\ . & . \\ a_{n-1} & \text{Խանութ եմ գնում} \\ a_n & \text{Տուն եմ գնում} \end{vmatrix}$$

2) $n-1$ անհայտով հարցում—Այս դեպքում խոսողը n անհայտով հարցման միջից բացառում է նրա պատասխաններին մեկը և ենթադրում, որ բացի այդ մեկից կստանա մնացած բոլոր հնարավոր պատասխանները.

$$V_{11} + A_2 + C_1^* + C_3^* + \dots + C_{n-2}^*, \text{ թե } C_{n-1} \rightarrow \begin{array}{l} a_1 \quad C_{11} + A_1 + V_{11} \\ a_2 \quad C_{21} + A_1 + V_{11} \\ a_3 \quad C_{31} + A_1 + V_{11} \\ \vdots \\ a_{n-2} \quad C_{(n-2)1} + A_1 + V_{11} \\ a_{n-1} \quad C_{(n-1)1} + A_1 + V_{11} \end{array}$$

Արժեքները տեղադրելով կստանանք.

$$\text{Գնում ես օպերա}^*, \dots, \text{դպրո}^*, \text{թե խանութ} \rightarrow \begin{array}{l} a_1 \quad \text{Օպերա եմ գնում} \\ a_2 \quad \text{Թատրոն եմ գնում} \\ a_3 \quad \text{Բալետ եմ գնում} \\ \vdots \\ a_{n-2} \quad \text{Դպրոց եմ գնում} \\ a_{n-1} \quad \text{Խանութ եմ գնում} \end{array}$$

Կարող է բացառվել ցանկացած անդամ, բայց բացառումը կատարվում է վերջից, որովհետև այդպես ավելի կանոնավոր է, և հեշտ է իրողության մասին դադափար կազմել: Անհայտների թիվը հարցման մեջ կամաց-կամաց պակասեցնելով՝ կանցնենք $(n-2)$ -ի, $(n-3)$ -ի $(n-4)$ -ի մինչև կհասնենք 3 անհայտով հարցման.

$$V_{11} + A_2 + C_1^* + C_3^*, \text{ թե } C_3 \rightarrow \begin{array}{l} a_1 \quad C_{11} + A_1 + V_{11} \\ a_2 \quad C_{21} + A_1 + V_{11} \\ a_3 \quad C_{31} + A_1 + V_{11} \end{array}$$

Արժեքները տեղադրելուց հետո կստանանք.

$$\text{Գնում ես օպերա}^*, \text{թատրոն}^*, \text{թե բալետ} \rightarrow \begin{array}{l} a_1 \quad \text{Օպերա եմ գնում} \\ a_2 \quad \text{Թատրոն եմ գնում} \\ a_3 \quad \text{Բալետ եմ գնում} \end{array}$$

ո-1) *Երկու անհայտով հարցում.*

$$V_{11} + A_2 + C_1, \text{ թե } C_2 \longrightarrow \left| \begin{array}{l} a_1 C_{11} + A_1 + V_{11} \\ a_2 C_{21} + A_1 + V_{11} \end{array} \right|$$

Արժեքները տեղագրելուց հետո կստանանք.

$$\text{Գնում ես օպերա, թե թատրոն} \longrightarrow \left| \begin{array}{l} a_1 \text{ Օպերա եմ գնում} \\ a_2 \text{ Թատրոն եմ գնում} \end{array} \right|$$

ո) *Մեկ անհայտով հարցում.*

$$C_1 + A_2 + V_{11} \longrightarrow \left| \begin{array}{l} a_1 \frac{3}{4} V_{11} + A_1 \\ a_2 \frac{1}{4} A_{-1} + V_{11} \end{array} \right|$$

Արժեքները տեղագրելուց հետո կստանանք.

$$\text{Օպերա}^* \text{ ես գնում} \longrightarrow \left| \begin{array}{l} a_1 \frac{3}{4} \text{ ալո (գնում եմ)} \\ a_2 \frac{1}{4} \text{ ոչ (չեմ գնում)} \end{array} \right|$$

Հարցումը իր պատասխաններով այսպիսի կաղապարային տեսքով ներկայացնելուց հետո դժվար չէ նկատել, որ ինչու-որ և այդ-ուչ հարցումներին ավանդականորեն տրված մասնավոր և ընդհանուր անվանումները ճիշտ չեն: Իրականում ընդհանուր է ոչ թե այդ-ուչ, այլ ինչու-որ հարցումը, որովհետև վերջինս իր ընդգրկման ոլորտով շատ ավելի մեծ է, քան առաջինը. այնպես որ մասնավոր և ընդհանուր անվանումներից օգտվելը ձեռնտու է, քանի որ դրանք ճիշտ և հստակ պատկերացում չեն տալիս իրողության մասին:

Նշենք, որ ընտրանքային հարցման եզրերի թիվը՝ Ռ-ը մեծ մասամբ սահմանափակ է: Այս բացատրվում է իրական աշխարհի սահմանափակ երևույթների լեզվական արտահայտման պատճառով: Ռ-ը կարող է գիտության, տեխնիկայի, արվեստի և հասարակական զարգացման հետ փոխվել. ավելի հաճախ աճել, իսկ երբեմն էլ նվազել: Որոշ հասկացությունների դեպքում այն կարող է լինել բավական փոքր, ասենք՝ գույների դեպքում, երբ $\Pi=9$ կամ $10:\Pi \rightarrow \infty$ թվային որոշ կարգի հասկացություններ

նշելու դեպքում, որը հաճախ հանդիպում ենք մաթեմատիկայում և ֆիզիկայում:

Այժմ ուսումնասիրենք վերևում առանձնացված վերջին՝ «Տուն գնո՞ւմ ես» հարցատեսակը: Այս հարցման դեպքում խոսողը գիտի դիմացինի գնալու վայրը և նրան մնում է միայն ճշտել՝ արդյո՞ք դիմացինը գնալու է, թե չի գնալու: Փաստորեն այստեղ հայտնի է գործողությունը, սակայն անհայտ է գործողության դրական կամ բացասական ուղղութիւնը կատարվելը: Այս հարցմանը այժ-ով կամ ոչ-ով պատասխանելը կախված է անմիջականորեն բայի էությունից, որովհետև գործողությունը հատուկ է կամ կատարվելը, կամ չկատարվելը. իրողությունը՝ կամ լինելը, կամ չլինելը՝ ուրիշ բան հնարավոր չէ: Ուրեմն, երբ գործողությունը կատարվել է, կատարվում է կամ կատարվելու է, իսկ իրողությունը եղել է, լինում է կամ լինելու է՝ ասում ենք այժ, երբ չի կատարվում, չի լինում և այլն՝ ասում ենք ոչ:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ սա գործողության կատարման վրա կատարման հարցումն է: Այսպիսով ստացվեց, որ դարձյալ գործ ունենք ընտրանքային հարցման հետ՝ այն էլ նրա մի ուրույն տիպի հետ: «Տուն գնո՞ւմ ես» հարցումը արդեն ընտրանքային հարցում է (երկեզը) որովհետև գնալ բայի ժխտման ձևն այս հարցումն արտահայտում է ոչ թե այդ անդամի ներառմամբ, այլ բացառմամբ: Գնալ բայի ուղիղ ձևին այս նախադասության մեջ հակադրվում է ոչ թե գնալ բայի ժխտական՝ չգնալ ձևն ինքնին, այլ նրա բացակայությունը: Այստեղ մենք շփվում ենք տարբեր լեզուներում տարածված մի այնպիսի հակադրության դրսևորման հետ, ըստ որի տվյալ անդամի բացակայությունը նշանակում է հակադրվող անդամի ժխտական ձևի կամ հակառակ իմաստի առկայություն: Այս տիպի ցանկացած հարցման վերջում կարելի է ստորակետ գնել և ավելացնել՝ «թե ոչ» կամ առաջին մասի ստորոգյալի ժխտական ձևը՝ «չես գնում»: «Տուն գնո՞ւմ ես», «Տուն գնո՞ւմ ես, թե ոչ» և «Տուն գնո՞ւմ ես, թե չես գնում» հարցումները իմաստով իրար համազոր են և իմաստային ոչ մի տարբերություն չունեն. միայն երկրորդ և երրորդ դեպքերում կարծես խոսողը անհամբեր է և ցանկանում է շուտ պատասխան ստանալ:

Եթե այս հարցման դեպքում այժ պատասխան ստանալու հավանականությունը նշանակենք $P_{\text{այ}}$, իսկ ոչ-ինը՝ $P_{\text{ոչ}}$, ապա կտեսնենք, որ $P_{\text{այ}} = \frac{1}{2}$ և $P_{\text{ոչ}} = \frac{1}{2}$:

Ուսումնասիրված հարցումը ունի հետևյալ կաղապարային տեսքը.

$$\text{Տուն գնում ես} \longrightarrow \begin{cases} a_1 \frac{m^n}{2} \\ a_2 \frac{n^2}{2} \end{cases}$$

Երբ հարցման գլխավոր անգամների միջև եղած հարաբերությունը հաստատվում կամ ժխտվում է, այսինքն՝ երբ անհրաժեշտ է ճշտել հարցման պրեգիկատի և սուբյեկտի միջև եղած հարաբերությունը, ապա հարցումը ձևավորվում է հարցական հնչերանգի միջոցով:

Նշենք նաև, որ ընտրանքային հարցման դեպքում հարցումը չի իրավ կարող է արտահայտվել առանց հարցական հնչերանգի: Այնպես, որ ընտրանքային հարցման մեջ հարցական հնչերանգն ավելագորութուն է: Մենք ես տուն, թե դպրոց» հարցման մեջ, հարցումն արտահայտվում է ճշտման ենթակա բառերի և լին շաղկապի միջոցով, այսինքն՝ նախադասության որոշակի կառուցվածքով: Ընտրանքային հարցման մեջ հարցում առաջացնող հիմնական պատճառը նախադասության ճշտման ենթակա անգամների հակադրությունն է:

Այսպիսով, կա հարցման արտահայտման հինգ գլխավոր ձևական միջոց. 1) հարցական հնչերանգ, 2) հարցական շարահասութուն, 3) հարցական բառ, 4) հարցական մասնիկ և 5) հարցական հակադրություն, որն իրականանում է հակադրական թե շաղկապի միջոցով:

Հայերենում առաջին, երրորդ և վերջին միջոցներից յուրաքանչյուրն առանձին կարող է լիարժեք ձևով հարցում արտահայտել: Մյուս երկուսը հայերենում բոլորովին չեն գործում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ կախված այն բանից, թե խոսողին ինֆորմացիայի ինչ քանակություն է հայտնի, ըստ այդմ էլ նա օգտագործում է լեզվում եղած հիմնական հարցատեսակներից մեկը: Փաստորեն հարցումների միջև եղած կապը հայտնիի և անհայտի փոխհարաբերությունն է:

* * *

Հայ լեզվաբանները հարցման ուսումնասիրության բնագավառում հասել են որոշակի արդյունքների: Նրանք ուշագրություն են դարձրել ինչպես հարցման իմաստային և ձևական շափա-

նիշներին, այնպես էլ պատասխանների բնույթին: Հարցումը դիտելով հաղորդակցական պրոցեսի ֆունի վրա՝ նրանք առանձնացրել են հայերենի կարևոր հարցատեսակները և քննել դրանց բնորոշ յուրահատկությունները: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կատարված ուսումնասիրություններն ամբողջական չեն, որովհետև նպատակը եղել է ոչ այնքան հարցման հատուկ հետազոտումը, որքան լեզվի շարահյուսական կառուցվածքի ընդհանուր նկարագրությունը:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք փորձել ենք ժամանակակից հայերենի հարցումը ներկայացնել իր ամբողջությամբ մեջ և վեր հանել հարցատեսակներից յուրաքանչյուրի տեղն ու դերը այդ ընդհանուր համակարգում:

ՋՈՆ Ա. Ս. ԳՐԵՊՈՒՆ

(ԱՄՆ)

ORNITHOLOGIA ARMENIACA

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում ամհ-նայն մանրամասնությամբ գրանցված են գիտական տարբեր տերմիններ: Առանձնակի դժվարություն են ներկայացնում բուսական և կենդանական աշխարհին վերաբերող տերմինները, որոնց համար մինչև այժմ չկա միօրինակացված տաքսոնոմիկ դասակարգում: Դժվարությունները շատ են հատկապես թռչունների անվանումների դեպքում, քանի որ դեռևս ուսումնասիրություն չկա Հայաստանում տարածված դրանց տեսակների մասին: Այնուամենայնիվ Աճառյանի տված նշանակությունները բավականին ճշգրիտ են և կարող են համարվել միանգամայն ընդունելի:

Այս համառոտ ակնարկում մենք բերում ենք հայերեն հինդ թռչունների անվանումներ, բոլորն էլ հավանաբար վաղ շրջանի միջին հայերենից, որոնց վերաբերյալ Աճառյանը վստահորեն չէր կարող տալ տաքսոնոմիկ անվանումներ: Այս հոդվածը հնարավոր դարձավ «Հայերեն արմատական բառարան»-ի նոր հրատարակությունից հետո², երբ դրա նյութերը մատչելի դարձան լայն հասարակությանը: Հոդվածի հեղինակը նպատակ չունի ճշգրտումներ անել Աճառյանի բացատրություններում, այլ փորձում է կատարել որոշ լրացումներ:

Քննենք այդ թռչունների անվանումները:

1. ԿԱՏԱԲ

Աճառյանը տալիս է այս բառի հետևյալ բացատրությունը՝ «մի խոտակեր թռչուն», որը հավանորեն Մխիթար Գոշի 144-րդ առակի հետևյալ տողն է. «Ձկնաքաղ ի մեծի պասի ուտէր ձուկն, եւ կատար իբր խոտաճարակ րամբասէր գնա»:

Այս անվանումը Աճառյանը կապում է արաբերեն عذاف (yudaf) բառի հետ, բայց այնքան էլ վստահ չէ վերջինիս նշանակությանը: Նա միայն վկայակոչում է Կամուզը (11:818)³, որը

տալիս է հետևյալ բացատրությունը՝ «մի տեսակ ագռավ կամ մի ուրիշ թռչուն»։ Վերջին ժամանակներս սակայն զգալի հաջողություններ են ձեռք բերվել սեմական բառարանագրության մեջ, և մենք կարող ենք նույնացնել արաբական *الفرغ* հայերեն սերմնագռավ, ռուսերեն грач (Corvus frugilegus), անգլերեն rook բառերի հետ։ Սովետական Հայաստանում գոյություն ունի մի առանձին ենթատեսակ՝ обыкновенный грач (Corvus frugilegus frugilegus)։

2. ԽԻԻ

Խիւ անունը տալիս են սովորաբար սև գույնի թռչունի։ Աճառյանը բացատրում է որպես ռուսերեն скворец обыкновенный (Sturnus vulgaris), անգլերեն starling։ Սակայն Հովհաննես Եպիսկոպոսի մի քառյակում խիվը նկարագրվում է որպես մի այնպիսի թռչուն, որը չի կարող սարյակ լինել։ Ահա այդ քառյակը.

Խիւն ի մորին մասխարանայր,
Ի ծառէ ծառ կու պորթքտայր,
Զետ ու պառչէր, գետ տղայ կուլայր
Ամէն մարդու բանիւ լինայր։

Եթե այս ոտանավորը մանրամասն նկարագրում է խիվի սովորությունները (և հեղինակի 90-ից ավելի քառյակներում տրվում են այլ թռչունների իրական, հավաստի նկարագրությունները, որոնց վերաբերյալ մենք կասկած չունենք), ապա պետք է հրաժարվենք խիվի՝ (бороновые или скворцовые) (Sturninae) ընտանիքին պատկանելու գաղափարից։ Այս երկու ընտանիքների պատկանող թռչունների բնավորությունը աշխույժ չէ, և դրանք հազվադեպ են լինում մորու թփուտներում։ Այդ թռչունները սնվում են կերակրի փշրանքներով և ավելի մոայլ բնավորություն ունեն։ Հավանորեն բառային այն իմաստը, որը կապվում է ինչ-որ սև գույնի թռչունի հետ, ճիշտ է, և այդ դեպքում խիվը նույնանում է սև կեռնեխին, ռուսերեն черный дрозд (Turdus Merula), անգլերեն blackbird։ Թռչունների այս դասը ընդհանրապես շատ աշխույժ է, հաճախ է թռչկոտում գետնի վրա կամ խուզարկում թփերը։ Սնվում է որդերով, միջատներով և պտուղներով։ Այն երեխայի պես սիրում է խաղալ և արձակում է տարօրինակ ձայներ։ Այսպիսով, հաշվի առնելով բառիմաստը՝ սև գույնի թռչուն,

և հենվելով Հովհաննես Եպիսկոպոսի ճշգրիտ նկարագրության վրա՝ խիվը հավանորեն պետք է համարել սև կեռնեխը:

3. ԵՓԵՆԷ

Աճառյանը նկարագրում է եփեմէ-ն միայն որպես «մի տի-
աակ թռչուն», ավելացնելով, որ այն հանդիպում է միայն Բար-
սեղի մի հատվածում⁵, Հետևելով Հյուբշմանին, Աճառյանը կա-
պում է այն հունարենն ի ֆիլոսոֆի հետ, որը մենք այժմ դիտենք,
որ գառնանգղն է, ռուսերեն бородач (Gypaetus barbatus), անգ-
լերեն lammergeyer:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վեցորյայում տրված
նկարագրությունը (էջ 170). «Միև եւս թռչուն, որ անուանեալ
կոշի եփեմէ, առնուն զընկեցեալ ձագն արծուոյնս ժողովէ առ ինքն
և սնուցանէ»: Այս հատվածը լիովին համապատասխանում է հու-
նարենի ֆիլոսոֆիային, որը նույնպես համարվում է մի թռչ-
ուն, որը շատ հոգատար է իր ձագերի նկատմամբ, իսկ դիցաբա-
նություն մեջ՝ նաև այլ թռչունների ձագերի նկատմամբ: Այս կար-
ծիքը հաստատվում է նաև հունական դասական գրականության
մի շարք հատվածներով:

Oppianus Apamensis C. III.115: ποθῆν ἀλιπτον ἔχουσιν (ὦν
τεῦξων օղῆναι. օղῆναι բառը նշանակում է անսահման սեր երեխա-
ների նկատմամբ:

Homer Illiad I. 727: καὶ μὲν τις օղῆναι ἀδινόν γόνον ἔχουσιν
ἀντήρ' ὄρθηρον ἀμφὶ τεύχεσσιν. «Հուսաբացին մի մարդ լսեց օղիչի-
ողբալին ձայնը ձագերի կորստյան պատճառով»:

Aelianus XII.4: ֆիլոսոֆ ὁ καὶ ἀρπῆν 'Αθῆνα προσημουςιν. և
նրանք նվիրաբերեցին օղիչ և ծինը Աթենային⁶:

Պետք է նշել, որ ժամանակակից հունարենում այդ թռչունին
(Cupaetus barbatus) անվանում են մի բաղադրյալ բառով՝
(μυλαδελφ), որը թարգմանվում է «ուրիշներին կերակրող»: Դժվար
թե եփեմէ-ն ժողովրդի համար գործածական բառ լինի: Ավելի
հավանական է, որ այն գրականության մեջ մուտք գործած լինի
որպես գիտական մեջբերում: Ինձ ծանոթ միակ բառը, որը գոր-
ծածվում է գառնանգղի փոխարեն բրդոռ (բրդոռ) բառն է, որի
համար նշՆ տալիս է հետևյալ բացատրությունը. «Այլ հաւ կայ,
բրդոռ ասէն օր զայն ձագն (ընկեցեալ յարծուոյ) առնու եւ սնու-
ցանէ»: Բայց սա խիստ անսովոր տեղմին է և Gypaetus barba-
tus-ը հավանորեն առհասարակ անվանել են անգղ:

4. ՂՈՅԻՈՆ

Այս բառը հաճախ է հանդիպում Ս. Ճառընտիրում՝ Վենետիկի Մխիթարյանների հավաքածուում: ՆշՔ այն բնորոշում է միայն հետևյալ հատվածով. «Ղոյիոն իմն համ որպէս ասեն ժանդագործք, թէ ի հնդկաց է»: Աճառյանը բնորոշում է ղոյիոն-ը «մի տեսակ թռչուն», բայց հարաբերում է «Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց»-ի (Վենետիկ, 1874) հետ, որտեղ ղոյիոն հանդիպում է առաջին հատորի 543 էջում, մի գլխում, որտեղ նկարագրվում է Թեոդորիթ քահանայի կյանքը (էջ 532—549): Վարքի մեջբերումը ճիշտ և ճիշտ նույնն է, ինչ որ ՆՂՔ-ում:

Ղոյիոն բառը ակնհայտորեն ոչ հայկական ծագում ունի: Այն կարող է կապվել հինգի լեզվի guiyau բառի հետ⁷, որը նշանակում է մի թռչուն, որը որոշակիորեն վնասատու (Timaliidae) ընտանիքի մի անդամ է, ուսերեն кустарница, անգլերեն Babblers: Այս թռչունի բազմաթիվ տեսակներ տարածված են Հնդկական թերակղզում, իսկ Սովետական Միությունում հանդիպում է միայն մեկ տեսակը (кустарница полосатая Garrulax lesson), որը տարածված է Միջին Ասիայում:

5. ՄԻՄԱՌՆՈՒԿ

Աճառյանը, հետևելով բառմաստին, նույնացնում է այս թռչունը սոխակին, ուսերեն соловей (Luscinia magarhynchos), անգլերեն nightingale: Սակայն ըստ գրականության և լեզվաբանության տվյալների, այս կարծիքը խիստ անհավանական է: Վեցօրյայում կան հետևյալ նշումները (էջ 163). «Եւ բազում այլ ազգք ան որ համագունդ երամ շրջին, իբրեւ ծիծեռնունք, եւ կըռունկք եւ ճայք եւ հոլամուկք եւ սարիկք եւ տարմահաւք»: Այս հատվածից կարելի է եզրակացնել, որ սոխակը բացառվում է այդ թռչունների ցանկից, քանի որ այն միայնակ, թաքնվող և խուսափող թռչուն է: Փիլոնից քաղված հայտնի նշանավոր հատվածում, որ բերված է ՆՂՔ-ում, ծիծառնուկ-ի զուգահեռն է համարվում ծիծառն բառը, ուսերեն ласточка (Hirundo rustica): «Ուազաւոր ձայնք ծիծառնաք, ծիծառնկաց», որը ենթադրել է տալիս, որ ծիծառնուկ-ը ծիծառն-ի փաղաքշական ձևն է:

Անգլերենում, ի տարբերություն եվրոպական այլ լեզուների, որոնց ես ծանոթ եմ, կա երկու բառ այս Hirundinidae, ուսերեն ласточковые հիմնական երկու տեսակների համար: Մի կողմից կա Swallow (= Միծառն), որն տւնի երկար և ճյուղավորված պոչ: Մյուս կողմից՝ Martin, որի պոչը այդքան երկար չէ և

72 էլ ճյուղավորված⁸, Այս Martin տեսակը մոտ մեկ հինգերորդով ավելի փոքր է Swallow-ից, Երկու թռչուններն էլ մտնում են միևնույն երամի մեջ և պատրաստում են իրենց բները միմյանց շատ մոտ: Այս վերջին Martin տեսակն է, որ ես նմանեցնում եմ ծիծեռնակին, որի երեք ենթատեսակներն էլ հաճախ հանդիպում են Երևանի շրջակայքում:

Այսպիսով, ծիծառնուկը ի հայտ է բերում Hirundinidae, ռուսերեն ласточковые երկու հիմնական տարբերակներ, որոնցից մեկը զգալիորեն փոքր է մյուսից, ինչպես նաև տարբերվում է պոչի ձևով: Այս տարբերակումը, որը պահպանվել է նաև անգլիերենում, բացակայում է եվրոպական այլ լեզուներում:

1. Հայաստանի կենդանական աշխարհի տաքսոնոմիան դեռևս չլուծված խնդիր է, բայց Երևանի Կենսաբանության ինստիտուտի աշխատակից Գ. Դ. Ավագյանը կազմում է այս նյութի բառացանկը, որը կհաստատի յուրաքանչյուր նմուշի ճշգրիտ անվանումը լատիներեն և հայերեն:

2. Լույս են տեսել երկու նշանակալից թռչնաբանական ուսումնասիրություններ՝ Далб С. К. и Соскин Г. Б. Определитель птиц Армянской ССР, Ереван, 1947; Ляйстер А. Ф. и Соскин Г. Б. Материалы по орнитофауне Армянской ССР (Ornis Armeniaca), Ереван, 1942. Դասական հունարեն և լատիներեն թռչունների անվանումները նկարագրված են ըստ՝ *Thim-son D. A. A Glossary of Greek Birds*, London, 1936; *Andre J., Les noms d'oiseaux en latin*, Paris 1967. Բացի դրանցից, վերջին 40 տարիների ընթացքում լույս են տեսել պարսկերեն և արաբերեն զանազան բառարաններ (տարբեր լեզուներով):

3. Al qamūs al muḥīṭ mašḥur bi al uqiyānus basit, Istanbul, 1874.

4. Մատենադարանի երկու շրատարակված ձեռագրերի համաձայն (ձեռ. № 3595 և № 738) հեղինակի իսկական անունը Կիրակոս Երեց է: Այդ երկու ձեռագրերն էլ պարունակում են 91 քառյակ, մինչդեռ մյուս հրատարակված տեքստերը ունեն միայն 61 քառյակ: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում պրոֆ. Ա. Մնացականյանին այս նյութերին ծանոթացնելու և օգնելու համար:

5. Ս. Բարսեղի եպս. Կեսարու Կապադովկացուց, Ճառք վասն վեցօրեայ արարութեանն, Վենետիկ, 1830:

6. Մյուս բազմաթիվ դերերի հետ մեկտեղ Աթենաս դիցուհին հայտնի է որպես ծննդաբերության աստվածուհի:

7. Իմ անկեղծ շնորհակալության հետ հայտնում նյու-Դելիի թոշնաբանության մասնագետ՝ պրոֆ. Մանոհար Չաուդրիին թըռչունների ճանաչման գործում ցույց տված օգնության համար:

8. Անգլերենի Martin տերմինը փոխ է առնված ֆրանս. Martinet-ից, ռուս. стриженные: Սակայն անգլերենում այն չի պահպանել այդ նույն իմաստը, այլ գործածվում է դրա հիմնական տարբերակ հանդիսացող ծիծառն-ի իմաստով:

Անգլերենից թարգմանեց Ա. Հ. Խաչատրյանը

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Գ. Բ. Զափուկյան, Հրաշյա Աճառյան	5
Գ. Գ. Սևակ, Հ. Աճառյանը՝ հայ-վրացական բանասիրության մեծ երախտավոր	15
Հ. Գ. Մուրադյան, Հ. Աճառյանի բարբառագիտական ժառանգությունը	27
Գ. Կ. Գասպարյան, Հ. Աճառյանը բառարանագիր	45
Ա. Հ. Խաչատրյան, Հ. Աճառյանը հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիր	59

Ե Ր Կ Ը Ո Ր Գ Մ Ա Ս

Վ. Ն. Հայրապետյան, Ժամանակակից հայերենի անդամ և անվանական նախադասությունների հնչերանգային հաղորդակցական տիպերը	70
Ս. Վ. Ղուկասյան, Ժամանակակից հայերենի հարցառեսակները	104
Յոճ Ա. Ս. Դրեպիճ (ԱՄՆ), Ornithologia Armeniaca	151

Պատասխանատու խմբագիր՝ Զ. Ո. ՍՍՏՎԱՆԱՏՐԵԱՆ.
Ответственный редактор З. А. АСТВАЦАТРЯН.